ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Հ. Ս. ԽԱՆՃԵԱՆ

ՆՈՐ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՈՒ ՔԱՐՏԻՍԱՒՈՐ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ. — ԱՇԽԱՐՀԻՍ ՀԻՆԳ ՄԱՍԵՐԸ. — ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ
ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1912

35430. Ա.

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՒՄՄԱՆ

Հ. Ս. ԽԱՆՃԵԱՆ

ՆՈՐ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՈՒ ՔԱՐՏԻՍԱՒՈՐ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ. — ԱՇԽԱՐՀԻՍ ՀԻՆԳ ՄԱՍԵՐԸ. —
ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ
Ն. Շ Ա Ն - Պ Ա Պ Ի Կ Ե Ա Ն
Կ. ՊՈԼԻՍ
1912

ՊԵՏ. ԳՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՔԱՆԳԱՐԱՆ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



Պատկ. 1. — ԵՐԿՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԵՐԵՒՈՑԹՆԵՐԸ

1. Դաշտը (Ֆրանսայի մէջ, Մօնբարժիսի մօտ Լուա-ռի ձորին մէջ. — 2. Լիւռ մը (Մօն Պլանիւռու լեռնակոյտին մէջ). — 3. Ծովը (Սէն Մարթի [Ֆրանսա] ծովեզերքը). — 4. Վայրի կեանքը (Կուինկայի մէջ [Ափրիկէ] խաւիղիկ գիւղ մը. — 5. Մարդոց ձեռքով փոխակերպուած երկիրը (Զուիցերիոյ մէջ Սէն Կօթարի երկաթուղին).

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԵՐԿԻՐԸ ՏԻԵԶԵՐԲԻՆ ՄԷՋ. — ԻՐ ՁԵՒԸ

ՏԻԵԶԵՐՔ. — *Երկիրը որ այնքան ընդարձակ կ'երեւայ մեզի, կէտ մըն է միայն անհուն տիեզերքին մէջ ուր ցրուած են անհամար երկնային մարմիններ։ Երկնային մարմին ըսելով կը հասկցուին աստղերը, մոլորակները, արբանեակներն ու գիսաւորները։*

Աստղերը մեզի կ'երեւան պզտիկ չողչողուն կէտերու պէս, որոնք իրարու վերաբերութեամբ միեւնոյն դիրքը կը պահեն։ Իրապէս չարժում մը ունին, բայց որովհետեւ չափազանց հեռու

Հօյաբհագրութիւն Միջին

են, մենք չենք նշմարեր այդ չարժումը և իրր անշարժ կ'երեւան մեզի։

Աստղերը իրենք իրենցմէ լոյս ունին, արեգակին նման։

Աստեղագէտները զանոնք բաժնած են Համաստեղութիւն կոչուած այլ և այլ խումբերու. ինչպէս Մեծ Արջ Համաստեղութիւն, Փոքր Արջ Համաստեղութիւն, Հարաւային Համաստեղութիւն, Հսկայն. (Պատկեր 2)։

Պատկեր 2. — **Կարեւոր համաստեղութիւններ**

Երկրին ամէնէն աւելի մօտ գտնուող աստղն է Արեգակը, որ նոյնպէս ինքն իրմէ ունի լոյս և ջերմութիւն (Պատկ. 3)։

Պատկեր 3. — **Արեգակին եւ երկրին համեմատական մեծութիւնը**

Երկրին՝ արեգակէն ունեցած հեռաւորութիւնն է իրր 150 միլիոն քիլօմէթր կամ 37 միլիոն մղոն, այնպէս որ ժամը 60 քիլօմէթր ճամբայ կտրող ճեպընթաց կառախումբ մը 285 տարիէն միայն պիտի կրնար կարել այս հրաշալի միջոցը (Պատկ. 4)։ Սակայն արեգակին լոյսը 8 վայրկեանէն մեզի կը հասնի։

Մոլորակ կը կոչուին այն երկնային մարմինները որոնք արեգակին չուրջը կը դառնան. ա-

Պատկ. 4 — **Արեգակին եւ երկրին հեռաւորութիւնը**

նոնք իրենք իրենցմէ լոյս չունին, և եթէ առաջուընէ պէս կը փայլին, պատճառն այն է որ կը լուսաւորուին արեգակէն որուն ճառագայթները կը ցոլացնեն, մինչդեռ աստղերը իրենք իրենցմէ լոյսի աղբիւրներ են։

Երկիրը մոլորակ մըն է. արեգակին չուրջը կը դառնայ և անկէ կ'ընդունի լոյս և ջերմութիւն։

Հարիւրաւոր արեգակնային մոլորակներ կան, բայց անոնց մեծ մասը չատ փոքր են և հեռադիտակով միայն կը տեսնուին։ Մեծ մոլորակները ութը հատ են և կը կոչուին Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երեւակ, Ուրանոս և Նեպտուն որ գրեթէ 5 միլիառ քիլոմէթր հեռու է արեգակէն (Պատկ. 5)։

Հրատին և Լուսնթագին միջեւով գտնուած լայն միջոցին մէջ 500 է աւելի փոքր մոլորակներ կը չրջին, որոնց սմանք Զուխերիայ տարածութիւնն իսկ չունին։

Մոլորակներէն չատեր իրենց հետ ունին Արբանեակներ, այսինքն իրենց չուրջը դարձող երկնային մարմիններ։ Երկիրն ալ ունի արբանեակ մը, Լուսինը, որ երկրէն 49 անգամ փոքր է (Պատկ. 6)։ Լուսինը իր լոյսը կ'ընդունի արեգակէն։ Եթէ իր լրման ատեն արեգակին չափ մեծ կ'երեւայ մեզի, պատճառն այն է որ նուազ հեռու է մենք քան արեգակը։ Լուսնին մեզմէ ունեցած հեռաւորութիւնն է 375,000 քիլոմէթր։ Այս անջրպետը 250 օրէն պիտի կրնար կարուիլ այն միեւնոյն ճեպընթացը որ 285 տարիէն հասնելու պիտի կրնար հասնիլ արեգակին։

Լուսինը երկրին չուրջը կը դառնայ գրեթէ մէկ ամսուան մէջ (ճշդիւ $29^1/_2$ օրուան մէջ), այս տեւողութիւնը կը կոչուի Լուսնային Ամիս. նոյն միջոցին լուսինը մեզի կը ներկայանայ տարբեր երեւոյթներով որոնք կը կոչուին Լուսնեներեւոյթ։

Նոր լուսնի ատեն իր մութ կողմը մեզի դարձած կ'ըլլայ, այնպէս որ չենք տեսներ զայն (Պատկ. 7)։ Ցետոյ՝ քանի՛ յառաջանայ իր չրջանին մէջ՝ իր լուսաւորուած երեսին մէկ մասը կ'սկսի երեւալ։ Նախ մահիկի մը ձեւով կը

ներկայանայ. ապա կամաց կամաց կը լայնայ այնպէս որ լուսնի ծնունդէն եօթնուկէս օր հաքը, կը տեսնենք գայն կէս-չրջանակի ձեւով, սահիկա կը կոչուի առաջին եռորդ։ Ցետոյ կը չարունակէ իր ճամբան, կէս-չրջանակը հետզհետէ կը մեծնայ և կ'ըլլայ ամբողջական լուսաւորուած չրջանակ մը, սահիկա կը կոչուի լրումն լուսնի, որ լուսնի ծնունդէն 15 օր հաքը կ'ըլլայ։

Ապա հետեւաբար քանի՛ լուսինը իր չրջանը չարունակէ, իր լուսաւորուած մասը մենէ կը ծածկուի, այնպէս որ վերջին եռորդ եղած ատեն իր լուսաւորուած երեսին կէսը միայն կը տեսնենք դարձեալ։ Այսպէս հետզհետէ կը նուազի, երթալով կը բարակնայ և վերջապէս իր լուսաւորուած երեսը բոլորովին արեգակին դարձնելով կը լրացնէ իր չրջանը և իր ատչի դիրքը կ'առնէ (Պատկ. 7)։



Պատկ. 6 — **Երկրին եւ լուսնին համեմատական մեծութիւնը**



Պատկ. 7. — **Լուսնեներեւոյթները**

Երբ լուսինը մտնէ այն տատերին մէջ զոր երկիրը իր ետին կը ձգէ, այլեւս չտեսնուիր, այն ատեն կ'ըլլայ լուսնի խաւարում (Պատկ. 8)։ Խաւարումը ամբողջական կ'ըլլայ երբ լուսինը ամբողջովին անտեսանելի է, իսկ մասնական կ'ըլլայ երբ լուսնին մէկ մասը միայն երկրի տատերին մէջ իյնայ։

Երբ լուսինը արեգակին առջեւ գայ, այնե-



Պատկեր 5. — **Մոլորակներուն արեգակէն ունեցած համեմատական հեռաւորութիւնները**



Պատկ. 8. — **Լուսնի խաւարում**

պէս որ մենք ծածկէ անոր լոյսը, կ'ըլլայ արեգական խաւարում (Պատկ. 9). *Մէպէա* ուելի ճիշդ կ'ըլլար բսել երկրի խաւարում, քանի որ ոչ թէ արեգակն է խաւարածը, այլ երկիրը՝ որ արեգակին լոյսէն կը զրկուի առ ժամանակ։ Լուսնի խաւարման պէս արեգակինն ալ կրնայ բլլալ ամբողջական կամ մասնական։ Սակայն զատ մանեկանէ խաւարում կրնայ պատահիլ երբ լուսինը արեգակին դիմացը գտնուած ատեն ամ-

Պատկ. 9. — **Արեգական խաւարում**

բողջովին չծածկէ զայն, որով արեգակին լոյսը յորդելով լուսնին չուրջը մանեակ մը ձեւացնէ։

Գիտուորներն ալ երկնային մարմիններ են որ լուսատու կէտերու պէս կ'երեւան և իրենց հետեւէն երկար լուսատու պոչ մը ունին։

Արեգակը և իր չուրջը դարձող Մոլորակներուն և Գիսաւորներուն ամբողջութիւնը կը կազմէ Արեգակնային Դրուքիւնը։

ԵՐԿՈՒ ՁԵՒԸ — *Երկիրը կլոր է.* գունակ մը ձեռք ունի գրեթէ։ Երկրի կլորութիւնը դիւրաւ կը համոզուինք երբ ընդարձակ ծովու մը եզերքը կենալով դիտենք նաւու մը հեռանալը։

Եթէ ծովուն մակերեւոյթը տափարակ բլլար, իրաւ է որ նաւը հետզհետէ փոքր պիտի երեւար մեր աչքին, քանի ծովեզրէն հեռանար, բայց միշտ ամբողջովին պիտի տեսնէինք զայն. մինչդեռ այդպէս չըլլար. հապա նաւուն առաջին մասերը աներեւոյթ կ'ըլլան ամէնէն առաջ երբ դեռ կայմերը կը տեսնուին, յետոյ միայն կայմերուն ծայրերը կ'երեւան և ամէնէն յետը նաւուն է'ն բարձր կայմին ծայրը գտնուող դրօշը աներեւոյթ կ'ըլլայ։ Ասիկա կը ցուցնէ որ նաւը կոր մակերեւոյթի մը վրայէն կը յառաջանայ, կը սահի (Պատկ. 10)։

Երկրի մակերեւոյթին կորութեան պատճառ է որ մեր աչքերը անոր չատ պզտիկ մէկ մասը միայն կրնան տեսնել միեւնոյն ատեն։ Երբ բարձր տեղ մը կամ տափարակ դաշտ մը մէջտեղ կենանք և չուրջերնիս դիտենք, մեզի այնպէս կ'երեւայ որ հեռուն՝ մինչեւ աչքերնիս առած տեղը՝ երկինքն ու երկիրը իրարու կպցուած են կոր գիծ մը ձեւացնելով։ Այս կոր գիծը կամ չրջանակը որ ամէն կողմէ վերջ կը դնէ մեր տեսութեան՝ կը կոչուի Հորիզոն։

Քանի՛ բարձր տեղեր ելլենք, հորիզոնն ալ այնքան կ'ընդարձակուի, որովհետեւ երկրի աւելի մեծ մէկ մասը կ'երեւայ մեր տեսութեան առակ, և սակայն որքան ալ բարձր տեղ մը գտնուինք, զարձեալ միշտ ասնմանափակ է հորիզոնը, որովհետեւ երկրի գնդաձեւութեան պատճառաւ հեռուոր առարկաները չենք կրնար տեսնել։

Երկրի կլորութեան ուրիշ մէկ ապացոյցն ալ սա է որ լուսնի մասնական խաւարման ատեն՝ Լուսինին վրայ կը տեսնուի երկրին չուրջը որ կլոր է։



Պատկ. 10. — **Երկրի կլորութիւնը**

Նոյնպէս աչխարհի չուրջը կատարուած ուղեւորութիւններն ալ ապացոյց մը կուտան երկրի գնդաձեւութեան։ Երկրի երեսին որ և է մէկ կէտէն մեկնելով միշտ մի և նոյն ուղղութեամբ ճամբորդողները վերջապէս դարձած և կած են իրենց մեկնած տեղը։

Պատկ. 11.— **Երկրի առանցքը**

Երկիրը հոլի մը պէս չուրնակ ինքն իր վրայ կը դառնայ, երեւակայական գիծի մը չուրջը որ կը կոչուի Առանցք (Պատկ. 11)։ Առանցքին երկու ծայրերը կը կոչուին Բեւեռներ. մէկն է Հիւսիսային կամ Արջային բեւեռ, և միւսը՝ Հակարջային կամ Հարաւային բեւեռ։ Երկու բեւեռներէն հաւասար հեռաւորութեամբ երկիրը չրջապատող չրջանակը կը կոչուի Հասարակած (Պատկ. 12)։

Պատկ. 12. — **Առանցք, բեւեռ եւ հասարակած**

Եթէ երկիրը կատարելապէս գնդաձեւ բլլար, իր չառաւիղը պիտի բլլար 6370 քիլոմէթր, բայց բոլորովին գնդաձեւ չէ, բեւեռներուն վրայ քիչ մը տափակցած և հասարակածին վրայ քիչ մը ուռած է։ Հասարակածին չրջանակը չափուած է 40,000 քիլոմէթր, այնպէս որ ժամը 6 քիլոմէթր ճամբայ կարող հեծեալ մը դիչեր ցորեկ քալելով հազիւ 9 ամիսէն պիտի կրնար աչխարհին չրջանը բնել։

Երկիրը թէեւ կլոր է, բայց իր մակերեւոյթը բազմաթիւ անհարթութիւններ ունի. ինչպէս լեռներ, ձորեր, դաչտեր, ծովեր, և այլն։ Այս անհարթութիւնները չեն խանգարեր ոտկոյն անոր կլորութիւնը, քանի որ խիստ փոքր են բաղդատմամբ երկրի անհուն մակերեւոյթին[1], ինչպէս որ նարնջի մը վրայ գտնուած դերբուկները չեն ազդեր նարնջին կլորութիւնը։

Մարմին մը թնկած ատեն կը հետեւի գադմնահայեաց ուղղութեան։ Տրամախարը զոր օրինակ երեսները կը զարձածեն՝ կը ցուցնէ գադմնահայեաց ուղղութիւն մը. Երկրի խորքանչիւր կէտին վրայ՝ գադմնահայեաց գիծը եթէ երկարաձգուէր հասէր ներս՝ երկրագնդի կեդրոնին պիտի յանդէր (Պատկ. 13)։

Տեղւոյ մը Հակոտնեայն կը կոչուի այն կէտը որ իրեն հակադիր է Երկրի միւս կողմին. Թիւ 13 պատկերին մէջ Ա. կէտին հակոտնեան է Գ կէտը։

Տեղւոյ մը Գագաթնակէտը կամ Զենիթը կը կոչուի երկինքին այն կէտը որ նոյն տեղւոյն վերեւ կը գտնուի գագաթնահայեաց ուղղութեամբ։

(1) Երկրի մակերեւոյթը չափուած է 510 միլիոն քիլոմէթր քառակուսի. տրամագիծը՝ 12750 քլմ։

ԳԼԽԱՒՈՐ ԿԱՂՄԵՐ ԵՒ ՄԻՋԱՆԿԵԱԼ ԿԱՂՄԵՐ. — Հիւսիսային բեւեռին զենիթին մօտ կը գտնուի Բեւեռային Աստղը։ Երբ երեսնիս այն կողմը դարձնենք, մեր առջեւ կ'ունենանք Հիւսիսը, մեր ետին՝ Հարաւը, աջ կողմերնիս կ'ըլլայ Արեւելքը, իսկ ձախ կողմերնիս՝ Արեւմուտքը։ Այս չորս աշխարհները կը կոչուին Գլխաւոր Կողմեր։



Պատկ. 13.— **Զագաթնակէտ, հակոտնեայ, զենիթ**

Այս գլխաւոր ուղղութիւնները բաժնուած են միջանկեալ ուղղութիւններու. այսպէս՝

Հիւսիսին և Արեւելքին մէջտեղը կը կոչուի Հիւսիսային-Արեւելք։

Հիւսիսին և Արեւմուտքին մէջտեղը կը կոչուի Հիւսիսային-Արեւմուտք։

Հարաւին և Արեւելքին մէջտեղը կը կոչուի Հարաւային-Արեւելք։

Հարաւին և Արեւմուտքին մէջտեղը կը կոչուի Հարաւային-Արեւմուտք։

Ասոնք ալ կը կոչուին Միջանկեալ Կողմեր։

Կարելի է դեռ այս միջանկեալ կողմերն ալ բաժնել և որոշել հիւսիսային-հիւսիս-արեւելք, արեւելեան-հարաւ-արեւելք, արեւելեան-հիւսիս-արեւելք, հարաւային-հարաւ-արեւելք, և այլն ուղղութիւնները (Պատկ. 14)։

Բոլոր այս ուղղութիւններուն ամբողջութիւնը կը կազմէ Հողմանիւ կամ Հովերու-վարդ ըսուածը։

Ճամբորդներուն և մանաւանդ նաւագնութեան համար անհրաժեշտ է Արեւելքին և հետեւաբար միւս գլխաւոր կողմերուն ուղղութիւնը գտնել, ինչ որ կը կոչուի Առեւելում։



Պատկ. 14. — Հորիզոն։

Ցորեկ ատեն դիւրին է արեգակին միջոցաւ արեւելքին և միւս գլխաւոր կողմերուն ուղղութիւնը գտնել ասոր պէս.

1. Երբ գիտենք այն կէտը ուրկէ արեգակը կը ծագի, կրնանք անանկ դիրքով մը կենալ որ ձախ կողմերնիս դէպի այն կէտը դարձած ըլլայ, ան ատեն ձախ կողմերնիս կ'ըլլայ արեւմուտք, դիմացնիս հիւսիս, իսկ կռնակնիս՝ հարաւ (Պատկ. 15)։

Պատկ. 15. — Առեւելում

2. Կէս օրին կրնանք կռնակնիս արեգակին դարձնել, ան ատեն մեր առջեւ տարածուող չուքերնուս ուղղութիւնը ցոյց կու տայ հիւսիսը, որուն համեմատ միւս կողմերն ալ կ'որոշուին վերը ցուցուած կերպով։

Դիշեր ատեն գլխաւոր կողմերուն ուղղութիւնը գտնելու համար հիւսիսային կիսագունտին մէջ կը դիմեն Բեւեռային Աստղին որ հիւսիսի կողմը կը փայլի միշտ, իսկ հարաւային կիսագունտին մէջ՝ Հարաւային Խաչ կոչուած աստեղութեան որ հարաւի ուղղութեան մօտ գտնուի (Պատկ. 2)։

Պատկ. 16.—Նաւմնացոյց

Բայց երբ երկինքն ամպամած ըլլայ և կարելի չըլլայ տեսնել ցորեկ ատեն արեգակը ու գիշեր ատեն ալ՝ աստղերը, այն ատեն կրնանք դիմել Նաւմնացոյց կոչուած գործիքին (Պատկ. 16)։

Նաւմնացոյցը կը բաղկանայ երկու կողմը սրածայր մետաղեայ ալաքէ մը որուն կէսը երկաթէ և կէսը պղպատէ չինուած է։ Ալաքին պղպատեայ ծայրը չարունակ ինքն իրեն դէպի հիւսիս կը նայի։ Ուրիշ նաւմնացոյց ունեցող ճամբորդի մը համար՝ թէ ծովու և թէ ցամաքի վրայ միշտ դիւրին է փնտռուած կողմը գտնել, քանի որ գիտէ իր գտնուած տեղին հիւսիսն ու հարաւը։

Հարցարան. — Երկնային մարմին լսելով ի՞նչ կը հասկնաք. — Աստղերը ի՞նչ տարբերութիւն ունին մոլորակներէն. — Երկիրը ա՞ստղ է թէ մոլորակ. — Ո՞րն է երկրին արբանեակը. ի՞նչ համեմատութիւն ունի Երկրին հետ. — Դիտաւորները ի՞նչ տարբերութիւն ունին աստղերէն. — Որո՞նք են գլխաւոր մոլորակները. ո՞րն է արեգակին ամէնէն մօտ գտնուողը. — Երկրին ամէնէն մօտ գտնուող մոլորակը ո՞րն է. — Ո՞րչափ է երկրին չրջապատը. — Ինչո՞ւ լուսինը իր լրման ատեն արեգակին չափ խոշոր կերեւայ մեզի. — Ի՞նչ ձեւ ունի երկիրը. — Ի՞նչպէս կրնաս բացատրել երկրի կլորութիւնը. — Ի՞նչ է Հորիզոնը. ի՞նչ կը տեսնէք Հորիզոնին վրայ. — Ձեր վարժարանին ո՞ր կողմը արեւելքին կը նայի և ո՞ր կողմը արեւմուտքին. — Ձմեռը ո՞ր կողմէն կը փչեն ցուրտ հովերը. — Երբ գիտէք թէ ո՛ր կողմէն արեգակը մարը կը մտնէ, կրնա՞ք ըսել թէ յաջորդ օրը որ կողմէն պիտի ծագի. — Ո՞ր կը գտնուի բեւեռային աստղը և ի՞նչ ուղղութիւն ցոյց կուտայ. — Ի՞նչ է կողմնացոյցը և ի՞նչ օգուտ ունի. — Ձեր քնակած թաղին հիւսիսային կողմը գրա նուած թաղին անունը ի՞նչ է. — Ո՞ր ուղղութեան մէջ կը գտնուին Էսիրնէ, Զորլու, Մալկարա, բազդատմամբ Կ. Պոլսոյ։

ՏԵՂԻ ՄԸ ԴԻՐՔԼ ՄԱԿԵՐԵՒՈՒԹԻՒՆ ՄԸ ՎՐԱՑ

ԱՍՏԻՃԱՆԱԾՔ. Ենթադրենք թէ մէկ մէկ սանթիմէթրոց քառակուսիներու բաժնուած թուղթի մը վրայ ուզենք ցոյց տալ կանոնչ գետակի մը դիրքը. կը փնտռենք թէ ինչ հեռաւորութիւն ունի թուղթին ձախ եզերքէն և վերի եզերքէն. կը տեսնենք թէ 2 սանթիմէթր հեռաւորութիւն ունի ձախ եզերքէն և 3 սանթիմէթր



Պատկ. 17.

վերի եզերքէն։ Եթէ ընդհակառակն տարկ ըլլայ գտնել կապոյտ գետակ մը որ 6 սանթիմէթր հեռու է ձախ եզերքէն և 5 սանթիմէթր՝ վերի եզերքէն, մեզի ուրիշ բան չի մնար ընել եթէ ոչ բաժանումները համրել. այսպէսով կը գտնենք կապոյտ գետակը։ Ուրեմն, մահկերեակ մը վրայ կէտ մը որոշելու համար երկու հեռաւորութիւններու պէտք ունինք (Պատկ. 17)։



Պատկ. 18.

Մխիթարեան միջոցը կը գործածուի երկրին վրայ ալ որ և է կէտի մը դիրքը ճշդելու համար։ Սակայն պէտք չէ մոռնալ որ այս պարագային այլ եւս ինդիրը հարթ մակերեսոյթի մը վրայ չէ, այլ գունդի մը վրայ. վերի պատկերին վրայ երեւցած ուղիղ գիծերը, գունդին վրայ պիտի ըլլան չրջանակներ։ Արդ, չրջանակի մը վրայ հաշուելու համար չենք կրնար մէթրը գործածել. բաժանման ուրիշ եղանակ մը պէտք է ընդունինք։ Ամէն չրջանակ կը բաժնուի 360 հաւասար մասերու որոնք կը կոչուին աստիճան։ Ուրեմն աստիճանը անփոփոխ երկայնութիւն մը, անթիմէթր մը կամ մատնաչափ մը չէ, հապա չրջանակին $\frac{1}{360}$-ին հաւասար ալեզ մը։ Այսպէս ուրեմն պատկ. 18ի երկու չրջանակները թէպէտ տարբեր մեծութիւն ունին, բայց երկուքն ալ 360ական աստիճաններու բաժնուած են։

Մէկ աստիճանը կը բաժնուի 60 մասերու և մէկ վայրկեանն ալ 60 մանրամասերու։ Փոխանակ ամբողջովին գրով գրելու 45 աստիճան, 25 մաս և 30 մանրամաս, համառօտիւ կը գրեն այսպէս 45° 25′ 30″։

ՋՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՆԵՐ, ԼԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ. — Երկրին մակերեսոյթը գիծերով բաժնուած կ'ենթադրուի, քառակուսիներու բաժնուած թուղթին պէս։ Այս գիծերէն ոմանք արեւելքէն արեւմուտք կ'երթան, ոմանք ալ հիւսիսէն հարաւ։

Արեւելքէն արեւմուտք գծուած չրջանակները հաստարակածին զուգահեռական են և կը կոչուին զուգահեռական օրջանակներ։ Երկրի երեսին որ և է մէկ կէտէն կարելի է զուգահեռական չրջանակ մը անցընել (Պատկ. 19)։

Ենթադրենք թէ հաստարակածէն մինչեւ իւրաքանչիւր բեւեռ 9 զուգահեռական չրջանակներ գծուած ըլլան, իւրաքանչիւրը 10 ական աստիճան հեռաւորութեամբ։

Վերի պատկերին մէջ 30 ական աստիճան հեռաւորութեամբ գծուած են։ Ասոնք կը հաշուուին հաստարակածէն սկսելով. 0° էն մինչեւ 90° հաստարակածին հիւսիսակողմը, և 0° էն 90° հարաւակողմը։ Որ և է տեղի մը և հաստարակածին մէջտեղ գտնուած զուգահեռական չրջանակներուն թիւը կը կոչուի Լայնութեան աս-



Պատկ. 19. — **30**ով **30**ով նշանակուած զուգահեռականներ

տիճան. ուրիշ խօսքով՝ լայնութեան ասոիճանը տեղւոյ մը հասարակածէն ունեցած հեռաւորութիւնն է։

Քարտէսներուն վրայ լայնութեան ասոիճանի թուանշանները նշանակուած կ'ըլլան քարտէսին ամէն ու ձախ եզերքներուն վրայ։ Հիւսիսային կիսագունտին մէջ գտնուած տեղերուն լայնութիւնը. հարաւային կիսագունտին մէջ գտնուածներունը՝ հարաւային լայնութիւն։ Երբ ըսենք թէ տեղ մը հիւսիսային լայնութեան 45°ին տակ կը գտնուի, կը նշանակէ թէ այդ տեղը հասարակածին հիւսիսային կողմը 45րդ զուգահեռականին վրայ կը գտնուի։

ՄԻՋՕՐԷԱԿԱՆՆԵՐ. ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ. — Միջօրէականները երկու բեւեռներէն անցնող չրջանակներ են։

Եթէ հասարակածը 360 ասոիճաններու բաժնենք և այդ բաժանման կէտերէն ու բեւեռներէն կէս չրջանակներ անցընենք, կ'ունենանք 360 հատ կէս-միջօրէականներ։ Պատկ. 20ին վրայ այդ միջօրէականները 30 ական ասոիճան հեռաւորութեամբ գծուած են։

Ան միջօրէականը որմէ սկսելով կը հաշուուին միւս բոլոր միջօրէականները՝ կը կոչուի Առաջին միջօրէական, որ երկրագունտը երկու կէսերու կը բաժնէ՝ Արեւելեան Կիսագունտ և Արեւմտեան Կիսագունտ։ Առաջին միջօրէականը 0° (զէրօ ասոիճան) կը նշանակուի (Պատկ. 20)։



Պատկ. 20. — **Միջօրէականներ եւ զուգահեռականներ 30°ի 30° ճշգրտուած**

Ընդհանրապէս առաջին միջօրէական կը համարուի Կրինիչէն (Լոնտոնայի մօտ) անցնող միջօրէականը, սակայն ֆրանսական քարտէսները, մեծ մասամբ, Փարիզի միջօրէականը կ'ընդունին։ Ասոր վրայ առաջին միջօրէականը Բարիզի միջօրէականն է։

Տեղի մը առաջին միջօրէականէն ունեցած հեռաւորութիւնը կը կոչուի այդ տեղին երկայնութեան ասոիճանը որ կը հաշուուի հասարակածին վրայ կամ զուգահեռական չրջանակի մը վրայ։

Երկայնութեան ասոիճանը կ'ըլլայ արեւմտեան՝ եթէ այդ տեղը առաջին միջօրէականին արեւմտեան կողմն է. կ'ըլլայ արեւելեան՝ եթէ այդ տեղը առաջին միջօրէականին արեւելեան կողմն է։

Քարտէսներուն վրայ երկայնութեան ասոիճանները կը նշանակուին քարտէսի չրջագիծին վերի և վարի կողմերը։ Տեղ մը արեւմտեան երկայնութեան 80° ին վրայ կը գտնուի ըսելը կը նշանակէ թէ այդ տեղը առաջին միջօրէականին արեւմտեան կողմը 80րդ միջօրէականին վրայ կը գտնուի։

Լայնութեան և երկայնութեան ասոիճանները են այն երկու հեռաւորութիւնները, որոնց մով կարելի կ'ըլլայ ճշդիւ որոշել Երկրի իւրաքանչիւր կէտին դիրքը։

Հարցում. — Որո՞նք են զուգահեռական չրջանակները և որո՞նք են միջօրէականները. ցոյց տուէք Համաստաղածին վրայ. — Յուշուցէք Համաստաղածին վրայ Հասարակածին տակ գտնուող գլխաւոր երկիրները. — Ի՞նչ գործ ունին երկայնութեան և լայնութեան ասոիճանները. — Ինչո՞ւ Միջօրէական անունը կոչուած երկու բեւեռներէն անցնող մեծ չրջանակներուն. — Ցոյց տուէք քարտէսին վրայ առաջին միջօրէականը. — Լայնութեան ո՞ր ասոիճաններուն տակ կը գտնուին Կ. Պոլիս, Սեբաստիա և Վան քաղաքները. — Ո՞ր զուգահեռականին վրայ է Աստանա քաղաքը. — Քանի՞ քիլոմէթր երկայնութեան մէկ ասոիճանը, գիտնալով որ երկրի չրջագիծը 40000 քիլոմէթր. — Երկայնութեան քանի՞ ասոիճանով իրարմէ հեռու են Իզմիր և Երզրում. — Ի՞նչ պէտք է հասկնալ Հակոնեայ լսելով ո՛րն է Կ. Պոլսոյ Հակոռնեան

ԳԼՈՒԽ Ե.

ԵՐԿՐԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Երկիրը անշարժ չէ միջոցին մէջ. այլ ինչպէս ըսինք՝ չարունակ ինքն իր վրայ կը թաւալի, միեւնոյն ատեն արեգակին չուրջը դառնալով։

Երկրի մակերեւոյթին մէկ կէսէն միւսը կը տարբերի թաւալման արագութիւնը, որ ոչինչ է երկու բեւեռներուն վրայ, բայց իր ծայրագոյն ասոիճանին կը հասնի Հասարակածին վրայ։

Սակայն թաւալման տեւողութիւնը անփոփոխ է ամէն տեղ, և կը կոչուի Օր որ կը բաժնուի 24 ժամերու։

Երկրին օրական թաւալմամբ յառաջ կուգայ ցորեկուան և գիշերուան յաջորդութիւնը։ Սրտարեւ, երկիրը դնդաձեւ ըլլալուն՝ արեգակը անոր մէկ կէսը միայն կրնայ լուսաւորել, մինչ միւս կէսը կը մնայ խաւարի մէջ. լուսաւոր կէսին համար կ'ըլլայ ցորեկ, իսկ խաւարի մէջ մնացած կէսին համար կ'ըլլայ գիշեր։ Բայց երկրին թաւալման չնորհիւ գիշերն ու ցորեկը անփոփոխ կերպով միեւնոյն տեղը չեն ըլլար։

Երկիրը արեւմտաբէն արեւելք չարունակ ինքն իր վրայ դարձած ատեն՝ իր մակերեւոյթին ամէն մասերը յաջորդաբար արեգակին կը ներկայացնէ. հետեւաբար երկրի մակերեւոյթին մէկ կէսին վրայ Առաւօս կ'ըլլայ երբ այդ կէսը մութ մասէն կ'անցնի դէպի լուսաւոր մասը. Երեկոյ կ'ըլլայ՝ երբ այդ կէսը մութ մասին մէջ կը կատարէ արեգակին չուրջը ձուաձեւ բոլորակ մը գծելով որ կը կոչուի Ձուաձիր կամ Ծիր խաւարման, վասն զի այս գծին վրայ կը պատահին արեգակին և լուսնին խաւարումները (Պակ. 22)։

Երկրին չարժումները մենք չենք զգար։ Մեզի այնպէս կ'երեւայ որ արեգակն ու աստղերը



Պատկ. 22. — Ձուաձիր

ցերը 24 ժամուան մէջ արեւելքէն արեւմուտք կը գառնան երկրին չուրջը որ անշարժ կը թուի։ Ասոր համար է որ մարդիկ հին ատեն ընդունած են ինչ ինչ բացատրութիւններ, զորս դեռ կը գործածենք՝ գիտնալով հանդերձ թէ սխալ են. օրինակի համար՝ «արեւուն կամ աստղերուն ծագիլը և մարը մտնելը» կ'ըսենք, մինչդեռ արեգակն ու աստղերը ոչ ծագում ունին և ոչ ալ մայրամուտ։ Այս պատրանքը ունենալնուս պատճառն է երկրին չարժումը որ կը կատարուի արեւմուտքէն արեւելք, այսինքն արեգակին և աստղերուն առ երեւոյթ ընթացքին հակառակ ուղղութեամբ։



Պատկ. 21. — **Ցորեկուան եւ գիշերուան յաջորդութիւնը**

ԺԱՄՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Երկրին օրական թաւալման պատճառով է որ տարբեր միջօրէականներու վրայ գտնուած տեղեր իրարմէ տարբեր ժամ ունին։ Որովհետեւ երկիրը՝ ինչպէս արդէն ըսինք՝ արեւմուտքէն արեւելք ինքն իր վրայ կը գառնայ, մեզի այնպէս կ'երեւայ որ արեգակը արեւելքէն արեւմուտք կ'երթայ. հետեւաբար երկու միջօրէականներէ այն որ աւելի դէպ ի արեւմուտք է՝ աւելի կանուխ կը մտնէ, միեւնոյն ատեն արեգակին չուրջը դառնալով։

Երկրի մակերեւոյթին մէկ կէսէն միւսը կը տարբերի թաւալման արագութիւնը, որ ոչինչ է երկու բեւեռներուն վրայ, բայց իր ծայրագոյն ասոիճանին կը հասնի Հասարակածին վրայ։

Սակայն թաւալման տեւողութիւնը անփոփոխ է ամէն տեղ, և կը կոչուի Օր որ կը բաժնուի 24 ժամերու։

Երկրին օրական թաւալմամբ յառաջ կուգայ ցորեկուան և գիշերուան յաջորդութիւնը։ Սրտարեւ, երկիրը դնդաձեւ ըլլալուն՝ արեգակը անոր մէկ կէսը միայն կրնայ լուսաւորել, մինչ միւս կէսը կը մնայ խաւարի մէջ. լուսաւոր կէսին համար կ'ըլլայ ցորեկ, իսկ խաւարի մէջ մնացած կէսին համար կ'ըլլայ գիշեր։ Բայց երկրին թաւալման չնորհիւ գիշերն ու ցորեկը անփոփոխ կերպով միեւնոյն տեղը չեն ըլլար։

Երկիրը արեւմտաբէն արեւելք չարունակ ինքն իր վրայ դարձած ատեն՝ իր մակերեւոյթին ամէն մասերը յաջորդաբար արեգակին կը ներկայացնէ. հետեւաբար երկրի մակերեւոյթին մէկ կէսին վրայ Առաւօս կ'ըլլայ երբ այդ կէսը մութ մասէն կ'անցնի դէպի լուսաւոր մասը. Երեկոյ կ'ըլլայ՝ երբ այդ կէսը մութ մասին մէջ մտնելու մօտ է. Կէս օր կ'ըլլայ՝ երբ այդ կէսը ճիշդ արեւուն դէմ դնայ, այսինքն լուսաւոր մասին ճիշդ մէջտեղն ըլլայ (Պատկ. 21)։

Երկիրը արեգակին չուրջը կը գառնայ 365 օրուան և 6 ժամու մէջ. այս տեւողութիւնը կը կոչուի Տարի։ Երկիրը իր այս տարեկան չրջանը

տեսնէ արեգակը, իսկ այն որ դէպի արեւելք կը գտնուի, արդէն իսկ արեգակը տեսած կ'ըլլայ։ Այսպէս ուրեմն Բարիզ կէս օր եղած ատեն, Նիս–Եորքի մէջ՝ որ աւելի դէպի արեւմուտք է, առաւօտեան ժամը 7 կ'ըլլայ դեռ (այսինքն կէս օրին դեռ 5 ժամ կ'ուզէ), իսկ Կ. Պալիս՝ որ աւելի դէպի արեւելք կը գտնուի, ժամը մէկը քառասուն և հինգ վայրկեան անցած կ'ըլլայ (այսինքն կէս օրը 1 ժամ 3 քառորդ անցած)։

Դիւրին է որոշել ժամու տարբերութիւնը երկու քաղաքներու միջեւ, որոնց երկայնութեան աստիճանով իրարմէ ունեցած հեռաւորութիւնը գիտենք։ Երկրին դառնալման չարժումին մէջ՝ իր մակերեւոյթին իւրաքանչիւր կէսը 24 ժամուան մէջ ամբողջ չրջանակ մը կը գծէ, և կամ ինչ որ նոյն բանն է, իւրաքանչիւր կէսը 24 ժամուան մէջ արեւմուտքէն արեւելք 360° տեղ կ'առնէ, ըսել է մէկ ժամուան մէջ դէպի արեւելք $\frac{360}{24} = 15$ աստիճան տեղ կ'առնէ և 4 վայրկեանի մէջ ալ՝ 1 աստիճան։ Հետեւաբար երկայնութեան աստիճանով իրարմէ 15° հեռաւորութիւն ունեցող երկու տեղերու միջեւ 2 մէկ ժամ տարբերութիւն պիտի ըլլայ, 30° հեռաւորութիւն ունեցող երկու տեղերու միջեւ 2 ժամ կայնի։

Փոխադարձաբար, եթէ երկու քաղաքներու ժամերու տարբերութիւնը գիտենք, անոնց արեւելքէն արեւմուտք ունեցած հեռաւորութիւնը կրնանք որոշել աստիճանով։ Այսպէս առաջին Միջօրէական համարուած տեղին վրայ լարուած ժամացոյց մը ունենալով՝ բոլոր տեղերուն երկայնութեան աստիճանը կրնայ գտնուիլ։ Եթէ տեղի մը ժամը Առաջին Միջօրէականին ժամէն 2 $\frac{1}{2}$ աւելի առաջ է, այդ տեղը կը գտնուի արեւելեան երկայնութեան $2\frac{1}{2} \times 15^0 = 37\frac{1}{2}$ աստիճանին վրայ։

ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ՅՈՐԵԿՈՒԱՆ ԵՒ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԱՆՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

Երկիրը իր տարեկան չրջանին մէջ կատարելապէս ուղիղ դիրք մը չպահեր, այլ իր առանցքը հակած է երկրի ծիրին մակարդակին վրայ, և այս հակումը անփոփոխ կը մնայ Երկրի տարեկան չրջանին ամբողջ տեւողութեան մէջ։ Այս հակումէն յառաջ կուգան եղանակներու կանոնաւոր յաջորդութիւնն ու ցերեկուան և գիշերուան անհաւասարութիւնը։

Արդարեւ, եթէ երկրին թռուցման առանցքը ուղղահայեաց ըլլար ծիրին մակարդակին վրայ, երկրագունդի ամէն մէկ կէտը անփոփոխ չափով պիտի ստանար արեգակին ջերմութիւնը։ Արեգակը յաւիտենապէս ուղղահայեաց պիտի մնար հասարակածին վրայ և չափաւոր խոտոր պիտի իյնար երկրի երեսին միւս բոլոր կէտերուն վրայ՝ մինչեւ բեւեռները, ուր յաւիտեան հորիզոնէն վեր չպիտի բարձրանար։ Ահկե զատ երկիրը իր առանցքին ուղղութեամբ երկու հաւասար կէսերու բաժնուած ըլլալով ոչ մէկ տեղ գիշերը ցորեկէն աւելի կարճ կամ երկայն պիտի ըլլար։

Բայց սրաշխատ, ինչպէս ըսինք, երկրին առանցքը հակած է իր ձուածիրի մակարդակին վրայ, իր լուսաւոր կէսը միւս խաւար կէսէն բաժնող գիծը ամէն ատեն երկրին առանցքին չհամապատասխաններ, ասոր համար այլ և այլ տեղեր աւելի երկար ատեն ենթարկուած կը մնան արեգակին լոյսին ու ջերմութեան։

Տարին երկու անգամ միայն այս գիծը երկրին առանցքին հետ կը պատչահի. Մարտ 21ին և Սեպտեմբեր 22ին, որ ատեն երկրագունդին վրայ ամէն տեղ Գիշերն ու Ցերեկը հաւասար կ'ըլլան։ Տարւոյն մէջ ուրիշ ամէն ատեն այս հաւասարութիւնը միայն հասարակածին վրայ գոյութիւն ունի (Պատկ. 23)։

Մարտ 21ին՝ երկրագունդին լուսաւոր կէսը միւս մութ կէսէն բաժնող գիծը երկու բեւեռներէն կ'անցնի, այնպէս որ զուգահեռական չրջանակներուն կէսը լոյսի և կէսն ալ խաւարի մէջ կ'ըլլայ։ Այս դիրքին մէջ երկրի երեսին վրայ ամէն տեղ գիշերն ու ցերեկը հաւասար կ'ըլլան։ Այս պատճառաւ Մարտի 21ին կ'ըսուի Գիշերահաւասար, այսինքն հիւսիսային կիսագունդին համար՝ Գարնան գիշերահաւասար, իսկ հարաւային կիսագունդին համար՝ Աշնան գիշերահաւասար։

Մարտ 21էն սկսելով երկիրը քանի յառաջ երթայ Ջուածիրի մակարդակին մէջ, այնքան իր հիւսիսային բեւեռը կ'սկսի արեգակէն հեռանալ, մինչ հարաւային բեւեռը կ'սկսի արեգակէն մօտենալ. այնպէս որ հիւսիսային կիսագունդին վրայ հետզհետէ զուգահեռականները մեծագոյն մասը լոյսի և փոքրագոյն մասը խաւարի մէջ կ'ըլլայ, ասոր հակառակը կը պատահի հարաւային կիսագունդին վրայ։ Ուստի հիւսիսային կիսագունդին վրայ հետզհետէ ցերեկները կ'երկարին և գիշերները կը կարճանան, իսկ հարաւային կիսագունդին վրայ հակառակը կը պատահի։ Միւս կողմէ արեգակին ճառագայթները հետզհետէ աւելի ուղղակի կ'իյնան հիւսիսային կիսագունդին քան թէ հարաւային կիսագունդին վրայ, ասոր համար հիւսիսային կիսագունդին վրայ ջերմութիւնը տակաւ կ'աւելնայ, մինչդեռ հարաւային կիսագունդին վրայ տակաւ կը նուազի։

Մարտ 21էն սկսեալ երեք ամիս յետոյ՝ այսինքն Յունիս 21ին երկրին այն մասը որ հիւսիսային բեւեռին ու բեւեռական չրջանակին մէջտեղ կը գտնուի՝ ամբողջովին արեգակին դարձած է և բոլորովին լոյսի մէջ կը գտնուի (Դիրք Ա.). իսկ երկրին այն մասը որ հարաւային բեւեռին ու բեւեռական չրջանակին մէջտեղ կը գտնուի բոլորովին Արեգակէն հեռացած է և խաւարի մէջ. ուստի և Յունիս 21ին հիւսիսային կիսագունդին վրայ ցերեկները երկարագոյն են և գիշերները կարճագոյն, հակառակը կը պատահի հարաւային կիսագունդին վրայ։ Այս պատճառաւ Յունիս 21ին կ'ըսուի Ամառնային արեգադարձ, այսինքն հիւսիսային կիսագունդին համար՝ Ամառնային արեգադարձ, իսկ հարաւային կիսագունդին համար՝ Ձմեռնային արեգադարձ։



Պատկ. 23. — **Արեւադարձներ, գիշերահաւասարներ, եղանակներ**

Յունիս 21էն 14 ժամ 14 վայրկեան կը մնայ յունուարի 30ին վրայ, 15 ժամ 54 վայրկեան՝ յունուարի 45ին վրայ, 19 ժամ 37 վայրկեան՝ յունուարի 60ին վրայ (Ս. Փետերսպուրգ), 24 ժամ կը մնայ յունուարի $66^0\frac{1}{2}$ին վրայ և անկէ վեր մինչեւ բեւեռ։

Յունիս 21ը կ'ըսուի Առեւակայ ամրան՝ հիւսիսային կիսագունդին համար, իսկ հարաւային կիսագունդին համար՝ Առեւակայ ձմրան, վասն զի այն ատեն հիւսիսային կիսագունդին համար ամառը կ'սկսի և հարաւային կիսագունդին համար՝ ձմեռը։

Յունիս 21 էն ետքը երկիրը կը չարունակէ յառաջ երթալ արեւմուտքէն արեւելք, այնպէս որ հետզհետէ հիւսիսային բեւեռը կ'սկսի արեգակէն հեռանալ և հարաւայինը արեգակին մօտենալ. ուստի և հիւսիսային կիսագունդին վրայ ցերեկները երթալով կը կարճանան և գիշերները կ'երկարին, հակառակը կը պատահի հարաւային կիսագունդին վրայ մինչեւ Սեպտեմբեր 23 որ ատեն Մարտ 21ի երեւոյթները կը նորոգուին, այսինքն երկու կիսագունդներուն վրայ ալ զուգահեռական չրջանակներուն կէսը լոյսի և կէսը խաւարի մէջ կը գտնուի։ Գիշերն

ու ցերեկը նորէն հաւասար կ'ըլլան բոլոր երկրին վրայ. ուստի և Սեպտեմբեր 23ը կը կոչուի Գիշերահաւասար Աշնան հիւսիսային կիսագունտին համար, և Գիշերահաւասար Գարնան հարաւային կիսագունտին համար, վասն զի այն օրէն հիւսիսային կիսագունտին վրայ Աշունը կ'սկսի և հարաւային կիսագունտին վրայ՝ Գարունը (Դիրք Բ.):

Սեպտեմբեր 23էն հաքը երկիրը կը շարունակէ իր ճամբան մինչև Արեւմուտքէն Արեւելք. հիւսիսային բեւեռը հետզհետէ կը հեռանայ Արեգակէն. իսկ հարաւայինը հետզհետէ Արեգակին ճառագայթներուն դիմացը կու գայ, հիւսիսային կիսագունտին մէջ ցերեկները կ'սկսին կարճնալ և գիշերները երկարիլ, ջերմութիւնն ալ հետզհետէ կը նուազի. իսկ հակառակը կը պատահի հարաւային կիսագունդին մէջ, մինչեւ Դեկտեմբեր 21՝ որ առեն կ'սկսին պատահիլ ճիշդ այն բաները որ տեղի կ'ունենային Յունիս 21ին, միայն հակառակ կերպով. Հարաւային բեւեռային մարզը ամբողջովին կը լուսաւորուի արեգակէն, մինչդեռ հիւսիսային բեւեռային մարզը մութի մէջ կը մնայ (Դիրք Դ.):

Դեկտեմբեր 21ը կը կոչուի Ձմեռնային արեւադարձ՝ հիւսիսային կիսագունտին համար. իսկ հարաւային կիսագունտին համար՝ Ամառնային արեւադարձ. վասն զի Դեկտեմբեր 21ին հիւսիսային կիսագունտին համար ցերեկուան ամէնէն կարճ և գիշերուան ամէնէն երկայն, ու ջերմութիւնն առաջինն ալ նուազագոյն ժամանակն է, իսկ հարաւային կիսագունտին համար անոր հակառակն է:

Դեկտեմբեր 21էն սկսելով մինչեւ Մարտ 21 կը վերակսին այն մթնշոյլ երեւոյթները որոնք տեղի ունեցան Յունիս 21էն մինչեւ Սեպտեմբեր 23. միայն թէ երկու կիսագունտներուն վրայ հակառակ կերպով, այսինքն Դեկտեմբեր 21էն մինչեւ Մարտ 21 հիւսիսային կիսագունտին համար Ձմեռ է, և հարաւային կիսագունտին համար՝ Ամառ: Վերջապէս Մարտ 21ին կ'ըլլայ նորէն Գարնան Գիշերահաւասար (Դիրք Դ.) և երկիրը Արեգակին բոլորաթիքը իր ամբողջ շրջանը կատարած ըլլալով՝ սարին կը լրանայ (Պատկ. 23):

Ուրեմն, երկիրը իր տարեկան շրջանին ամբողջ տեւողութեան մէջացին Ձուածիրի մակարդակին վրայ հակած դիրք մը ունենալուն հետեւանքն է որ

1. Տարին կը բաժնուի չորս եղանակներու.

2. Ցերեկուան ու գիշերուան երկարութիւնը կը փոխուի եղանակներուն համեմատ:

Այսպէս, մեր կիսագունտին մէջ գարունը կը սկսի գարնան գիշերահաւասարին (մարտ 21), ամառը կը սկսի ամրան արեւադարձին (Յունիս 21), աշունը կը սկսի աշնան գիշերահաւասարին (սեպտ. 22) և ձմեռը՝ ձմրան արեւադարձին (դեկտ. 21):

Պայմ գիշերուան ու ցերեկուան տեւողութեան, մինչեւ հիմա ըսածնիս կրնանք ամփոփել սապէս.

1. Հաւասարածին վրայ ամբողջ տարւոյն մէջ գիշերուան և ցերեկուան տեւողութիւնը հաւասար է:

2. Բեւեռային շրջանակին սակ ամէնէն երկար օրուան տեւողութիւնն է 24 ժամ. մինչեւ նոյն առեն հակառակ բեւեռային շրջանակին սակ ամէնէն երկայն գիշերուան տեւողութիւնն է 24 ժամ:

3. Բեւեռային շրջանակէն մինչեւ բեւեռ՝ ամէնէն երկայն օրուան տեւողութիւնն է 24 ժամէն մինչեւ վեց ամիս:

4. Բուն իսկ բեւեռին վրայ 6 ամիս ցերեկ և 6 ամիս գիշեր է փոխն ի փոխ:

5. Հաւասարածէն մինչեւ հիւսիսային բեւեռային շրջանակը օրերը կ'երկարին դեկտ. 21էն մինչեւ 24 յունիս. իսկ հաւասարածէն մինչեւ հարաւային բեւեռային շրջանակը՝ օրերը կ'երկարին յունիս 24էն մինչեւ դեկտեմբեր 21:

ԴԱՍ ԺԲ.

ԵՐԿՐԻ ԳՕՏԻՆԵՐԸ

Երկրին առանցքը իրր $66^0\frac{1}{2}$ հակած է ձուածիրի մակարդակին վրայ: Երկրի ձուածիրի մակարդակն ալ իրր $23\frac{1}{2}$ աստիճանի անկիւն մը կը կազմէ հաւասարածի մակարդակին հետ որ ուղղահայեաց է առանցքին ճիշդ մէջտեղին վրայ: Անկէ կը հետեւի որ արեգակը ուղղահայեաց կրնայ չփայլիլ հաւասարածէն վերեւ, այլ փոխն ի փոխ կը խոտորի անկէ մինչեւ $23^0\frac{1}{2}$ դէպի հիւսիս կամ $23^0\frac{1}{2}$ դէպ հարաւ, տարւոյն եղանակին համեմատ: Հաւասարածէն դէպի հիւսիս և դէպ ի հարաւ իրր $23^0\,30'$ հեռաւորութեամբ քաշուած զուգահեռականները կը կոչուին Արեւադարձի Շրջանակ (Պատկ. 24): Հաւասարածին հիւսիսային կողմինը կը կոչուի Խեցգետնի արեւադարձ. իսկ հարաւային կողմինը՝ Այծեղջեր արեւադարձ: Երկու արեւադարձներուն մէջտեղ գտնուած մասը կը կոչուի Այրեգետ Գօտի. երկրին այս մասին մէջ տարւոյ մէջ ամսակ ամբ կ'ըլլայ և տարւոյն բոլոր եղանակներուն՝ ցերեկուան ու գիշերուան տեւողութեան մէջեւ եղած տարբերութիւնը չատ քիչ է բազդատմամբ երկրին ուրիշ մասերուն:

Երկու բեւեռներէն իրր $23\frac{1}{2}$ աստիճան, կամ հաւասարածին երկու կողմէն իրր $66\frac{1}{2}$ աստիճան հեռաւորութեամբ անցնող զուգահեռականները չրջանակները կը կոչուին բեւեռային օրջանակ: Հիւսիսային կիսագունտինը կ'ըսուի Արջային բեւեռային օրջանակ. իսկ հարաւայինը՝ Հակաջային բեւեռային օրջանակ (Պատկ. 24):

Բեւեռներուն և բեւեռային շրջանակներուն միջեւ գտնուած մասերը կը կոչուին Յրտային կամ Սառուցեալ Գօտի (Պատկ. 24), ուր արեգակը ամբողջ մէկ օրէն աւելի կը մնայ հորիզոնին վրայ՝ առանց մարելու. և ձմեռն ալ մէկ օրէն աւելի չի ծագիր: Բուն իսկ բեւեռներուն վրայ վեց ամիս չարունակ ցերեկ է, երբ բեւեռը դէպի արեգակը դարձած է, և վեց ամիս ալ անընդհատ գիշեր է երբ բեւեռը դէպի արեգակ չէ դարձած: Ուրեմն երկրին բեւեռները վեց ամիս տեւող ցերեկ մը և վեց ամիս տեւող գիշեր մը ունին ամբողջ տարւոյն մէջ: Հիւսիսային և Հարաւային Սառուցեալ գօտիներուն մէջ՝ ուր արեգակին ճառագայթները բոլորովին խոտորնակ կ'իյնան՝ ցուրտը չատ է և սառ-

Պատկ. 24. — Երկրի գօտիները

սուկ. և ամէն տեղ մշտնջենաւոր ձմեռ կը տիրէ: Ցերեկուան լոյսը ալօտ է նոն որովհետեւ արեգակը հորիզոնէն վեր չատ քիչ կը բարձրանայ. ասոր փոխարէն գիշերուան մութը այնքան թանձր չէ՝ ձիւներուն փայլին և յաճախ նաեւ բեւեռալոյս կոչուած երեւոյթներուն չնորհիւ:

Բեւեռային չրջանակներուն և արեւադարձներուն միջեւեղ գտնուած մասերը կը կոչուին բարեխառն գօտի. հիւսիսային կիսագունտին մէջ՝ հիւսիսային բարեխառն գօտի, իսկ հարաւային կիսագունտին մէջ՝ հարաւային բարեխառն գօտի: Արեգակին ճառագայթները այս գօտիներուն վրայ նուազ խոտորնակ պատնելով՝ բարեխառն տաքութիւնը մը չատ կամ պակաս չորս եղանակները կանոնաւորապէս իրարու կը յաջորդեն:

Հարցաբան. — Երկիրը քանի՞ կերպ չարժուած ունի. — Ի՞նչ նմանութեամբ կրնաք բացատրել այն պատրանքը որ մեզի կարծել կուտայ թէ արեգակը կը տեղափոխուի. — Ի՞նչ է երկրի թաւալման չարժումը, ինչո՞ւ համար գիշեր և ցերեկ կ'ըլլայ. — Եթէ ակ է ըսել թէ արեգակը կը ծագի կամ արեգակը մարը կը մտնէ. — Ո՞րքան առենի մէջ երկիրը արեգակին չուրջը կը դառնայ. — Ի՞նչ է ձուածիրը. ի՞նչ բան է առաջ կուգայ եղանակներու փոփոխութիւնը. — Ի՞նչ կը հասկնաք արեւադարձ ըսելով — Ո՞ր կիսագունտին մէջ է խեցգետնի արեւադարձը և ո՞ր կիսագունտին մէջ այծեղջեր արեւադարձը. — Արջային բեւեռային չրջանակը ո՞ր կիսագունտին մէջ կը գտնուի և քանի՞ աստիճան հեռու է Արջային բեւեռէն. — Համառօտաբար վերյ ցոյց տուէք երկու արեւադարձներն ու երկու բեւեռային չրջանակները. — Ի՞նչ երկարութիւն ունին ցերեկները հաւասարածին սակ. — Բեւեռներուն վրայ օրերու երկարութիւնը ի՞նչպէս է. — Ո՞րն է տարւոյն ամէնէն ցուրտ եղանակը և ե՞րբ կը սկսի. — Ե՞րբ կը սկսին կարճնալ ցերեկները մեր կիսագունտին մէջ. — Որո՞նք են այրեգետ գօտիին սահմանները. — Որո՞նք են երկու բարեխառն գօտիներու սահմանները, և երկու ցրտային գօտիներուն սահմանները. — Կ. Պոլսոյ մէջ կէս օր եղած առեն Վանայ մէջ ժամը քանի՞ կ'ըլլայ, գիտնալով որ Կ. Պոլիս արեւելեան երկայնութեան 26° 45'ին վրայ կը գտնուի, իսկ Վան 41°ին վրայ.

ԴԱՍ ԺԳ.

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ ԲԱՐՏԻՍՆԵՐ

Երկիրը դիւրաւ ուսումնասիրելու համար պէտք է անոր համառօտ բայց ճշդիւտ պատկերն ալքի առջեւ ունենալ. ասոր համար մար-

դիկ չինած են երկրագունտեր և Աշխարհացոյց քարտէսներ։

Երկրագունտերը արուեստական գունտեր են, որոնց վրայ չատ փոքր համեմատութիւններով գծուած են աշխարհագրական չրջանակները, ցամաքներն ու ծովերը և իրենց գլխաւոր բաժանումները։ Երկրագունտերը սովորաբար հատատուած կ'ըլլան առանցքի մը վրայ այնպիսի դիրքով մը որ կարենան դառնալ բեւեռներէն անցնող առանցքի մը չուրջը։

Արուեստական երկրագունտի մը չառաւիղին և երկրի չառաւիղին միջև եղած համեմատութիւնը կը կոչուի աստիճան։

Արուեստական երկրագունտերը երկնքին չատ փոքր բայց ճչգրիտ պատկերը կը ներկայացնեն. սակայն ամենափոքր համեմատութիւններով չինուած ըլլալնուն բնական չեն ըլլար երկիրը իր ամէն մանրամասնութիւններով ուսումնասիրելու համար։ Սակէ զատ թէ սուղ են և թէ գործածութիւններնին ալ դժուար է։ Այս պատճառաւ պէտք եղած է հարթ մակերեսոյթի մը վրայ ներկայացնել երկրին ամրողջութիւնը կամ առանձին առանձին մասերը. և այս պէտքը գոհացնելու համար չինուած են Աշխարհագրական Քարտէսները։

Հասկնալու համար թէ ինչպէս կը չինուին աշխարհագրական քարտէսները. պէտք է նախ և առաջ գիտնալ Յատակագիծ մը պատրաստելու եղանակը։

ՅԱՏԱԿԱԳԻԾԻ ՄԸ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ։ — Երբ կ'ուզենք սեւ տախտակի մը վրայ կամ թերթի մը թուղթի վրայ ներկայացնել դասարան մը (Պատկ. 25), տուն մը կամ քալաք մը, յատակագիծ մը կը չինենք։



Պատկ. 25. — Դասարան մը

Ենթադրենք թէ սեւ տախտակին վրայ կ'ուզենք չինել դպրոցին մէկ սրահին յատակագիծը։ Բնականաբար չենք կրնար ներկայացնել զայն իր բուն երկայնութիւններով. ուստի անոր համաձայն պատկերը կը գծենք։ Կը չափենք դասարանին երկայնութիւնը, որ է օրինակի համար 10 մէթր. այդ երկայնութիւնը կը ներկայացնենք տախտակին վրայ մէկ մէթր երկայնութեամբ գիծով մը, այսինքն 10 անգամ կը պզտիկցնենք. որպէս զի սրահին ճչգրիտ պատկերը ունենանք, պէտք է որ բոլոր չափերն ալ նոյն համեմատութեամբ պզտիկցնենք. այս պէս լայնութիւնը որ 7 մէթր է, տախտակին վրայ պիտի ներկայացուի 10 անգամ փոքր այսինքն 70 սանթիմէթր երկայնութիւն ունեցող գիծով մը։ Սրահը ուղղանկիւնի մը ձեւը ունի, ուստի զայն ներկայացնելու համար



Պատկ. 26. — **Դպրոցի սրահի մը յատակագիծը**

Աստիճան 1/150։ Այս յատակագիծին վրայ 1 սանթիմէթրը իրականին մէջ 1 մ. 50ի երկայնութիւն մը կը ներկայացնի

1 մէթր երկայնութիւն և 70 սանթիմէթր լայնութիւն ունեցող ուղղանկիւնի մը կը գծենք (Պատկ. 26)։

Այս պատկերին վրայ կը նշանակենք դրան տեղը. որովհետեւ դուռը պզտիկ միջնորմներէն մէկուն ճիշդ մէջտեղը կը գտնուի և 1 մէթր լայնութիւն ունի, մեր պատկերին վրայ պիտի ունենայ 10 սանթիմէթր լայնութիւն, այսինքն 10 անգամ աւելի պզտիկ պիտի երեւայ։ Մի եւ նոյն կերպով կը նշանակենք պատուհաններն ալ։

Եթէ ուզենք նշանակել նաև զրասեղանները, կը չափենք անոնցմէ մէկուն հետաւորութիւնը սեռնակին մեծ ու պզտիկ պատերէն. և այսպէս գտնուած երկու չափերուն $\frac{1}{10}$ը առնելով, պատկերին վրայ կը նշանակենք այս հետաւորութիւնները։ Այս ձեռքով կրնանք զրասեղանին ծայրը ներկայացնող կէտը նշանակել. յետոյ այս կէտէն սկսելով՝ զրասեղանը պատկերացնող ուղղանկիւնը կը գծենք, նոյն բանը կ'ընենք միւս զրասեղաններուն համար։

Վերջապէս ամէն բան նշանակուելէն ետքը մեր պատկերը դասարանին ձեւն ու դրութիւնը կը ներկայացնէ։ Դասարանին յատակագիծն է այս. կը մնայ նշանակել թէ որ կողմը կը գըտնուի հիւսիսը, անոր հակառակ կողմը կ'ըլլայ հարաւը. յետոյ կը նշանակուին արեւելքն և արեւմուտքը։

ԱՍՏԻՃԱՆ. — Մեր գծած պատկերին մէջ՝ տախտակամածին վրայ չափուած երկայնութիւնները յատակագիծին վրայ ներկայացուցինք 10 անգամ աւելի փոքր երկայնութիւններով։ Տախտակամածին վրայ չափուած իրական երկայնութիւններուն և յատակագիծին վրայ հաշուուած երկայնութիւններուն միջեւ եղած համեմատութիւնը կը կոչուի աստիճան։ Մեր յատակագիծին աստիճանն է ուրեմն 1 ու 10 կամ $\frac{1}{10}$։ Աստիճանը կը գրուի հասարակ կոտորակի մը ձեւին տակ, որուն համարիչն է 1։

Եթէ դասարանին յատակագիծը փոխանակ սեւ տախտակին վրայ գծելու՝ հարկ ըլլար թերթի մը թուղթի վրայ գծել, $\frac{1}{10}$ աստիճանը չատ մեծ պիտի ըլլար. այն ատեն պիտի գործածէինք աւելի փոքր աստիճան մը, օրինակի համար $\frac{1}{100}$, $\frac{1}{150}$, $\frac{1}{200}$ եւայլն։ Որքան աւելի փոքր յատակագիծ մը պահանջուի, այնքան աւելի փոքր աստիճան մը պէտք է ընտրել։

Աստիճանը կը ծառայէ իրական երկայնութիւնները գտնել, յատակագիծին վրայ չափուած երկայնութիւններուն միջոցաւ։ Օրինակի համար, դպրոցին սրահին յատակագիծին վրայ (որուն աստիճանն է $\frac{1}{150}$), զրասեղաններուն երկայնութիւնն է 1 սանթիմէթր. ուրեմն իրենց իրական երկայնութիւնը 150 անգամ աւելի մեծ է, այսինքն 150 սանթիմէթր կամ $1\frac{1}{2}$ մէթր (Պատկ. 26)

Ուրեմն կրնանք հետեւեալ երկու կանոնները յառաջ բերել։

Ա. Յատակագիծին վրայ նշանակուելիք երկայնութիւնները գտնելու համար՝ իրական երկայնութիւնները կը բաժնենք աստիճանը ցուցնող կոտորակին յայտարարով։

Բ. Յատակագիծին նայելով՝ իրական երկայնութիւնները գտնելու համար, յատակագիծին վրայ չափուած երկայնութիւնները պէտք է բազմապատկել աստիճանը ցուցնող կոտորակին յայտարարով։

Յատակագիծներու կամ քարտէսներու վրայ նշանակուած աստիճանը երկայնութիւններու աստիճան է, ոչ թէ մակերեսներու։ Այսպէս, $\frac{1}{10}$ աստիճանով չինուած դասարանին յատակագիծին վրայ՝ յատակագծին երկայնութիւններն են որ իրական երկայնութիւններէն 10 անգամ աւելի փոքր են. դասարանը ներկայացնող ուղղանկիւնին մակերեսը 10×10 կամ 100 անգամ աւելի փոքր է դասարանին իրական մակերեսէն։

Շատ անգամ աստիճանը կը ցուցուի ուղիղ գիծի մը ձեւով որ որոշեալ իրական երկայնութիւն մը կը ներկայացնէ։ Հետեւեալ պատկերին մէջ դիւրին է տեսնել թէ մեւնոյն գիծը կրնայ տարբեր երկայնութիւններ ներկայացնել՝ աստիճանին համեմատ։

Աստիճան 1:25000

0 250 500 750 1000 1250 1500 մէթր

Աստիճան 1:50000

0 500 1000 1500 2000 2500 3000 մէթր

Աստիճան 1:100000

0 1 2 3 4 5 6 քիլոմէթր

Աստիճան 1:250000

0 3 6 9 12 15 քիլոմէթր

Աստիճան 1:1000000

0 10 20 30 40 50 60 քիլոմէթր



Պատկ. 27. — Ինչպէս կ'երեւան իրականութեան մէջ ալիքները



Պատկ. 28. — Ինչպէս կը ներկայացնեն զանոնք քարտէսներու մէջ

ՍՏԵՆԳԱԳԾԱՆԿԱՐՆԵՐ ԿԱՄ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԳԻԾԵՐ. — Ցամաքագիծերը փոքր չափով մակերեսներ կը ներկայացնեն, իսկ քարտէսները շատ աւելի մեծ երկիրներ կը պատկերացնեն, միայն թէ քարտէսներուն ասոնց ցամաքագիծերու ստիճանները աւելի փոքր է։ Քարտէսները երկիր մը կը ներկայացնեն այնպէս ինչպէս պլանի տեսնելինք զայն վերէն շատ մեծ բարձրութենէ մը վար դիտելով։

Քարտէս մը այնքան աւելի մանրամասն կ'ըլլայ որքան աւելի մեծ ըլլայ իր ստիճանը. տեղագրական քարտէս կը կոչուի այն որուն

մէջ կատարելապէս կրնան ներկայացուիլ հողին բարձրութիւնները, քաղաքները, գիւղերը, ճանապարհները և նոյն իսկ առանձին առանձին բնակարանները։

Երբ քարտէսի մը ստիճանը շատ փոքր ըլլայ, ան ատեն մի միայն գլխաւոր լեռնաշղթաները, մեծ գետերը, և ամէնէն կարեւոր քաղաքները միայն կարելի կ'ըլլայ ներկայացնել քարտէսին մէջ։

Լիճերը, ճահիճները, անտառները, ճամբաները, երկաթուղիները, բնակարանները եւայլն նոր կայացնելու համար կը գործածուին պայմանագրական նշաններ, որոնք դիւրաւ միտք կը պահանջեն քարտէսներու չափով գործածուելիքեանը։

Քարտէսներու գծագրութեան մէջ գլխաւոր դժուարութիւնը կը կայանայ գետնի անհարթութիւնները, այսինքն լեռները և գետնի դարվարութեան այլ և այլ ստիճանները ներկայացնելու մէջ։ Ատոր համար կը գործածուին այլ և այլ եղանակներ, ինչպէս մակաւասարութեան գիծեր, խաչագծիներ, եւն։

ՄԱԿԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԳԻԾԵՐ. — Մակաւասարութեան գիծ (courbe de niveau) կը կոչուի գիծ մը որուն ամէն կէտերը միեւնոյն բարձրութեան կամ միեւնոյն մակարդակին վրայ կը գտնուին։ Կրնանք օրինակի համար մակաւասարութեան գիծեր գծել աւազի կոյտին վրայ։ Հորիզոնական գաւազան մը կը կապենք ուղղաձիգ գաւազանի մը որուն ծայրը հողին կը զետչի։ Եթէ ուղղաձիգ գաւազանը դարձնենք աւազի կոյտին չուրջը, հորիզոնական գաւազանին ծայրը աւազին վրայ պլանի թողու հետք մը որուն բոլոր կէտերը հողէն վեր միեւնոյն բարձրութիւնը ունին։ Հորիզոնական գաւազանը աւելի վեր կամ աւելի վար հաստատելով դիւրին է ունենալ ուրիշ մակաւասարութեան գիծեր։

Լերան մը զառիթափին երկայնութեամբ մակաւասարութեան գիծերը աչքի առջեւ բերելու համար, կրնանք զայն ջուրով ծածկուած ենթադրել։ Ջուրը բարձրացած ատեն նախ լերան ոտորոտը կը ծածկէ, յետոյ կամաց կամաց աւելի բարձր մասերը։ Ենթադրենք թէ ջուրը մինչեւ 10 մէթր բարձրանալէ յետոյ կանգ առնէ, այս կերպով կազմուած լիճին եզերքը մակաւասարութեան գիծ մը պիտի ըլլայ։ Ջուրը կը վերսկսի բարձրանալ և 10 մէթր եւս կ'ելլէ. նոր եզերքը նախորդէն 10 մէթր աւելի բարձր մակաւասարութեան գիծ մը կը կազմէ, և այսպէս չարունակաբար։



Պատկ. 29. — Լեռներու զանազան ձեւեր, որոնք ներկայացուած են մակաւասարութեան գիծերով եւ խաչագիծերով

Ճարտարագէտները երբ մակաւասար գիծերը դիրքը որոշեն գետնի վրայ, կը գծագրեն զանոնք քարտէսի վրայ. Ձեւ 29 պատկերին մէջ Ա. Բ Գ Դ Ե լեռները ներկայացուած են վարը մակաւասար գիծերով։ Ա. լեռը կանոնաւոր է և կոնի մը ձեւ ունի. զայն պատկերացնող մակաւասար գիծերը իրարմէ հաւասար հեռաւորութիւն ունին։ Բ լեռը կլոր բլրակ մըն է։ Գ լերան մէկ զառիթափը միւսէն աւելի ցից է, հետեւաբար զայն պատկերացնող մակաւասար գիծերը այնքան աւելի մօտեցած են իրարու որքան աւելի ցից է զարուվարը։ Վերջապէս Դ և Ե լեռները անկանոն ձեւ մը ունին, կ'ընծայեն գրեթէ հարթ մասեր, տարբեր ուղղութեամբ զառիվարներ, հետեւաբար մակաւասար գիծերը ծուռ ու մուռ են։

Իւրաքանչիւր մակաւասար գիծի մէջ նշանակուած է թուանշան մը որ անոր ծովուն երես

սէն վեր բարձրութիւնը կը ցուցնէ։ Մակաւասարութեան գիծերով ճշդիւ կրնան ներկայացուիլ գետնի այլ և այլ պէսպիսութիւնները։ Սակայն զանոնք աւելի տպաւորիչ դարձնելու և քարտէսները աւելի դիւրահասկնալի ընելու համար մարդիկ խորհած են խաչագիծերով (hachure) չուք տալ մակաւասարութեան գիծերուն. խաչագիծերը գծուելէ յետոյ սովորաբար կ'աւրեն մակաւասարութեան գիծերը որպէս զի քարտէսը աւելի յստակ երեւայ և չխճողուի (Պատկ. 29)։

Աշխարհագրոյց քարտէսներուն վրայ՝ վերի կողմը Հիւսիս է, վարի կողմը՝ Հարաւ, աջ կողմը՝ Արեւելք և ձախ կողմը՝ Արեւմուտք։

ԳԼՈՒԽ Ե.

ԵՐԿԱԳՈՒՆԴԻՆ ՄԵԾ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Երկրի երեսը կը բաղկանայ հաստատուն տարրէ մը որ ցամաք կը կոչուի. և հեղուկ տարրէ մը որ ծով կը կոչուի։ Ծովը ու ցամաքը չրջապատած են գազային տարրով մը որ կը կոչուի օդ կամ մթնոլորտ։

Երկրի մակերեւոյթին տարածութիւնն ըլ-



Պատկ. 30. — **Ցամաքներու եւ ծովերու բաժանումը արեւելեան եւ արեւմտեան կիսագունտերուն մէջ**

լալով իբր 510 միլիոն քառակուսի քիլոմէթր, ասոր գրեթէ $^3/_4$-ը այսինքն $373\frac{1}{2}$ միլիոն քիլոմէթր քառակուսին ծով է, իսկ $^1/_4$-էն քիչ մը աւելին այսինքն $136\frac{1}{2}$ միլիոն քիլոմէթր քառակուսին ցամաք է։

Օդը մթնոլորտի կերպով բաժնուած է երկրիս չուրջը. ընդհակառակն ցամաքն ու ծովը շատ անհաւասար կերպով բաժնուած են երկրի մակերեւոյթին վրայ։ Ցամաքներուն մեծագոյն մասը կը գտնուի հիւսիսային կիսագունտին մէջ. հարաւային կիսագունտը մեծ մասամբ ջրով պատած է։

Երկրի երեսին վրայ ցամաքը կը ներկայացնէ երեք մեծ և որոշ զանգուածներ.

1. Հին Ցամաք կամ Հին Աշխարհ, որ աւելին մեծը և ամէնէն կանուխ ճանչցուածն է և կը պարունակէ երեք մաս՝ Եւրոպա, Ասիա և Ափրիկէ։

2. Նոր Ցամաք կամ Նոր Աշխարհ որ 1492ին գտնուած է և կը կոչուի Ամերիկա։

3. Աւստրալեան Ցամաք կամ Աւստրալեան Աշխարհ, որ կը տարածուի Հին Աշխարհի հարաւային արեւելեան կողմը և որ իր չուրջը սփռուած բազմաթիւ կղզիներով կը ձեւացնէ Ովկիանիան։ Երկրիս այս մասը ամէնէն վերջը այսինքն 1606ին սկսած է ճանչցուիլ։

Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա և Ովկիանիա միասին կը կոչուին Երկրի հինգ մասերը։

Հին Աշխարհն ու Աւստրալեան Ցամաքը գետնուած են Արեւելեան կիսագունտին վրայ. իսկ Նոր Աշխարհը՝ Արեւմտեան կիսագունտին վրայ։ Աւստրալիա ամբողջովին կը գտնուի Հարաւային կիսագունտին մէջ։

ՑԱՄԱՔՆԵՐՈՒՆ ԴԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— *Հին Աշխարհն աւելի լայնքին կը տարածուի, իսկ Նորն՝ իր երկայնութեանը։ Եւրոպայի արեւմտեան ծայրին ու Ասիոյ արեւելեան ծայրին միջեւ եղած հեռաւորութիւնը՝ երկայնութեան 180 աստիճանէն աւելի է, մինչդեռ Ամերիկա աւելի նուրբ ու երկար ձեւ մը ունի և կը տարածուի մէկ բեւեռէն միւսը։ Ասկէ զատ՝ ցամաքները հիւսիսային բեւեռին չուրջը իրարու կը մօտենան. ընդհակառակն իրարմէ կը հեռանան հարաւային կիսագունտին մէջ։ Ասիան ու հիւսիսային Ամերիկան իրարու խիստ մօտ են, մինչդեռ Ափրիկէն ու հարաւային Ամերիկան իրարմէ կը հեռանան։*

Ցամաքներուն դէպի հարաւ հեռանալ ամիսփուելուն պատճառաւ բարեխառն գօտիին թիւնները վայելող հողային տարածութիւնները բաղդատաբար նուազ ընդարձակ են հարաւային կիսագունտին մէջ։

ՀԻՆԳ ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ

Երկրի երեսին վրայ տարածուած բոլոր ծովերն իրարու հետ հաղորդակցութիւն ունին, այնպէս որ կրնայ ըսուիլ թէ իրօք մէկ ծով միայն կայ որ կը շրջապատէ երկրի երեսին վրայ գտնուած բոլոր ցամաքները։ Սակայն խիստ ընդարձակ ծովեր մասնաւորապէս Ովկիանոս անուանը առած են և այս կերպով՝ երկրի երեսին գրեթէ $^3/_4$ մասը ծածկող ալի ջուրի մեծ զանգուածը բաժնուած է հինգ ովկիանոսներու, որոնք իրենց կարգին կը ձեւացնեն աւելի փոքր ծովեր։

Այս հինգ ովկիանոսներն են 1. Ասլանեսեան Ովկիանոս, 2. Խաղաղական Ովկիանոս,


ԱՍԻԱ
ԱՄԵՐԻԿԱ
ՕՍԿԱՆԻԱ
ԱՖՐԻԿԱ
ԱՍԼԱՆԵՍԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԱՍԼԱՆԵՍԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Տէվիսի նեղուց, Կրօֆնմանսայի և Նորվէկիոյ մէջեւ գտնուած ծովային բազուկը). իսկ երբ կրորդը աւելի ազատօրէն կը հաղորդակցի Ատլանտեանի, Խաղաղականի և Հնդկաց Ովկիանոսի հարաւակողմէն:

Տակաւին չէ ճշգուած թէ բևեռային մարզերը ամբողջովին ջուրի՞ ծածկուած են թէ ծովէն վեր ցամաքներ ունին: Երկրախոյզները դէպի հիւսիս լայնութեան 86րդ աստիճանը և դէպի հարաւ 82° 17′րդ աստիճանը հասած են:

ԳԼՈՒԽ Զ.

ԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ա՛ս հասարակ գիտութիւններուն կարծիքը այն է որ երկիրը լայն և ճրավառ նիւթերէ գոնէ մին է որուն երեսը ծածկուած է հաստատուն կեղեւով մը: (Այս կեղեւին թանձրութիւնը 60 քիլոմէթրի չափ կը կարծուի. անկէ անդին կը

—Մուրային գետիններ
—Երկրորդական գետիններ
— Երկրորդական գետիններ
— Նախնական գետիններ
—Լաւա

Պատկ. 32. — **Երկրի կեղեւին տեսական կտրուածքը, գանազան տեսակ գետիններու իրարու վրայ դասաւորման կարգը ցուցնող**

Ամենէն հին գետինները երկրի կեդրոնին հն մօտ գտնուղներն են. ուրեմն հոն ուր այդ գետիններ երկրի մակերեւոյթին վրայ են՝ վրանին աւելի նոր գետիններ չկան այլ ևս: Երկրորդական եւ երրորդական գետիններ միջն աւելի հին գետիններ կը ծածկեն:

Հարցաբան. — Ի՞նչ գործիքներով կրնանք պատկերացնել երկիրը. — Ի՞նչ է աշխարհագրական քարտէսը. — Գծեցէք դասարանին յատակագիծը $\frac{1}{100}$ աստիճանով և յատակագիծին վրայ նշանակեցէք գլխաւոր կողմերը.— Ի՞նչ տարբերութիւն կայ գոնէնի մը և քարտէսի մը միջեւ. — Որո՞ւ կ'բսեն Համաստարած — Երկրի երեսին ո՞րչափը ցամաք և ո՞րչափը ջուր է. — Ծովն ու ցամաքը ի՞նչ բանով շրջապատուած են. — Ցամաքն ու ջուրը ի՞նչ կերպով բաժնուած են երկրի երեսին վրայ.— Ո՞ր կիսագունտին մէջ աւելի շատ է ցամաքը.— Երկրի երեսին վրայ ցամաքը ի՞նչ մեծ բաժանումներ ունի — Ո՞րն է ցամաքներուն մեծագոյնը. — Ե՞րբ գտնուած է Նոր Աշխարհը — Որո՞նք են աշխարհի հինգ մասերը. — Լայնութեան ո՞ր աստիճաններուն տակ կը գտնուին ցամաքին մեծագոյն տարածութիւնները. — Ի՞նչ է ովկիանոսը. քանի՞ ովկիանոսներ կան. — Ցոյց տուէք քարտէսին վրայ Ատլանտեան, Խաղաղական և Հնդկային ովկիանոսները. — Ո՞ր կը գտնուի Արկտական Սառուցեալ ովկիանոսը. — Ի՞նչով կը տարբերի Ատլանտեան ովկիանոսը՝ Խաղաղական ովկիանոսէն:

Գրաւոր պարապմունք. — *Հին և Նոր Աշխարհները ի՞նչ տարբերութիւն ունին իրարմէ իրենց արտաքին կերպով. — Գծեցէք համաստարած մը և նշանակեցէք ցամաքին հինգ մասերը և հինգ ովկիանոսները:*

գտնուի կեդրոնական հատը որուն ամենատաք ժամանակ ջերմութեան մէջ էն կարծր քարերն անգամ հեղուկ վիճակի մէջ կը մնան):

ԵՐԿՐԻ ԿԵՂԵՒԸ. — *Երկրին կեղեւը կազմուած է հողեղէն կամ քարեղէն կարծր նիւթերէ որոնք ընդհանուր կերպով ժայռ կը կոչուին և երկու մեծ խումբերու կը բաժնուին. հրային կամ բիւրեղային ժայռեր որոնք չեն*

պարունակեր բնաւ գործարանաւոր մարմիններու մնացորդներ, և մուրային ժայռեր որոնք կը պարունակեն բարացած գործարանաւոր մարմիններ որ բրածոյ կը կոչուին:

Պէտք չէ կարծել սակայն որ այլ և այլ տեսակ ժայռեր բախտին բերմունքով իրարու խառնուած և ձեւացած են այն տոլը որուն վրայ կը քալենք. ընդհակառակը անոնք բիչ կամ շատ կանոնաւոր խաւերով չարուած են իրարու վրայ:

Պատկ. 33. — **Թուօյէրուի ձորը, Ֆրանսայի մէջ**

Երկրաբանութեան մէջ գետին կը կոչուին հանմանման ժայռերէ կազմուած խաւեր, որոնք ձեւացած են բազմաթիւ դարերու մէջ:

Երկրաբանները երկրին կեղեւը կազմող խաւերը և անոնց մէջ գըտնուած բրածոներու տեսակը ուսումնասիրելով բազմաթիւ գետիններ զանազանած են և անունդ ամէն մէկուն զատ զատ անուններ տալով իրենց հնութեան կարգով դասակարգած են զանոնք:

Խաւերու չարքի մը մէջ ամէնէն տակը գըտնուած գետինը ամէնէն հինը կը համարուի բնականաբար և ամէնուն վերեւ գտնուած գետինը ամէնէն նորը կ'ըլլայ:

Արդ, դիտուած է որ կրանիտը ուրիշ ամէն գետիններու ներքեւը կը գտնուի. ուրեմն կրանիտը նախնական գետինը բոլոր գետիններուն հնագոյնն է:

Կրանիտին կը յաջորդեն բիւրեղային պէսպէս գետիններ որոնք կրանիտին պէս բնաւ բրածոյ չեն պարունակեր:

Վերջապէս կուգան ծովու ջուրի կամ առուչ ջուրի մրուրներէն կազմուած գետինները, որոնց մէջ կը գտնուին կենդանի էակներու (բոյս կամ անասուն) քարացած մնացորդները: Այս գետինները որ կը կոչուին մուրային գետիններ, իրենց կարգին կը բաժնուին չորս գլխաւոր խումբերու:

1. *Նախնական գետիններ, որոնք մրուրային գետիններու ամենէն հին խաւերն են և անմիջապէս կը յաջորդեն հրային կամ բիւրեղային գետիններուն: Այս ժամանակաշրջանին մեծամեծ անտառներ որոնք հողը կը ծածկէին՝ թաղուած մնացած են ջուրերուն տակ և ժամանակ անցնելով կամաց կամաց հանքածուխի փոխուած են:*

2. *Երկրորդական գետիններ, որոնք կը յաջորդեն նախնական գետիններուն. այս շրջանին մէջ կրային հարուստ խաւեր կը դիպչուին ծովերուն յատակը որոնք կը ծածկէին երկրի մակերեւոյթին մեծագոյն մասը*

Պատկ. 34.—**Քօռնիշի ճամբան, Քօնթրաթիեի մօտ** (Ալճերի)

Պատկ. 33—34. — **ԲՆԻՐԵՂԱՑԱԾ ԺԱՅՌԵՐ ԵՒ ԽԱՒՆԱՒՈՐ ԺԱՅՌԵՐ**

Գանազան գետիններ շատ այլազան երեւոյթներ կը ներկայացնեն: Թուօյէրուի ձորը կրանիթային երկիր մը կը ներկայացնէ եւ վրան պատկերին մէջ դիզուած ժայռերը կրանիթի ժայռեր են: Ընդհակառակը Քօռնիշի ճամբան կրային երկրի մը մէջ շինուած է. այս ժայռերը իրարու զուգահեռական խաւերու պէս դրուած են իրարու վրայ:

և որոնց մէջ կը վիճակային այլազան կակղամորթներ, ձուկեր, վիթխարի կրիաներ, մողէսներ և այլն:

3. *Յետոյ կուգան երրորդական գետինները, այս շրջանին մէջ երկրի երեսին վրայ կա-*

յին անուշ ջուրի մեծամեծ լիճեր որոնց եզերքը կ'ապրէին մօրակինճի և փիղի նման կենդանիներ, որոնց բրածոները կը գտնուին հիմա։

4. Չրհեղեղեան կամ չորրորդական գետիններ, որոնց մէջ կը գտնուին մարդկային մնացորդներ և մարդկային ձեռագործի հետքեր։

Այս շրջանին մէջ երկիրը աւելի կը բարեձեւի. լեռներն իրենց հիմակուան ձեւը կ'առնեն. մեծ ձեւափոխութիւններ կը կրեն նաեւ ծովերը. այս շրջանին մէջ անբաւ էին սառնակոյտերն ու ջուրի հոսանքները. երկրին բովանդակ մակերեւոյթին վրայ կը ժայթքէին անհամար հրաբուխներ։

Կը տեսնենք ուրեմն որ աշխարհի սկիզբէն ի վեր երկիրը չատ կերպարանափոխ եղած է։

Բայց պիտի ըսէք թէ լաւան հրավառ նիւթ մըն է և ինչպէս կ'ըլլայ որ այդքան տաք կ'ըլլայ. և միւս կողմէ երկրի երեսը չի տաքցներ մեր տաքերը այրելու չափ։

Երբ հողին մէջ խորունկ ծակ մը բանանք, կը տեսնենք թէ որքան աւելի խորունկ ըլլայ ծակը, այնքան աւելի տաք կ'ըլլայ յատակը։ 1000 մէթր խորութիւն ունեցող հանքերու մէջ դիտուած է որ իւրաքանչիւր 35 մէթր խորութեան՝ տաքութիւնը 1 աստիճան կ'աւելնայ, ըսել է որ 1000 մէթր կամ 1 քիլօմէթր խորութեան մէջ գրեթէ 30° տաք կ'ըլլայ։ Այս հաշուով 100 քիլօմէթր խորութեան մէջ 3000° տաքութիւն պիտի ըլլայ։ Արդ, այսչափ տաքութեան պէտք չի կայ արդէն՝ լաւան, կրանիտը



Պատկ. 35. — Երկրիս տեսակաի կարուածքը

Հիմակուան ովկիանոսներուն չատերը ժամանակաւ ցամաք երկիրներ եղած են և հիմակուան ցամաք երկիրներու մեծ մասը առենօք ծովու յատակներ էին անշուշտ որ հետքեր վեր բարձրացած են։

Պիտի հարցնէք հարկաւ թէ կրանիդեայ գետինէն վար ինչ կայ. — Բնականաբար մարդ չէ տեսած թէ ինչ կայ կրանիդէն անդին, բայց խելքով կրնանք գտնել թէ ինչ կրնայ ըլլալ։ Հաստատուած է որ հրաբուխները չատ խորունկ են և անոնցմէ դուրս ժայթքած լաւաները կրաշնիդին գտնուած տեղէն չատ աւելի խոր տեղէ մը կուգան։ Ըսել է որ կրանիդէն անդին գըտնուածն է լաւա։

և այլն հալեցնելու համար. լուրջ ուսումնասիրութիւններ կարծել կուտան որ գրեթէ 50 կամ 60 քիլօմէթր խորութենէ անդին կը սկսին հրահալած նիւթերը, կամ ուրիշ խօսքով, երկրին կեղեւը իր 60 քիլօմէթր թանձրութիւն ունի։ Արդ, մենք գիտենք արդէն որ երկիրը գրեթէ 13000 քիլօմէթր տրամագիծով գունդ մըն է. ըսել է թէ երկիրը գրեթէ ամբողջովին հրահալած վիճակի մէջ է և ծածկուած է միայն չատ նուրբ կեղեւով մը որ նարինջի մը կեղեւին ամբողջ նարինջին համեմատութեամբ ունեցած թանձրութիւնն ալ չունի։

Եւ սակայն որքան ալ նուրբ ըլլայ՝ այս կեղեւը պինդ կենալու չափ հաստատուն է և

երկրին մակերեւոյթը կեդրոնական ջերմութեան դէմ պահպանելու չափ թանձր։

Երկրաբանները գննութեանդ նայելով ուղած ժամանակ մը որ ատեն երկրին կեղեւը գոյութիւն չունէր և երկիրը հրահալ և լուսաւոր նիւթերու գունդ մըն էր։ Յետոյ երկիրը չարունակ միջոցին մէջ դառնալով պաղելու, կամաց կամաց մարելու և կազմուելու նախնական կեղեւ մը, թերեւս կրանիդը և բիւրեղային պետինները։ Երբ այս կեղեւը բաւական թանձրացաւ, ջուրը կազմուեցաւ երկրի երեսին վրայ և ժովովուելով ձեւացուց ովկիանոսներ, որոնց մէջ երեւցան կենդանի էակներ քանի ջերմութիւնը նուազեցաւ։

Երկրին տակաւին նուրբ ու դիւրաբեկ կեղեւին չարժուձիները ստիպին անդին տեղափոխելու այս ովկիանոսները որոնց մրուրներէն կազ-

Պատկ. 36. — Աւազակոյտ Խարակ Ժայռեր

մուեցան այն գետինները զորս ճանչցաք արդէն։ Նոյն մրջոցին եղան նաեւ հողի մեծ չարժուձիներ, բարձրացումներ, կքումներ, ճեղքուածքներ։ Լեռնոտ երկիրներու մէջ կը տեսնուին ծովուն մրուրներէն ձեւացած գետնի խաւեր որոնք երբեմն դրեթէ ուղղահայեաց վեր կը բարձրանան։ Ասկէ զատ, արդէն երկրին ընդերքը միշտ հալորդակցութեան մէջ գտնուած է երկրին մակերեւոյթին հետ. հալած նիւթեր երկրին խորէն դուրս եկած են ու կ'երթնեն դեռ։ Նոյն մեծ զանգուածներ՝ ինչպէս են պորփիւրները, երկրին երեսը կ'ելլէին՝ պատռելով նուազ խտանձր կեղեւը. աւելի վերջը ձեւացան տեսակ մը ծրիւնեղոյզներ —հրաբուխները— որոնք ժամանակաւ երկաշաքար կը ժայթքէին, իսկ այսօր լաւա դուրս կուտան։

Այս է ահա երկրին պատմութիւնը որ երեւակայութեան արգիւնք չէ. այլ ստոյգ է այնքան որքան կարելի է ըլլալ մեր չտեսած բաներուն մասին, որոնց վրայ սահպուած ենք միայն տրամաբանել։

Հարցաբանութիւն. — Ի՞նչ կարծիք ունին գետնաձեները երկրին կազմութեան մասին. — Ո՞րչափ է երկրի կեղեւին թանձրութիւնը. — Ի՞նչ բանէ կազմուած է երկրիս կեղեւը. — Այս կեղեւը ամէն ժամանակ գոյութիւն ունեցած է թէ եաքէն կազմուած է — երկրին կեղեւին տակ ի՞նչ կայ. — Ի՞նչով կրնաք հաստատել կեդրոնական հուրին գոյութիւնը. — Երկրաբանական լեզուով Գետին ի՞նչ կը նշանակէ. — Քանի՞ տեսակ գետիններ կան. — Ի՞նչ են բրածոյները. — Երկրիս կեղեւին ամէնէն հին խաւերը որո՞նք են. — Ի՞նչպէս կը ճանչցուի թէ գետին մը ուրիշ գետնէ մը աւելի հին է. — Մրուրային գետիններէն ի՞նչ տարբերութիւն ունին հրային գետիններէն. — Երկրաբանական ո՞ր շրջաններ մէջ գտնուած են մարդկային մնացորդներ. —

Պատասխանութիւն. — Կեդրոնական հուրին գոյութիւնը հաստատող երեւոյթները որո՞նք են. ի՞նչ է հրաբուխներուն պատճառը։

Դ Լ Ո Ի Խ Է.

Ծ Ո Վ Ե Ր Ը

ԾՈՎՈՒՆ ՅԱՏԱԿԸ. — Ծովուն յատակը միօրինակ ու տափարակ չէ. ան ալ ցամաքին պէս ունի իր հովիտները, դաչտերը, լեռնադաշտերը, լեռները և բարձր գագաթները որոնք

երբեմն կղզիներ կը ձեւացնեն ծովուն երեսը։ Արշիպելագոսները ուրիշ բան չեն, եթէ ոչ ընդարձակ լեռներու բարձրագոյն կէտերը։

Այսպէս ուրեմն Ովկիանոսին յատակը ցամաքին մակերեւոյթին պէս դարաւոր ըլլալով՝ դիւրին է ըմբռնել թէ իր ջուրերուն խորութիւնը տեղին համեմատ չատ փոփոխական պէտք է ըլլայ։

Ծովերուն միջին խորութիւնը 4000 մէտր է գրեթէ. թէպէտ կան ծովեր, որոնց խորութիւնը այնքան մեծ չէ, բայց կան ծովեր ալ որոնց խորութիւնը 9000 մէտրի կը մօտենայ։

Ինչ չատ անգամ ծովեզերքներու մօտ կը գտնուին մեծագոյն խորութիւնները։ Մարիանեան կղզիներուն արեւելեան կողմն է որ չափուած է մինչեւ ցարդ ճանչցուած մեծագոյն խորութիւնը (9636 մէտր)։

Ըսել է թէ ծովուն ամէնէն մեծ խորութիւնը ցամաքին ամէնէն վիթխարի բարձրութենէն աւելի է։ Կօրիզանքար լեռը (Հիմալայայի մէջ) 8840 մէտր բարձրութիւն միայն ունի։ Ուրեմն երկրիս կեղեւին էն մեծ ցցուածքին ու էն խորունկ փոսին մէջտեղ եղած հեռաւորութիւնն է 18 քիլօմէտրի չափ, որ ըսել է երկրիս չառաւելն $\frac{1}{346}$ երորդը։

ԾՈՎՈՒՆ ՋՈՒՐԸ. — Ծովուն ջուրը զգալի տարբերութիւններ ունի գետերուն ջուրերէն. այս տարբերութիւններն են գլխաւորաբար Աղիութիւնը, Գոյնը և Ջերմութիւնը։

1. Աղիութիւն. — Ծովուն ջուրը անուշ ջուրէն աւելի ծանր է. պատճառը այն է որ կը պարունակէ տեսակ տեսակ քիմիական նիւթեր, և մանաւորապէս աղ։ Ծովու ջուրին աղիութիւնը ամէն տեղ միօրինակ չէ. բևեռներուն կողմը նուազ է աղիութիւնը քան հասարակածին մօտ. նոյնպէս, այն ծովերը որոնք իրենց մէջ չատ մը մեծ գետեր կամ խիստ չատ անձրեւ կ'ընդունին, նուազ աղի են։ Այսպէս Միջերկրականի աղիութիւնը 39,3 առ 1000 է, Սեւ ծովունը՝ ուր մեծ գետեր կը թափին 18 առ 1000։ Այս պատճառաւ Պալթիկ ծովինը 9,3 առ $\frac{0}{00}$ է և նոյն իսկ $3\frac{0}{00}$ Պոթնիոյ ծոցին մէջ, մինչդեռ կարմիր ծովը որ չատ կը չոգիանայ և զուրկ է անձրեւէ ու գետերէ, $40\frac{0}{00}$ աղիութիւն ունի։

2. Գոյն. — Ծովուն երեսը ամէն անգամ գեղեցիկ կապոյտ գոյն մը չունենար. հասարակածին կողմերը՝ ծովը կանանչագոյն կ'երեւայ և ասիկա կը վերագրուի այն ծովերուն յատակին առատ կանանչութեան։

Այլ և այլ պատճառներ՝ ինչպէս հողը, խոր ութիւնը, ճճիներ, չատ անգամ նաեւ ալեկոծութիւն և սառնամանիք, եւայլն՝ ծովերէն ոմանց դեղին, կարմիր, սեւ, սպիտակ, եւայլն գոյն կու տան, որով կան դեղին, կարմիր, սեւ, սպիտակ ծովեր, եւն.։

3. Բարեխառնութիւն. — Ծովու ջուրին բարեխառնութիւնը կը փոխուի լայնութեան աստիճաններուն, եղանակներուն ու խորութեանը համեմատ։

Ծովու ջուրերը բնականաբար աւելի տաք կ'ըլլան արեւադարձներուն մէջտեղ, քան թէ բեւեռային շրջանակներուն մէջ, ուր ծովը յաճախ կը սառի։

Նոյնպէս ծովու ջուրերուն բարեխառնութիւնը երթալով կը նուազի քանի խորը իջնենք։ Այս նուազումը բաւական արագ է մինչեւ 1000 մէտր, ուրկէ անդին բարեխառնութիւնը չատ դանդաղ կերպով կը նուազի մինչեւ ծովուն յատակը, ուր ջերմաչափը ցոյց կու տայ 0° էն մինչեւ 2° հասարակածին տակ, և 0° էն մինչեւ — 2° բեւեռային ծովերուն մէջ։ Ասոր համար է որ բեւեռային ծովերու մէջ չատ անգամ կը պատահի որ ծովերուն յատակը՝ ջուրերուն բարեխառնութեան աստիճանը աւելի բարձր է քան ծովուն երեսը։

Հարցարան. — Ծովուն յատակը ինչ ձեւ ունի. — Որչափ է ծովերուն միջին խորութիւնը. — Ո՞ր կը գտնուին ընդհանրապէս մեծագոյն խորութիւնները. — Ծովուն ջուրը ինչ տարբերութիւն ունի գետերուն ջուրերէն. — Ծովու ջուրին աղիութիւնը ամէն տեղ միօրինա՞կ է. — Ինչ գոյն ունի ծովուն ջուրը. — Ծովու ջուրին բարեխառնութիւնը անփոփո՞խ է։

ԾՈՎԵՐՈՒ ԲՈՒՅՍԵՐՆ ՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ. — Ծովուն բուսաբերութիւնը՝ տեսակի զանազանութեան մասին՝ բաղդատութեան չի կրնար մտնել ցամաքի հարուստ բուսաբերութեան հետ։

Բարեխառն ծովերու մէջ է որ բուսական կեանքը իր մեծագոյն աճումը կը գտնէ։ Բեւեռային ծովերու մէջ կ'անհետանայ գրեթէ. հասարակածային ծովերու մէջ՝ նուազ ուժեղ է և նուազ այլազան, թէպէտ խիստ գեղեցիկ։ Ընդ. ծովեայ բոյսերը չատ տաք ջուրէն չեն ախորժիր։ Արդ, որովհետեւ տունկերը լոյսի պէտք ունին ապրելու համար, հարկաւ կը նուազին քանի իջնենք Ովկիանոսի մէթ խորութեանց մէջ։ 200 մէտր խորութենէ անդին լոյսը կը դադրի. այս պատճառաւ բուսական կեանքը որ մութին չի կրնար վարժուիլ, կը դադրի այս սահմանին մէջ։

Ծովային բոյսերը կը պատկանին մեծ մասամբ Լօներու մեծ ընտանիքին, որ ամէնէն այլազան տեսակները կ'ընծայէ։ Այս ջրային տունկերը իրենց մնուցեղը ջուրէն առնելնուն՝ արմատի պէտք չունին. կամ ժայռերու կը փակչին և կամ ովկիանոսին երեսը կը ծփան։

Արեւադարձային ծովերու մէջ հրաչալի հարստութիւն մը ունի կենդանական կեանքը՝ որ կը նուազի տակաւ քանի բեւեռներուն մօտենանք, առանց երբեք բոլորովին անհետանալու։

Բարեխառն ծովերուն մէջ խիստ բանուկ է ձկնորսութիւնը և ծովեզերքի բնակիչներուն ապրուստը կ'ապահովէ։

Կենդանիները տակաւ են բեւեռային ծովերուն մէջ ուր տակաւին մարդիկ կ'երթան որսալ կէտը, այս հրէշ-ձուկերը՝ որ երբեմն մինչեւ 36 մէտր երկայնութիւն և 20 մէտր չրջապատ կ'ունենայ, և որ 200,000 քիլոկրամ կրնայ կշռել։ Ծովախոզը, փոկը, փիաժաքին, որոնք նոյնպէս ձուկերներն են, առանապատ տիրուր երկիրներու բնակիչներուն բազմատեսակ հասոյթներ կը հայթայթեն։

Ամէն ձուկերն ալ միշտ մեւնոյն տեղը չեն մնար ծովուն տակ. ձուկերը իրենց նախասիրած տեղերը ունին. չատեր կանոնաւորապէս կը գաղթեն, ինչպէս տառեխը, մօռիւն, բիւճնոսը, եւայլն։

ԾՈՎՈՒՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ. — Ծովուն ջուրը անչարժ չէ. իր մակերեւոյթին անընդհատ չարժումը ունի երեք գլխաւոր պատճառներ, որոնք են Ալիքները, խաղացիը ու Հոսանքը։

1. Ալիք. — Շատ հանդարտ ժամանակ ծովուն երեսը հայելիի մը պէս միապաղաղ կ'երեւայ. բայց եթէ հով մը փչէ, անմիջապէս իսկ չոմներով կը ծածկուի. այս խորչոմները կը կոչուին ալիք, որոնք ի սկզբան աննշան, հետզհետէ կը բարձրանան՝ քանի հովը աւտկանայ։ Եթէ փոթորիկ մը վրայ հասնի, իրենց գագաթը կը ծածկուի փրփուրով, ալիքները կու գան կը զարնուին ծովեզրին՝ մեծ ուժով և ազմուկով։

Ալիքները կրնան բաւական բարձրանալ ընդարձակ ծովերու մէջ մանաւանդ, օրինակի համար Ատլանտեան և Խաղաղական Ովկիանոսներուն մէջ։ Սակայն կը կարծուի թէ ամէնէն բարձր ալիքները 13 մէտրը չեն անցնիր։

2. Խաղացք. — Ծովուն պարբերական չարժումին Խաղացք կ'ըսուի։ Օրը երկու անգամ ովկիանոսին ջուրերը կը բարձրանան ու կը ցածնան կանոնաւոր չարժումով մը՝ իւրաքանչիւր խաղացքի տեւողութիւնն է գրեթէ 6 ժամ։ Բարձրացումը կը կոչուի Մակրնթացութիւն և ցածնալը՝ Տեղատուութիւն։

Ջուրերուն խաղացքը կը զգացուի մանաւանդ մեծ Ովկիանոսներու, ինչպէս նաև չատ բաց ծովերու մէջ։ Գոց ծովերուն՝ օրինակի համար Պալթիկ Ծովուն ու Միջերկրականի մէջ՝ չատ աննշան են այս չարժումները։

3. Հոսանք. — Հոսանքները տեսակ մը ծովային գետեր են, որոնք ովկիանոսին մէջ կը վազեն այս կամ այն կողմ, և որոնց ջուրերը ջրերնիք չրջապատող ջուրերէն աւելի տաք կամ աւելի պաղ կ'ըլլան։

Ծովային հոսանքներու ամէնէն կարեւորն է Կոլֆ-Սթրիմ, որ Մեքսիկայի ծոցէն դուրս կ'ելլէ և Ատլանտեան Ովկիանոսին մէջտեղ կը ձեւացընէ անհուն գետ մը տաք ու կապոյտ ջուրով, և ժամը 6 քիլոմէթր արագութիւն ունի։ Կը թրջէ Եւրոպայի արեւմտեան եզերքը և կը կորսուի Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսին մէջ։ Կոլֆ-Սթրիմի գաղջ ջուրերուն չնորհիւ է որ ծովածուի սառոյցները չեն հասնիր մինչեւ Նորվեկիոյ եզերքները և ծովը հոն չսառիր երբեք։

Կարեւոր հոսանք մըն է նաև Քուրօ-Սիվօ որ կ'ելլէ Թօնքինի ծոցէն, կը կտրէ Խաղաղական ովկիանոսը, կը բաժնուի երկու ճիւղերու, հիւսիսային և հարաւային, որոնք կ'երթան հիւսիսային Ամերիկայի արեւմտեան եզերքը կը թրջեն և կը մեղմացնեն Բրիտանական Գոլոմպիոյ կլիման։

Բեւեռային կամ պաղ հոսանքները չաճախ սառոյցի անապին կտորներ կը բերեն մինչեւ Այրեցեալ գօտիին մէջ։ Այսպէս է Լապրատորի հո-

սանքը որ սառույցի ահագին զանգուածներ կը քշէ կը տանի մինչեւ Նոր-Երկիրն հարաւակողմը։ Այս սառույցները կը հալին կլիճ-Սիբիրմի տաք ջուրերուն հանդիպելով, և պաղ ու տաք ջուրերուն այս հանդիպումէն յառաջ կուգան այն անվ ավանց մշուշները որ կը տիրեն այն տեղուանքը, և որոնք այնքան մեծ վտանգներու կ'ենթարկեն նաւերը։

Մովային մեծ հոսանքներէն զատ՝ որոնք այնքան ազդեցութիւն ունեցած են պատմութեան և քաղաքակրթութեան վրայ և դեռ հիմա ալ ունին բուսաբերութեան և վաճառականութեան վրայ, կան տեղական հոսանքներ, որոնց գլխաւոր պատճառն է ջուրերուն գոլորշիանալը։ Այսպէս Միջերկրականի մէջ՝ կարեւոր է Սեւ ծովու հոսանքը որ կ'անցնի Կ. Պոլսոյ կամ Վոսփորի նեղուցէն, Մարմարայի ծովէն, Տարտանելէն և Արշի պելագոսէն։

Հարցաբան. — Որո՞նք են ծովուն գլխաւոր շարժումները. — Ի՞նչ է ծովախաղացքը, և ո՞ր ծովերուն մէջ աւելի զգալի է — Ի՞նչ են ծովային հոսանքները և ի՞նչ է առնոց պատճառը. — Որո՞նք են գլխաւոր ծովային հոսանքները. և ի՞նչ է իրենց ուղղութիւնը։

Գլխաւոր տարուականութիւններ. — Հոսանքները ի՞նչ բանով կարեւորութիւն ունին մարդոց համար։

ԳԼՈՒԽ Ը.

ՄԹՆՈԼՈՐՏ, ԿԼԻՄԱՅ

Օդը կամ Մթնոլորտը անհրաժեշտ է բոյսերուն և կենդանիներուն գոյութեան համար։ Եթէ պահ մը ենթադրենք թէ մարդս կարենար ապրիլ օդէ զուրկ մրջյալարի մը մէջ, իր մարմինը պիտի այրէր արեւուն կիզիչ ճառագայթներէն, որոնց կէսը մթնոլորտը կը ծծէ ցորեկը։

ՀՈՎԵՐ

Հովը օդին չարժումն է. երբ օդին մէկ մասը տաքնալ կ'անգայանայ կամ ցուրտէն կը խտանայ՝ օդին հաւասարակշռութիւնը կը կորսնուի և իսկոյն չարժում մը յառաջ կուգայ օդին մէջ։ Այս չարժումները՝ աւելի կամ նուազ արագութեամբ ըլլալնուն համեմատ՝ կը կոչուին Սիւք, Հով, Ամպրոպ, Հայլն։

Հովերը յառաջ կուգան ուրեմն մթնոլորտին մէջ հաւասարակշռութեան խանգարումէ մը։

Ամէնուս ալ ծանօթ է յետագայ երեւոյթը. — երբ սենեակի մը մէջ նոր կրակ վառուած ըլլայ, կը զգանք որ սենեակին ցուրտ օդը դէպ ի վառարան կը խուժէ. պատճառը այն է որ վառարանին օդը, որ տաքնալով թեթեւցած է, վեր կը բարձրանայ, և սենեակին օդը որ ցուրտ է՝ կը խուժէ անոր տեղը բռնելու համար։ Միեւնոյն երեւոյթն է որ մեր չուրջը յառաջ կուգայ ամէն վայրկեան։

Հովերը կը բաժնուին չորս կարգի. Կանոնաւոր հովեր, Պարբերական հովեր, Փոփոխական հովեր և Տեղական հովեր։

1. Կանոնաւոր հովը բոլոր տարին կը փչէ. այսպէս են Սլիգեան կոչուած մեղմ հովերը որոնք հասարակածին երկու կողմը մինչեւ յայնութեան 30 աստիճանը կը փչեն՝ ընդհանրապէս արեւելքէն արեւմուտք։

2. Կան հովեր ալ որոնք որոշեալ ժամանակներ կը փչեն և ունին որոշ ուղղութիւն. ասոնք կը կոչուին Պարբերական հովեր։ Ասոնց պատճառն է ցամաքին ու ծովուն բարեխառնութեան մէջեւ եղած տարբերութիւնը, ցամաքին մակերեւոյթը ծովուն մակերեւոյթէն աւելի չուտ կը տաքնայ ու կը պաղի. ասոր փոխարէն ծովը աւելի երկար ատեն կը պահէ իր տաքութիւնը. հետեւաբար ծովուն երեսը ցամաքին մակերեւոյթէն նուազ տաք է ամառը և նուազ ցուրտ ձմեռը. նուազ տաք ցերեկը ու նուազ ցուրտ գիշերը։

Պարբերական հովեր են նաեւ Մուսօն կոչուած հովերը որ 6 ամիսէ 6 ամիս կը փչեն Արաբիական Թօսիին մէջ, այսինքն գարնան և աշնան։ Ամէնէն համբաւաւորներն են Հնդկաց ովկիանոսին և Չինաց ծովուն մուսօնները։ Երբ ամառը Ասիոյ կեդրոնական բարձր լեռնաշաւտները չատ կը տաքնան, օդը կ'ընդլայնուի և կը բարձրանայ. այս պարապը լեցնելու համար ամէն կողմէ հոն կը խուժեն ծովուն հետ չփման մէջ գտնուած աւելի զով խաւերը։ Ասիկա ամրան մուսօն է, որ ապրիլէն մինչեւ հոկտեմբեր կը փչէ, հարաւ-արեւմուտքէն՝ Հնդկաստանի արեւմտեան ծովեզրին վրայ, և հարաւ-արեւելքէն՝ Չինաց ծովեզրին վրայ։

Ձմեռը, հակադարձ երեւոյթը տեղի կ'ունենայ։

Ասիական ցամաքը խիստ չատ կը պաղի. Հնդկաց ովկիանոսի ջերմութիւնը մեծ փոփոխութիւն մը չի կրեր սակայն. իր ջուրերը չատ աւելի տաք են ցամաքէն. հետեւաբար հովը պիտի փչէ ցամաքէն դէպ ի ծով՝ հոկտեմբերէն մինչեւ ապրիլ։ Այս ալ ձմրան մուսօնն է։

Ասոր համար է որ տաք երկիրներու ծովեզերքներուն վրայ հովը ցորեկը ծովէն դէպ ի ցամաք և գիշերներն ալ ցամաքէն դէպ ի ծով կը փչէ։

Նոյնպէս չատ ծանօթ են Չինու ծովուն մուսօնները, որոնք ցամաքէն դէպ ի ծովը, այս կնքն հիւսիս-արեւմուտքէն կը փչեն ձմեռը, և ծովէն դէպ ի ցամաք՝ այսկնքն հարաւ-արեւելքէն կը փչեն ամառը։

Տարին երկու անգամ երբ մուսօններէն մէկը միւսին կը յաջորդէ, մթնոլորտին մէջ բուռն հակառուանքներ յառաջ կուգան, որոնք Կիկլօն կը կոչուին Հնդկաց Ովկիանոսին մէջ, և Տիւֆօն Չինու ծովուն մէջ։ Ասոնք չատ վտանգաւոր են և սոսկալի աւերումներ կը գործեն յաճախ։

Պարբերական հովեր կան նաեւ Միջերկրական ծովուն վրայ, որոնք կը կոչուին նիգեզեան հովեր և ամբողջ ամառը կը փչեն հիւսիսէն հարաւ։

3. Փոփոխական կ'ըսուին այն հովերը որոնք որ և է օրէնքի մը չեն հպատակիր և ամէն կը փոխուին։ Այս տեսակ հովեր կը փչեն ընդհանրապէս բարեխառն գօտիներու մէջ, ուր Տիրող հովեր կը կոչուին այն հովերը որոնք միւսներէն աւելի չաճախ կը փչեն։

Ամէն երկիր իր տիրող հովերը ունի։

4. Տեղական հովեր. — Կան տեղեր ուր ժամանակ ժամանակ կը փչեն տաք կամ ցուրտ հովեր, որոնցմէ ամանք իրենց ուժգնութեան և աւերիչ ազդեցութեան պատճառաւ մասնաւոր անուններով կը յիշուին, զոր օր. Եգիպտոսի Խամսինը որ 50 օր կը փչէ, Սահարայի Սիմունը, Իտալիոյ Սիրոք օն, որոնք տաք հովեր են, Զուիցերիոյ Ֆէօհն կոչուած տաք ու չոր հարաւային հովը որ քանի մը ժամուան մէջ կը հալեցնէ ձիւները։ Իսկ հարաւային Ֆրանսայի Միսթրալը և Թրիէսդէի Պօրա կոչուած հովը ընդհակառակը ցուրտ հովեր են։ Միսթրալը չաճախադէպ է մանաւանդ ձմեռը։

Հարցաբան. — Մթնոլորտը ի՞նչ օգուտ ունի երկրիս. — Ի՞նչէ հովը և ինչէ՞ն չառաջ կուգայ. — Քանի՞ տեսակ են հովերը. — Ալիզեան հովերը ո՞ր տեղուանք կը փչեն. — Ի՞նչ են պարբերական հովերը. — Մուսօնները ո՞ր կը փչեն և ի՞նչ ազդեցութիւն ունին. — Տեղական հովերը ի՞նչ են և գլխաւորները որո՞նք են։

ԱՆՁՐԵՒՆԵՐ

Մթնոլորտը ծովերուն, լիճերուն և գետերուն երեսէն անդադար վեր բարձրացող գոլորշիներուն ընդունարանն է։ Երբ այս գոլորշիները կը խտանան, գրաւիման ատիճանին համեմատ կը ձեւացնեն ամպեր, անձրեւ, ձիւն և կամ կարկուտ՝ երբ օդին մէջ ինան, իսկ մէգ, ցօղ, եղեամ՝ երբ հողին երեսը իջնան։

Բարեխառն երկիրներուն մէջ ամէն եղանակներուն կ'անձրեւէ. սա տարբերութեամբ որ ինչ ինչ ժամանակներուն աւելի չաճախադէպ է անձրեւը քան ուրիշ ատեն։ Բայց ամէն տեղ այսպէս չէ. երկիրներ կան որոնք տարուան մէջ որոշեալ ժամանակ մը միայն անձրեւի երես կը տեսնեն։

Հասարակածին տակ անձրեւային եղանակը չատ երկար կը տեւէ (6էն 8 ամիս) և անձրեւները ամենօրեայ են հոն։ Անձրեւներու այս առատութիւնն ու չաճախութիւնն է պատճառ հասարակածային մարզերու անհուն կոյս անտառներուն զարգացման։

Հասարակածային մարզին երկու կողմերը աւելի կը չեչտուին երաչտութեան չրջանները. տարին հոն ունի երկու անձրեւային եղանակներ, զորս իրարմէ բաժնող երաչտութեան եղանակը երթալով կը կարճնայ քանի արեւադարձներուն մօտենանք։ Վերջապէս արեւադարձներուն տակ անձրեւային կարճ եղանակ մը միայն կայ և տարուան մնացած մասին մէջ երաչտութիւնը կը տիրէ։

Այս սահմանին կրնայ կցուիլ նաեւ Մուսօններու անձրեւաբեր գօտին որ աշխարհիս ամէնէն աւելի առատ անձրեւ ընդունող մասն է, և այս յորդառատ անձրեւներն են որ բրինձի և թէյի մշակութեան կը նպաստեն՝ Մուսօններու ենթակայ երկիրներու մէջ։

Այն երկիրներու մէջ ուր Ալիզեան հովեր կը փչեն, անձրեւները հազուադէպ են. Աբսոտրալիոյ կամ Սահարայի ներքին մասերուն մէջ

տեղեր կան ուր 20 տարի ամբողջ կաթիլ մը անձրեւ չէ տեղացած։ Այս սահմանը Անապատներու և Տափաստաններու գօտին է, ասոր համար է որ Հասարակածին երկու կողմերը՝ ուր ալիզեան հովեր կը տիրեն՝ կը տարածուին չատ ազքատ բուսականութիւն մը ունեցող երկիրներ. հիւսիսային կիսագունտին մէջ՝ Սահարա, Արաբիա, Իրան և Մոնկոլիա, հարաւային կիսագունտին մէջ՝ Լա-Բլաթայի տափաստանները, Քալահարի անապատը (Հարաւ-Ափրիկէ) և Աւբսթրալիոյ անապատները։

Բարեխառն երկիրներու մէջ ուր փոփոխական հովեր կը տիրեն, անձրեւները չափաւոր քանակութեամբ և ամէն եղանակի մէջ կը տեղան։ Կան սակայն երկիրներ ուր ձմրան անձրեւները աւելի յաճախադէպ են և ուր ամառները բաւական չոր կ'ըլլան, ինչպէս Միջերկրականի եզերքը։

Սառուցեալ գօտիները խիստ փիչ անձրեւ կ'ընդունին. ծովերն ու գետերը սառած են տարուան $^3/_4$ մասին մէջ և չոգիացումը խիստ սակաւ է հոն։

Անձրեւներուն առատութեան և յաճախութեան վրայ կ'ազդեն նաեւ ծովուն մերձաւորութիւնը, լեռներու մերձաւորութիւնը և հովերու ուղղութիւնը։

Այսպէս, Արեւմտեան Եւրոպա աւելի մօտ ըլլալով Ատլանտեան Ովկիանոսին՝ աւելի առատ անձրեւ կ'ընդունի քան Արեւելեան Եւրոպա։

Լեռներու մօտաւորութիւնն ալ նոյնպէս առատ անձրեւ կը բերէ մանաւանդ խոնաւ հովերու ենթակայ եղող զառիվարներու վրայ։

Երբ այս երկու պայմանները իրարու միացած գտնուին, ինչպէս է Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջ, այն ատեն աւելի առատ կ'ըլլան տեղացած անձրեւները։

Բայց եթէ լեռները իրենց մէկ զառիվարին վրայ անձրեւ կը հրաւիրեն, միւս զառիվարը կը զրկուի անձրեւներէ, վասն զի ամպերը գագաթին անդիի կողմը անցնելէն յետոյ այնքան խոնաւ չեն ըլլար։ Հետեւաբար դիւրին է ըմբռնել թէ այնպիսի երկիրներու մէջ որոնք ամէն կողմէ լեռներով չրջապատուած են՝ անձրեւները նուազ առատ կ'ըլլան, այսպէս օրինակի համար՝ Հունգարիոյ դաշտերը՝ Ալպեան և Կարպաթեան լեռներով չրջապատուած չորս կողմէ, չատ անգամ երաչտութիւն կը տեսնեն։ Սա կայ որ Եւրոպայի բնութիւնը ամէն բանի մէջ ալ չափաւորիր ծայրայեղութիւններէ. Ասիոյ և Ամերիկայի մէջ է որ ամէնէն աւելի կը գըտնուին այս տեսակ երկիրներ, չրջապատուած կարծես մեծ պատուարներով որոնցմէ չեն կրնար անցնիլ խոնաւ հովերը։ Այսպէս են Մոնկոլիա և Կոպիի անապատը, Թիպէդի անապատը, Իրանի անապատը, Փոքր Ասիոյ անապատը։

Հարցաքնն. — Ի՞նչ բանէ չառաջ կուգայ անձրեւը. — Ի՞նչ կարեւորութիւն ունի անձրեւը բոյսերուն համար. — Առանց անձրեւի երկիրները ի՞նչ կ'ըլլան. — Ո՞ր երկիրներուն մէջ ամէնէն չատ անձրեւ կը տեղայ։

Գործնական պարապմունքներ. — Անձրեւներուն առատութեան և չաճախութեան վրայ ազդող պատճառները որո՞նք են։

ԳԼՈՒԽ ԹՈ

ՁԻՒԻՆ ԵՒ ԻՐ ՍՏՈՐԻՆ ՍԱՀՄԱՆԸ

Որովհետեւ ծովուն երեսէն վեր քանի բարձրանանք, այնչափ կը նուազի օդին ջերմութիւնը, պիտի գայ սահման մը ուրկէ անդին ձմեռը տեղացող ձիւնը չի հալիր ամառը։ Այս սահմանին բարձրութիւնը որ լայնութեան աստիճաններուն և կլիմաներուն համեմատ կը փոխուի՝ կը կոչուի Ձիւնի ստորին սահման։

Բեւեռային երկիրներու մէջ այս սահմանը գրեթէ հաւասար է ծովուն երեսին հետ։ Քանի բեւեռներէն դէպ ի արեւադարձները երթանք, հետզհետէ կը բարձրանայ այս սահմանը. իսկ երկու արեւադարձներուն մէջտեղ քիչ մը կը խոնարհի։ Այսպէս հասարակածին տակ՝ լերան ստորոտէն 4000 մեթր վեր կը սկսի մչտնջենաւոր ձիւնի սահմանը. իսկ Հիմալայա լեռներուն վրայ՝ 5000 մեթր վեր։

Բայց այս ձիւները չեն կրնար անպայման կերպով դիզուիլ իրարու վրայ։ Կուգայ վայրկեան մը ուր անագին զանգուածներ կը փրթին բարձր գագաթներէն և իրենց արագ անկումին մէջ ուրիշ զանգուածներ ալ կը քշեն կը տանին, սառնք կը կոչուին Ձիւնակոյտեր։

Ձիւնակոյտերն ու յանկարծական հովեր փրցուցած են լեռնէն։ Այս քարի կտորուանքը սառոյցի փոսի մը վրայէն քչուելով կը հասնին մինչեւ սառնարանին ստորին ծայրը ուր իրարու քով կը դիզուին և խառակոյս կոչուած պատուարներ կը ձեւացնեն։

Սառնարաններու գոյութիւնը ամէն բանէ առաջ ձիւնի առատութենէն կախում ունի։ Ասոր համար տաք երկիրներու մէջ խիստ բարձր լեռներու վրայ միայն սառնարաններ կը գըտնուին։ Նոյնպէս սառնարաններն աւելի ընդարձակ են լեռնէն։

Պատկ. 37. — **Սառնարան մը**

Սառնարանները ջուրի անագին ընդունարաններ են որ ծնունդ կուտան բազմաթիւ գետերու։ Սառնարանները իրենց իսկ արդեն ծնարհաց գետեր են, հատատուն միմեկի մէջ եղող ջուրի գետեր, որոնք յաւերաբար կը սահին լեռներու կողերուն վրայ՝ խրճոց անցած տեղերնին ամեն բան ջնջ տանելով։

Սառնարանները գետերու կը նմանին. լեռներու կողերն ի վար կը սահին. հովիտներու խորչոքարդութիւններուն մէջէն կ'անցնին և ճամբան կը միանան ուրիշ սառնցներու, ինչպէս գետերը կը միանան ուրիշ գետերու։ Այսպէս կ'իջնեն հովիտներուն մէջ ուր ջերմութիւնը, անձրեւներն ու հովերը կը հալեցնեն, կը քայքայեն զանոնք։ Սառնարանը այսպէս հալելով ծնունդ կուտայ ջուրի ընթացքներու։ Կրնանք ուրեմն ըսել թէ սառնարանը՝ սառոյցի գետ մըն է որ լեռներու գագաթներուն վրայ դիզուած ձիւնով կը սնանի և որ ինքն ալ իր ստորին մասին մէջ կը մսուցանէ ջուրի ընթացքներ։

Սառնարաններու մակերեւոյթը մրցազուրկ չէ, այլ խորունկ ճեղքերով կտրտուած և խորտուբորտ է։ Նաեւ ծածկուած է քարերով, ժայռի կտորներով և ուրիշ բեկորներով զորս հովը, անձրեւը կամ նոյն ինքն սառնակոյտը իյած ձիւներուն մէկ մասը կը դիզեն այսպէս մչտնջենական ձիւնի սահմանէն վար՝ լերանց բարձր խոռոչներուն ու ճեղքերուն մէջ, ուր կը սկսի Սառնարաններու կազմութիւնը։

Սառնարաններուն կազմութեան կը նպաստեն մէկ կողմէ արեւուն ջերմութիւնը և միւս կողմէ գիչերուան ցուրտը։ Արդարեւ, ցորեկը արեգակը կը հալեցնէ ձիւնին երեսի խաւը, նոյն գիչերը ցուրտը այդ հալումէն առաջ եկած ջուրը կը սառեցնէ։ Մեւնոյն երեւոյթները չատ անգամներ այսպէս կը կրկնուին, ձիւնը կը հալի և ձիւնհալէն յառաջ եկած ջուրը կը սառի։ Այսպէսով կը կազմուին նախ սառոյցի պզտիկ կտորներ, անկանոն ձեւերով որոնք հետզհետէ իրարու վրայ դիզուելով և իրարու միանալով կը ձեւացնեն մեծ խափանցիկ զանգուած մը որ է Սառնարան կամ Սառնոց բուսածը։

Սառնոցները գետերը կը նմանին. լեռներու կողերն ի վար կը սահին. հովիտներու խորչոքարդութիւններուն մէջէն կ'անցնին և ճամբան կը միանան ուրիշ սառնոցներու, ինչպէս գետերը կը միանան ուրիշ գետերու։ Այսպէս կ'իջնեն հովիտներուն մէջ ուր ջերմութիւնը, անձրեւներն ու հովերը կը հալեցնեն, կը քայքայեն զանոնք։ Սառնարանը այսպէս հալելով ծնունդ կուտայ ջուրի ընթացքներու։ Կրնանք ուրեմն ըսել թէ սառնարանը՝ սառոյցի գետ մըն է որ լեռներու գագաթներուն վրայ դիզուած ձիւնով կը սնանի և որ ինքն ալ իր ստորին մասին մէջ կը մսուցանէ ջուրի ընթացքներ։

Սառնարաններու մակերեւոյթը մրցազուրկ չէ, այլ խորունկ ճեղքերով կտրտուած և խորտուբորտ է։ Նաեւ ծածկուած է քարերով, ժայռի կտորներով և ուրիշ բեկորներով զորս հովը, անձրեւը կամ նոյն ինքն սառնակոյտը իյած ձակ են խոնաւ քան թէ չոր կլիմաներու մէջ։ Առատ ձիւն ընդունող սառնարան մը կրնայ չատ վար իջնել լերան մը կողին վրայ. ինչպէս Ալպեան լեռներուն մէջ ուր սառնարաններէն ոմանք մինչեւ արօտատեղիներու սահմանը կը հասնին։ Մինչդեռ Ալպեանները 5000 քառակուսի քիլոմէթր տարածութեամբ սառնարաններ ունին, Կովկասու լեռնագօտին՝ թէպէտ աւելի բարձր՝ 1500 քառ. քիլմ. տարածութեամբ սառնարաններ միայն ունի, իր արեւելեան ու կեդրոնական մասերուն երաչտութեան պատճառաւ։

Ասիոյ մէջ՝ Թիէնչան, Քարաքօրում և Հիմալայա լեռներն ունին հսկայ սառնարաններ. ընդհակառակն Տօրոս և Ալդայի լեռները չունին սառնոց, կլիմայի երաշտութեան պատճառով։

Ափրիկէ սառնոցներէ զուրկ ըլլալ կը թուի. թէպէտ մշտնջենական ձիւնով ծածկուած լեռներ այս ցամաքին մէջ ալ կան։

Հիւսիս. Ամերիկա՝ սառնոցներն աւատ են Ալասքայի և Բրիտանական Կոլոմպիոյ մէջ. Հարաւային Ամերիկա Զիլիի և Բոթակոնիոյ լեռներուն մէջ։

Նոր Զելանտա կղզին ունի անհուն սառնարաններ. Հիւսիսային Եւրոպայի մէջ՝ Սկանտինաւեան լեռներն ու Իտալտա կղզին ունին բազմաթիւ սառնոցներ։ Վերջապէս բեւեռային երկիրներու մէջ սառնոցներ կը գտնուին ոչ միայն լեռներու վրայ այլ նոյն իսկ լեռնադաշտերու երեսը. Կրօէնլանտա անհուն սառնապատ դաշտ մըն է ամբողջովին։

Հարցարան. — Ձիւնի տօրէն տահման ըսելով ի՞նչ կը հասկնաք. — Այս տահմանը միեւնո՞յն է ամէն տեղ. — Ի՞նչ են սառնոցները, կրնա՞ը բացատրել իրենց կազմութիւնը. — Սառնոցները ի՞նչ նմանութիւն ունին դեւերուն հետ. — Սառնոցներու մէջ քարակոյտերը ի՞նչ են. — Ի՞նչ բանէ կախում ունի սառնարաններու գոյութիւնը. — Ինչո՞ւ համար կովկաս լեռները Ալպեանն բէն աւելի բարձր ըլլալով նոյնքան ընդարձակ սառնարաններ չունին.— Ասիոյ ո՞ր լեռները զուրկ են սառնոցներէ։

Կ Լ Ի Մ Ա Յ

Օդն է որ արեւուն ջերմութիւնը մեզի կը հաղորդէ, հետեւաբար ջերմութեան աստիճանը երկրիս այս կամ այն մասին մէջ այնչափ աւելի մեծ կ'ըլլայ որչափ արեւուն ճառագայթները չեչտակի իյնան երկրիս այդ մասին վրայ. ուստի հարկաւ հասարակածին կողմերը օդը խիստ տաք է, իսկ դէպի բեւեռները՝ հետզհետէ ցուրտ։

Կան սակայն ուրիշ զանազան պատճառներ որ ջերմութեան վրայ կ'ազդեն. սոսկ են տեղւոյ մը ծովուն երեսէն վեր բարձրութիւնը, դիրքը, ծովուն մերձաւորութիւնը ևլն.։

1. Որքան բարձրանանք ծովուն երեսէն, այնքան կը նուազի օդին ջերմութիւնը։ Ամէն մէկ 170 մէտր բարձրութեան՝ ջերմութիւնը կը պակսի մէկ աստիճան։ Ասիկա հաստատուած է բարձր լեռներու վրայ կամ օդապարիկով օդին մէջ ելլողներուն փորձովը։ Ուստի, երբ նոյն իսկ Աֆրիկեայ Փօտիին տակ՝ բարձր լեռ մը սկսինք ելլել, օդին ջերմութիւնը երթալով կը պակսի այնպէս ինչպէս պիտի ըլլար երբ Հասա-

Պատկ. 38—39. — **Աֆրիկոյի նաւատակէրը** (Բօրսիֆա)

ՄԻՋԵՐԿԱԿԱՆԻ ԵՂԵՐԲՆԵՐՈՒՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Միջերկրականի եզերքներուն կլիման տաք է եւ ամառները չոր կ'ըլլան հոն: Բուսականութիւնը հոն է եւ հոն կ'աճին տաք երկրի բոյսեր, ինչպես ձիթենի, դափնի, նռնենի, մրտենի. կան նաեւ արմաւենիներ: Ծառերը հոն ունին թաւուած ծեղով կ'աճին եան անտառի, եւ իրենց տերեւները շատ հազուագիւտ անգամներ միայն չափազանց ձոխ են: Որթատունկը որ տարի կը սիրէ եւ խոնաւութենէն կը վախնայ կ'աճի մանաւանդ Ֆրանսայի մէջ:

բակածէն դէպ ի բեւեռները երթալով՝ ջերմութեան տարբեր աստիճաններ ունեցող մարզերէ անցնելինք։

2. Երկրի մը դիրքը մեծապէս կ'ազդէ բախառնութեան աստիճանին վրայ։ Երկիր մը որ հարաւի դէմ է եւ լեռներով պաշտպանուած է ցուրտ հովերու դէմ՝ կը վայելէ առանձնաչնորհեալ կլիմայ մը։ Ասոր համար է որ Նիս քաղաքը՝ Ալպեան լեռներու ստորոտը՝ նոյն իսկ ձմեռ առեն գարնանային օդ մը կը վայելէ։

3. Մեծ կարեւորութիւն ունի նաեւ օդին ու ծովին հոսանքներուն ազդեցութիւնը որ յառաջ կը բերէ երկու տարբեր կլիմաներ. Ծովային կլիմայ և ցամաքային կամ ծայրայեղ կլիմայ։

ԾՈՎԱՅԻՆ ԿԼԻՄԱՅ. — Ընդհանրապէս ծովերուն վրայ օդը ոչ չատ տաք է և ոչ ալ չատ ցուրտ. վասն զի ծովը ցամաքին չափ աւրագ չի տաքնար և անոր չափ չուտ չի պաղիր. ծովին այս բարեխառնութիւնը կ'ազդէ նաև ծովեզերեայ երկիրներուն վրայ. ուստի կղզիներուն և ծովեզերքներուն օդը ոչ այնչափ տաք է ամառը և ոչ այնքան ցուրտ ձմեռը, որքան ծովեզրէն հեռու գտնուած տեղերունը ուր ձմեռները երկար և խիստ կ'ըլլան և ամառները չատ տաք։

Ասոր մէկ պատճառն ալ հովերն են, օրինակի համար Արեւմտեան հովը Ամերիկայի մէջ ցամաքին վրայէն փչելով՝ ձմեռը չատ ցուրտ կ'ընէ հոն. մինչդեռ նոյն հովը Եւրոպայի վրայ կուգայ Ատլանտեան ովկիանոսին վրայէն, ուստի իբր ծովային հով՝ մեզմ է։

Ուրիշ պատճառ մըն ալ ծովուն հոսանքներն են, որոնք ինչպէս արդէն ըսած ենք՝ ծովեզրքները կը տաքցնեն կամ կը պաղեցնեն։ Այսպէս ուրեմն երկրաչուներուն վրայ կան տեղեր որոնք բաւական բարձր լայնութեան աստիճաններու տակ գտնուելով հանդերձ՝ ծովուն մօտիկ և արեւմտեան հովերու ենթակայ ըլլալնուն կը պարտին իրենց մեզմ կլիման ու չափաւոր անձրեւները։ Արեւմտեան Եւրոպա իր մեզմ և բարեխառն կլիման կը պարտի Ատլանտեանի վրայէն փչող արեւմտեան հովերուն և մանաւանդ Կոլֆ-Սթրիմի բարերար ազդեցութեան։

ՅԱՄԱՓՈՒՑԻՉ ԿԼԻՄԱՅ. — Որքան հեռանանք ծովեզրէն, այնքան աւելի կը չեչտուի Ձմեռն և Ամառն միջին բարեխառնութիւնները մէջտեղ եղած տարբերութիւնը։ Ձմեռը սաստիկ կ'ըլլայ, ամառը տաք. եւ անձրեւները բաղդատապէս այնքան առատ չեն ըլլար։ Արդէն Արեւելեան Եւրոպայի մէջ կլիման տարապայման հանգամանք մը կ'սկսի առնել, բայց քանի մտնենք Ասիոյ ներսերը, այնքան աւելի ծայրայեղ կ'ըլլայ կլիման։

Ծայրայեղ կլիման կրնայ տիրել նոյն իսկ այնպիսի ծովեզերքներու վրայ որոնք ցամաքէն փչող հովերու ազդեցութեան տակ կը գտնուին մանաւանդ ձմեռը։ Այսպէս է Ասիոյ արեւելեան ծովեզերքին և Հիւսիսային Ամերիկայի ծովեզերքին համար. Բեւ-

Պատկ. 40, 41, 42, 43.—**Գետի մը պատմութիւնը**

1. Ակ. — 2. Գետ. — 3. Հեղեղ. — 4. Գետաբերան

քին որ Նափոլիի հետ միեւնոյն լայնութեան աստիճանին տակ կը գտնուի, աւելի ցուրտ

ձմեռներ կ'ունենայ քան Քոբլենցեակ և աւելի տաք ամառներ քան Բալէարմոյ։

Հարցարան. — Ջերմութեան վրայ ազդող պատճառները որո՞նք են. — Ծովերուն վրայ ի՞նչպէս է օգը. ծովուն բարեխառնութիւնը ի՞նչ ազդեցութիւն ունի ծովեզերեայ երկիրներուն վրայ. — Ի՞նչ է ծովային կլիման. որո՞նք են ծովային կլիմային առաւելութիւնները. — Ի՞նչ է ցամաքային կլիման. ցոյց տուր քարտէսին վրայ երկրագունտին այն մարզերը որոնք ցամաքային կլիմայ ունին. ինչո՞ւ համար լայնութեան միեւնոյն աստիճանին վրայ գտնուած տեղերու կլիման շատ անգամ տարբեր չըլլար։

Գրաւոր. — Ծովային հոսանքները ի՞նչ ազդեցութիւն ունին կլիմային վրայ։

ԳԼՈՒԽ Ժ.

ՎԱԶՈՒՆ ՋՈՒՐԵՐ

ԱԿԵՐՈՒՆ ԿԱՑԱՐՈՒԹԻՒՆԸ. — Հողը կը ծծէ երկրիս վրայ տեղացած անձրեւին մէկ մասը. այս ջուրը գետնին տակ կը ժողվուի. մինչեւ որ հանդիպի անթափանց խաւի մը ուրկէ անդին չկրնար անցնիլ. հոն հաւաքուելով կը տարածուի հեղհեղակ մինչեւ որ հողին երեսը ծակ մը կամ ճեղք մը գտնելով անկէ դուրս ելլէ. այս ծակը կամ ճեղքը կը կոչուի Ակ կամ Աղբիւր։

Աղբիւրներու բաւիխառնութիւնը միօրինակ չէ։ Գետնին տակ ժողվուած ջուրը որքան աւելի խոր բունկ ըլլայ այնքան աւելի բարձր կ'ըլլայ ալբիւրին տաքութեան աստիճանը։ Մինչեւ հիմայ ճանչցուած են տաք աղբիւրներ կը գտնուին Քարլսպատ որուն ջուրերը 75° տաքութիւն ունին, Վիսպատէն՝ 70°, Էմս՝ 55°։ Ամէնէն տաքն է Համամ Մէսքուտինի (Ագճէրիոյ մէջ) աղբիւրը որ ունի 95° տաքութիւն։ 100° էն աւելի տաք ջուրերը հրաբխային երկիրներու յատուկ են. նշանաւոր են կեյզէրները որոնք եռացած ջուր կը ցայտեցնեն անոնցմէ բարձրութեամբ։ Իսլանտայի մէջ գտնուած մեծ կեյզերը 24-30 ժամը անգամ մը 30 մեդր բարձրութեամբ ջրեղէն սիւն մը կը ժայթքէ։ Միացեալ Նահանգներու կեյզերները 70–80 մեդր բարձրութեամբ ջուր կը ցայտեցնեն։ Նոր Զելանտան եւս ունի գեղ չատ կեյզերներ, թէպէտ չատերն ալ անհետացած են։

Սառերկրեայ ջուրերը իրենց ընթացքին մէջ չարունակ կը չփուին զանազան ժայռերու հետ որոնք անոնց մէջ կը լուծուին և մանաւանդ չատակութիւններ կու տան անոնց։ Այս ջուրերէն ոմանք երկաթի, ծծումբի և ուրիշ տեսակ աղեր պարունակելով բուժիչ չատկութիւններ կ'ունենան և կը կոչուին Հանիթային ջուր։ Ջուրերը իրենց սառերկրեայ ընթացքին մէջ մաչեցնող ներգործութիւն մը կ'ընեն մանաւանդ պէս պրաչային հողերու վրայ որոնք աւելի կակուղ են։ Զանոնք կը մաչեցնեն, կը քայքայեն, կը փորեն և այսպէս կը ձեւացնեն գեղեցիկ ձորեր կամ անձաւներ, չիմաքարեր, լճեր ու ջրվէժներ։ Սառերկրեայ մեծ անձաւներու մէջ նշանաւոր են Մամութի անձաւը՝ Քենթըքիի մէջ (Միացեալ Նահանգներ) և Ադելսպերգի ձորը Աւստրիոյ մէջ։

ԳԵՏԵՐՈՒ ԿԱՑԱՐՈՒԹԻՒՆԸ. — Սառոյցները և ձիւները հալելէն ինչպէս նաև անձրեւներէն ու ակերէն չատաչ եկած ջուրը հողին վրայ կը հոսի և կը ձեւացնէ առուակներ և առուներ որոնք ճամբան ուրիշներու միանալով կամաց կամաց կը կազմեն Գետակներ և Գետեր։

Ջուրի ընթացք մը կախում ունի կլիմայէն, հողին երկրաբանական կազմութենէն և հոլին մակարդակային պէսպիսութենէն։

Կլիման մեծ ազդեցութիւն ունի ջուրի ընթացքներուն վրայ. չատ կլիմաներու մէջ գետը կը հոսի յորդառատ և չարունակ կը սառուցանայ մինչեւ որ ծովը հասնի։ Մինչդեռ չոր կլիմաներու մէջ՝ լեռներէն իջնող գետը ճամբան չատ ջուր կը կորսնցնէ չոգիացումով և վերջապէս լայորովին կը ցամքի՝ ծծուելով օդէն և աւազներէն։ Այսպէս են Կեդրոնական Ասիոյ, Իրանի, Սարաիոյ, Հիւսիսային Ափրիկէի, Աւստրալիոյ ներքին մասերուն ջուրի ընթացքները։

Բարեխառն կլիմաներու մէջ Ձուլիսին կը հալին լեռներու ձիւները. հետեւաբար լեռներէ և սառնարաններէ իջնող գետերուն ջուրերը այն ամսուն մէջ կ'ուռին (ինչպէս են Հռենոս գետը, Ռոն գետը և այլն)։

Աշխարհի Եւրոպայի մէջ ուր կը գտնուին դաչտային գետեր, ջուրերը կ'ուռին գարնան (Ապրիլ և Մայիս ամիսներուն) որ ատեն կ'սկսի ձիւնհալը։ Բարեխառն Գօտիին ցամաքային կլիմաներուն մէջ կը տիրեն աշնանային անձրեւները. ասոր համար է որ Ռուսական գետերը աչունին նորէն կ'ուռին կ'առուաբանան։ Ընդհակառակը, Արեւադարձային մարզերուն մէջ կը տիրեն կանոնաւոր անձրեւային եղանակներ. ասոր համար է որ Նեղոսի, Գանգէսի, Օրէնոքի և այլն ջուրերը ամառը կ'ուռին։

Պատկ. 45.—Քանի մը գետերու բաղդատական երկայնութիւնը

(Նշանակուած իւրաքանչիւր գիծ իր գծուած ցամաքամասին մէջ կն երկար գիծն է)։

Գետերուն հոսուածքին վրայ կ'ազդէ նաեւ հողին երկրաբանական կազմութիւնը։ Դիւրաթափանց հողերը կը ծծեն անձրեւներուն մէկ մասը և չեն թողուր որ ջուրերը մէկէն ի մէկ խուժեն անձրեւային եղանակին մէջ, կամ չափազանց պակսին և բաշտութեան առեն։ Հետեւաբար փխրուն հողերու վրայ հոսող գետերը կանոնաւոր հոսուածք կ'ունենան։

Հողին մակարդակային պէսպիսութիւնն ալ մեծ ազդեցութիւն ունի գետերուն հոսուածքին վրայ. լեռներէն իջնող գետերը ուժով մը դէպ ի դաչտ կ'իջնեն ոստումներով և ջրվէժներով. և չատ կը մաչեցնեն իրենց եզերքները։

Դաչտագետիններու մէջ գառիվարները աւելի մեղմ են, հոսանքը աւելի կանոնաւոր, գետերը նուազ խռովայոյզ և նաւարկելի են։

Վերջապէս ցած դաչտագետիններու գետերը անզգալի դարուվար մը միայն ունին. իրենց փոսը լայն է. հոսանքը այնքան տկար է որ չը կրնար քշել նուրբ աւազները և տիղմերը որոնք չատակը կը նստին և կը ձեւացնեն աւազակոյտեր կամ տելդաներ։

Հարցարան. — Ի՞նչպէս կը ձեւանան տկերը. ինչ են կեյզերները, ո՞ւր կը գտնուին ամէնէն նշանաւորները. — Ի՞նչ բանէ կախում ունի ջուրի ընթացքը. — Ի՞նչպէս կը կազմուին գետերը. — Երկրագունտին ո՞ր մարզերուն մէջ կը գտնուին ամէնէն ստուար գետերը. — Ռուսական գետերը տարբեր ո՞ր եղանակներուն մէջ կ'ուռին և ինչո՞ւ. — Ի՞նչ ազդեցութիւն ունի հողին երկրաբանական կազմութիւնը գետերու հոսուածքին վրայ. — Ինչո՞ւ համար դաչտագետիններու գետերը դիւրաւ նաւարկելի կ'ըլլան. — Ի՞նչ են ջրվէժները։

ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնական Աչխարհագրութենէն է որ սորվեցանք այն ամէն ծանօթութիւնները որոնք որոշեցան մինչեւ հիմա Երկրի երեսին բնական բաժանումներուն և անոնց այլ և այլ երեւոյթներուն ու չատկութիւններուն վրայ։ Բնական Աչխարհագրութենէն Քաղաքական Աչխարհագրութեան անցնելէ, այսինքն մարդոց ձեռքով երկրին երեսին վրայ եղած բաժանումները, մարդկային տարբեր ցեղերը, անոնց բնակութեան տեղերը, զիրենք վարող կառավարական ձեւերը և այլն ուսումնասիրելէ առաջ՝ պէտք է ընդհանուր ակնարկ մը նետենք այն ամէն արդիւնաբերութեան վրայ — հանք և մետաղներ — զորս հողն ու ներքնահողը մեր տրամադրութեան տակ կը դնեն մեր այլազան պէտքերը դոնացնելու համար, ինչպէս նաեւ այն ամէն կենդանի էակներուն վրայ — բոյս և անասուն — որոնցմով չրջապատուած ենք և որոնցմէ կախում ունի մեր գոյութիւնը։

ՀԱՆՔԱԾԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկրին կեղեւը կազմող զանազան գետինները կը պարունակեն հանքային ամբաւ հարստութիւններ, որոնք կը բաղկանան մետաղներէ, հանքային կիզանիւթերէ և չինուածեան քարերէ։ Երկիրներ կան որ առատօրէն ունին զանազան տեսակ հանքեր։ Կան ալ որ չատ քիչ ունին։ Երկրաբանական գետիններուն բնութենէն կախում ունի մետաղներու և ուրիշ հանքային նիւթերու բաչխումը երկրին այլեւայլ մասերուն մէջ։

Բիւրեղային գետիները հարուստ են թանկագին քարերու մասին. ինչպէս Վանակն, Մե-

ղեսիկ, Ակատ, Եղնգաքար, Ցակինթ, Շափիւղայ, Զմրուխտ, Տպազիոն և այլն։

Մրուրային գետիններն կը պարունակեն կրային քարերու զանազան տեսակները (ինչպէս Շինուածեան քարեր, մարմարիոն, վիմագրուածեան քար ևլն) երկանաքար, Շիկակաւ, Ծովափրփուր ևլն.։ Մրուրային գետիններու յատուկ են նաեւ Թերթաքարը, Աղուճակը, Հանքային կիզանիւթերը (Հանքածուխ, Ածխաքար, Փայտաքար ևլն.) և Հանքային իւղերը (Կուպր, Ասֆալտ, Բարիւղ) նոյնպէս Ազամանդն և սաթը։

Մրուրային գետիններու մէջ կը գտնուին դարձեալ մետաղներու մեծագոյն մասը, ինչպէս թանկագին մետաղներէն՝ ոսկի, արծաթ, պլատին, և օգտակար մետաղներէն՝ երկաթ, պղինձ, կապար, ղինկ, անագ մնդիկ, և այլն. որոնք ամենէն աւելի նախնական գետիններու մէջ կը պատահին՝ երակներ, կոյաներ կամ իրարու վրայ չարուած խաւեր ձեւացնելով։

Պատկ. 46. 47. — **Հասարակածային անտառ մը ճավայի մէջ. — Սահարայի մէջ աւազակոյտեր**

Ջերմութիւնը անհրաժեշտ է բոյսերուն ապրելու եւ աճելուն, բայց խոնաւութիւնն ալ նոյնքան անհրաժեշտ է։ Ուստի եւ, միշտով հասարակածային խոնաւ գօտին ամրողջովին ծածկուած է սարսափելի կերպով խիտ եւ ուժեղ բուսականութեամբ մը եւ անթափանցիկի ու կոյս անտառներով ընդհակառակն չոր այրեցեալ գօտին գրեթէ միօրինակ անապատ մըն է ուր ոեւէ բուսականութիւն չկայ աւազներուն ամրութիւնը ծածկող։

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ. — *Բոյսերու գոյութիւնն ու աճումը կախում ունին գլխաւորաբար հողէն ու կլիմայէն։*

Բոյսեր կան որ կրային հողեր կը սիրեն, կան ալ որ աւազուտ հողերու մէջ կ'աճին։ Երկրագործական տեսակէտով լաւագոյն հողերն անոնք են որ յարմար չափով մը կը պարունակեն աւազ, կաւ, կրահող և բուսահող, որով կ'ըլլան աւելի գլուխ փափանց, երաշտութեան կը տոկան և դիւրաւ կը հերկուին։ Կլիման ալ մեծ դեր ունի բուսականութեան վրայ։ Հասարակածէն քանի դէպ ի բեւեռները երթանք, բոյսերու թիւն ու տեսակը հետզհետէ կը պակսին. վասն զի որքան աւելի տաք ու խոնաւ ըլլայ կլիման, այնքան աւելի ճոխ կ'ըլլայ բուսականութիւնը։

Հասարակածային սահմանին մէջ՝ անձրեւները խիստ առատ են և ջերմութիւնը չատ սաստիկ ըլլալուն բոյսերն աւելի զօրեղ և գեղեցիկ կ'ըլլան. հոն ծաղիկներն աւելի պայծառագոյն են և հոտաւէտ, պտուղներն աւելի համեղ, տերեւներն աւելի մեծ և վայելուչ։ Հոն է որ կը գտնուին անհուն կոյս անտառներ, որոնց ծառերը անհատական բարձրութիւններու կը հասնին, և որոնք այնքան խիտ են որ մարդ առանց տապարի չկրնար ճամբայ բանալ երեն. ու երբ մանէ ճչմարիտ անտառին մէջ, ծանր ու խեղդուղ տաքութիւն մըն է կը պաչարէ զինքը, մինչդեռ միւս կողմէ հազարաւոր մրջիւններ ու մժղուկներ ամէնէն կսկծեցնող խայթուածները կուտան իրեն։ Այսպէս է անտառականային անտառը՝ իր անուշահոտ ծառերով, արմաւենիներով, նարդիկենիներով, հնդկեղէզներով և հսկայ պատպատներով։



Պատկ. 48, 49. — **ԲԵՒԵՌԱՑԻՆ ԳՕՏԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ**

Յուրտը միջ խիտ սաստիկ է բեւեռային շրջանակին մէջ, վանաւանդ ձմրան մէջ որու միջոցին արեւը բանի մը երկար ամիսներու ամբողջ ցերդութեան միջոցին հորիզոնին վեր չբարձրանար բնաւ։ Ուստի եւ ծովը հոն գրեթէ միշտ ծածկուած է սառոյցի կտորներով որոնց մէջ տնկուած են հսկայ սառնակոյտեներ որոնք սառէ լեռներու կը նմանին։ Հողը, որ նմանապէս սառոյով ծածկուած է ոեւէ է բուսականութիւն չատարեր։

Դիւրակենդանութեամբ, հնդկեղէզներով և հսկայ պատպատներով։

Հասարակածային այս մեծ անտառները կը գտնուին Հարաւային Ամերիկայի մէջ (Ամազոնի աւազան), կեդրոնական Ափրիկէի (Քոնկոյի և Մեծ լիճերուն միջեւ), Մալայեան արշիպելագոսի և Նոր Կուինէայի մէջ։

Այրեցեալ գօտիին տափարակ մասերուն մէջ, ծովեզերքներուն վրայ, և գետերու տելտաներուն մէջ՝ չքեղ ոգեստներ կը մուգցանեն Պէնկալի և Զինու չատ խիտ բնակիչները։ Ուրիշ մասերն ալ կը հայթայթեն համեմունք և ուրիշ բոյսեր. բայց ինչ որ Եւրոպացիները այսօր ամէնէն աւելի կը փնտռեն տաք երկիրներէ, չաքար, խահուէ, բամպակ, ծխախոտ, թէյ և ուրիշ այս տեսակ բերքեր են։

Քանի Արեւադարձներուն մօտենանք, ջերմութիւնը թէպէտ միշտ չատ սաստիկ կը մնայ, բայց խոնաւութիւնը կը նուազի, վասն զի անձրեւները տաք եղանակին միայն կը տեղան։ Հետեւաբար, անտառները կը պակսին տակաւ և կը սկսի տափաստաններու սահմանը, որ ծածկուած է չատ բարձր խոտերով։

Արեւադարձներու տակ կը սկսի անապատներու գօտին. մերկ, տխուր ու միօրինակ. այսպէս է հասարակածին հիւսիսակողմը՝ այն երկար գօտին որ կը տարածուի Ատլանտեանէն մինչեւ Խաղաղական, Սահարայէն մինչեւ Մոնկոլիա, անցնելով Արաբիայէն և Իրանէն։ Միայն Նեղոսի դալարագեղ հովիտն է որ այս յուսահատ միօրինակութիւնը կը խզէ։

Հասարակածին հարաւակողմը՝ Ափրիկէի Բալահարի անապատը և Աւստրալիոյ մեծ անապատը նոյնպէս աւազուտ ու քարուտ երկիրներ են փշուտներով ծածկուած։

Բեւեռներուն ու Արեւադարձներուն մէջտեղացանքը անձրեւները կը վերակսկին, բայց միայն ձմեռը. ամառները տաք և չոր կ'ըլլան Միջերկրականի ծովեզերքներուն վրայ և Քափի երկրին մէջ։

Այս սահմանին մէջ որթատունկը գեղեցիկ հունձքեր կուտայ վասն զի խաղողը չատ ջերմութիւն և քիչ խոնաւութիւն կը պահանջէ։ Նարնջենիներու, լեմոնիներու և ձիթենիներու սահմանն է այս։

Քիչ մըն ալ մօտենալով բեւեռներուն, կը մտնենք անձրեւային գօտիին մէջ, ուր ծովէն հեռու երկիրներ վտիտ բուսաբերութիւն մը ունին. իսկ ընդհակառակը ծովեզերեայ երկիրներ

ծովուն բարերար ազդեցութիւնը կը կրեն. ուր նոյն գեղեցիկ անտառներ կաղնիի և սիսի, շքեղ արտեր, որթատունկ և հեղիսպատցորեն՝ ամէնէն տաք մասերուն մէջ, յետոյ ճակընդեղ և ցորեն՝ քիչ մը աւելի դէպի հիւսիս, և վերջապէս երբ ալ ցորենը չատ դժուարաւ աճի, վարսակ ու գետնախնձոր:

Բեւեռային սահմաններուն մէջ՝ ձմեռը չատ երկար և չատ խիստ կ'ըլլայ և ամբողջ 10 ամիս ձիւնի թանձր պատանքով մը կը ծածկէ հողը: Ամառը մէկ քանի չաբաթ միայն կը տեւէ հոն: Ասի բուլstրաններու սահմանն է, ուր բոյս ըլլալով մամուռներ միայն կ'աճին:

Հարցարան. — Բոյսերը ամէն տեղ կ'աճի՞ն. — Հասարակածէն դէպ ի բեւեռները երթալով ի՞նչ հանգամանքներ կ'ընծայէ բուսական կեանքը. — Որո՞նք են արեւադարձային գլխաւոր մշակութիւնները. — Ի՞նչ է իրենց կարեւորութիւնը. — Որո՞նք են բարեխառն գօտիին արմտիքներն ու սննդական բոյսերը. — Որո՞նք են տաք երկիրներու արմտիքներն ու սննդական բերքերը. — Որո՞նք են առեւտրական գլխաւոր բերքերը. — Երկրին այլ և այլ մասերուն մէջ հանքերու և մետաղներու բաշխումը ի՞նչ բանէ կախում ունի. — Բիւրեղային գետիններու հանքային հարստութիւնները ի՞նչ են. — Մրուրային գետինները ի՞նչ տեսակ հանքեր կը պարունակեն. — Հանքածուխն ո՞ր տեսակ գետիններու մէջ կը գտնուի:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Կենդանական կեանքը ամէն տեղ կը գըտնուի. ամէնէն բարձր լայնութեան աստիճաններու տակ, ամէնէն բարձր լեռներու գագաթին վրայ ալ կը գտնուին դարձեալ թռչուններ կամ միջատներ:

Կենդանին տունկէն չատ աւելի դիւրաւ կը վարժուի նոր կլիմայի. քիչ ժամանակի մէջ կը կարէ կ'անցնի մեծ հեռաւորութիւններ, փախչելու համար ցուրտէն կամ տաքէն: Միջեռնականները ձմրան ժամ կը մեկնին մեր երկիրներէն, իրենց բոյնը չգտնելու համար Եգիպտոս կամ Սուրիա, գարնան կը վերադառնան Գահիրէէն կամ Իզմիրէն:

Այս պատճառաւ պիտի տեսնենք որ կենդանիները բոյսերու չափ որոշ սահմաններ չունին. ասով հանդերձ չատ կարեւոր զանազանութիւններ կան Այրեցեալ Գօտիի կենդանիներուն ու բարեխառն երկիրներու և Սառուցեալ Գօտիներու կենդանիներուն մէջտեղ:

Կենդանիներու բաչխումը կախում ունի մանաւանդ կլիմայէն ու բուսաբերութենէն:

Արեւադարձային կենդանիներուն չատակնիշն է մեծութիւն և զօրութիւն: Այրեցեալ գօտիին մէջ է որ կը վխտան Շիկերեհները՝ Առիւծ, Վագր, Ռնգեղջիւր, Ջիւգեաի, Օրանկ-Ութան, եւ այլն: Օձերը, Պօանները ու Կոկոդրիլոսները չատ վտանգաւոր են:

Այս տաք երկիրներուն մէջ կան կենդանիներ, որոնք մեծ ծառայութիւններ կը մատուցանեն մարդուն, Փիլը՝ հարաւային Ասիոյ բեռնարձ կենդանին է. և առանց ուղտին՝ կարելի չպիտի ըլլար մարդուն, անապատները կրտրել անցնիլ:

Հետաքրքրաչարժ բան է տեսնել այս հրաշկաներուն քով՝ խիստ փոքր կենդանիներ, որոնցմէ խոյս տալ աւելի դժուար է և որոնք երբեմն նոյնքան վտանգաւոր են: Այսպէս են մժղուկները՝ որ կը վխտան ցած տեղուանք, գետերու եզերքը և գետերու անդային մէջ, և որոնք իրենց անտանելի բզզիւնով ու ցաւագին խայթուածքով խենթ կը դարձնեն մարդը. Ամերիկայի և Սուտանի մարթախտանց լուերը որոնք մորթը ծակելէ յետոյ կը մտնեն եղունգներուն տակ, ինչ որ երբեմն փտախտ կը պատճառէ: Կույանայի մարդակեր ճանճը, որ քնացած մարդուն քթին կամ ականջին մէջ բոյն կը դնէ. և անտանելի ցաւերէ յետոյ մահ կը պատճառէ. Հարաւային Ամերիկէի Ջեձեկ կոչուած ճանճը որուն խայթուածքը մահացու է եղներուն համար. եւ այլն:

Անապատներու կենդանական կեանքը չափազանց ալքատ է, վասն զի բոյս չկայ հոն: Հոս մողէզներ ու վիթը որ չծարաւիր երբեք. անդին արաբական մարուկը որ օդով կ'ապրի. և ուղտը՝ որուն սակաւապետութիւնը առածի կարգ անցած է:

Բարեխառն գօտիներու մէջ ապրող կենդանիներն այլազան են և օգտակար. ընտանի անասուններուն սահմանն է այս (ձի, եզ, ոչխար, այծ, խոզ, և այլն, որոնք այնքան ծառայութիւն կը մատուցանեն մարդուն և որոնք այնքան ծանօթ են որ չարժեր աւելի ծանրանալ ասոնց վրայ): Շիկերէներ նուազ բազմաթիւ են հոն ու նուազ զօրեղ և նուազ ահաւոր, քան Այրեցեալ գօտիին սակ ապրողները:

Եթէ բարեխառն երկիրներու թռչունները



նուազ վայելուն գոյներ ունին քան հասարակածային երկիրներունը, փոխարէն աւելի երգող են և աւելի քաղցրաձայն: Մեր անտառները ու նոյն իսկ մեր արտերը՝ այն գրեթէ ժլատնկատական ճոխութիւններով՝ որ կը բարձրանան անոնցմէ՝ աւելի կենդանի բան մը ունին քան արեւադարձային անտառը՝ որուն լռութիւնը հոգին կը սխրեցնէ:

Սառուցեալ գօտիները քիչ տեսակներ ունին: Արկտական երկիրներու կենդանիները կը կրեն թանձր մուշտակ մը որ զիրենք ցուրտէն կը պահպանէ. ասոնք են Ռէնը, ճերմակ արջը, աղուէսը, կզաքիսը, կնգուռմը, մկնահոտ եղը: Թռչուններն անգամ այս ցուրտ երկիրներուն մէջ պաշտպանուած են ճերմկեկ աղուամազով մը, ինչպէս է Հիւսիսիբադր, որ կը կոչուի Այտեր:



Պատկ. 50, 51, 52.— ԲԱՐԵԽԱՌՆ ԳՕՏԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Բարեխառն գօտին, հասարակածային գօտիեն նուազ տաք ու նուազ խոնաւ, սակայն չափ հզօր անտառներ չունի, բայց փոխարէն ունի բազմաթիւ ծառեր ու մարգեր, եւ ընդհանուրապես աւելի գոյ ու կանաչագեղ տեսարան մը: Պօռոտի կողմերուն մէջ (Պատկ. 1), Մաժոր Չիքին միջտղոր, Աչպեանիներուն ստորոտ, կ'երեւան Միջերկրականեան բոյսեր՝ ճարճկենի եւ լաւռնի: Ձարոն հարուպականին տարբեր բոյսեր ունի, բայց նորեն, գոնէ Չօնսօ կողմին մէջ (Պատկ. 2) աւելի նկարագեղ խան հզօր թուսակաւուրիւն մը ունի: Իսկ Նօռմանտիա նշանաւոր է խնձորենիներու շուրին տակ տարածուող խոտհանուն դաշտերով (Պատկ. 3):

Եթէ այլ և այլ անասուններ անօգուտ կ'երեւան առջի բերան, եթէ անոնց մէջ կան նոյն իսկ այնպիսիներ որ վնասակար ճանչցուած են, փոխադարձաբար կան խիստ չատեր ալ որ մարդուն կը ծառայեն իբր ստեղծ, միանգամայն անոր կը մատակարարեն այն ամէն նախնական նիւթերը, որ անհրաժեշտ են իր ճարտարարուեստներուն:

Եզը, ոչխարը, այծը, խոզը և հաւերը առջի ու այլազան անունդ մը կուտան մարդուն: Ոչխարն ու այծը ոչ միայն իրենց միսը կուտան, այլ և իրենց բուրդը կամ մազը որոնցմով մարդը տաքուկ զգեստներ կը չինէ: Շերամի որդը չատ խոր'պաւոր կերպով մը կը պատրաստէ մետաքսը որով ճոխ և հարուստ կեր պատներ կը չինուին. իսկ սառուցեալ երկիրներուն կենդանիները մարդուն կուտան իրենց թանձր և պատուական մուշտակները:

Մարդը՝ իր աչխատութիւններուն ու փոխադրութիւններուն համար՝ դաչտային երկիրներու մէջ ունի եզն ու ձին, լեռնոտ տեղերու մէջ՝ էշն ու ջորին, ցուրտ կլիմաներու մէջ՝ չունն ու եղջերուն, որոնք իր բախիրները կը քաչեն, և առանց ուղտին՝ անտ պատը յաւէտ պոչ պիտի մնար մարդուն առջեւ:

Հարցարան. — Կենդանիները առանց գօտիի տակ կ'ապրի՞ն. — Այրեցեալ գօտին ի՞նչ մասնաւոր կենդանիներ ունի. — Բարեխառն գօտիները ի՞նչ տեսակ կենդանիներ ունին. —

Սառուցեալ գօտիներուն կենդանիները ի՞նչ օգտակարութիւններ կ'ընծայեն մարդուն։

Դրաւար. — Ո՞ր կենդանիները մանաւորապէս օգտակար են մարդուն. — Ի՞նչ կերպով և ի՞նչ պայմաններու մէջ։

ՄԱՐԴ

ԵՐԿՐԱԳՆՏԻՍ ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Մարդկային ազգին որորանը եղած են Ասիոյ բարձր դաշտագետինները. հոնկէ է որ մարդիկ տարածուեցան քիչ քիչ բոլոր երկրիս վրայ, վասն զի մարդը՝ ուրիշ ամէն էակներէ աւելի դիւրաւ կ'ընտելանայ նոր կլիմայի։

Այսօր երկրագունտին բոլոր բնակիչներուն թիւը կը հաշուուի 1570 միլիոն հոգի, որոնք չատ անհաւասար կերպով բաժնուած են ցամաքին հինգ մասերուն մէջ. այսպէս՝

Եւրոպա	ունի	404 միլիոն	բնակիչ
Ասիա	»	865	» »
Աֆրիկէ	»	145	» »
Ամերիկա	»	149	» »

Ովկիանիա, Աւստրալիա և Բոլինեզիա ունին 7 միլիոն բնակիչ։

Երկրիս հինգ մասերուն մէջ բնակիչներու խտութիւնը չատ կը տարբերի մէկ երկրէն միւսը. հողագործական ու ճարտարարուեստական առատ հարստութիւններ պարունակող և բարեխառն ու խնաւ կլիմայ ունեցող երկիրներ չատ բազմամարդ են. մինչդեռ բնականէն աղքատ և ծայրայեղ կլիմայ ու երաչտ հող ունեցող մարզեր ընդհակառակը սակաւաբնակ են։

Երկրի վրայ կան չորս բազմամարդ կեդրոններ որոնք հետեւեալներն են. 1. Զինաստանի դաշտագետինը, 2. Գանգէսի հովիտը, 3. Արեւմտեան ու կեդրոնական Եւրոպայի ճարտարագործական մարզերը, 4. Միացեալ Նահանգներուն Ատլանտեանի սահմանակից մասը։

Ամէնէն առաջ կու գայ Զինաստան. իր տափարակ երկիրները լաւ ոռոգուած և հիանալի կերպով մշակուած ըլլալով առատօրէն կ'արտադրեն բրինձ որ Զինացիներուն էական սնունդն է։ Ակէ զատ՝ Զինացին աշխարհիս առաջին հողագործն է, հողին համար տեսակ մը կրօնական ակնածանք ունի. ա՛չ մէկ տեղ այնքան խնամքով ու այնքան սիրով կը մշակեն հողը. այս պատճառաւ Զինաստան կը սնուցանէ 400 միլիոնէ աւելի մարդիկ որ ըսել է երկրագնդիս ամբողջ բնակիչներուն մէկ քառորդէն աւելին։

Զինու դրացին՝ Հնդկաստան՝ իր դաշտագետիններուն մէջ կ'ապրեցնէ չատ խիտ բնակչութիւն մը. 300 միլիոն հոգի կ'ապրին այս բարեբեր հողին վրայ (երկրիս բոլոր բնակիչներուն $^1/_5$-ին չափ), մանաւորապէս Գանգէսի տելտային և Պէնկալի մէջ, որուն ջրարբի դաշտագետինները աքանչելի յարմարութիւն ունին բրինձի մշակութեան։

Եւրոպա՝ այսքան երկար ատենէ ի վեր չահագործուած ըլլալով հանդերձ՝ տակաւին կը սնուցանէ իբր 400 միլիոն հոգի. իր ամէնէն բազմամարդ մարզերն են Պելճիգա, Սաքսոնիա, Մեծն Բրիտանիա և Ֆրանսայի հիւսիսային գետահովիտները։

Հիւսիսային Ամերիկա՝ իբր նոր աշխարհ՝ պէտք չունի բնականաբար պարարտացուցիչ միջոցներու դիմելու՝ արդասաւոր ընելու համար այն հողը որ կը սնուցանէ Եւրոպայի ամէն անկիւնները։ Հողն ու ներքնահողը, երկրագործութիւնն ու ճարտարուեստը՝ Միացեալ Նահանգներու զարգացման մասերուն մէջ արդէն կը սնուցանեն չատ խիտ բնակիչներ, որոնք կրնան հիմա իրենք իրենց բաւել և կը չանան մէկ կողմ թողուլ Եւրոպայի արտադրութիւնները։ «Ամերիկան՝ Ամերիկացիներուն», այս է իրենց նշանաբանը։

Եթէ ուշադրութեամբ քննենք բնակիչներու խտութիւնը ցոյց տուող քարտէս մը, չատ հետաքրքրական իրողութիւններ կրեան կուգան։ Այսպէս կը տեսնենք թէ մարդը կը նախընտրէ բարեխառն երկիրները՝ իրենց չափաւոր տաքութիւններով և չափաւոր անձրեւներով։ Հասարակածային տաքը անարիւնութեան կը մատնէ, բեւեռային ցուրտն ալ կը թմրեցնէ զինքը։

Մարդը չկրնար ապրիլ բարձր լեռներու վրայ, ուր բարեխառնութիւնը՝ բեւեռային երկիրներու ցուրտը կը յիշեցնէ, և ոչ ալ բարձր լեռնադաշտերու վրայ, վասն զի օդը չափազանց անգայատաց է հոն։

Բացառութիւն են սակայն Արեւադարձնեբուն տակ գտնուած լեռնադաշտերը (Մեքսիկա, Էքուատոր, Բէրու, Պոլիվիա) որոնք իրենց բարձրութեան պատճառաւ բարեխառն կլիմայ ունին և չրջակայ վառառողջ ու տօթագին երկիրներէն աւելի խիտ բնակչութիւն մը։

Մարդիկ կը խտնուին նոյնպէս կղզիներու մէջ, ծովեզերքները, գետերուն երկայնութեանը, հանքահարուստ երկիրներու մէջ։ Նաւարկութեան դիւրամատչելի եղող կամ արդիւնաչատ ձկնորսարաններ ունեցող ծովեզերքները չատ անգամ բազմամարդ կ'ըլլան, նոյն իսկ երբ իրենց կռնակը գտնուող ցամաքը աղքատ է։

Մարդիկ կը դիմեն նաեւ գետերու երկայնքը։ Հողը ընդհանրապէս լաւ ոռոգուած է հոն և պտղաբեր, տափարակ ու դիւրաւ մշակելի։ Ակէ զատ գետերը՝ այդ քալող ճամբաները՝ կը դիւրացնեն բերքերու փոխադրութիւնը։ Քաղաքներն ընդհանրապէս գետեզերքներու վրայ կառուցուած կ'ըլլան։

Հարցաբանութիւն. — Ո՞ր երկիրներն եղած են մարդկային ազգին որորանը. — Ո՞րչափ է երկրագնդին բազմամարդութիւնը. — Ո՞րն է ամէնէն չատ բնակիչ ունեցող ցամաքը. — Երկրիս բնակիչները ինչո՞ւ միօրինակ կերպով չրուած չեն երկրի մակերեւոյթին վրայ. — Աշխարհի ամէնէն բազմամարդ մասերը որո՞նք են. — Որո՞նք են ամէնէն սակաւաբնակ մարզերը և ինչո՞ւ. — Մարդիկ ինչո՞ւ համար չատ անգամ գետերու երկայնքը կը խտնուին. լեռնային երկիրները ինչո՞ւ սակաւաբնակ կ'ըլլան. — Լեռնադաշտերը ինչ ազդեցութիւն ունին բնակիչներու խտութեան մասին՝ Արեւադարձային երկիրներու մէջ։

ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԵՂԸ

Մարդիկ իրարու հետ մեծ նմանութիւններ ունին, բայց միւս կողմէ իրարմէ մեծ տարբերութիւններ ալ կ'ընծայեն, որոնց մէջ ամէնէն աչքի զարնողն ու ամէնէն ծանօթն է մարմնի գոյնին տարբերութիւնը։ Ակէ ծնունդ առած է մարդկային ազգին 3 գլխաւոր ցեղերու բաժանումը, որոնք են 1. Սպիտակ ցեղ. 2. Դեղին ցեղ. 3. Խափիկ ցեղ։

Սպիտակ ցեղ. — *Սպիտակ կամ Կովկասեան*[1] ցեղին կը վերաբերին Եւրոպացիները, Հարաւ-արեւմտեան Ասիոյ և Հիւսիսային Աֆրիկէի բնակիչները, և Ամերիկայի, Ովկիանիոյ ու Հարաւային Աֆրիկէի գաղթականութեանց մեծ մասը։

53. ՀԵՐՄԱԿ ՑԵՂ. 54. ԴԵՂԻՆ ՑԵՂ.

Այս ցեղին մարդիկը ունին ընդհանրապէս սպիտակ կամ բաց թխագոյն մորթ, ձուաձեւ դէմք, հորիզոնական աչքեր (կապոյտ կամ սեւ), բարակ ու չիտակ քիթ, փոքր շրթունք, նուրբ և ոլորկ մազեր (խարտեաշ կամ սեւ) և լայն ճակատ։

55. ՍԵՒ ՑԵՂ. 56. ԿԱՐՄԻՐ ՑԵՂ.

Այս ցեղը կը հաշուուի իբր 780 միլիոն։

Դեղին ցեղ. — *Դեղին ցեղը* որ կը կոչուի նաեւ Մոնկոլեան ցեղ, կը հաշուուի իբր 660 միլիոն։ Այս ցեղին կը պատկանին հիւսիսային, արեւելեան և կեդրոնական Ասիոյ բնակիչները, որոնք ունին դեղին կամ ազատ թխագոյն մորթ, լայն երես, ցցուած այտեր, պզտիկ, նեղ ու չեղ աչքեր, խոշոր ու տափակ քիթ, թանձր ու սեւ մազեր, լայն բերան։ Դեղին ցեղը կը սկսի տարածուիլ Պաղպակեանի հակադիր ծովեզերքներուն վրայ, ինչպէս Աւստրալիա, Բէրու և Մանաւանդ Փալիֆորնիա։

Խափիկ ցեղ. — *Խափիկ կամ սեւ ցեղին* կը վերաբերին կեդրոնական ու հարաւային Աֆրիկէի բնակիչներուն մեծագոյն մասը, իբր 165 միլիոն։ Ունին սեւ մորթ, հատ չրթունք, նեղ գանկ, կարճ ու գուռզ սեւ մազեր, տափակ քիթ ու դուրս ցցուած ծնօտ։

Այս երեք գլխաւոր ցեղերէն զատ՝ կան ուրիշ երկու ցեղեր ալ. Կարմիր կամ Ամերիկեան ցեղ, Պլնձագոյն կամ Մալայեան ցեղ։

Կարմիր ցեղին կը պատկանին Ամերիկայի բոլոր բնիկները (15 միլիոն), որոնք ունին կար-

(1) Այս ցեղին սկզբնատիպը ըլլալ կը կարծուին Կովկասի բնակիչները։

մրագոյն մորթ, բարձր հասակ, ցած ճակատ, խորը քաչուած ու պզտիկ ւչքեր։

Մալայեան ցեղին կը պատկանին Մալեզիոյ, Բոլինեզիոյ և Մատակասքարի բնիկները, որոնք ունին ձիթագոյն կամ թխագոյն մորթ, երկայն փայլուն մազեր, տափակ քիթ, մեծ բերան ու հաստ շրթունք։

Ցեղերու մէջ եղած տարբերութիւնները օրէ օր նուազելու վրայ են, այս ցեղերուն իրարու հետ խառնուելուն հետեւանքով։ Երկրագնդի բնակիչներուն մէկ մեծ մասն ալ (30 միլիոն) խառնածիններէ կը բաղկանայ։

Հարցարան. — *Մարդիկ ամէն կլիմայի տակ կըրնա՞ն ապրիլ. — Բոլոր աշխարհի բազմամարդութիւնը ո՞րչափ է. — Աշխարհի ամէն կողմը մարդիկ միևնոյն կերպարանքը ունի՞ն ճշդիւ. — Ինչո՞ գլխաւոր ցեղ կան. — Ինչ է իւրաքանչիւրին յատուկ հանգամանքը. — Ո՞ր ցեղը ամէնէն աւելի բազմաթիւ է. — Մարդկային ցեղերը ինչո՞վ կը զանազանուին իրարմէ։*

ԼԵԶՈՒ ԵՒ ԿՐՕՆՔ

ԼԵԶՈՒ. — *Մարդկային ընկերութեան գլխաւոր կապն է լեզուն, որով մարդիկ իրենց զգացումներն ու գաղափարները կրնան իրենց նմաններուն յայտնել։ Աշխարհի վրայ խօսուած լեզուները խիստ բազմաթիւ են և շատերը դեռ այնքան քիչ ճանչցուած են որ կարելի չէ որոշ դասակարգութիւն մը ընել։ Սակայն լեզուագէտներն ամէնէն աւելի տարածուած լեզուները կրցած են բաժնել մէկ քանի որոշ խումբերու. այսպէս՝*

1. *Հնդեւրոպական լեզուներ, որոնց մէջ են Եւրոպայի մէջ խօսուած գրեթէ բոլոր լեզուները, հարաւային Ասիոյ լեզուներուն մէկ մասը, և Ամերիկայի, Ափրիկէի, Ովկիանիոյ Եւրոպական գաղթականութեանց լեզուները։*

2. *Սեմական լեզուներ, որ կը խօսուին արեւմտեան Ասիոյ և հիւսիսային ու արեւելեան Ափրիկէի մեծ մասին մէջ։ Սեմական լեզուներուն կարեւորագոյններն են Եբրայեցերէնն ու Արաբերէնը։*

3. *Թուրֆօ-Մօնկոլական կամ Թուրանական լեզուներ, որ կը խօսուին հիւսիսային ու կեդրոնական Ասիոյ մէջ. Թուրանական են նաև Ֆիններու և Մաճառներու լեզուները։*

4. *Միավանկ լեզուներ, որոնց բառերը միավանկ են, չունին հոլովում կամ խոնարհում։ Ասոնց գլխաւորն է Չինարէնը։ Այս խումբին կը պատկանին բոլոր Արեւելեան Ասիոյ մէջ խօսուած լեզուները։*

5. *Մալայեան լեզուներ, որոնք կը խօսուին Ովկիանիոյ արշիպելագոսներուն մէջ և տարածուած են նոյն իսկ Հարաւային Ասիոյ ու Արեւելեան Ափրիկէի ինչ ինչ մասերուն մէջ։*

Լեզուները կը բաժնուին նաեւ երկուքի, Հին կամ Մեռեալ, և Նոր կամ Կենդանի։ Հին լեզուներ են Հայերէն գրաբարը, Լատիներէնը, Հելլէներէնը. իսկ Նոր կամ Կենդանի լեզուներ են Հայերէն աշխարհաբարը, Իտալերէնը, Ցուներէնը, և այլն։

ԿՐՕՆՔ. — *Բոլոր մարդիկ առհասարակ կ'ընդունին Տիեզերքն ստեղծող գերագոյն էակի մը գոյութիւնը. բայց ամէնքն ալ այս գերագոյն կարողութեան վրայ միևնոյն գաղափարը չունին և անոր պարտ ու պատշաճ պաշտամունքը միևնոյն կերպով չեն մատուցաներ։ Ասկէ յառաջ կու գան զանազան կրօններ, որոնք իրենց ամրողջութեան մէջ կրնան երկու կարգի վերածուիլ. 1. Միաստուածեան կրօնիներ, 2. Բազմաստուածեան կրօնիներ։*

1. *Միաստուածեան կրօնքներն են անոնք որ միակ Աստուծոյ մը գոյութիւնը կ'ընդունին. ասոնք են,*

Ա. *Բրիստոնեութիւն, որ կը բաժնուի երեք գլխաւոր ճիւղերու.*

Արեւելեան Եկեղեցի, որ կը բովանդակէ Հայերը, Յոյները, Ռուսերը և ասոնց հետեւող ազգերը (իրը 110 միլիոն)։

Արեւմտեան Եկեղեցի, որ է Կաթոլիկ կամ Հռովմէական եկեղեցին, որուն հոգեւոր գլուխն է Պապը. (250 միլիոն)։

Բողոքականութիւն, որ կը բաժնուի չատ տեսակներու, ինչպէս Լուտերականութիւն կամ Աւետարանական եկեղեցի, Կալվինականութիւն կամ Նորոգեալ եկեղեցի, Եպիսկոպոսականութիւն կամ Անկլիքան եկեղեցի, Երիցականութիւն, և այլն (150 միլիոն)։

Եւրոպան ու Ամերիկան գրեթէ ամբողջ Քրիստոնեայ են։

Բ. *Մահմետականութիւն կամ Իսլամական կրօնք, որուն հետեւողներուն թիւը 200 միլիոնի կը մօտենայ։ Մահմետականութիւնը կը տիրէ գլխաւորապէս Ասիոյ հարաւային և արեւմտեան մասերուն, Ափրիկէի հիւսիսային և կեդրոնական մասերուն ու Եւրոպական Թուրքիոյ մէջ։*

Գ. *Հրեութիւն, որուն կը հետեւին աշխարհիս ամէն մասերուն մէջ ցրուած Հրեաները (10 միլիոն)։ Ասոնք ալ կը բաժնուին այլ և այլ աղանդներու։*

2. *Բազմաստուածեան են այն կրօնքները որ մէկէ աւելի աստուածներու գոյութիւնը կ'ընդունին և կը բաժնուին 3 գլխաւոր ճիւղերու։*

Պրահմանութիւն, որուն կը հետեւին Հընդկական ժողովուրդները (200 միլիոն), որոնց գլխաւոր չաստուածն է Պրահմա։

Պուտտայականութիւն, որուն հիմնադիրն է Պուտտա և որուն կը հետեւին Չինացիները, Ճափոնցիներն ու Հնդկա-Չինու բնակիչներուն մեծ մասը (340 միլիոն)։

Դիւրապաշտութիւն կամ Ֆեթիշութիւն, բոլոր կրօնքներուն ամէնէն անհեթեթը, որ կրօնական պաշտօն կը մատուցանէ ամէն չնչաւոր կամ անշունչ, օգտակար կամ վնասակար իրերու։ Ափրիկէի սեւամորթներն ու Ովկիանիոյ բնակիչներուն մեծագոյն մասը որոնք տակաւին վայրենութեան կամ խորունկ տգիտութեան մէջ կը գտնուին, Դիւրապաշտութեան կը հետեւին (150 միլիոն հոգի)։

Հարցարան. — *Ինչ է լեզուն. — Իրարմէ տարբեր ո՞րչափ լեզու ներ կան. — Քանի՞ գլխաւոր բաժանումներ ունին լեզուները. — Ո՞ր լեզուները միայր կ'ըսուին և որո՞նք երկրորդական. — Աշխարհի վրայ ամէնէն աւելի գործածական լեզուները որո՞նք են։*

Ինչ է կրօնքը և քանի՞ գլխաւոր կրօնք կայ. — Որո՞նք են միաստուածեան կրօնքները. — Քրիստոնէութիւնը ո՞րչափ հետեւողներ ունի և քանի՞ ճիւղերու կը բաժնուի — Ինչ է Մահմետականութիւնը. — Ինչ տեսակ կրօնքներ են պուտտայականութիւնն ու պրահմանութիւնը. որո՞նք են ասոնց հետեւողները. — Ինչ է կռապաշտութիւնը։

ԱԶԳ. ՏԷՐՈՒԹԻՒՆ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳ ԵՒ ՏԷՐՈՒԹԻՒՆ. — *Մարդը՝ ինչպէս կրօնական նոյնպէս ալ ընկերական էակ մըն է. ոչ մէկ ատեն և ոչ մէկ տեղ անոր առանձին ապրիլը տեսնուած չէ։ Ամէն մարդկային ընկերութեան առաջին ձեւն ու նախատիպարն է Ընտանիքը։ Միևնոյն արմատէն սերած ընտանիքներու միութիւն մը Ցեղախումբ կը կոչուի։ Կան ցեղախումբեր, մանաւանդ տափաստաններու կամ անապատներու բնակիչները, որ աստանդական են և վրաններու կամ առժամանակեայ պատսպարաններու տակ կ'ապրին, և տեղափոխութիւն կ'ընեն երբ միևնոյն տեղը չկարէ ալ իրենց հօտին և իրենց ապրուստին։*

Բազմաթիւ ցեղախումբեր իրարմէ՝ որոնք իրարու հետ կապուած են ծագման, լեզուի, կրօնքի, բարքերու և պատմական անցեալի ընդհանուր նմանութիւններով՝ կը ձեւացնեն ազգ մը կամ ժողովուրդ մը։

Վերջապէս, ընդհանուր օրէնքներու և ընդհանուր կառավարութեան մը իշխանութեան ներքեւ կազմակերպուած ժողովուրդ մը Տէրութիւն մը կը ձեւացնէ։

Պէտք չէ չփոթել իրարու հետ Ազգ մը և Տէրութիւն մը։ Ազգ մը կրնայ չատ տէրութիւններ ձեւացնել, և Տէրութիւն մը կրնայ բաղկանալ չատ ազգերէ։

Տէրութիւնները կամ երկիրները ունին փաքր ստորաբաժանումներ, որոնք կը կոչուին Նահանգ, Գաւառ, Շրջանակ, և այլն։

Բնակարաններու խումբերը՝ աւելի կամ նուազ ընդարձակ ըլլալնուն համեմատ կը կոչուին Գաղաք, Աւան կամ Գիւղամաղաք. Գիւղ, Շեն։ Գաղաք մը երբոր բերդ ունի՝ Բերդաքաղաք կ'ըսուի. քաղաքին բերդէն դուրս եղած մասը իր Արուարձանը կը կոչուի։

Մայրաքաղաք կը կոչուի այն քաղաքը ուր կը նստի երկրին իշխանը կամ թագաւորը, և ուր կեդրոնացած է կառավարութեան գերագոյն վարչութիւնը։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐ ՁԵՒԵՐԸ. — *Երկրի մը մէջ՝ օրէնքները գործադրել տալու և ամէն մասնաւոր կամք իմաստութեամբ դէպ ի հանրային օգտին ուղղելու պաշտօն ունեցող իշխանութիւնը կը կոչուի Կառավարութիւն, որ երկու գլխաւոր ձեւ ունի՝ Միապետութիւն և Հանրապետութիւն։*

Միապետական կառավարութիւն կը կոչ-

ուի այն՝ որուն մէջ գերագոյն իշխանութիւնը կը պատկանի մը միակ պետի մը, որ ընդհանրապէս կ'ըլլայ ժառանգական։ Եթէ վճռապետը ազատօրէն կ'իշխէ եւ իր կամքին համեմատ օրէնքներ կը դնէ, միապետութիւնը կ'ըլլայ բացարձակ։ Իսկ երբ վճռապետին իշխանութիւնը չափաւորուած ըլլայ Սահմանադրութիւն կոչուած հիմնական օրէնքով մը՝ միապետութիւնը կը կոչուի Սահմանադրական։

Հանրապետութիւն կը կոչուի այն կառավարութիւնը՝ որուն մէջ ժողովուրդը իր գործը կը դնէ գերագոյն իշխանութիւնը՝ իր ընտրած ներկայացուցիչներուն ձեռքով։ Հանրապետութիւնը՝ այնպէս ինչպէս կը հասկցուի այսօր ընդհանուր կերպով՝ Սահմանադրական Միապետութենէն առաջ միայն կը տարբերի որ հանրապետութեան նախագահը փոխանակ ժառանգական ըլլալու, որոշեալ ժամանակի մը համար կ'ընտրուի։

Հարցաբան. — Մարդիկ քանի՞ տեսակ աշխատութիւն ունին եւ իրենց ապրելու եղանակին նայելով քանի՞ կարգերու կը բաժնուին. — Ինչ է կառավարութիւնը, եւ քանի՞ տեսակ կառավարութիւն կայ. — Ինչ է միապետութիւնը եւ քանի՞ տեսակ է։

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Ազգի մը կամ ժողովուրդի մը քաղաքակրթութիւնը կը կայանայ իր դաւանանքներուն, իր բարքերուն, իր օրէնքներուն ամբողջութեան, ու իր պէտքերը գոհացնելու եւ իր զգացումներն ու գաղափարները արտայայտելու համար գործածած միջոցներուն մէջ։

Քաղաքակրթութեան ամենէն վերին աստիճանը կը գտնուի Սպիտակ Ցեղին ժողովուրդները, մանաւանդ Բրիտանիանները, որոնք հասկցած են ընտանիքին պատիւը, ջնջած են գերութիւնը եւ հանրային իրաւունքի մեծութեան եւ օրէնքի գերիշխանութեան վրայ հիմնուած կառավարութիւններ հաստատած են։

Դեղին Ցեղը նուազ խելացի է, բայց աշխատասէր, համբերող ու սակաւապետ։ Ունի իւրացնելու մեծ ընդունակութիւն, եւ շատ դիւրաւ ու շատ չուտով կ'ընդօրինակէ ամէն բան որ սպիտակ ցեղին գերազանցութիւնը կը կազմէ. այսպէս են Ձինացիները եւ մանաւանդ Ճապոնները, որոնց քաղաքակրթութիւնը նոյնքան հին է որքան Սպիտակ ցեղի ժողովուրդներուննը։

Թխագոյն ցեղը նախորդ երկու ցեղերէն վար է ֆիզիքական եւ մտաւորական տեսակէտներով. խաժիլիները ծոյլ ու կուտասէր են եւ հարկը ստիպած աեն միայն կ'աշխատին։

Ամերիկայի կարմրամորթները թափառական են, կ'ապրին ձկնորսութեամբ եւ մանաւանդ որսորդութեամբ. չունին երկրագործութիւն, ոչ ալ ճարտարարուեստ։

Բարբարոսութեան անդունդին տարին աստիճաններուն վրայ կը գտնուին դեռ ներքին Ափրիկէի մէկ քանի խաժիլիկ ցեղերն ու գրեթէ ամբողջ սեւամորթ ցեղն Ովկիանիոյ, ուր կը գտնուին դեռ չատ վայրենի եւ մարդակեր ցեղեր։

Ցեղը չէ որ ժողովուրդի մը գերակշռութիւնը կը չինէ, այլ իր քաղաքակրթութիւնը։ Ժողովուրդ մը այնքան աւելի քաղաքակիրթ կ'ըլլայ որքան իր ստացած ծանօթութիւններն ըլլան աւելի լայնածաւալ, իր երկրագործութիւնը աւելի կատարեալ, իր ճարտարարուեստը աւելի գիտական, իր հաղորդակցութեան միջոցները աւելի ընդարձակ, իր ընկերական բարքերն աւելի խազաղ, իր օրէնքներն աւելի իմաստուն եւ իր բարոյականութիւնն աւելի բարձր։

Անկարելի է ուրանալ մի՛ջավայրին, մանաւանդ հողին, կլիմային եւ ծովուն մեծ ազդեցութիւնը Քաղաքակրթութեան մը զարգացման վրայ։

Ծայրայեղ կլիմաներն անյարմար են քաղաքակրթութեան. խիստ մեծ չերմութիւն մը կ'ընկճէ մարդուն կորովը եւ կ'անդամալուծէ անոր իմացականութիւնը։ Ջնջ տեսներ բնաւ որ հզօր պետութիւններ ծնած ըլլան Այրեցեալ Գօտիին տակ։ Գրականութիւն եւ արուեստ ոչ մէկ գլուխ գործոց յառաջ բերած են հոն։ Երկրագործութիւն եւ ճարտարարուեստ նախնական մնացած են նոյնպէս։ Պատճառն այն է որ մարդը այդ տեղուանք չատ անգամ ձեռքը երկընդունելով կրնայ քակել իր տնտեսը որ ծառերէն կախուած է։ Լաւ զգեստներ անօգուտ պերճանք մը պիտի ըլլային իրեն համար, քանի որ վրան մը բաւական է զինքը պատսպարելու համար։ Կանխահոգութիւնն անօգուտ է ուրեմն, տեսնելով ճիգը՝ ֆիզիքական կամ մտաւորական՝ ոչինչ է գրեթէ։

Սառուցեալ գօտին քիչ բնակիչներ ունի, և անոնց ալ գործն է ապրուստը բնութեան մը դէմ մաքառիլ։ Որսորդութիւնն ու ձկնորսութիւնը իրենց միակ զբաղմունքն են, ցուրտը կը թմրեցնէ իրենց իմացականութիւնը։ Ա՛յսպէս ուրեմն, բարեխառն կլիմաներն են որ քաղաքակրթութեան զարգանալուն կը նպաստեն։

Շատ բարձր լեռներով ծածկուած երկիրներ աննպաստ են ընդհանրապէս քաղաքակրթութեան յառաջդիմութեան։ Բարձր գագաթները բնակիչ չունին. բարձր լեռնապաչտերն ու լեռները ալ դիւրին չեն մչակուիր. հողը՝ ժլատ է հոն և կլիման ապերախտ։ Լեռնաբնակները տեւաբար բռնադատուած կ'ըլլան դժնդակ աշխատութեան մը. և իրենց յոգնութիւնները չեն վարձատրուիր միշտ։ Ա՛յս պատճառաւ բարձր լեռներու մարդը չատ, խիստ և խնայասէր կ'ըլլայ։

Դաչտագետինները ուրեմն աւելի նպաստաւոր են քաղաքակրթութեան զարգանալուն. բերքերն հոն աւելի առատ են, կլիման աւելի հաճելի, կեանքն աւելի դիւրին, պարապոյ ժամերն՝ աւելի չատ։ Ջինուոր գեղեցիկ հովիտները, Հնդկաստանի հարուստ դաչտագետինները, Նեղոսի բարեբեր հովիտը՝ չատ կանուխէն տեսած են փայլուն քաղաքակրթութիւններ։

Ամէն կողմէ ծովերով չրջապատուած, և կամ լեռներով՝ կամ ուրիշ պատուարներով ցամաքէն անջատուած և ծովեզերեայ երկիրներու բնակիչներն նուազ կ'ըլլան և դիւրաւ մէկ տեղէն միւսը կ'երթան, վաճառականական չարաբերութիւններ հաստատելու համար։ Ա՛յս չարաբերութիւններէն կը ծնի աւելի կամ նուազ փայլուն քաղաքակրթութիւն մը։ Ա՛յսպէս եղած են Փիւնիկեցիները, Ձենովացիները, Վենետիկցիները, Փորթոկէզները, և աւելի վերջը Հոլլանտացիները, որ կը հիմնեն ընդարձակ գաղթականութիւններ և դէմ ժամանակի մը համար իրենց ձեռքը կ'անցուընեն Եւրոպայի վաճառականութիւնը, մինչեւ այն օրն ուր Անգլիացիները կը խլեն զայն իրենց ձեռքէն և կը տիրեն բոլոր աշխարհի վաճառականութեան։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Բնաւ կանաբար ժողովուրդ մը երբ քաղաքակրթութեան աստիճանին հասած է, չգոհանար ալ ձկնորսութեան կամ որսորդութեան արդիւնքներով ու այն վայրի պտուղներով զոր երկիրը կու տայ իրեն առանց յոգնութեան։ Ուստի կը ձերկէ և կը մչակէ հողը, և կը ստեղծէ երկրագործութիւնը. կը չահագործէ հանքերը և իր ճարտարարուեստով կը ձեւափոխէ այն բոլոր նախնական նիւթերը զոր քաղած է բնութենէն, ծովէն կամ ցամաքէն. իր արտադրութիւններու աւելորդը կը փոխանակէ իր չունեցածներուն հետ, զորմնք կ'երթայ կ'առնէ երկրագնտին ուրիշ երկիրներէն, և այս փոխանակութիւնը կը ձեւացնէ վաճառականութիւնը։ Այս փոխանակութիւնները դիւրացնելու համար կը ստեղծէ դրամներ, կշիռներ և չափեր։ Հաղորդակցութեան միջոցներ կը բանայ, յարթելու համար բնական արգելքներու։ Ճամբաներ կը բանայ անտառներուն մէջ, լեռներու վրայ և հովիտներու խորը, կամուրջներ կը ձգէ գետերու և գետակներու վրայ. պարանոցները կը կորէ և ջրանցքներով կը միացնէ ծովերն իրարու հետ. երկաթուղիներով հեռաւորութիւնները կը մօտցնէ. չոգենաւերով կը չաղթէ հովերուն ու հոսանքներուն. ծովուն տակ ու ցամաքին վրայ հաստատած հեռագրական թելերով լուրեր կը հաղորդէ աչխարհի չորս անկիւնը, կայծակի արագութեամբ։

Երկրագործական, ճարտարարուեստական և առեւտրական աչխարհագրութեան ուսումը կը կոչուի Տնտեսական Աչխարհագրութիւն, որ երկրագնտի զանազան երկիրներուն բնական և քաղաքական աչխարհագրութեան լրացուցիչն է։

Հարցաբան. — Ժողովուրդի մը գերակշռութիւնը ինչ բանի մէջ կը կայանայ. — Որոնք են այն պատճառները որոնք մեծապես կ'ազդեն քաղաքակրթութեան զարգացումին վրայ. — Կլիմաները ինչ ազդեցութիւն ունին քաղաքակրթութեան վրայ. — Ծովուն մերձաւորութիւնը կ'ազդէ՞ քաղաքակրթութեան զարգացման վրայ — Ո՞ր երկիրները կանուխէն ունեցած են փայլուն քաղաքակրթութիւններ. — Ծայրայեղ կլիմաներն ինչո՞ւ աննպաստ են քաղաքակրթութեան։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան կայսրութեան սահմանները կը տարածուին Եւրոպայի հարաւային-արեւելեան, Ասիոյ հարաւային-արեւմտեան և Ափրիկէի հիւսիսային-արեւելեան մասերուն մէջ։

Այս ընդարձակ կայսրութիւնը աշխարհագրապէս կարեւոր դիրք մը կը գրաւէ Ադրիատական, Միջերկրական, Եգէական, Մարմարա, Սեւ, Կարմիր ծովերուն և Պարսից ծոցին միջեւ։

Օսմ. կայսրութիւնը 3 մեծ բաժանում ունի՝ Եւրոպական Թուրքիա, Ասիական Թուրքիա և Ափրիկեան սահմանադ։

Ա. ԵԻՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Օսմանեան կայսրութեան կարեւոր մասերէն մէկն է Եւրոպական Թուրքիա, որ Դանուբեան իշխանութեանց հետ կը ձեւացնէ Պալքանեան ցամաքակղզին։

Եւրոպական Թուրքիոյ սահմաններն են, հիւսիսէն՝ Պուլկարիա, Սերպիա, Աւստրիա և Գարատաղ. արեւելքէն՝ Սեւ ծով և Վոսփորի նեղուց, հարաւէն՝ Մարմարա ծով, Տարտանելի նեղուց, Արշիպելագոս և Յունաստան, արեւմուտքէն՝ Յոնիական և Ադրիական ծովերը։

1. ԾՈՎԱՓՈՒՆԳԸ. — *Եւրոպական Թուրքիոյ ծովափունքը կը մրջնի հինգ ծովեր. Ադրիական և Յոնիական ծովերը, Արշիպելագոսը, Մարմարան և Սեւ ծովը։*

Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան ծովափունքը ընդհանրապէս խորադիր է, սեղ սեղ ծանծաղուտ, ու բարձր իրարակներով չրջապատուած է։ Այս ծովեզրին վրայ կը տեսնուին Աւլոնայի և Արգայի ծոցերը։

Արշիպելագոսի ծովափունքը կ'ընծայէ գեղեցիկ խորշեր և թերակղզիի բազուկներ։ Կարեւոր է Սելանիկի ծոցը, որուն արեւելեան կողմը կ'երկարի Բաղկիսեան թերակղզին իր երեք լայնուկներով՝ Բասանիտրա, Լոնկոս և Աթոս կամ Այնորոզ։ Այս վերջինին արեւելեան կողմը կը գտնուի Օրֆանոյի ծոցը, յետոյ Գավալայի ծոցը և Սարբապաղի հրուանդանը, որուն դիմացը կը գտնուի Թասոս կղզին։ Այս տեղէն կը սկսի Թրակիոյ ծովեզրը որ կ'ընծայէ նոյնպէս բազմաթիւ խորշեր. ինչպէս Լակոսի ծոցը, Էնոսի ծովախորշը և Սարոսի ծոցը, որուն հարաւային կողմը կը յատաջանայ Կալիպոլուի նեղ թերակղզին։

Այս թերակղզիին երկայնութեամբ՝ Եւրոպայի և Ասիոյ միջեւ կը բացուի Տարտանելի նեղուցը (Հելլեսպոնտոս) որ Արշիպելագոսը կը միացնէ Մարմարա ծովին հետ։

Մարմարայի ծովեզրը լեռնային է և սեպացած՝ մինչեւ Ռոտոսթօ (Թեքիր-Տաղ), ուրկէ սկսելով տակաւ կը ցածնայ և Կ. Պոլսոյ մօտ կը ձեւացնէ Զեմլեքեի ծովածոցը։

Կ. Պոլսոյ նեղուցը կամ Վոսփոր կը բաժնէ Եւրոպան Ասիայէն և Մարմարա ծովը կը միացնէ Սեւ ծովուն հետ։

Սեւ ծովու Օսմանեան եզերքը նոյնպէսբարձր է և սեպացած. կ'ընծայէ բազմաթիւ հրուանդաններ, ինչպէս Բումելի-Ֆեներ և Բարա-Պուրուն։

2. ՀՈՂԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ.—*Եւրոպական Թուրքիա ընդհանրապէս լեռնային երկիր մըն է, և կը պարունակէ բազմաթիւ լեռնադաշտեր ու անտառախիտ լեռնաշղթաներ, զոր կը կտրեն մերթ անանցանելի ու խորունկ կիրճեր և մերթ գեղածիծաղ ու արգաւանդ հովիտներ։*

Երկրին հիւսիս-արեւմտեան կողմը կը տարածուին Տինարեան Ալպեանց ճիւղերը, որոնք իրարու զուգահեռաբար կ'ուղղուին հարաւ-արեւելքէն դէպ ի հիւսիս-արեւմուտք։ Այս բարձրութիւնները կը ծածկեն Ալպանիոյ մեկ մասը։ Գլխաւոր գագաթներն են Փոմ լեռը (2800 մ.) և Տոռմիթոր լեռը (2500 մ. բարձրութեամբ)։

Պալքաններն որոնք Պուլկարիոյ և Արեւելեան Րումէլիի մէջտեղ ծագում կ'առնեն եւրոպական Թուրքիոյ մէջ դէպ ի հարաւ կը տարածեն երեք գլխաւոր ճիւղեր. մին կը տարածուի Մէսդա և Մարիցա գետերուն մէջտեղ՝ Բերիմ Բլանիցա (2700 մ.) անուամբ. երկրորդը որ կը կոչուի Տևսրօր տաղ (Հոռոդոպ), լայն հատատարած մըն է և կը տարածուի մինչեւ Արշիպելագոս, և ունի մինչեւ 2000 մէդր բարձրութեամբ գագաթներ։ Իսկ երրորդ ճիւղը կ'երթայ դէպ ի հարաւ-արեւելք, այն է Սրաննճա Տաղը, որ մինչեւ կ. Պոլիս բլուրներ կ'արձակէ։

Մարմարա ծովուն վրայ առանձինն կը բարձրանայ Թեքիր-Տաղ։

Ռիլօ լեռնէն սկսելով դէպ ի արեւմուտք կը տարածուին Տօվանիցա և Բօշիաֆ լեռները, և յետոյ Զար-Տաղ։

Այս վերջին հատատածատը որ Եւրոպական Թուրքիոյ բարձրագոյն գագաթը կը պարունակէ (Վիուլօթեճ՝ 3050 մէդր), արդի աշխարհագրերու մեծագոյն մասին կողմէ Պալքանեան ցամաքակղզիին լեռնագրական կեդրոնը կը նկատուի։

Զար-Տաղէն սկսելով լեռներու չարք մը կ'երկարի դէպ ի հարաւ, բաժնելով Ադրիական ծովուն և Արշիպելագոսի աւազանները։ Այս խումբին կը պատկանի Ներէչխա-Բլանիցայի լեռնաշղթան, որուն հարաւ-արեւելեան կողմը՝ Յունաստանի սահմանին վրայ կը կանգնի համբաւաւոր Ողիմպոս իբր 3000 մէդր բարձրութեամբ, և որմէ դէպ ի արեւմուտք կը բաժնուին ուղղահայեաց չղթաներ. առաջք կը ձեւացնեն նախ Կրամոսի հատատածատը կամ Ալպանիոյ լեռները և յետոյ Պինդոսի Գօտին։

Այս ամէն չղթաներէն բոլորովին անջատ են Բաղկիսեան թերակղզիին լեռները, որոնց մէջ նշանաւոր է Աթոս կամ Այնորոզ (1935 մէդր)։

3. ՋՐԱԳՐՈՒԹԻՒՆ.—*Եւրոպական Թուրքիոյ արտաքին այս անդրիի ու անմիակերպ հանդամանքը տեղի չունցաւ ո՛չ ընդարձակ հովիտներու և ոչ ալ մեծ գետերու։ Երկիրը ուռզոզ Ջուրի ընթացքները կրնան բաժնուիլ երկու գլխաւոր զառիթափերու. 1. Արեւմտեան զառիթափ, որ կը պարունակէ Ադրիական և Յոնիական ծովերուն հարկատուները, 2. Հարաւ-Արեւելեան զառիթափ, որ կը պարունակէ Արշիպելագոսի եւ Սեւ ծովու հարկատուները։*

Ա. Արեւմտեան զառիթափին գետերն են Պոյանա, Տրին, Մաթիս, Սեմէնի և Վոյուսա որ կը թափին Ադրիական ծովը. Թալամա, Լուրօ և Արդա, որ կը թափին Յոնիական ծովը։

Պոյանա կը բխի Տօրմիթոր լեռնէն՝ Մօրաչա անուամբ, յետոյ Շքոտրայի լիճէն անցնելով, կը թափի Ադրիական, Տուլչինեայի մօտ։

Տրին գետը կը կազմուի երկու ճիւղերէ, որոնց մին՝ Սեւ Տրին՝ կ'ելլէ Օխրիտայի լիճէն և հարաւէն դէպ ի հիւսիս կը հոսի, իսկ միւսը՝ Սպիտակ Տրին՝ կ'իջնէ Քօմ լեռնէն և կը հոսի հիւսիսէն հարաւ։

Սեմէնի գետը կը բխի Կրամոս լեռներէն։

Արդա գետը կը բխի Պինդոս լեռներէն և հիւսիսէն հարաւ հոսելով կը թափի համանուն ծոցը։

Բ. Հարաւ-արեւելեան զառիթափին գլխաւոր գետերն են Վիսթրիցա, Վարսար, Սթրումա, Մեսա և Մարիձա որ կը թափին Արշիպելագոսի մէջ և Վէլիխա որ կը թափի Սեւ ծով, իջնելով Սթրանճա լեռնէն։

Վիսթրիձա կամ Իննէ Բարասու կը բխի Նէրէչքա-Բլանինայէն, կ'ընդունի Քասթորիա լճին ջուրերը, կը թրջէ Սէրֆիչէի դաշտը և կը թափի Սելանիկի ծոցը։

Վարսար գետը բազմաթիւ ճիւղերով կ'ելլէ Զար Տաղի հատատածատէն և Մանասթրըի դաշտը թրջելով կը թափի նոյնպէս Սելանիկի ծոցը. Վարսարի մէջ կը հոսին Զերնա (Գայասու) և Զիրնեա (Էյրիսու)։

Սթրումա կը բխի Վիթոչա լեռնէն, կը հոսի դէպ ի հարաւ և իր մէջ ընդունելով Սթրումիցա գետակը, կը թրջէ Սերեզի դաշտը և Թաքինօս լիճը ձեւացնելէ յետոյ կը թափի Օրֆանոյի ծոցը։

Մարիձա (495 քլմ. երկայն) կը բխի Ռիլօ լեռնէն և կը հոսի դէպ ի արեւելք մինչեւ Էսիրնէ ուրկէ սկսելով կը դառնայ դէպ ի հարաւ և կը թափի Էնոսի ծովախորշը։

Մարիձայի հովիտը արգաւանդ է և լաւ մշակուած և ամենահարուստ բուսականութեամբ ծածկուած։

Մարիձայի մէջ կը հոսին ալ կողմէն՝ Արդա գետակը որ կ'իջնէ Հառոսիէն, իսկ ձախ կողմէն՝ Թունճա որ կ'իջնէ Պալքաններէն և Էսիրնէի առջեւ կը միանայ Մարիձայի, ինչպէս նաև Էրկէնէ որ կ'իջնէ Սթրանճա լեռներէն։

4. ԼԻՃԵՐ. — Եւրոպական Թուրքիա ունի բազմաթիւ լիճեր, մանաւանդ Ալպանիոյ և Վեթլեն Մակեդոնիոյ մէջ։ Գարատաղի սահմանին վրայ կը գտնուի Շքոտրայի լիճը։ Վերին Մակեդոնիոյ լեռնադաշտին վրայ՝ Օխրիտայի, Բրէզրայի, Օսթրովոյի և Քաստորիայի լիճերը։ Սաորին Ալպանիոյ մէջ՝ Եանիայի լիճը. Սելանիկի մօտերը՝ Տորեան և Եէնիճէ-Վարոար լիճերը։ Օրֆանոյի ծոցին մօտ՝ Պէշիք և Թաքինոս լիճերը։

Նոյնպէս կ. Պոլսոյ մօտերը կը գտնուին Տէրքոսի լիճը որ Պոլսոյ Ջուր կը մատակարարէ և Զէքմէճէի երկու փոքր լիճերը։

ԿԼԻՄԱՑ. — Եւրոպական Թուրքիա իր լեռնային կազմութեան պատճառաւ կլիմայի մեծ զանազանութիւն ունի, և համեմատաբար աւելի ցուրտ կ'ընէ մանաւանդ հիւսիսային կողմերը։ Դանուբի հովտին, Թրակիոյ և Վերին Մակեդոնիոյ մէջ բարձր լեռներուն պատճառաւ ցրտաշունչ քամիներ կը փչեն և կը տիրէ սաստիկ ձմեռ. իսկ Դանուբի ձգերքը, մանաւանդ հովտին սաորին մասերուն կլիման խիստ տաքուղչ է ճահիճներու և օդերու փոփոխութեան պատճառաւ։ Ամէնէն հեչտալի և արգասաւոր երկիրներն են այդ լեռներուն սաորոտը պարզուած ընդարձակ հովիտները որոնք կը կազմեն Մակեդոնիոյ, Թրակիոյ և Ալպանիոյ դաշտերը։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲՈՒՍԱԾԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Եւրոպական Թուրքիա, մանաւանդ իր հարաւային ու արեւմտեան մարզերը՝ գերազանցապէս բարեբեր և երկրագործական երկիրներ են և իրենց պարարտ ու արգաւանդ հողերով և այլազան կլիմաներով կրնան յառաջ բերել բազեհատն գօտիներու յատուկ ամէն կարգի բերքեր. գլխաւորներն են արմաւիք (ցորեն, գարի, եգիպտացորեն, բրինձ, վարսակ, հաճար, կորեակ և թռչնակեր). բամպակ, վուշ, կանեփ, ծխախոտ, ամէն տեսակ ընդեղէն և բանջարեղէն, խաղող, ձիթապտուղ, նարինջ, լեմոն, թուզ, չամիչ և ամէն տեսակ մրգեղէն, վարդի իւղ, կնճիթ (սուսամ), գունաւոր բոյսեր, խէժ և այլն։

Սելանիկի, Մանաստիրի, Գոսովայի և Շքոտրայի մէջ կան ընդարձակ և հարուստ անտառներ որոնք կը հայթայթեն ընտիր աստղէ, չինուխեան փայտ, վառելափայտ ինչպէս նաեւ խոզկաղին, գիսաոր, ռետին և այլն։

ԱՆԱՍՆԱՆԱՓՈՒԽՈՒԹԻՒՆ. — Անասնաբուծութիւնը երկրագործութեան կարեւոր մէկ ճիւղը եղած է չնորհիւ բնական ընդարձակ մարգաւայրերու որոնք կայսրութեան լեռնային մասերուն լեռնադաշտերը կը ծածկեն։ Այս պարարտ արօտատեղիները կը մնուցանեն կով, ընտիր ոչխար (դըվըրճիք), այծ, ձի և այլն։ Եւրոպական Թուրքիա ունի նաեւ ամէն տեսակ հաւեղէն կենդանիներ, ինչպէս հաւ, բադ, սագ, հնդկահաւ։

Շերամաբուծութիւնը վաղուց ընդհանրացած է Եւրոպական Թուրքիոյ մէջ և տեղացի ժողովրդին կարեւոր զբաղումներէն մէկն է եղած։ Գլխաւոր կեդրոններն են Էսիրնէի, Սելանիկի և Մանաստիրի կուսակալութիւնները։

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՋԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ. — Եւրոպական Թուրքիա՝ որսորդութեան չատ յարմար երկիր մըն է. երէներ և ամէն տեսակ թռչուններ բաւական հասութաբեր են անտառախիտ գաւառներու բնակիչներուն։ Մուշտակաւոր կենդանիներ ալ կան երկրին այլ և այլ մասերուն մէջ։

Ջկնորսութիւնն ալ հասոյթի կարեւոր աղբիւր մըն է Թուրքիոյ համար, որուն ծովափունքը թրջող ջուրերուն մէջ, ինչպէս և գետերուն և լիճերուն մէջ կ'որսացուին ընտիր և բազմատեսակ ձուկեր։

ՀԱՆՔԱԾԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Եւրոպական Թուրքիա հարուստ է նաեւ հանքերու մասին որոնք սակայն պէտք եղածին պէս չեն շահագործուիր։ Ունի գլխաւորաբար արծաթախառն կապար, հանքածուխ, երկաթ, աղ, մարմարիոն և չինութեան քարեր։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԴԻՑԱՑԻՆ ԵՒ ԾՈՎԱՑԻՆ ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ. — Եւրոպական Թուրքիոյ Բնական Աշխարհագրութիւնը երբ աչքի առջեւ ունենանք, կը տեսնենք որ երկրին մէջ նաւարկելի գետեր շատ քիչ կան և անոնց ալ նաւարկելի մասերը պէտք եղածին չափ լայն չեն։ Այս պատճառաւ գետային նաւարկութիւնը աննշան տեղ մը կը գրաւէ և չկրնար պէտք եղած օգուտը ընծայել. սակայն ասոր փոխարէն Եւրոպական Թուրքիան շրջապատող ծովերը հաղորդակցութեան կարեւոր միջոցներ են և օտար երկիրներու հետ Թուրքիոյ յարաբերութիւնները կը դիւրացնեն։

Օսմանեան և օտար չոգենաւային ընկերութիւններ կանոնաւոր երթեւեկութիւններ ունին Օսմանեան նաւահանգիստները, մանաւանդ կ. Պոլիս, բովանդակ աշխարհի ընտրելագոյն նաւահանգիստներէն մէկը, որ ընդարձակ առեւտրական յարաբերութիւններ ունի աշխարհի ամէնէն բանուկ նաւահանգիստներուն հետ։

Կ. Պոլսէն յետոյ Եւրոպական Թուրքիոյ ամէնէն վաճառաշատ նաւահանգիստն է Սելանիկ, Արշիպելագոսի վրայ. յետոյ կու գան Տէաէ Աղաճ նոյնպէս Արշիպելագոսի վրայ. Ռոտոսթօ, Կէլիպոլու Մարմարայի վրայ. Բրէվէզա և Տիւրացցօ՝ Ադրիականի վրայ։

ՅԱՄԱՌԱՑԻՆ ՃԱՄԲԱՆԵՐ ԵՒ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ. — Յամառային ճամբաներ տակաւ սկսած են չատնալ կայսրութեան այլ և այլ մասերուն մէջ. մանաւանդ Եւրոպական Թուրքիա ունի ներքին կանոնաւոր ուղիներ որոնք առաջները տեղական ոտնավաճառներուն համար երկաթուղիի չափ կարեւորութիւն ունէին։

Եւրոպական Թուրքիոյ ներքին հաղորդակցութեան մեծագոյն չնչերակն է կ. Պոլսէն Ադրիանիա և մինչեւ Սերպիոյ ու Պոսնայի սահմանագլուխը տանող ճամբան։ Երկաթուղինները չինուած են անոնց իբր օժանդակ ծառայելու համար։

Եւրոպական Թուրքիա ունի երկաթուղւոյ հինգ գիծեր որոնց երկայնութիւնն է իբր 2000 քիլոմէթր։

1. կ. Պոլիս-Իսիքրնէ-Մուսթաֆա բաշա գիծը։
2. Տէաէ Աղաճ-Տիմոթիքա գիծը
3. Սելանիկ-Տէաէ Աղաճ »
4. Սելանիկ-Իւքիւփ-Միթրովիցա գիծը
5. Սելանիկ-Մանաստիրը գիծը

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եւրոպական Թուրքիոյ վաճառականութիւնը բաւական զարգացած է, քանի որ երկրագործութիւնը նոյանոր քայլեր առած է և հաղորդակցութեան միջոցները տակաւ սկսած են չատնալ երկրին մէջ։

Օսմանեան կայսրութեան արտաքին վաճառականութիւնը կը բարձրանայ մօտաւորապէս 30 միլիոն օսմանեան լիրայի, որուն 31 միլիոնը Տաճկաստան ներածուած ապրանքներուն փոխարժէքը կը ներկայացնէ։

Թուրքիա օտար երկիրներէ կը ստանայ ամէն տեսակ հիւսուածեղէն, լուրդ, բամպակէ և մետաքսէ, ինչպէս նաեւ ամէն տեսակ զգեստեղէն և ձեռնակեղէն. նոյնպէս գաղթաթերք (խաղէ, չաքար) մոմ, ոգելից ըմպելիք, փետրեզակի ապրանք, բարիզեան ապրանք, կահեղէն, զարդի նիւթեր, երկաթ, երկաթեղէն, հանքածուխ, մեքենայ, բանուած մետաղներ և այլն։

Փոխարէն՝ Թուրքիա օտար երկիրներու կը ծախէ արմաւիք, ընդեղէն, արջառ, մրգեղէն, չամիչ, գինի, ձէթ, ծխախոտ, հիւսելի նիւթեր (մետաքս, լուրդ, բամպակ), ստաղճ, մորթ, կաշի, գունաւոր նիւթեր և այլն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպական Թուրքիա ունի իբր 10 միլիոն բնակիչ որոնք կը բաղկանան զանազան ազգային ծագումներէ։ Ամենէն հին տարրերն են Ալպանացիները ու Յոյները։ Ալպանացիները (Առնաուտա) հաստատուած են Ադրիականի եզերքը կանգնող լեռներուն ստորոտը, Ճքոտրայի լիճէն մինչեւ Ավլոնայի ծոցը. Պելագական ցեղէն սերած են Յոյներուն պէս. ընտիր զինուորներ են և կը բաժնուին երկու խումբերու Կէկա և Թոսքա։ Օսմանցի Թուրքերը՝ Ուրալ Ալթայեան ցեղէն, պատերազմի առեն կրօնքի ու հայրենիքի անձնուէր զինուորներ են. մէկ մասը հողագործ ու մնացած մասն ալ կառավարական պաշտօնեայ և զինուոր. վերջերս վաճառականութիւնն ալ բաւական ընդհանրացած է իրենց մէջ. կրօնքով իսլամ են։

Յոյները բազմաթիւ են Պալքանեան ցամաքակղզիին հարաւ-արեւմտեան կողմը։ Գաղթականութեամբ և վաճառականութեամբ տարածուած են հեռագնահ Արշիպելագոսի եզերքներուն վրայ մինչեւ կ. Պոլիս։ Ունին ուրոյն եկեղեցի օրթոտոքս. Պատրիարքին աթոռանիստ քաղաքն է կ. Պոլիս։

Պուլկարները ծագումով Ֆիննական ցեղէն են, բայց սլաւախօս. հողագործ ու խաչնարած են կրօնքով Յունադաւան. իրենց եկեղեցւոյն պետն է եկզարքը որ կը նստի կ. Պոլիս։

Հայերը՝ Արիական ցեղէն՝ Ասիայէն գաղթած են, արհեստաւոր ու վաճառական են. իրենց Պատրիարքին աթոռանիստ քաղաքն է կ. Պոլիս։

Հրեաները՝ Սեմական ցեղէ՝ մեծ մասամբ Սպանիայէն գաղթած, վաճառական ու լումայափոխ են։

Առանձին գաւառներ կամ քուչօ վալաքներ, որոնք կը պատկանին Ռումէն ցեղին. և տարածուած են մանաւանդ Մակեդոնիոյ, Ալպանիոյ և Եպիրոսի մէջ. նոյնպէս կան օտար ժողովուրդներ և թափառաշրջիկ բոշաներ։

Ջ. ՎԱՐՉԱԿԱՆ

Օսմանեան կայսրութիւնը սահմանադրական միապետութիւն է։ կայսրը որ միանգամայն հոգեւոր գլուխ է բոլոր մահմետականներուն՝ կը կոչուի խալիֆե և բոլոր Օսմանեանց Սուլթան։

Վերահաս Սուլթանը քաղաքական գործադիր իշխանութիւնը յանձնած է Մեծ Եպարքոսին (Սատրը-Ազամ) ու կրօնականը՝ Շեյխիւլ-Իսլամին։ Առանցքէ վերջը կուգան Պատերազմական, Ծովային գործութեան, Արտաքին Գործոց, Ներքին Գործոց, Ելեւմտից, Արդարութեան, Առեւտրական Գործոց, Հանրային Շինութեան, Հասարակաց Կրթութեան, Անշարժ կալուածոց նախարարութիւնները։

Նահանգներու վարչութիւնը յանձնուած է կուսակալներուն (Վալի) և ասոնց ստորադաս պաշտօնեաներու։ Կուսակալութիւնները բաժնուած են գաւառներու (սանճագ կամ լիվա) որոնք գաւառապետներով (միւթեսարըֆ) կը կառավարուին։ Գաւառները բաժնուած են գաւառակներու (գազա) որոնք կը կառավարուին փոխ կառավարիչներով (գայմագամ)։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ. — *Եւրոպական Թուրքիա կը պարունակէ հետեւեալ հօմը կուսակալութիւնները. կ. Պոլիս, Էտիրնէ, Սելանիկ, Մանաստիրը, Բոսնա, Շքոտրա և Եանինա։*

ԳԼՈՒԽ Բ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԿԻՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Կ. ՊՈԼՍՈՑ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլսոյ Կուսակալութիւնը որ կը տարածուի Սեւ ծովուն և Մարմարայի մէջտեղ՝ կը պարունակէ Կոստանդնուպոլսոյ Քաղաքապետութիւնն ու Զաթալճայի գաւառը։

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՑ

Կ. Պոլսոյ Քաղաքապետութիւնը (Շեհիր Էմանէթի) փոքր վիճակ մըն է որ կը պարունակէ բուն Կ. Պոլիս քաղաքը իր չրջակայ արուարձաններով։ (Ունի 5000 քառակուսի քիլոմէդր տարածութիւն և իբր 1,200,000 բնակիչ)։

Կ. Պոլսոյ Քաղաքապետութենէն ուղղակի կախում ունին

Եւրոպական բաժնին մէջ՝


ՎԻԼԱՅԷԹ
ՄԱՐՄԱՐԱՅԻ ԾՈՎ.
ԱՐԴՐԻԱԿԱՆ ԾՈՎ.
ՀՈՒՆԱՍՏԱՆ
ՍԵՒ ԾՈՎ.
ՍՈՒՐԻԱ
ԱՐԱԲԻԱ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՈՎԿԱՍԻԱ
ՍԵՎ ԾՈՎ.
Կ. ՊՈԼԻՍ
Սկիւտարի
Ատրիանուպոլիս
Սելանիկ
Մանաստիր
Պրուսա
Էտիրնէ
Ռոտոսթօ
Գալլիպոլի
Չանաքկալէ
Սմիւռնա
Պրուսա
Քոնիա
Ատանա
Հալէպ
Մոսուլ
Պաղտատ
Պասրա
Վան
Էրզրում
Տրապիզոն
Սեբաստիա
Անգորա
Կարին
Կարս
Պաթում
Ռուսաստան
Պարսկաստան
Սպանիա
Իտալիա
Ֆրանսա
Գերմանիա
Աւստրիա
Հունգարիա
Ռումանիա
Սերբիա
Պուլկարիա
Յունաստան
Ալպանիա
Մոնտենեկրո
Պոսնիա
Հերցեկովինա
Դալմատիա
Կրետէ կղզի
Ռոտոս
Լեսբոս
Սամոս
Քիոս
Սիւրա
Նաքսոս
Պարոս
Անտիպարոս
Միլոս
Սանթորին
Ֆոլեգանտրոս
Սիկինոս
Կիմոլոս
Սերիֆոս
Սիփնոս
Կիթնոս
Կիթերա
Անտիկիթերա
Կրետէ
Կանտիա
Սպիտակ լեռ
Ռոտոպ լեռ
Պալքան լեռ
Ռիլա լեռ
Օլիմպոս
Պինտոս լեռ
Պարնասոս
Ֆարմագան
Ալպանոս
Ռոտոպ
Ռիլա
Պալքան
Պինտոս
Օլիմպոս

Բիւչիւք Չեհմեճէի գաւառակը (գազա)՝ Սուեօլուի և Ֆեճէրի գիւղախումբերով (նահիյէ)։

Այդ բաժնին մէջ գտնուող թաղապետական չրջանակները (Տայիրէի պէդէտիկ). Սուլթան Պայազիտ, Սուլթան Ահմէտ, Ֆաթիհ, Սամաթիա, Էյուպ, Բեռա, Հասքէօյ, Մաճրիքէօյ, Պեճիկթաշ, Առնաւուտքէօյ, Եենիքէօյ, Թարապիա, Պօյիւքտէրէ։

Ասիական բաժնին մէջ՝

Ասկէ կազմը գտնուող թաղապետական չրջանակները. Պէյօղլ, Անատօլու Հիսար, Պէյլէրպէյ, Եենի Մահալլէ, Տօեանճըլար, Գասըրքէօյ։

Իշխանաց կղզիները *(Բրիւիքօ, Հալքի, Բուրգազ և Անթիմօնի կղզիներով)*։

Կէյպզէի գաւառակը՝ Տարընայի գիւղախումբով։

Գարբալի գաւառակը Սապանճայի գիւղախումբով։

Զիլէի գաւառակը։

Կոստանդնուպոլիս (980,000 բնակիչ) Օսմանեան Պետութեան մայրաքաղաքը՝ աչխարհի գեղեցկագոյն քաղաքներէն մէկն է, վոսփորի նեղուցին հարաւային ծայրը։

Ունի եզական դիրք և ընդարձակ, վաճառական ու ազանչելի նաւահանգիստ մը։

Բուն քաղաքը որ Սթամպուլ կը կոչուի, կը կանգնի եօթը բլուրներէ ձեւացած եռանկիւնի սարաւանդի մը վրայ և Գալաթիոյ ու Բեռայի արուարձաններէն կը բաժնուի Ոսկեղջիւր կոչուած ծովային բազուկով։

Քաղաքին նշանաւոր չէնքերն են՝

Եօթն աչտարակները (Եէտի Գուլէ)՝ իբր հնութիւն. Փողերանոցը (Զարպխանէ)՝ հին պալատ Բիւզանդիոն. Մեծ Շուկան. Բիւզանդեան Ջրամբարանոցները (Պին պիր տիրէք), որ այժմ ցամքած են. Ձիարձակարանը (Աթ մէյտանը) ուր կայ եգիպտական կոթող մը. Կոստանդիանոսի սիւնը (Չեմպէրլի թաշ) Նաւրը Օսմանիյէի մօտ. Արկադիոսի սիւնը (Մէրաթ փազար). Թէոդոսի սիւնը եւ այլն։ Նշանաւոր են մանաւանդ Ս. Սոֆիայի մզկիթն ու Սուլթան Ահմէտի, Սուլթան Պայազիտի, Սուլթան Մէհմէտի, Սուլէյմանի, Եենի Ճամի և Սիւլէյմանիյէ մզկիթները. Սուլթան Ահմէտի, Սուլթան Մէհմէտի և Սուլթան Մահմուտ Բ.ի կայսերական դամբարանները (թիւրպէ)։

Կ. Պոլսոյ եւրոպական արուարձաններուն մէջ յիշատակութեան արժանի են Եէնի Գուլէ, Մաճրիքէօյ՝ ուր կը գտնուի Արքունի Վառօդատունը. Սան-Սթեֆանօ, Բիւչիւք-Զեհմեճէ՝ փոքրիկ նաւահանգիստ. Բեաղատճաճէ՝ Ոսկեղջիւրի խորը գեղեցիկ տեսարան մը ունի, ուր կայսերական պալատ. իսկ Վոսփորի երկայնութեամբ՝ Պեճիկթաշ, Օրթաքէօյ, Առնաւուտքէօյ, Պեպէք, Բուումելի Հիսար որ ունի հին դղեակ մը, Ժամիճ Սուլթան Մէհէմմէէն չինուած, եենիքէօյ, Թարապիա և Պօյիւքտէրէ որոնք մեծատուններու և դեսպաններու ամառանոցներ են։

Պոլսոյ ասիական արուարձաններուն մէջ յիշուելու արժանի են Պէյօղլ, Գանլրճա, Անատօլու Հիսար, որ նշանաւոր է իր բերդովը՝ երբորբեմ Սուլթան Պայազիտէն չինուած. Պէյլէրպէյի որ ունի չքեղ և ճոխ կայսերական պալատ մը և գեղեցիկ մզկիթ մը. Սկիւտար որ առանձին քաղաք է. Գասըրքէօյ որ նորակառոյց մեծ արուարձան մըն է. հին Քադըգեղնի ափերակներուն մօտ. Հայտար Փաշա, որ Անատօլուի երկաթուղիներուն մեկնակէտն է. Կէյպզէ գեղեցիկ քաղաք. Տարընա համբաւաւոր իր գինիներով. Հէրեճէ նշանաւոր իր կայսերական գործարաններով։

ՉԱԹԱԼՃԱՅԻ ԳԱՒԱՌ

Չաթալճայի գաւառը կը պարունակէ՝

Սիլիվրիի և Պէօյիւք Չէքմէճէի գաւառակները ու Գարաճաքէօյ և Տէրքօս գիւղախումբերը։ Հոգին գլխաւոր արտադրութիւնները են արմաւիք, խոտ, ծխախոտ, խաղող, վառելափայտ և այլն։

Գլխաւոր քաղաքն է Չաթալճա (5000 բն.) որ գինիի, արմաւիքի, ձուկի և պանիրի առուտուր ունի։

Սիլիվրի (3000 բն.) փոքր, բայց բաւական բանուկ նաւահանգիստ։

---

2. ԷՏԻՐՆԷԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Էտիրնէի Կուսակալութիւնը կը տարածուի Արեւելեան Բումելիի հարաւակողմը՝ Սեւ և

Մարմարաձովերուն ու Արշիպելագոսի մէջտեղ և կը գրաւէ հին Թրակիոյ մեծագոյն մասը։

Հողը չատ հարուստ է և լաւ մշակուած։ Գլխաւոր արտադրութիւնները են՝ արմտիք, գինի, բամպակ, ծխախոտ, ընդեղէն, ձիթապտուղ, ամեն տեսակ մրգեղէն, եւ վարդի իւղ։ Ունի արջառ, ոչխար և պանիր։

Ձեռագործական արտադրութիւնները բաւական ծաղկած են։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ.— Էմիրնէ նահանգը կը պարունակէ հետեւեալ 6 գաւառները (Սանճագ). Էմիրնէ, Քըրք-Քիլիսէ, Ռոտոսթօ, Կէլիպօլու, Տէյէ-Ազաճ և Կիւմիւլճինա։

Գլխաւոր քաղաքներ.

Էտիրնէ (Ադրիանուպոլիս) (70,000 բնակիչ) կուսակալանիստ քաղաք՝ Մարիցա և Թունճա գետերուն իրար խառնուած տեղը։ Կայսրուհեան մայրաքաղաքն եղած է 1366էն մինչեւ 1453, այն է Պոլսոյ առման թուականը. ունի փառաւոր մզկիթներ, մանաւանդ Սուլթան Սելիմի մզկիթը՝ Թուրքիոյ գեղեցկագոյն մզկիթներէն մին։

Ուզուն Քեօբրիւ՝ վաճառաշահ քաղաք՝ երկէնէ գետակին վրայ։

Տիմոթօֆա (12,000 բնակիչ) ունի հին բերդ։ Կարեւոր է իր բրուտեղէններով ու մետաքսեղէն և ասուեղէն կտաւներով։

Քըրք-Քիլիսէ (18,000 բն.) Էմիրնէի արեւելեան կողմը. ունի ազնիւ գինի. կ'արտադրէ նաեւ արմտիք, ծխախոտ, և խոզակ։

Միտիա փոքրիկ նաւահանգիստ Սեւ ծովու վրայ. կ'արտածէ գլխաւորաբար վառելափայտ և ածուխ։

Ռոտոսթօ (33,000) բն.) վաճառաշահ քաղաք և գեղեցիկ նաւահանգիստ Մարմարայի վրայ։

Չորլու (12,000 բն.), երկաթուղւոյ կայարանէն կէս ժամ հեռաւորութեամբ՝ բլուրի մը վրայ զետեղուած վաճառաշահ քաղաք է։

Մալկարա երկրագործական քաղաք մըն է։

Կէլիպօլու (12,000 բն.) Մարմարայի ծովուն բերանը Տարտանելի նեղուցին վրայ ընդարձակ նաւահանգիստ է։

Տէյէ-Ազաճ (6000 բն.) նորակառոյց և վաճառաշահ քաղաք և բանուկ նաւահանգիստ Արշիպելագոսի վրայ։

Տէյէ-Ազաճ՝ Բուրգլիի երկաթուղւոյն և Սելանիկ-Կ. Պոլսոյ միացման գծին սկզբնակէտն բլլալով, Էմիրնէի կուսակալութեան առեւտրական կարեւորագոյն կեդրոնը կը համարուի։

Կիւմիւլճինա (14,000 բն.) վաճառաշահ քաղաք բարեւեր դաշտի մը մէջ. անուանի է ծխախոտը։ Կ'արտադրէ խոզակ։

Գաւաճի (Իսքէչէ) (13,000 բն.)։ Անուանի է ծխախոտը։

Եեմիճե (3000 բն.)՝ Իսքէչէի հարաւային կողմը՝ համբաւաւոր է նոյնպէս ծխախոտը։

---

3. ՍԵԼԱՆԻԿԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Սելաճիկի կուսակալութիւնը կը տարածուի Էմիրնէի ամբողջ կողմը։ Երկիրը լաւ մշակուած է և կ'արտադրէ արմտիք, եգիպտացորեն, ծխախոտ, բրինձ, բամպակ, որթատունկ և պտղատու ծառեր։ Երկրին հիւսիսային և արեւելեան կողմերն ընդհանրապէս լեռնային են, լեռներուն գագաթները ծածկուած են կաղնիի և փիկոնի անտառներով. արեւելեան մասը ունի չազանակենիի գեղեցիկ անտառներ։ Թիւնին նոյնպէս չատ լաւ կ'աճի և կը ծառայէ չերմաբուծութեան որ բաւական յառաջ գացած է։

Բուրդն ալ կարեւորագոյն տեղ մը կը գրաւէ այս երկրին արտադրութեանց մէջ։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ.— Սելանիկի կուսակալութիւնը կը բաժնուի 3 գաւառներու (սանճագ)՝ Սելանիկ, Սէրէզ եւ Տրամա։

Գլխաւոր քաղաքներ.

Սելաճիկ (Թեսալոնիկէ) (100,000 բն.) համանուն ծոցին խորը Եւրոպական Թուրքիոյ ամենէն վաճառաշահ քաղաքը՝ և կ. Պոլսէն յետոյ կարեւորագոյն նաւահանգիստն է։

Նիաուսա կամ Աղօսքօս համբաւաւոր է իր գինիով։

Սրուսվիցա (10,000 բն.) համանուն գետին մօտ. ունի չերմուկներ։

Սելանիկի գաւառին մէջ է Աքօս կամ Այճօրօզ լերան թերակղզին ուր կը բնակին հազարաւոր Ցոյն, Ռուս, Սերպ և Պուլկար աբեղաներ, որոնք կ'ապրին 20ի չափ վանքերու և մենաստաններու մէջ։

Սերէզ (30000 բն.) Թաքինոս լճին մօտ՝ Սելանիկ-Կ. Պոլիս երկաթուղիի գծին վրայ՝ վաճառաշահ քաղաք է և կարեւոր կեդրոն եւ բոպական Թուրքիոյ բամպակի մշակութեան և վաճառականութեան։

Նեվրեկօբ (8000) առեւտրական քաղաք է։

Տեմիր-Հիսար՝ ունի երկաթի հանքեր։

Տրաւա (7500 բն.) բարեւեր դաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք. ունի մեծ արտածութիւն ծխախոտի։

Քավալա (1800) համանուն ծոցին խորը վաճառաշահ նաւահանգիստ և ծխախոտի չուկա մարան։

Սարը Շապան՝ անուանի է իր ծխախոտով։

---

4. ՄԱՆԱՍԹԸՐԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մանաստրի կուսակալութիւնը կը տարածուի Սելանիկի նահանգին արեւմտեան կողմը։

Գլխաւոր բերքերն են ցորեն, և ուրիշ արմտիք, եգիպտացորեն, ընդեղէններ, կտաւատ, մրգեղէն եւն.։

Լեռնային մասերուն մէջ կը գտնուին մեծատարած անտառներ, որոնք կը պարունակեն որսի կենդանիներու չատ տեսակները։

Նահանգին ամէն կողմերը կը գտնուին աղօրիքներ, մանաւանդ Մանաստրի գաւառը ունի ջրաքաշական կառուցուածքով մեքենաներով քանող չաղացքներ։ Սերֆիչէի գաւառը նշանաւոր է իր ասուեղէն ու բամպակեղէն գործուածներով։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ.— Մանաստրի կուսակալութիւնը կը պարունակէ հինգ գաւառներ՝ Մանաստիր, Սէրֆիչէ, Կորիցա, Տիպրէ և Էլպասան։

Գլխաւոր քաղաքներ.

Մանաստիր (50,000 բն.) բարձր դաշտի մը մէջ զինուորական մեծ և կարեւոր քաղաք է։ Ունի գեղեցիկ վաճառանոց մը և ջրաքաշական աղօրիքներ ու ասուեղէնի գործարան։

Բրիլիփ (18000) կարեւոր է ծխավաճառը։

Օխրիտա (5000 բն.) համանուն լճին վրայ վաճառաշահ քաղաք. չրջակաները կը գտնուին արծաթի, պղնձի և ծծումբի հանքեր։

Սերֆիչէ (4000 բն.) վաճառաշահ քաղաք՝ իր ասուեղէն ու բամպակեղէն գործուածներովն անուանի։

Կորիցա (14000), ճատարարութեամբ և վաճառաշահ քաղաք։

Տիպրէ (45000) Տրին գետին վրայ՝ առեւտրական և ճարտարագործական քաղաք։

Էլպասան (5000) Տուրրացօչէն Օխրիտա տանող ճամբուն վրայ վաճառաշահ քաղաք է՝ գեղեցիկ հովտի մը մէջ։

---

5. ՔՈՍՈՎԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Քոսովայի կուսակալութիւնը կը տարածուի Սելանիկի և Մանաստիրի նահանգներուն հիւսիսային կողմը՝ Գարատաղի, Պօտոյայի և Սերպիոյ մէջտեղ։

Երկիրը բարեւեր լեռնագաչտ մըն է։ Վարատար գետը կը թրջէ Քոսովայի դաշտը։

Բերքերն են լազուտ, վարսակ, գետնախնձոր և գարի։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Քոսովայի նահանգը կը պարունակէ հետեւեալ վեց գաւառները. Իւսկիւպ, Բրիչթինա, Նովիպազար, Իփէք, Թաչլըճա և Բրիզրէն։

Գլխաւոր քաղաքներն են՝

Իւսկիւպ (60000 բն.) վարատար գետին վրայ, հին և վաճառաշահ քաղաք բարեւեր երկրի մը մէջ։

Բրիչթինա (12000 բն.) Քոսովայի դաշտին մէջ, նոյնպէս վաճառաշահ քաղաք։ Կ'արտածէ ցորեն, գարի, եգիպտացորեն, գինի և մորթ։

Միթրովիցա (7000 բն.) բաւական կարեւոր

քաղաք է նահանգին գլխաւոր կեդրոններուն հետ ունենալով ներածման ու արտածման վաճառականութեամբ։ Ունի երկանաքարի հանքեր։

Իփէհ (15000 բն.) Գարատաղի կողմերը՝ գեղեցիկ հովտի մը մէջ վաճառաշատ քաղաք է։

Բրիզրեն (30000 բն.) Զար-Տաղի սահմանը՝ նոյնպէս առեւտրական քաղաք։

---

6. ՇՓՈՏՐԱՑԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Շfոտրայի կուսակալութիւնը կը տարածուի Ադրիական ծովուն երկայնութեամբ Գարատաղէն մինչեւ Եանեայի կուսակալութիւնը։ Լեռնոտ երկիր մըն է՝ ընդհանրապէս անտառներով ու արօտատեղիներով ծածկուած։ Ունի սակայն արգաւանդ հովիտներ ու բարեբեր դաշտեր ալ ուր յաջողապէս կ'աճին ցորեն, բրինձ, թթենի և ձիթենի։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԻՒՂԱՔԱՂԱՔՆԵՐ. — *Շքոտրայի կուսակալութիւնը կը բաժնուի երկու գաւառներու, Շքոտրա և Տիւրացցո։*

Գլխաւոր քաղաքներն են։

Շfոտրա (40000 բն.) համանուն լճին վրայ կուսակալանիստ քաղաք և առեւտրական ու ճարտարարուեստական կեդրոն։ Նշանաւոր է դղեակը, զոր կառուցած են Վենետիկցիք։

Լէճ կամ Ալեսիո (3000 բն. փոքր նաւահանգիստ Ադրիականի վրայ։

Տիւրացցո (6500 բն.) հին քաղաք և բնական նաւահանգիստ Ադրիականի վրայ։

Թիրանա՝ գեղեցիկ քաղաք և առեւտրական կեդրոն։

---

7. ԵԱՆԵԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Եանեայի կուսակալութիւնը կը տարածուի Շքոտրայի նահանգին հարաւակողմը՝ Ադրիական ծովուն եզերքը, Մանասթըրի նահանգին և Յունաստանի մէջտեղ։

Ծովեզրին մօտ գտնուած դաշտերը՝ որոնք կուսակալութեան միակ բարեբեր մասերն են, կ'արտադրեն ցորեն և ուրիշ արմաւիք, խաղող, կիտրոն, նարինջ, ձիթապտուղ, ծխախոտ, բամպակ եւայլն։ Նահանգին մնացած մասին մէջ կան ընդարձակ արօտատեղիներ, որոնք կը մնուցանեն ընտիր արջառներ, մանաւանդ հմայաւոր ձիեր։

Ծովեզերքին մօտ ձկնորսութիւնը չատ արդիւնաբեր է։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԻՒՂԱՔԱՂԱՔՆԵՐ. — *Եանեայի կուսակալութիւնը կը բաժնուի 4 գաւառներու, Եանեա, Էրկերի, Պէրաթ և Բրէվէզա։*

Գլխաւոր քաղաքներն են.

Եանեա (20,000) համանուն լճին վրայ մեծ և ծաղկած քաղաք։

Էրկերի կամ Արկիրո-Քաստրո (12,000) վայրագ գետին վրայ վաճառաշատ քաղաք։

Թեփելէն՝ մեծ քաղաք։

Պէրաթ (40,000) ունի կարեւոր արտադրութիւն ձէթի, բուրդի, արմաւիքի և մորթի։

Աւլոնա՝ վաճառաշատ նաւահանգիստ հմայնան ծոցին վրայ։

Բրեվեզա (10,000) Արդայի ծոցին բերանը գեղեցիկ և բանուկ նաւահանգիստ եւ բերդաքաղաք։

Բ. ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասիական Թուրքիա՝ Օսմանեան կայսրութեան ընդարձակ և կարեւոր մէկ մասն է եւ կը տարածուի Ասիոյ հարաւային-արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սեւ ծով, Վոսփորի նեղուց, Մարմարայի ծով և Տարանեղ. արեւմուտքէն՝ Արշիպելագոս և Միջերկրական ծով, Սուէզի ջրանցք եւ Կարմիր ծով. հարաւէն՝ Արաբիա եւ Պարսկային ծոց. արեւելքէն՝ Պարսկաստան եւ Կովկասիա։

ԾՈՎԱՓՈՒՆԴ. — *Ասիական Թուրքիա չրջապատուած է հեռու եւ մօտ ծովերով. Սեւ ծով, Մարմարա, Արշիպելագոս, Միջերկրական ծով, Կարմիր ծով եւ Պարսկային ծոց։*

Սեւ ծովու ասիական եզերքը ընդհանրապէս նուազ ծանծաղուտ է. տեղ տեղ կ'ընծայէ սակայն բաւական խորունկ ծովածոցեր։ Սոսկալի փոթորիկներ ու խաւար մշուշներ յաճախադէպ են այս եզերքին վրայ։ Արեւելքէն դէպ արեւմուտք յառաջանալով կը տեսնենք նախ Տրապիզոնի ծոցը, Եէրասս եւ Քէօրէյ հրուանդանները, Ունիէի ծոցը, յետոյ Սամսոնի եւ Սինոպի ծոցերը, ինչպէս նաեւ Պօզմէրէկ եւ Ինէճ հրուանդանները, ուրկէ սկսելով մինչեւ Էրէյլիի ծովախորշը կը տեսնուին բազմաթիւ հրուանդաններ, ինչպէս Էրէմիէ, Տէլիքի եւ Պապատուրան։

Վոսփորի նեղուցը (որուն երկայնութիւնն է 38 քլմ.) կ'երկարի Բիւյիւքէն մինչեւ Գաալքէօյ։ Այս տեղէն ծովեզերը կը չեղի դէպի արեւելք՝ Իզմանայ կղզիներուն առջեւ, որոնցմէ երկուքը մանաւանդ՝ Հալքի եւ Բրինձքիօ՝ վիլլաներով և պարտէզներով ծածկուած գեղեցիկ ու բարեբեր կղզիներ են։ Մանաւանդ կարեւորութիւն ունի Հայոց Փաշայի նաւահանգիստը, ուրկէ կ'սկսի Անատոլուի երկաթուղին։

Մարմարայի ծովախորշը Սեւ ծովու եզերքէն աւելի ծանծաղուտ է. նոյն կը տեսնուի նաեւ Իզմիթի եւ Կեմլէյիկի ծովածոցերուն մէջտեղ՝ Բիւթանեական Թեռակղզին որ կը վերջանայ Պօզ-Պուրուն հրուանդանով. յետոյ Գափուտաղի Թերակղզին, որուն մօտ կը գտնուին Մարմարա, Աֆսիա եւ Ալօճի կղզիները։

Արշիպելագոսի ծովախորշը չատ ծանծաղուտ է եւ կ'ընծայէ բազմաթիւ խորչեր ու Թերակղզիներ, ինչպէս Տրովադայի Թերակղզին որ կը վերջանայ Պապա Գալեսի հրուանդանով։ Այս Թերակղզիին հարաւակողմը կը բացուի Էտրեմիթի ծովածոցը, որուն դէմ կը գտնուի Միտիլլի մեծ կղզին։ Իզմիրի ծովածոցին եւ Սմալանօվայի (Գուշ-Ասասի) ծոցին միջեւ կը յառաջանայ Չեշմէի Թերակղզին, որուն մօտ է կը գտնուի Քարա Պուրուն, եւ որուն մօտ է Քիոս կղզին։ Սմալանօվայի կամ Եփեսոսի ծոցին հարաւային կողմը՝ ծովեզերքն չատ մօտ կը գտնուի Սամօս կղզին, եւ աւելի դէպի հարաւ՝ Մանեսալիայի եւ Իսքանիֆօլի ծոցերը, որոնց մէջտեղ կը գտնուի Պօտրում Թերակղզին։

Արշիպելագոսի ծովեզերքին երկայնութեամբ, հիւսիսէն հարաւ ցրուած են մեծ ու փոքր անհամար կղզիներ, որոնց գլխաւորներն են Սամոթրակէ, Իմպրոս, Լեմնոս, Թենեսոս, Միտիլլի, Քիոս, Սամօս, Նիքարիա, Պարմոս, Քօս կամ Իսքանիֆօլ, Սիմի եւ Հռոդոս։

Արշիպելագոսի ծովեզերքին նուազ ծանծաղուտ է Միջերկրականի ծովափունքը, որ Ալիքօ հրուանդանէն սկսելով մինչեւ Իսկենտէրունի ծովածոցը, չատ տեղ գեղատեսիլ խարակներ միայն կ'ընծայէ։ Հռոդոս կղզիին դէմ կը գտնուի Մաբրիի ծոցը, որուն եւ Ատալիոյ ծոցին մէջտեղ կը տարածուի Լիկիոյ Թերակղզին. Ատալիոյ եւ Մերսինի ծովածոցերուն մէջտեղ կը գտնուի Կիլիկիոյ լեռնային ծովեզերը, որուն հարաւակողմը կը տարածուի Կիպրոս կղզին։ Մէրսինի ծոցին արեւելեան կողմը կը ցցուի Քարաբաշ հրուանդանը եւ ասոր ալ արեւելեան կողմը կը ձեւանայ Իսկենտէրունի ծովածոցը, ուրկէ սկսելով ծովեզերքը կ'ուղղուի դէպի հարաւ։ Այս ծովեզերը՝ որ կ'ըսուի Սուրիոյ ծովեզերք, ընդհանրապէս անապատ է եւ կ'ընծայէ բազմաթիւ հրուանդաններ, եւ Լաթաքիոյ ու Թրիփոլիի ծոցերը միայն։ Թրիփոլիէն սկսելով ծովեզերը կը հակի տակաւ դէպի արեւմուտք, ձեւացնելով յաջորդաբար Շաֆա հրուանդանը, Պեյրութի ծովախորշը, Աճեայի ծովախորշը, որ կը վերջանայ Կարմեղոս հրուանդանով։ Այս կէտէն կը սկսի Պաղեստինու ծովեզերը, որ չունի ո եւ է ծանծաղուտներ մինչեւ Բօս-Սայիս։

Բօս-Սայիսէն կը սկսի Եգիպտական ծովեզերք՝ նշանաւոր միայն Նեղոսի տեղադրովը, զոր ծանծաղուտ լճակներ կը շրջապատեն ընդհանրապէս։ Եգիպտական ծովեզերին կը յաջորդէ Թարապլուսի ծովափունքը, ուր կը տեսնուին միայն երկու աւազուխ խորունկ ծոցեր, Սիրդի եւ Կապեսի ծոցերը։

Կարմիր ծովը որ Եգիպտոսը Արաբիայէն կը բաժնէ՝ Միջերկրականի հետ կը հաղորդակցի Սուէզի ջրանցքով, իսկ Հնդկաց ովկիանոսին հետ՝ Պապէլ Մանտէպի նեղուցով։

Կարմիր ծովու եզերքը՝ սեպացած ու անշէն ընդհանրապէս՝ սակաւաթիւ նաւակայքեր միայն կ'ընծայէ, որոնք սակայն լաւ պաշտպարուած ալ չեն հովերէն ու փոթորիկներէն։

Կարմիր ծովէն հիւսիսային կողմը՝ Սուէզի եւ Ակապայի ծոցերուն մէջտեղ կ'երկարի Սինայի Թերակղզին։

Ասիական Թուրքիա չատ քիչ ծովեզերք ունի Պարսկային ծոցին վրայ, և այն ալ ընդհանրապէս աւազուտ է եւ վտառուղ եւ կ'ընծայէ խութեր ու ժայռուտ կղզիներ։

Ջ. ՀՈՂԻՆ ԲՈՒՐՋՈՒԹՈՒՆՆԵՐԸ. — Ասիական Թուրքիոյ արեւմտեան մասը՝ այն է Փոքր Ասիա՝ կը ձեւացնէ ընդարձակ լեռնադաշտ մը —Անատոլուի Լեռնադաշտը— որ թեւթեւաձեւ կը հակի դէպի Սեւ ծով։ Բծնիա լրր 1200 մէտր վեր է ծովուն երեսէն, իսկ կեսարիա 1100 մէտր եւ Էնկիւրիւ 1080 մէտր։

Այս լեռնադաշտին հիւսիսային կողմը՝ Մարմարայի եւ Սեւ ծովուն երկայնութեամբ կը տարածուի լեռնաշղթայ մը, որ նախ անջատ հատամնասներէ կը բաղկանայ, ինչպէս Քեչիջ-Տաղ (Ողիմպոս լեռ), Տիւմանրճ, Ալատաղ, Ըզրֆ-տաղ, Քուջ-տաղ, եւայլն. բայց յետոյ աւելի որոշ կերպով կ'երկարի մինչեւ Կարնոյ լեռները, ձեւացնելով հետզհետէ Ասրուս, Ալթար, Բաբրաճ, Քիւմպէք, Քօլար եւ Պալխար լեռները։

Անատոլուի լեռնադաշտը հարաւային կողմէն չրջապատուած է Տօրոսի լեռնաշղթայով որ Միջերկրականի երկայնութեամբ կը տարածուի Աթալիոյ ծոցէն մինչեւ Իսկէնտէրունի ծովածոցը եւ ճիւղեր կ'արձակէ ամէն կողմ. իր գլխաւոր գագաթն է Կեօֆ-տաղ (3200 մէտր բարձր)։ Այս չղթային գլխաւոր հատամնասներն են Պուլկար-տաղ եւ Քօզան-տաղ։

Տօրոսի մէկ գլխաւոր բազուկն է Անտիտօրոս որ կը յառաջանայ դէպի հիւսիսային-արեւելք եւ կ'երթայ միանալ Քիւրտիստանի լեռներուն։ Այս չղթային գլխաւոր հատամնասներն են Քարապէլ-տաղ, Քեօսէ-տաղ, Ջամլըպել-տաղ եւայլն։

Տօրոսի եւ Անտիտօրոսի լեռնաշղթաներուն միջեւ՝ Փոքր Ասիոյ կեդրոնական մասին մէջ՝ կը բարձրանան առանձին հատամնասներ, ինչպէս Էլմա-տաղ, Ջիչէֆ-տաղ, Ասֆ-տաղ, Էրճիաս (Արգէոս) լեռ (3500 մ. բարձր), Հասան-տաղ, Էմիր-տաղ եւայլն, որոնք ճիւղեր կ'արձակեն մինչեւ Արչիպելագոսի եզերքը, եւ որոնց մէջտեղ կը տարածուին Աղրոս Անապատին անբնակ տափաստանները։

Ասիական Թուրքիոյ արեւելեան կողմը՝ Երասխի գետի հովտին ու Միջագետքի դաշտագետիններուն մէջտեղ կը տարածուի երկրորդ լեռնադաշտ մը. 1500էն մինչեւ 1800 մէտր բարձրութեամբ։ Այս լեռնադաշտը որ տեսակ մը Ասիական Զուիցերիա է, եւ որուն կը տիրապետեն Անտիտօրոսի եւ Արարատի լեռնաշղթաները, կ'ընծայէ հրաբխային լիճեր, անտարթ դաշտագետիններ եւ բազմաթիւ ձորերով ու հովիտներով կտրտուած լեռնաշղթաներ, որոնց գլխաւոր հատամնասներն են Արարաս լեռը (5250 մէտր բարձր), Ալա-տաղ, Պինկիոլ լեռը, ինչպէս նաեւ Կարնոյ լեռները որոնք կ'երթան կը միանան Կովկասի լեռներուն։

Այս լեռնաշղթային սոսկին դարատափը կը ձեւացնէն Բիւրտիստանի լեռները, որոնք Տիգրիսի հովտին երկայնութեամբ կը յառաջանան դէպի հարաւ-արեւելք եւ Իրանի լեռնադաշտին արեւմտեան սահմանը կը գծեն։

Միջագետ եւ Իրագ-Արեսպի՝ որ Ասիական Թուրքիոյ արեւելեան-հարաւային մասը կը կազմեն՝ կը ձեւացնեն ընդարձակ դաշտագետին մը, որուն հիւսիսային կողմերը միայն կը կանգնին աննշան լերաներ 4-5 հարիւր մէտր բարձրութեամբ։ Այս ընդարձակ դաշտագետնին արեւմտեան կողմը կը գտնուի Սուրիոյ ընդարձակ անապատը (Պատիյեթ-լուշ-Շամ), որ կը տարածուի դէպի հարաւ մինչեւ Արաբիոյ սահմանները եւ ուր կը բնակին Պէտէվիներու վաչկատուն ցեղեր։

Սուրիա (Սասրիք) լեռնային երկիր մըն է իր արեւմտեան մասին մէջ, Միջերկրականի ծովեզրին երկայնութեամբ։ Հիւսիսային կողմը կ'երկարի Տօրոսի գօտիէն բաժնուող կրային լեռնաշղթայ մը, զոր կը կարուն խորունկ կիրճեր, եւ որուն գլխաւոր հատամնասն է Կեավուր-տաղ։

Կեավուր-տաղէն սկսելով ծովեզրին զուգահեռաբար դէպի հարաւ կ'երկարի յոյժ լեռնաշղթայ մը որ կը բաժնուի երկու ճիւղերու, զորս իրարմէ կը զատէ Ցորդանանու հովիտը։ Մին որ կը կոչուի Լիբանան՝ կը վերջանայ Սինայի թերակղզիին ծայրը. միւսը՝ Անտի-Լիբանան՝ կը գծէ Սուրիոյ անա գտնին արեւմտեան սահմանը, իր ճիւղերով կը չրջապատէ այն խորունկ տափարակութիւնը ուր անչարժ կը տարածուի Մեռեալ ծովը, և վերջապէս կ'երթայ կը կորսուի Արաբիոյ աւազուտներուն մէջ։

Պարսկային ծոցին ու Կարմիր ծովուն միջեւ կը տարածուի Արաբիոյ անջրդի լեռնադաշտը, որուն հիւսիսային գագաթները կը կորսուի Սուրիոյ անապատին մէջ, և զոր աւազուտ տափաստաններ կը ծածկեն և սեպաձեւ բարձրաթիւններ կը չրջապատեն հարաւային կողմէն։

Ց. ՋՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — Ասիական Թուրքիա կը բաժնուի չորս աւազաններու. 1. Հիւսիսային, որ կը պարունակէ Սեւ ծովու և Մարմարայի հարկատու գետերը. 2. Արեւմտեան, որ կը պարունակէ Արչիպելագոսի հարկատուները. 3. Հարաւային կամ Միջերկրական ծովու աւազան, և 4. Արեւելեան, որ կը պարունակէ Պարսկային ծոցին հարկատու գետերը։

Ա. — Հիւսիսային աւազանին գլխաւոր գետերն են Ճորոխ, Եէշիլ Ըրմագ, Գըզըլ Ըրմագ, Ֆիլիաս և Սաքարիա, որ կը թափին Սեւ ծով. Միխալըճ որ կը թափի Մարմարայի ծովը։

Ճորոխ կը բխի Կէօք-Տաղէն (Կարնոյ լեռներուն մէջ). կը հոսի դէպի արեւմուտք, յետոյ դէպի հիւսիս դառնալով կ'ողողէ Սպեր գաւառը և Կովկասիա մտնելով Սեւ ծովը կը թափի Պաթումի մօտ։

Եէշիլ Ըրմագ կը բխի Ջամլըպել լեռնէն Ջըքըրըք-Սու անուանով. կը հոսի նախ դէպի արեւմուտք, յետոյ դէպի հիւսիսային արեւելք, կ'ընդունի ալ կողմէն Թօզանլը և Բէլքիզ գետակները, և կը թափի Սամսունի ծովածոցին մէջ, բազմաճիւղ տեղտ մը ձեւացնելով։ Երկայնութիւնն է իբր 400 քիլոմէտր։

Պատկ. 57. — ՏԻԳՐԻՍԻ ԵԶԵՐԵՔԸ ՎԲԱՆԱՔՆԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Գըզըլ Ըրմագ Փոքր Ասիոյ մեծագոյն գետն է. կը բխի Քարապէլ լեռներէն. կը հոսի նախ դէպի արեւմուտք, յետոյ դէպի հիւսիս։ Այդ կողմէն կ'ընդունի Տէլիճէ գետակը, ձախ կողմէն՝ Տէվէրէկ և Կէօք Ըրմագ գետակները. և յետոյ կը թափի Սեւ ծով՝ ճախճախուտ տեղ մը ձեւացնելով։ Ունի 1000 քլմ. երկայն.։

Սաքարիա գետը (600 քլմ. երկայն) կ'ելլէ Էմիր-Տաղէն. գլխաւոր գետակիցն է Բուբսաք գետակը։

Միխալըճ կը ձեւանայ երեք գլխաւոր ճիւղերէ. որ են Ասրանոս, Սուսուրլու և Քաբաէրէ գետակները։ Այս վերջինը կ'ելլէ Իսա լեռնէն (Բազ Տաղ) և Մանիսա լիճէն անցնելով կը միանայ Սուսուրլու գետակին։ Իսկ Ասրանոս որ կ'իջնէ Շապհանէ լեռնէն կը հոսի դէպի հիւսիսային արեւմուտք և Արսլանթա լիճէն անցնելով կը միանայ Սուսուրլուին։

Բ. — Արեւմտեան աւազանին ջուրի ընթացքները բազմաթիւ են և մեծ մասը պատմական կարեւորութիւն ունին, թէպէտեւ չատերն ալ պարզ առուակներ եղած ըլլան։ Անոնցմէ կարեւորներն են՝ Մէնտէրէ, Պաքըր Չայ, Կեդիզ, Բիւյիւք Մէնտէրէս և Պէօյիւք Մէնտէրէս։

Մեհնտէրէ (Համերոսի յիշատակած Սիմոյիսը) կը բխի Քազ-Տաղէն և Տրովադան կ'ողողէ։

Կեդիզ (Հերմոս գետ) կ'իջնէ Մուրատ Տա-

ղէն, դէպի արեւմուտք հոսելով կ'ուղղէ Լիւ-դիան, և 300 քիլօմէթրի մօտ ընթացքէ մը յետոյ կը թափի Սբշիպէզագոս, Զմիւռնիոյ ծոցին հիւսիսակողմը։

Փոխր Մեհնտրես կ'իջնէ Պոզ-Տաղէն, և 100 քլմ. ընթացքէ մը յետոյ կը թափի Սքալանօվայի ծովածոցը։

Մեծ Մեհնտրես (Մէանտրը գետ) կը բխի Սք տաղէն, կը հոսի դէպի արեւմուտք, և բազմաթիւ վտակներ ընդունելով իր մէջ՝ Սամօս կ'իջնէն Տօրոս լեռներէն. ձիհան (Պիւրամոս) որ կ'իջնէ Ախաիտօրոսի արեւմտեան ճիւղէն և բազմաթիւ գետակներ ընդունելով կը թափի Իսկէնտէրունի ծովածոցը, և Ոռոնդէս՝ որ Լիւբանանու լեռներէն կ'իջնէ և Միջերկրականի մէջ թափելէ առաջ՝ կ'ընդունի Քարասու գետակը։

Սուրիա ունի ներքին աւազան մը, այն է Մեռեալ ծովու աւազանը, որուն գլխաւոր գետն է Յորդանան, որ կը բխի Հերմոն լեռնէն



Պատկ. 58. — ՏԻԳՐԻՍԻ ԱՆՑՔԸ ՊԱԳՏԱՏԻ ՄԷՋԷՆ ԵՒ ԳԵՏԱՆԱՒԱՐՔԸ

կղզին հարաւային կողմը կը թափի Աբչիպէզագոս։ Երկայնութիւնն է 270 քիլօմէթր։

Գ. — Հարաւային աւազանը չունի չատ մեծ գետեր, որովհետեւ լեռները ծովեզրին խիստ մօտէն անցնելնուն՝ չատ երկայն գետեր տեղ չեն թողուր։ Ամէնէն կարեւոր ջուրի ընթացքներն են Քօճա Չայ (Բանդմոս), Սուսու (Սեհմոս), Քեօփրիւ Սու (Եւբրմիտան), Կեօխսու (Կալիկադնոս) և Սիհան (Սարոս), որ և Գեննեսարեթի լիճէն անցնելով կը թափի Մեռեալ ծովը։

Դ. Արեւելեան աւազանը որ մեծագոյնն է, կը պարունակէ երկու մեծ գետեր, Տիգրիս և Եփրատ։

Տիգրիս ունի երկու ճիւղ։ Արեւելեան ճիւղը կ'իջնէ Մոկաց լեռներէն և դէպի արեւմուտք հոսելով կ'անցնի Սղերդ, որուն հարաւային կողմը իրեն կը միանայ արեւմտեան ճիւղը՝ որ կը բխի Կէօլճիք լճակին մօտերը։ Այնուհետեւ Տիգրիս կը հոսի դէպի հարաւ-արեւելք, կ'ուղղէ Տիար Պէքիրը, Մուսուլը և Պաղտատը, ու ալ կոզմէն կ'ընդունի բազմաթիւ գետեր ու վտակներ։ Տիգրիսի երկայնութիւնն է 1250 քիլօմէտր։

Եփրատ (1850 քլմ. երկայն) գետն ալ կազմուած է երկու ճիւղերէ։ Արեւմտեան ճիւղը որ քլմ. երկայնութիւն։ Տեղատուութեան ատեն իր խորութիւնն է 3-4 մէտր. բայց մակընթացութեան ատեն մինչև 6-7 մէտրի կը հասնի։

Լիճեր. — Ասիական Թուրքիա ունի բազմաթիւ լիճեր, որոնց չատերուն ջուրը ալի է։ Գլխաւոր լիճերն են Մարմարայի ծովեզրին մօտ՝ Սապաճճայի լիճը, Նիկիոյ կամ Իզնիխի լիճը, Աբօլօնիա և Մանիսա լիճերը։

Պատկ. 59. — ԲԱԲԵԼՈՆԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Անատոլուի լեռնադաշտին վրայ կը գտնուին ընդհանրապէս ալտ լիճեր, որոնց գլխաւորներն են Պուլտուր, Էյիրտիր, Աբճեհիր և Պէյշեհիր։ Նոյնպէս Քօչ-Հիսար (Թուզկէօլ) լիճը, որ ունի 1000 քառակուսի քիլօմէտր տարածութիւն։

Արարատ լերան հարաւակողմը՝ Պարսկաստանի սահմանին մօտ կը գտնուի Վանայ ծովակը, որուն մէջ են Լիմ, Կտուց, Առտիր և Աղթամար կղզիները, և որուն տարածութիւնն է 6300 քլմ. քառակուսի։

Պաղեստինի մէջ նշանաւոր են Գեննեսարեթի լիճը (Տիբերեական կամ Գալիլիոյ ծով), որուն մէջէն կ'անցնի Յորդանան, և Մեռեալ ծովը որ 390 մէտր ցած է Միջերկրական ծովուն երեսէն։

ԿԼԻՄԱՑ

Անատոլուի ծովեզերեայ մասերուն մէջ կը տիրէ ծովային կլիման. իսկ ներքին մասերը ունին ցամաքային կլիմայ, չոր ու ծայրայեղ, ինչպէս է առհասարակ բոլոր լեռնադաշտերուն կլիման:

Արեւմտեան և Հարաւային ծովեզերեայ մարզերը_աւելի մեղմ և աւելի մթնոլորտ բա-



Պատկ. 60. — ՇԱԹԻ ԵԶԵՐԲԸ ՊԱԳՏԱՏԻ ՄԷՋ

ղեխառնութիւն ունին քան թէ կեդրոնի բարձրադիր մարզերը ուր ամառները կիզիչ են և ձմեռները սաստիկ: Էրզրումի մէջ գարունը շատ կարճատեւ է. Սեւ ծովուն տեղացեալ լեռնադաշտերուն վրայ առատ ձիւն կը տեղայ և ձմեռը 6 ամիս կը տեւէ հոն. ծովեզերեայ արեւմտեան մասը ենթակայ է թանձր մշուշներու, իսկ արեւելեան մասը աւելի մեղմ կլիմայ ունի. Տրապիզոնի ինչպէս նաեւ ձորախի հովտին մէջ կրնան աճիլ ձիթենին և նարնջենին: Ընդհանրապէս անձրեւները հազուադէպ

նար ըսել սակայն Միջագետքի համար որ Սուրիոյ և Իրանի անապատներուն մէջտեղ կը գտնուի և հետեւաբար ունի երաշտ կլիմայ. բնականաբար բարեխառնութեան չեզուններն ալ շատ մեծ կ'ըլլան այս մասին մէջ: Եփրատի և Տիգրիսի ազերքներուն վրայ և անոնց աւազաններուն մէջ տարածուած տափաստաններուն մէջ բարեխառնութիւնը ծայրայեղ է:

Սուրիոյ կլիման տարօրինակ կերպով փոփոխական է: Միջերկրականէն կը փչեն խոնաւ հովեր, իսկ Սուրիոյ անապատէն կը փչեն չոր

քեցնող հովեր. Ընդհանուր կերպով տարին երկու որոշ եղանակներու կը բաժնուի. ամառը ուր գոնէ 3 ամիս երկինքը պայծառ է. և ձմեռը՝ ուր անձրեւները կը տեւեն Հոկտեմբերի վերջէն մինչեւ Ապրիլ: Աւազ հանդերձ ծովեզերեայ մասերը ունին աւելի մեղմ կլիմայ, մինչդեռ լեռնոտ մասերուն մէջ ցուրտը սաստիկ է և ձիւնը երբեմն առատ: Իսկ արեւելեան մասը՝ անապատին սահմանակից ըլլալով ունի ծայրայեղ կլիմայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ասիական Թուրքիա ունի պարարտ հող և հարուստ ու այլազան բուսաբերութիւն: Կ'արտադրէ արմաւիք, որթատունկ, թուզ, չամիչ,

Պատկ. 61. — ԵՒՄԻՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՍՆՈՒՆԴԸ ԵԼՈՂ. ՏԱԲԸ. ՏՈՒԲԱՑԻ ՀՈՒՆԶԸԸ

լեհան, նարինջ, արմաւ և զանազան մրգեղէններ, ծխախոտ, կնճիթ (առատ), բամպակ, վուշ, կանեփ, ափիոն, ձիւթապտուղ, նիւրկի, նիլթեր, բրինձ, խաշնաբէժ, բժշկական բոյսեր, նշուլիից հունտեր, և այլն:

Ասիական Թուրքիոյ ունի նաեւ մեծաքանակ անտառներ, մանաւանդ Սեւ ծովու, Արչիպելագոսի և Միջերկրականի ազերքները:

ԱՆԱՍՆԱՅՈՒԹԻՒՆ. — Ինչպէս եւրոպական Թուրքիոյ նոյնպէս ալ Ասիական Թուրքիոյ մէջ անասնաբուծութիւնը բաւական զարգացած է բնական պարարտ ու ընդարձակ մարգագետիններու. չնորհիւ որոնք կը մնուցանեն կով, ոչխար (գառնան), ձի, և մանաւանդ այծերն ի մէնէն համբաւաւոր այծը որ ծանօթ է Էնկիւրիի այծ անունով և որուն մազը (թիֆթիկ) մեծ չարգ ունի վաճառականութեան մէջ:

Մեղուաբուծութիւնն ալ չատ հին ժամանակներէ ի վեր ընդհանրացած է Ասիական Թուրքիոյ մէջ:

Շերամաբուծութեան մասին ալ բաւական բարգաւած վիճակ մը ունի Ասիական Թուրքիա մանաւանդ Քարասիի ամֆագը, Խիւտավենտիկեար կուսակալութիւնները չրջականերով, Այտընի նահանգը ամբողջովին, Սուրիա և Միջագետք:

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՋՐԱՆՈՒԹԻՒՆ. — Որսորդութեան չատ չարմար երկիր մըն է Ասիական Թուրքիա սը կը գտնուին ամէն տեսակ եղջերներ. արջ, գայլ, ագուէս գրեթէ ամէն կողմ կը գտնուին: Երկիրը հարուստ է նաեւ մանր ակաւոր կենդանիներու մասին. ինչպէս չայմայր, կուղբ, կզաքիս, և այլն:

Ասիական Թուրքիոյ ծովերն ու լիճերը

առատ ձուկ կուտան՝ անձրուկ, ազկեր, թխունիկ, թիւնոս, տառեխ և օձաձուկ։

Սպունգի որան ալ կարեւոր զբաղում մըն է Տաճկաստանի ծովեզերեայ բնակիչներուն համար։ Մանաւանդ Հադրամ և մօտակայ կղզեակներու չուրջ որացուած սպունգը համբաւաւոր է ամէն տեղ։



Պատկ. 62. — ԳԵԼԼԵԿ ՄԸ ՏԻԳՐԻՍԻ ՎՐԱՑ

ՀԱՆՔԱՑԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՔ. — Ասիական Թուրքիա միանգամայն հանքառատ երկիր մըն է. ունի հանքածուխ (էրէյլի Սեւ ծովուն վրայ), պղինձ, արծաթախառն կապար, արծաթ, կապար, երկաթ, քրոմ, ջուխկ, ծարիր, պօռասխա, ալ, ծովափրփուր (ինկիր բաշը) մարմարիոն, շինութեան քարեր և հանքային ջուրեր։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Գետային եւ ծովային նաւարկութիւն. — Ինչպէս Եւրոպական Թուրքիոյ նոյնպէս և Ասիատոլուի մէջ նաւարկելի գետերը քիչ են, երկրին լեռնային կազմութեան պատճառաւ։ Սակայն Ասիական Թուրքիոյ արեւելեան մասին մէջ Եփրատ և Տիգրիս նաւարկութեան գեղեցիկ ճամբայ մը կը գծեն մինչև Պասրա։

Տիգրիսի վրայ Քիզիկ կոչուած ափիկրաւ մէջտեղ Տիարպէքիրէն մինչև Մուսուլ, անկէ ալ մինչև Պաղտատ փոխադրութիւններ կը կատարուին։

Եփրատի և Տիգրիսի միացմամբ կը կազմուի Շադ էլ Արապ որ 480 մղոն երկայնութեամբ գետին մը կը թրջէ։ Պաղտատի և Պասրայի մէջև Օսմանեան և օտար չոգենաւեր դիւրաւ կ'երթեւեկեն։

Ասիական Թուրքիա Սեւ ծովու, Արչիպելագոսի, Մէյներկրականի և Պարսկային ծոցին վրայ ընդարձակ ծովեզերքներ ունենալով կարեւոր յարաբերութիւններ ունի օտար երկիրներու հետ։

Օսմանեան և օտար չոգենաւեր կանոնաւոր կերպով կ'երթեւեկեն այս ծովերուն վրայ գտնուած բանուկ նաւահանգիստները որոնց գլխաւորները են.

Սեւ ծովուն վրայ՝ Տրապիզոն, Սամսոն, Սինոպ և Ինէպոլու։

Մարմարայի վրայ՝ Իզմիթ, Մուտանիա, Պանդրմա։

Արչիպելագոսի վրայ՝ Իզմիր, Թէնէտոս, Միթիլլի, Քիոս, Հադրամ։

Մէյներկրականի վրայ՝ Մերսին, Իսկէնտէրուն, Պէյրութ, Թրիփոլի և Եաֆա։

Կարմիր ծովու վրայ՝ Ճիտէ և Հոտէյտա

Պարսից ծոցին վրայ՝ Պասրա։

ՅԱՄՐԱՒԱՑԻՆ ՀԱՄԲԱՒՆԵՐ ԵՒ ԵՐԿԱՒ ԹՈՒՂԻՆԵՐ. — Ասիական Թուրքիոյ ներքին հաղորդակցութիւնները դիւրացնելու համար բաւական խճուղիներ բացուած են։

Ասիական Թուրքիոյ Անատոլուի և Սուրիոյ մասերուն մէջ կան երկաթուղիի քանի մը գիծեր որոնց երկայնութիւնն է 4250 քիլոմէթր։

Անատոլուի այդ գիծերը.

1. Իզմիր—Այտըն—Տիւեր
2. Իզմիր—Մանիսա—Ալաշեհիր—Աֆիոն Գարաճիսար
3. Իզմիր—Մանիսա—Սոմա
4. Հայտար-Փաշա—Իզմիտ—Էսկիշեհիր—Քոնիւրիւ
5. Էսկիշեհիր—Քիւթահիա—Աֆիոն Գարահիսար—Փոնիա—Իրէյլի—Պուլկուրլու
6. Պերուք—Դամասկոս—Համա
7. Պերուք—Շամ—Հօրան
8. Նաֆա—Երուսաղէմ
9. Գայիֆա—Աքքա—Դամասկոս
10. Համիտիյէ—Հիճազ
11. Մերսին—Թարսուս—Ատանա
12. Պուրսա—Մուտանիա

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Երկաթուղւոյ նպաստով գիծերու չինութիւնը մեծ օգուտ ունեցած է ներքին և արտաքին վաճառականութեան համար, որ վերջին տարիները մանաւանդ բաւական զարգացած է.

Ասիական Թուրքիոյ ներածութիւնները նայն են Եւրոպական Թուրքիոյ ներածութեանց հետ։

Ասիական Թուրքիա կ'արտածէ արմաւիք, ընդեղէն, արջառ, մրգեղէն, չամիչ, գինի, ձէթ ծխախոտ, խառնէ, մեղր, հիւսելի նիւթեր (մետաքս, բուրդ, բամպակ, թիֆթիկ), տաշտ, մարթ, կաշի, մարմարիոն, սպունգ, ներկի նիւթեր, իւղալից հունտեր, աֆիոն, դեղօրայք։

ՉԵՌԱՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան կայսրութեան թէ՛ Եւրոպական և թէ՛ Ասիական բաժնին մէջ կան տեղական արհեստներ որոնց ամենք չի տեսնէ ի վեր մեծ համբաւ ունին և թէպէտ Եւրոպական ճարտարարուեստներու կատարելութեան հասած չեն, բայց ունին գեղանատեսիլ յատկութիւններ, ինչպէս գոյնի հաստատութիւն, տեւականութիւն և այլն։ Այսպէս համբաւաւոր է կապերտագործութիւնը որ Թուրքիոյ ամէնէն ծանրակշիռ ձեռարուեստներէն մէկն է և ամէնէն աւելի զարգացած է Այտըն և Մուտանիայի կողմերը։ Ցիշատակութեան արժանի են մանաւանդ Իզմիրի գաւառին մէջ գտնուած Պետական գործարաններուն արտադրութիւնները, որոնց մէջ քիչ ժամանակուան մէջոգին մեծ համբաւ չունած են Հերէքլէյի կայսերական գործարանին արտադրութիւնները՝ գորգ, մետաքսեղէն, եւլն. որոնք արտաքին վաճառականութեան ալ կարեւոր նիւթեր են։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասիական Թուրքիոյ բնակիչները կը հաշուուին իբր 16 միլիոն հոգի, որ ըսել է իւրաքանչիւր քառակուսի քիլոմէթրի վրայ 9 հոգի։

Փոքր Ասիոյ բնակիչները կը հաշուուին իբր 9 միլիոն հոգի (18 հոգի մէկ մի քառ. քիլոմ. վրայ)։

Ծովեզերեայ մարզերուն ու ներսի լեռնադաշտերուն մէջև մեծ տարբերութիւններ կան թէ բնակիչներու խառնուածքի և թէ բնակիչներու բարքերուն մասին։ Լեռնադաշտերուն վրայ կ'ապրին վայրենի կամ կէս-քաղաքակրթեալ ցեղեր, հովիւներ։ Այսպէս են Եիւրիւքները որոնք երթեւեկ ունին միայն ձիասյուն բնակութիւն և կ'ապրին երկրագործութեամբ կամ վաճառականութեամբ։

Ասիական Թուրքիոյ հիւսիս-արեւելեան երկրամասն ու Միջագետք կը պարունակեն իբր 4 միլիոն բնակիչ, որոնք կը պատկանին այլեւայլ ցեղերու (ինչպէս Թուրք, Հայ, Քիւրտ, Արաբ, Հայկն)։

Թուրքիոյ գաւառաբնակ Հայերու մեծ մասին զբաղումն է հողագործութիւն, փոքր մաս մըն ալ կ'զբաղի վաճառականութեամբ։

Միջագետքի մէջ բաւական կարեւոր տարր մը կը կազմեն Արաբները որոնք ընդհանրապէս իրենց նախնեաց վարկաւոն կեանքը կը չարունակեն։ Կան սակայն ցեղեր որոնք գետային նաւարկութեան համար բնաիր նաւավարներ կը հայթայթեն։ Անշնարած ցեղերէ ոմանք հողագործութեամբ ալ կը պարապին։

Սուրիա ունի իբր 3,300,000 բնակիչ որոնք չատ տարբեր տարրերէ կազմուած են։ Կարեւո-

բազմյն է Արաբ տարրը. Արաբերէն լեզուն Տօրոսէն մինչեւ Սինա խօսուելով կապ մը կը հաստատէ այնքան իաւնացեղ ժողովուրդներու միջեւ, ինչպէս են ֆէլլահները, Տիւրզիները կռուասէր ու մոլեռանդ. Մարոնիները՝ զօրեղ և խաղաղասէր. Ասորիները, և ուրիշ զանազան ցեղեր։

Թոլոր այս տարբեր ցեղերէն զատ Ասիական Թուրքիոյ բնակիչներուն մէջ կան Չերքէզներ որոնք Կովկասէն գաղթած են և ցրուած խումբերով կ'ապրին. Լազեր (Սեւ Ծովու եզերքը՝ Լազիստան). Հրեաներ որոնք ամէնէն աւելի Երուսաղէմի մէջ ու Դամասկոսի շրջակաները հաստատուած են։

---

2. ՎԱՐՉԱԿԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ. — *Ասիական Թուրքիա կը բաժնուի 22 կուսակալութեանց և 4 ուրոյն սանճագներու։*

Ա. *Սեւ Ծովու եզերքը՝* Տրապիզոն և Գասթամունի։

Բ. *Մարմարայի և Արշիպելագոսի եզերքը՝* Խիւտավենտիկեար, Այտըն։

Գ. *Միջերկրականի եզերքը՝* Գոնիա, Ատանա, Հալեպ և Պէյրութ։

Դ. *Արաբիոյ սահմանին վրայ՝* Սուրիա։

Ե. *Կարմիր Ծովուն եզերքը՝* Հիճազ և Եէմէն։

Զ. *Պարսից Ծոցին վրայ՝* Պասրա։

Է. *Արեւելեան սահմանին մէջ՝* Պաղտատ, Մուսուլ, Վան, Էրզրում։

Ը. *Ներսի մասերուն մէջ՝* Պիթլիս, Մամուրէթ-իւլ-Ազիզ, Տիարպեքիր, Սըվազ, Էնկիւրիւ։

Թ. *Արշիպելագոսի մէջ՝* Ճեզայիրի Պահրը Սեֆիտ։ *Զորս ուրոյն սանճագներն են՝* Իզմիր, Պիղա, Գուսը Շեհիճ, և էլ Զօր։

Ա. ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՈՒՐՈՅՆ ՍԱՆՃԱԳՆԵՐԸ

Ա. ՄԱՐՄԱՐԱՅԻ ԵՒ ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍԻ ԵԶԵՐՔԸ

1. ԻԶՄԻԹ ՍԱՆՃԱԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — *Իզմիթի (Նոճա-Ելի) ուրոյն սանճագը կը գտնուի Կ. Պոլսոյ կուսակալութեան արեւելեան կողմը, Պրուսա եւ Թոմթէմունի նահանգներուն և Սեւ ու Մարմարա ծովերուն մէջտեղ։*

Հողը բարեբեր է եւ լաւ մշակուած։ Կ'արտադրէ արմաւիք, եգիպտացորեն, գետնախնձոր, վուշ, կանեփ, ծխախոտ, ընդեղէն, մըգեղէն (չամիչ, ընկոյզ, չագանակ, եւայլն)։ Կէյվէ, Ատաբազար եւ Քանտէրէ գաւառակները կը պարունակեն ընդարձակ անտառներ որոնք Կ. Պոլսոյ եւ շրջականերուն կը մատակարարեն մեծաքանակ փայտ եւ ածուխ։

Իզմիթ գաւառին մէջ յիշատակութեան արժանի են ֆէսի, չուխայի և մետաքսեղէնի գործարանները կաւավարութեան յատուկ։ Ատոնցմէ զատ ամէն կողմ կան մետաքսի մանարաններ, ալօրիքներ, խաղախորդարաններ եւայլն։

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Իզմիթի գաւառը իր առանձին կառավարիչն ունենալով հանդերձ կը պատկանի Կ. Պոլսոյ կուսակալութեան և կախում ունի ուղղակի Ներքին Գործոց նախարարութենէն։*

Գլխաւոր քաղաքներն են՝

Իզմիթ (15000 բն.) *համանուն ծոցին խորը՝ գեղեցիկ դիրքի մը մէջ ճարտարարուեստական քաղաք և բանուկ նաւահանգիստ։ Ունի նաւարան։ Շրջակաները կան մէկ քանի պետական գործարաններ. ինչպէս՝ Հէրէքէի մէջ՝ մետաքսեղէնի գործարան, Արսլանպէկի մէջ՝ չուխայի գործարան, բանակին յատուկ, եւայլն։*

Անոնցմէ զատ Իզմիթի մէջ կան բազմաթիւ մետաքսի մանարաններ, չոգեշարժ ալօրիքներ եւայլն։

Արմաւ (1500) *ուր կը գտնուին Հայոց Զարխանի Ս. Աստուածածնի վանքը և կ. Պոլսոյ Պատր. Դպրեվանքը։*

Արմաչէն երեք քառորդ ժամուան հեռաւորութեամբ կը գտնուի Խասխալ փոքր գիւղը։

Պարտիզակ *կամ* Պալչեճիք (8000) *Իզմիթի ծոցին հարաւակողմը, կ'արտադրէ խոզակ, ծխախոտ, գինի, մրգեղէն։*

Աւսլանպէկ (2800) *Պալչեճիքէն 2 ժամ ուան հեռաւորութեամբ նոյնպէս գեղեցիկ գիւղ մըն է։ Ունի պետական չուխայի գործարան։*

Պալչեճիքի մօտ կը գտնուին նաեւ Տհօնկել *և* Օվաճըք՝ *որոնց գլխաւոր բերքերն են ծխախոտ և խոզակ։*

Ատաբազար (25000 բն.) *Սաքարիայի մօտ՝ ընդարձակ դաշտի մը վրայ վաճառաշահ քաղաք։ Ունի Բիւզանդեան ու Ճենովական հնութիւններ, որոնց մէջ համբաւաւոր է Ցուստինիանոսի կամուրջը որ այսօր Պէյ-Բէօրքիւ կը կոչուի։*

Գլխաւոր արտածութիւններն են արմաւիք, կտաւատ, եգիպտացորեն, կորեկ, խոզակ, ծխախոտ, մեղրամոմ, կանեփի թել (ղիվ), ընկոյզ, գետնախնձոր (1 միլիոն օխա), սոխ, սխտոր, հաւկիթ (տարեկան 30 միլիոն հատ), վառելակ եւայլն։ Առնցմէ զատ Ատաբազար ունի մեծ արտածութիւն չինութեան փայտի, թարմ պտուղի և մանաւանդ խաղողի։

Իզմիթի գաւառին մէջ երկրորդական գիւղեր ու գիւղաքաղաքներ են նաեւ Կէյվէ, Որթաքէօյ, Աֆիոնասար, Սապանճա, Քարամուսալ՝ որոնք չերամաբուծական կեդրոններ են և Եալովա՝ համբաւաւոր իր հանքային ջուրերով։

---

2. ԽԻՏԱՎԵՆՏԻԿԵԱՐԻ ՆԱՀԱՆԳ

Պրուսայի կամ Խիւտավենտիկեարի *Կուսակալութիւնը կը պարունակէ հին աւան Միւսիա, Բիւթանիա և Փռիւգիա անուններով ճանչցուած երկիրներուն մեծագոյն մասը։ Սահմաններն են հիւսիսէն Իզմիթի սանճագն ու Մարմարայի ծովը, արեւելքէն՝ Էնկիւրիի և Քոնեայի կուսակալութիւնները, հարաւէն՝ Այտընի նահանգը և արեւմուտքէն՝ Արշիպելագոսն ու Պիզայի գաւառը։*

Երկիրը բարեբեր է ու բաւական լաւ մշակուած։ Գլխաւոր երկրագործական բերքերն են արմաւիք, եգիպտացորեն, իւղալից հունտեր, աֆիոն, ներկի նիւթեր, ընդեղէն, թթենի, որթատունկ և ուրիշ պտղատու ծառեր։ Հողը հարուստ է հանքային նիւթերով, որոնք սակայն չեն շահագործուիր պէտք եղածին պէս։ Պալըքէսիրի մօտ՝ Պալիայի հանքերէն կը հանուին հանքածուխ և արծաթախառն կապար։ Էրթօղրուլի և Քէօթահիայի գաւառներն ունին Քրօմի հանքեր, բայց ամէնէն աւելի յիշատակութեան արժանի են Էսկիշէհիրի շրջակաները գտնուած ծովափրփուրի (ղիւրէ թաշը) հանքերը, որոնք աշխարհի ամէնէն հարուստներն են։ Հանքային ջուրեր ու ջերմուկներ բազմաթիւ են բովանդակ նահանգին մէջ և յատկերը՝ մանաւանդ Պրուսայի շրջակայինները՝ համբաւաւոր են հին ատեններէ ի վեր։

Ճարտարագործութիւնը բաւական զարգացած է, և տակաւ յառաջդիմելու չափին մէջ մտած։ Ձեռագործական արտադրութեանց մէջ նշանաւոր են մեհտահեղհեներն և զմիւռնական գորգերը։ Յիշուելու արժանի են նաեւ գինեգործութիւնը, ձիթհանութիւնը, աղօրհնանութիւնն ու ապխտանութիւնը։

Շերամաբուծութիւնը ընդհանրացած է նահանգին ամէն մասերուն մէջ, և մետաքսի մանարաններ բազմաթիւ են կարեւոր կեդրոններու մէջ։

Վաճառականութիւնը՝ հազորդակցութեան կանոնաւոր միջոցներու չնորհիւ՝ բաւական բանուկ է։

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Խիւտավենտիկեարի կուսակալութիւնը կը պարունակէ հինգ գաւառներ. Պրուսա, Քէօթահիա, Աֆիոն-Քարահիսար, Էրթօղրուլ և Քարասի։*

Գլխաւոր քաղաքներն են՝

Պրուսա (90,000) *Ոլիմպոս լերան ստորոտը գմայլելի դիրքի մը մէջ՝ կուսակալանիստ քաղաք, և նախկին մայրաքաղաք Օսմ. Կայսրութեան (1326էն 1366)։*

Պրուսայի շրջակաները կը գտնուին բազմաթիւ ջերմուկներ (ծծմբային ու երկաթային) որոնք հին ժամանակներէ ի վեր համբաւաւոր են։

Պրուսա երկաթուղիով մը կապուած է Մուտանիայի հետ։ Բազմաթիւ գեղեցիկ խճուղիներ չինուած են պատուին մէջ, որոնք Պրուսան հարթավայրին հետ կը դնեն նոր քին քաղաքներուն. ինչպէս նաեւ Մարմարայի ծովեզերեայ քաղաքներուն հետ։

Պրուսա ունի բազմաթիւ մանարաններ ֆրանսական ոճով չինուած, և մեծ վաճառականութիւն մետաքսի ու խոզակի։

Կեմլեյիկ (5000) փոքրիկ քաղաք և պատուով նաւահանգիստ Համանուն ծոցին խորը։ Գլխաւոր բերքերն են ձիթապտուղ և խոզակ։

Մրխալրճ (8800) Շերամաբուծական կեդրոն։ Ունի ընդարձակ այգիներ ու մրգատաններ։

Մուտանիա (5000) կէմլէյիկի ծոցին մէջ՝ նաւահանգիստ, որ Պրուսայի հետ կապուած է երկաթուղիով։ Ունի մեծ արտադրութիւն ձիթապտուղի, և բազմաթիւ իւղարաններ։ Կարեւոր է նոյնպէս խոզակի առեւտուրը։

Գեօքտեպէ (28000) Բուրսայէ գետակին վրայ վաճառաշահ քաղաք. համբաւաւոր են բրուսէլեանները ու Զմիւռնական գորգերը։

Գլխաւոր արտադրութիւնները են արմաւ, ընտիր ածիւղ, թիթեղիկ, մոմ, քրօմ եւ ծաղիկի հանածոյ։

Էսկիշեհիր (25000) Բուրսայէ գետակին վրայ գեղեցիկ քաղաք։ Էսկիշէհիրի մօտ կը գտնուին ծովափրփուրի հարուստ հանքեր որ Տէրութեան կը պատկանին եւ որոնցմէ տարին 5—6 հազար մետուկ կ'արտածուի Եւրոպա, մասնաւորապէս Աւստրիա։

Էսկիշէհիրի ուրիշ գլխաւոր արտածութիւնները են արմաւ, իւղալից հունտեր, ածիւղ, ծխախոտ, բուրդ, մոմ, թիթեղիկ որ էնկլիւրինը կը գերազանցէ։

Էսկիշէհիրէն 7 ժամ հեռու Քէօթահիայի ճամբուն վրայ կը գտնուին Ղլըճայի համբաւաւոր ջերմուկները։

Ուշագ (18,000) վաճառաշահ քաղաք և ճարտարագործական կեդրոն։ Անուանի են գորգերը։ Գլխաւոր բերքերն են արմաւ, ածիւղ և խոզկալին։

Աֆիօն - Քարահիսար (40,000) Բարեբեր դաշտի մը մէջ ծաղկած և վաճառաշահ քաղաք։ Կ'արտածէ ածիւղ, բուրդ, արմաւ, դմնիկի հատիկ, մեղրամոմ, հանքային ջուրեր, ներկի նիւթեր, եւայլն։

Պոլվատին (10,000) պզտիկ ծաղկած քաղաք, ունի բրուսէլէնի գործարաններ և գորգի արուեստանոցներ։

Սանտրկը (10,000) ունի երկաթային ջնարմուկներ ու հանքային ջուրեր, և բանուկ վաճառականութիւն բուրդի, ածիւղի ու արմաւի։

Պիլեճիք (10,000) Բարսաէրեի վրայ, չինարտուծական կեդրոն։ Ունի բազմաթիւ մանարաններ և բանուկ վաճառականութիւն խոզակի, ածիւղի, մետուտակի, եւայլն։

Բեօվիլիւ, Լեֆիէ, Կեօլպազար նոյպէս չինարտուծական կեդրոններ են։

Իլճեկէօլ (10,000) չրջակաները կան կազմի հարուստ անտառներ։

Իլճեկէօլ հարթաւայր է Զիբրլի կոչուած հանքային ջուրերը. որմէ տարին 12000 լիտր կ'արտածուի Եւրոպա և Եգիպտոս։

Իզնիկ (1200) հին Նիկիա, ուր կ'ապրի 318 հայրապետական Տիւզերական ժողովը Բրիւսայի 325 թուականին։

Պալըքեսէր (20,000) բարեբեր դաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք, որ մեծապէս վերաշինուեցաւ 1897ի սոսկալի երկրաշարժէն։ Մօտերը կան ծարիրի և պօրասիդի հանքեր։ Կ'արտածէ գլխաւորաբար արմաւ, խոզկալին, ածիւղ, կնճիթ, կաուստա, ծխախոտ, այծի և սխտորի մորթ, մրգեղէն, սեխ և ձմերուկ։

Այվալըք (10,000) Էմբէմիսի ծոցին խորը բաւական բանուկ նաւահանգիստ։

Ունի բազմաթիւ ձիթարաններ. որոնց տարեկան ձէթի արտադրութիւնը կը հաշուուի 4 միլիոն քիլօ. նոյնպէս գինիի, օղիի ու քոնեակի գործարաններ, օճառի գործարաններ, եւն.։

Գլխաւոր արտածութիւնները են ձէթ, օճառ, գինի, օղի, որոնք կը ղրկուին Կ. Պոլիս, Սկեանիկ և Պուկարիա։

Էյտեմիս (7000) համանուն ծոցին խորը գեղատեսիլ քաղաք։

Էրեճ (6500) Մարմարայի մէջ Բափուտաղ թերակղզին վրայ փոքր նաւահանգիստ։

Պանտրմա (10,000) Մարմարայի վրայ փոքր նաւահանգիստ որ արմաւի, ածիւղի, խոզկալինի, կաուստայի, խոզակի, բաւական կարեւոր առեւտուր ունի։ Պանտրմայի մօտ կը գտնուին Սուլթան Զայիրի պօրասիդի հանքերը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ
ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Մասիճան.
1 : 8,000 000

3. ՊԻՂԱՅԻ ԳԱՒԱՌ

Պիղայի կամ Տարտանելի Միւթէսարրըֆութիւնը որ Իւտավէնտիկեաց նահանգին արեւմտեան կողմը փոքր գաւառ մըն է, կախում ունի ուղղակի Ներքին Գործոց նախարարութենէն։

Հողին գլխաւոր արտադրութիւններն են՝ արմաւիք, եգիպտացորեն, ընդեղէններ, կնճիթ, խոզկաղին, ծխախոտ ու մրգեղէն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Պիղայի գաւառէն կախում ունին հետեւեալ գաւառակներ՝ Տարտանել, Իզմինէ, Պիղա, Այվաճըք և Լափէքի։

Տարտանել կամ Զանագ-Քալէ (12,000) համանուն նեղուցին վրայ՝ կառավարչանիստ քաղաք և զինուորական առաջին կարգի նահանգիստ։

Պիղայ (10,000) անուանի է ոսնավաճառը։

Լափսաքի՝ փոքր նաւահանգիստ, ունի սեխ և գինի։

---

4. ԱՑՏՐՆԻ ՆԱՀԱՆԳ

Այտընի ճահճագը որ կը պարունակէ նախկին Լիւդիան, Կարիան, Փռիւգիոյ հարաւային մասն ու Յոնիական և Թրքական գաղթականութիւնները, կը տարածուի Իւտավէնտիկեաց կուսակալութեան հարաւակողմը՝ Արչիպելագոսի և մասամբ Միջերկրականի վրայ։

Կլիման ընդհանրապէս առողջ է և ախորժելի, թէեւ ամառները չատ տաք կ'ընէ։ Հողը բարեբեր է և լաւ մշակուած։ Գլխաւոր բերքերն են արմաւիք, չամիչ, թուզ, նարինջ, կիտրոն և ուրիշ պտուղներ, աֆիոն, ձէթ, ծխախոտ, մասուտակ, բամպակ, սուսամ, խոզկաղին և ուրիշ ներկի նիւթեր, գինի, մաստիքա եւայլն։

Անտառները կը ծածկեն ընդարձակ տարածութիւններ։ Ընտանի անասուները բազմաթիւ են նահանգին ամէն մասերուն մէջ։

Հողը կը պարունակէ չատ տեսակ հանքեր, մասնաւորապէս գմռնիա, քրոմ, ծարիր, ծծումբ։ Մալնգրեայ մասերուն մէջ աքանչելի աղահանքեր կան։

Ձեռարուեստական արտադրութեանց մէջ անուանի են գորգերը, ինչպէս նաեւ բամպակեղէն ու մետաքսեղէն կտաւները։

Վաճառականութիւնը որ գլխաւորաբար Զմիւռնիոյ, նաւահանգստին մէջ կը կեդրոնանայ՝ չատ բանուկ է։ Նահանգին գլխաւոր արտածութիւններն են երկրագործական արտադրութիւնները, նախնական նիւթեր ու աքանչելի գորգեր։ Իսկ ներածութիւններն են մանրնդակներ և ջուխտեր, գալմաբերք, հանդերձեղէն ու զանազան ռարուեստական արտադրութիւններ, մետաղներ եւայլն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Այտընի կուսակալութիւնը կը բաժնուի հետեւեալ գաւառներու (սանճագ)։

1. Իզմիր, 2. Սարուխան. 3. Այտընի, 4. Տէնիզլի, 5. Մէնթէշէ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Զմիւռնիա կամ Իզմիր (250,000 բն.) կուսակալանիստ քաղաք և կ. Պոլսէն յետոյ կայսրութեան մեծագոյն նաւահանգիստը։

Քաղաքին չէնքերուն մէջ իրենց չքեղութեամբը նշանաւոր են Հայոց Ս. Սահակեանոց եկեղեցին, Լատինաց Մայր եկեղեցին, Տանկաց Հիսարի և Քէստանէ պազարի մզկիթները, Յունաց Այիա-Ֆոթինի եկեղեցւոյն զանգակատունը եւայլն։

Պերկամա (20,000) վաճառաշատ քաղաք՝ անուանի իր հնութիւններով։

Եէնի-Ֆոչա կամ Նոր Փոկիա (6000) Հէրմէսի ծոցին մէջ, կ'արտածէ մեծ քանակութեամբ չամիչ։ Անուանի է ադահանքը, որուն տարեկան արտադրութիւնն է 40 միլիոն օխա։

Մէնեմէն (10,000) վաճառաշատ քաղաք։

Վուրլա (35,000) երկրագործական քաղաք՝ Զմիւռնիոյ ծոցին մօտ։ Անուանի է չամիչը (ռազաֆը)։

Չեշմէ (16,000) Քիոս կղզիին դիմացը բաւական բանուկ նաւահանգիստ է։ Ունի հանքային ջուրեր։

Սմալա-Նօվա (Ռուշ Աւտաը) կամ Նոր-Եփեսոս (7000) համանուն ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ. անուանի է չամիչը։

Այասուլուք (3000) հին Եփեսոսի աւերակներուն մօտ։

Էօskմիբ (30,000) Պօզ-Տաղի ատորոսը՝ բաբեր դաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք։ Մօտերը կը գտնուին ծարիրի եւ մնդիկի հանքեր։

Մանիսա (35,000) Կէմիզ գետին վրայ բաբեր դաշտի մը մէջ վաճառաշահ եւ ծաղկած քաղաք։

Քրրճ Աղաճ (20,000) վաճառաշահ քաղաք։ Անուանի է սեխը։

Քասապա (25,000) վաճառաշահ քաղաք, բերքերն են ցորեն, բամպակ, ծխա՛ծոտ, չամիչ սեխ եւ պատուական ձմերուկ։

Կեօրսեհ (5000) նշանաւոր է իր սքանչելի գորգերով։

Քուլա (6000) երկրագործական կեդրոն։ Անուանի են նոյնպէս գորգերը։

Այտըն կամ Կիւզել Հիսար (35,000) Մէանդրի մէկ գետակցին վրայ գեղեցիկ քաղաք՝ բարեբեր եւ լաւ մշակուած դաշտի մը մէջ։

Տենիզլի (15,000) Լաւոդիկէ քաղքին աւերակներուն մօտ գեղեցիկ քաղաք է բարեբեր դաշտի մը եզերքը։

Տեմիրճի (5000) ունի սքանչելի գորգեր։

---

5. ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ

Արշիպեղագոսի կուսակալութիւնը (*Ճեզայիրը պահիր Սեփիս վիլայեթի*) կը պարունակէ Եգէական ծովուն մէջ սփռուած մեծ ու փոքր Օսմանեան կղզիները, բաց ի Թասոսէն, Սամոթրակէէն՝ որ Էսիրնէի կուսակալութեան մասը կը կազմէ եւ Սամոսէն՝ որ ինքնօրէն իշխանութիւն մը կը ձեւացնէ։

Կղզիներուն կլիման ընդհանրապէս մեղմ, բարեխառն եւ առողջ է։ Բազմաթիւ փոքր կղզիներ անբեր ժայռեր են սոսկ, բայց մեծերուն մէջ (Բիւոս, Լեսբոս, Միտիլլի եւ Հռոդոս) կը գտնուին շատ արգաւանդ մասեր, ուր կ'աճեն արմաւիք, ընդեղէններ, ձիթենի, մրգեղէններ (նարինջ, լիմոն, թուզ, սրճատունկ եւայլն)։

Իմպրոսի եւ Բիւոսի մէջ կը շահագործուի ծարիրը. կղզիներէն շատեր ալ ունին մարմարիոնի գեղեցիկ հանքեր։

Բնակիչներուն գլխաւոր զբաղումներէն մին է ապունդի որսորդութիւնը։

Կղզիները իրենց աշխարհագրական նպատակաւոր դիրքին շնորհիւ՝ բաւական կարեւոր դեր մը կը կատարեն առեւտրական տեսակէտով։ Նաւարկութիւնը առաջին եւ կարեւորագոյն զբաղումներէն մին է բոլոր բնակիչներուն։

Արտածման կարեւոր առարկաներն են բուպունդ, ալկեր եւ երկրագործական բերքեր, ոգելից ըմպելիք, մետաքս, եւայլն։

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽ. ԽՕՒՄՆԵՐ ՏԱՊԱՐԵՐ։ — Արշիպեղագոսի կուսակալութիւնը կը բաժնուի հետեւեալ 4 գաւառներուն. 1. Հռոդոս, 2. Բիւոս, 3. Միտիլլի, 4. Լեսբոս։

1. Հռոդոսի գաւառը կը պարունակէ հետեւեալ կղզիները.

Ա.— Հռոդոս, Արշիպեղագոսի գեղեցկագոյն կղզիներէն մին. ունի զարմանալի կլիմայ. կ'արտադրէ արմաւիք, և մանաւանդ մրգեղէն, գինի և չինուխեան փայտ։

Գլխաւոր քաղաքն է Հռոդոս՝ կղզիին հիւսիսային կողմը, ապահով և բանուկ նաւահանգիստ։

Բ.— Սիմի, Հռոդոսի հիւսիս-արեւմտեան կողմը փոքր կղզի, որ նշանաւոր է ապունդի որսորդութեամբ։

Գ.— Գարբաթօս (12 000 բնակիչներով) Հռոդոսի հարաւային արեւմտեան կողմը՝ երկար, նեղ ու լեռնոտ կղզի։

2. Բիւոս գաւառը կը պարունակէ հետեւեալ կղզիները.

Ա.—Բիւոս (70000 բն.), Զէյմէ թերակղզին դիմացը, լեռնային բայց արգաւանդ ու գեղեցիկ կղզի։ Գլխաւոր քաղաքն է Բիւոս՝ արեւելեան ծովեզրին վրայ վաճառաշահ նաւահանգիստ, որ կ'արտածէ ամէն տեսակ պտուղ, մետաքս, օղի, ինչպէս նաեւ բանջարեղէն։

Բ.— Խաւրա՝ Բիւոսի արեւելեան կողմը փոքր կղզի։

Գ.— Նիֆարիա՝ (15,000 բն.) Բիւոսի հարաւային կողմը։

Դ.— Պասմոս (12,000) երբեմն նշանաւոր ու հարուստ կղզի։ Այս կղզիին քարայրներէն մէկուն մէջ է որ Յովհաննէս Աւետարանիչ գրած է Յայտնութեան գիրքը։

Ե — Քալիմնոս՝ բարեբեր կղզի, ունի ապունդի կարեւոր վաճառականութիւն։

Զ.— Քոս (Խսթաճիհոյ) (20,000 բն.) գեղեցիկ ծովածոցի մը բերանը, ունի բարեբեր և մշակուած դաշտեր. կ'արտադրէ մեծ քանակութեամբ խաղող, որուն ամենամեծ մասը Աղեքսանդրիա կը ղրկուի։

3. Միտիլլիի գաւառը կը պարունակէ հետեւեալ կղզիները.

Ա.— Միտիլլի (110,000; Արշիպեղագոսի ամէնէն գեղեցիկ ու կարեւոր կղզիներէն մին. ունի բարեբեր հովիտներ, որոնք կ'արտադրեն ցորեն, գարի ձիթապտուղ, խաղող, թուզ, խոզկաղին, նարինջ, լեմոն եւայլն։

Գլխաւոր քաղաքն է Միտիլլի (15,000)՝ կարեւոր նաւահանգիստ արեւելեան ծովեզրին վրայ. նշանաւոր է ձեռնարկական հին դպրոցը։ Ջէթի և օճառի մեծ արտածութիւն ունի։

Մոլիվօ (3000) կղզիին հիւսիսային կողմը գեղեցիկ նաւահայք, ունի նոյնպէս ձէթի մեծ արտադրութիւն։

4. Լեսբոսի գաւառը կը պարունակէ հետեւեալ կղզիները.

Ա.— Լեսբոս՝ (25,000) լեռնային այլ բաբեր կղզի Տարտանելի դիմացը, կ'արտածէ գարի, կնճիթ և բուրդ։

Բ.— Խմպրոս (10,000) լեռնային կղզի։ կ'արտադրէ ցորեն, գարի, ձիթապտուղ, կնճիթ, բուրդ, ածուխ եւայլն։

Գ.— Թենեդոս (5000) Տրովադային եզերքը չատ բարեբեր կղզի. ունի ընտիր գինի։



Պատկ. 63. — ՔՈՆԻԱՑԻ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ ՕՍՄԱՆԱՆ ԱՇԵԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. — ՊԱՏ ՇԷՀԻՐԻ պարաժին ԸՆԴԱ. ՏԵՍԱՐԱՆԸ

6. ԳՈՆԻԱՑԻ ՆԱՀԱՆԳ

Գոնիայի նահանգը կը տարածուի Խիւսաւվէնտիկեար և Այտըն կուսակալութեանց սահմանային կողմը և կը պարունակէ Պամֆիլիա, Պիսիդիա և Լիկաոնիա պատմական բաժանումները։

Կլիման ցուրտ է հիւսիսային կողմերը, իսկ դէպի հարաւ ընդհանրապէս բարեխառն։

Հողը թէեւ բարեբեր՝ բայց պէտք եղածին պէս մշակուած չէ։ Գլխաւոր երկրագործական արտադրութիւններն են արմաւիք, եգիպտացո-

բեն, վուշ, բամպակ, ծխախոտ, աֆիոն, ձիթենի, թթենի, որթատունկ և ուրիշ պտղատու ծառեր։

Արծաթախառն և ոսկեխառն կապարի հանքեր կը շահագործուին Պուլկար-Տաղի մէջ։ Մեծ քանակութեամբ աղ կը հանուի Քօչ Հիսարի աղոտ լիճէն։

Պուրսուրի և Ատալիայի գաւառները կը պարունակեն ընդարձակ ու գեղեցիկ անտառներ։

Ընտանի անասուններուն մէջ կը գտնուին Ուզա և ուրիշ ամէն տեսակ արջառներ, մասնաւորապէս «Գարաման» կոչուած ոչխարը։

Ջեռագործներուն մէջ կրնան յիշուիլ գորգերն ու փսխաթները։

Վաճառականութիւնը՝ Անատոլուի երկաթուղիին մինչեւ Քոնիա երկարելուն չնորհիւ՝ սկսած է հետզհետէ ընդարձակուիլ։ Գլխաւոր արտածութիւնները են երկրագործական բերքեր, մասուտակ, խոզկաղին, ատաղձ, բուրդ, մորթ, գորգ, եւայլն։

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Գոնիաի կուսակալութիւնը կը պարունակէ հինգ գաւառներ.

1. Գոնիա, 2. Նիյտ, 3. Համիտ կամ Սպարթա, 4. Պուրսուր, 5. Թէֆէ կամ Ատալիա։

Գլխաւոր քաղաքներն են՝

Գոնիա (50,000) բարեբեր դաշտի մը մէջ գեղեցիկ և վաճառաշահ քաղաք, և հին մայրաքաղաք Սելճուգեանց։ Կ'արտածէ ցորեն, գարի, բուրդ, խաչխաչ, աֆիոն, ճէրմի, տոբոն, կտաւատ, չամիչ, կնճիթ, այծու մորթ, թիֆթիկ և գորգեր։

Գարաման (5000) վաճառաշահ քաղաք, ունի բամպակեղէն գործուածներ։

Աֆեհիր (10,000) երկրագործական քաղաք։

Նիյտե (17,000) Ալա Տաղ լերան ստորոտը, վաճառաշահ քաղաք։

Սպարթա (25,000) էյերլեր լիճին հարաւարեւմտեան կողմը բարեբեր երկրի մը մէջ վաճառաշահ և գեղեցիկ քաղաք։ Ունի Ալաճայի գործարաններ։

Պուրսուր (10,000) ընդարձակ այգիներէ շրջապատուած բլուրի մը վրայ գեղեցիկ քաղաք։ Ունի Ալաճայի գործարաններ, խաղախոտդարաններ ու աղօրիքներ։

Ատալիա (20,000) համանուն ծոցին վրայ վաճառաշահ բայց աւազալից նաւահանգիստ։ Մօտերը կան Քրոմի հանքեր։

---

7. ԱՏԱՆԱՑԻ ՆԱՀԱՆԳ

Ատանայի նահանգը կը տարածուի Անատօլուի Թերակղզիին հարաւային կողմը՝ Միջերկրական ծովուն վրայ, Գոնիա կուսակալութեան արեւմտեան կողմը։

Կլիման ընդհանրապէս բարեխառն է մասնաւոր հիւսիսային կողմը։ Իսկ Միջերկրականի ծովեզերքը բաւական տաք կ'ըլլայ, և տեղ տեղ ալ վատառողջ լճակներով շրջապատուած է։

Նահանգին հարաւային և արեւելեան մասերը՝ մանաւորապէս Սիհունի և Ճիհունի հովիտները՝ շատ բարեբեր են, և կը հասցնեն արմաւիք, բրինձ, եգիպտացորեն, բամպակ, աֆիոն, կնճիթ, որթատունկ, նարինջ, լեմոն, եղջերենի, շաքարեղէգ, իւղալից հունտեր, բանջարական մշակութիւններ (սեխ, ձմերուկ) և այլն։

Վաճառականութիւնը բանուկ է։ Կանոնաւոր և խնամուած ճամբաներ թէեւ սակաւաթիւ են, բայց Ատանա երկաթուղիով կապուած է իր նաւահանգիստին Մերսինի հետ, ուր կեդրոնացած է նահանգին գրեթէ ամբողջ արտահանութեան վաճառականութիւնը։

Արտածութեան գլխաւոր առարկաներն են արմաւիք, բամպակ, իւղալից հունտեր, արջառ, բուրդ, մորթ և այլն։ Ներածութիւններն են պատրաստուած առարկաներ, մանրուքներ և գաղթաբերք։

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Ատանայի կուսակալութիւնը կը պարունակէ 4 գաւառներ։

1. Ատանա, 2. Իչիլ, 3. Գոզան, 4. Ճէպելի Պէրէքէթ։

Գլխաւոր քաղաքներն են։

Ատանա (50,000 բն.) Սիհուն գետին վրայ՝ բարեբեր դաշտի մը մէջ կուսակալանիստ քաղաք։ Գլխաւոր բերքերն են ցորեն, բամպակ, բուրդ, արջառ, մորթ, եւայլն։

Թարսուս (18,000) Քարտաւի վրայ՝ Փոքր-Ասիոյ հնագոյն քաղաքներէն մին։

Մերսին (10,000) համանուն խորշին վրայ վաճառաշահ և բանուկ նաւահանգիստ։

Այաս՝ Ալեքսանդրիոյ ծոցին արեւմտեան կողմը փոքր նաւահանգիստ, որ Խաչակրութեանց ժամանակ մեծ կարեւորութիւն ունէր։

Սիս (4000) ամառ համանուն Կաթողիկոսութեան։ Ունի վանք հարուստ թանգարանով։ Շրջակաները կը գտնուին Անարզաբայի աւերակները։

Հաճըն (12,000) ունի երկաթի հարուստ հանքեր։

Բայաս (6000) Իսկէնտէրունի ծոցին արեւելեան կողմը՝ փոքր նաւահանգիստ մըն է Այասի դիմացը։

---

8. ԷՆԿԻՒՐԻԻ ՆԱՀԱՆԳ

Էնկիւրիւի Նահանգը որ կը պարունակէ հին Գալատիան ու Կապադովկիոյ մէկ մասը, կը տարածուի Անատոլուի Թերակղզիին ճիշդ մէջտեղը՝ Գոնիա և Ատանա կուսակալութեանց հիւսիսային կողմը։

Կլիման ընդհանրապէս բարեխառն է։ Հողը բարեբեր է և կը հասցնէ արմաւիք, եգիպտացորեն, մանգական ընդեղէններ, աֆիոն, դժնիկի հատիկ, կանեփ, կնճիթ, պտղատու ծառեր, որթատունկ եւայլն։

Պահարաբուծութիւնը չատ կարեւոր տեղ մը կը գրաւէ։ Անուանի են մանաւանդ Էնկիւրիւի գանգրամազ այծերը։

Հողը կը պարունակէ պղնձի և արծաթախառն կապարի հանքեր (Տէնէք Մաատէն), որոնք այսօր երեսի վրայ թողուած են։ Աւատ են նաեւ հանքային ջուրերը։

Աղուճակի հանքերը, աղոտ լիճերն ու աղի աւազանները բաւական բանուկ չահագործութեան առարկայ եղած են։

Էնկիւրիւի նահանգին ձեռագործական արտադրութեանց մէջ նշանաւոր են Քիլիմ և Ճիճիմ կոչուած գորգերը (Քըրչէհիր և Մուճուր), թիֆթիկ սօֆաները, չալերը, ապահները։

Նահանգին գլխաւոր արտածութիւններն են թիֆթիկ, բուրդ, աֆիոն, ցորեն, գարի, մեղր և դեղին մեղրամոմ, մորթ, ոչխար, ապուխտ, և մրգեղէն (տանձ, խնձոր եւայլն)։

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Էնկիւրիւի կուսակալութիւնը կը պարունակէ 5 գաւառներ. 1. Էնկիւրիւ, 2. Քըրշեհիր, 3. Եօզղաս, 4. Կեսարիա, 5 Չօրում։

Գլխաւոր քաղաքներն են.

Էնկիւրիւ (40,000) Սագարիա գետին էնկիւրիւ. Սու կոչուած ճիւղին վրայ հին և նշանաւոր քաղաք է և Անատոլուի ճարտարագործական ու առեւտրական կարեւոր կեդրոններէն մին։ Ունի գեղեցիկ պարտէզներ ու այգիներ, արտեր ու անդաստաններ. ինչպէս նաեւ երկրագործական տիպար-ագարակ մը։

Էնկիւրիւի մէջ կան բազմաթիւ հին յիշատակարաններ և աւերակներ, որոնց մէջ նշանաւոր է Օգոստոսի տաճարը ուրկէ գտնուեցաւ նոյն կայսեր կտակին օրինակը։

Այաճ Էնկիւրիւի մօտ երկրագործական կեդրոն։ Ունի այծ ու ոչխար։

Պէյպազար վաճառաշահ քաղաք. համբաւաւոր է Թիֆթիկը։ Կ'արտածէ նաեւ տանձ, խաղող, սեխ։

Նալլուխան՝ չերամաբուծական կեդրոն։ Գլխաւոր բերքն է խաչխաչ։

Սիվրի Հիսար վաճառաշահ քաղաք է։

Եօզղաս (15,000) Եւրոպական տեսքով գեղեցիկ քաղաք է և միանգամայն բանակատեղի։ Բերքերն են արմաւիք, թիֆթիկ և մրգեղէն։

Չօրում (15,000) վաճառաշահ քաղաք։

Քըր Շեհիր Գըզըլ Ըրմաք գետին մօտ. ունի արջառ։ Անուանի են գորգերը։

Տեճեհ-Մաեճե՝ ունի արծաթախառն կապարի հանք։

Կեսարիա (7000) Արգէոս կամ Էրճիաս լեռան ստորոտը փառաւոր քաղաք, և նախկին մայրաքաղաք Կապադովկիոյ։ Երեւելի է Հայոց Ս. Կարապետի վանքը։

Կեսարիա Փոքր-Ասիոյ վաճառականութեան կեդրոններէն մին կը համարուի։ Անուանի են գորգերը։

Թալաս (3500) Էվէրեկ-Ֆեճեսե (4000) նոյնպէս վաճառաշահ քաղաքներ են։

---

9. ԳԱՍԹԼՄՈՒՆԻ ՆԱՀԱՆԳ

Գասթեմունի նահանգը կը տարածուի Սեւ ծովու եզերքը՝ Էնկլիբրիւ կուսակալութեան հիւսիսային կողմը եւ կը պարունակէ հին Պափլագոնիան, ու Բիւթանիոյ մէկ մասը։

Կլիման ընդհանրապէս բարեխառն է ամառը, իսկ ձմեռը չատ խիստ ու ցուրտ։

Հողը բարեբեր է եւ լաւ մշակուած։ Կ'արտադրէ բանջարեղէնի մշակութիւններ, արմաւիք, եգիպտացորեն, կտաւատ, ընդեղէններ (լուբիա, ոսպ, եւն.), բրինձ, աֆիոն բամպակ, ծխախոտ, գազի խէժ (*fiyrk*), գինուոր, թմբեկ, մրգեղէն։

Կենդանիներուն մէջ կան եզ, ոչխար եւ այծ՝ Էնկլիբրիւի համբաւաւոր տեսակէն՝ որոնք ամէնէն աւելի կը գտնուին Գասթէմունիի, Քեանղըրիի, Սաֆրանպոլուի եւ Քոչհիսարի մէջ։

Հողը կը պարունակէ չատ տեսակ հանքեր, ինչպէս մանկանէզ, երկաթ, նիքել եւ արծաթախառն կապար որոնք սակայն չեն չահագործուիր։ Նահանգին արեւմտեան մասին մէջ մանաւանդ Պոլու կան բազմաթիւ հանքային ջուրեր։

Նահանգին մեծագոյն հարստութիւնը կը կազմեն ընդարձակ ու սքանչելի անտառներ, որոնք կուսակալութեան $^1/_3$ մասը կը ծածկեն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Գասթէմունի կուսակալութիւնը կը պարունակէ 4 գաւառներ.

1 Գասթեմունի, 2, Պոլու, 3. Քեանղըրի, 4. Սինոպ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Գասթեմունի կամ Գասթամպոլ (23,000) կէօք Ըրմագ գետակին վրայ վաճառաշատ քաղաք եւ ճարտարագործական կեդրոն։

Ինեպոլու (10,000) Սեւ ծովու վրայ բանուկ նաւահանգիստ է։

Սաֆրանպոլու (8000) վաճառաշատ քաղաք։ Ունի բանուկ վաճառականութիւն կաշիի, բուրդի, թիֆթիկի, խոզակի, սալէպի ու քրքումի (*safran*)։

Պոլու (12000) վաճառաշատ քաղաք պղտզաբեր դաշտի մը մէջ։ Ունի քրքումի առուտուր։

Էրեյլի՝ նաւահանգիստ Սեւ ծովու վրայ։ ունի հանքածուխ։

Պարթըն (8000) նոյնպէս Սեւ ծովու վրայ երկրորդական նաւահանգիստ։

Կերեսի (4000) վաճառաշատ քաղաք՝ գեղեցիկ մրգաստաններու մէջտեղ. ունի թիֆթիկի վաճառականութիւն։

Քեանղըրը (1800) վաճառաշատ քաղաք։ Ունի երկրագործական բերքեր եւ այծու մազ։

Քօչհիսար (2500) եւ Գարաճա-վիրան (2500) այծու մազի վաճառականութիւն ունին։

Սինոպ 1000) Սեւ ծովու վրայ ամուր քաղաք եւ ապահով ու վաճառաշատ նաւահանգիստ։

---

10. ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳ

Տրապիզոնի նահանգը կը տարածուի նոյնպէս Սեւ ծովու եզերքը՝ Գասթէմունի կուսակալութեան արեւմտեան կողմը և կը պարունակէ Պոնտոսը։

Կլիման բարեխառն է և առողջ՝ ներքին մասերուն մէջ մանաւանդ։ Նահանգին արեւելեան մասին մէջ ձմեռը նուազ աստիճ է՝ արեւմտեան մասին հետ բաղդատմամբ։ Բիւրպէրի, Քօլամ և Պալբար լեռներուն վրայ մարգաւէտ արօտատեղիներ գտնուելուն՝ ընդհանրապէս անձրեւը աւատ է այն տեղութիւնքը։

Երկրին հողը բարեբեր է։ Գլխաւոր բերքերն են արմաւիք, եգիպտացորեն, վուշ, կանեփ, ծխախոտ և ընդեղէն (մանաւորապէս լուբիա)։ Նահանգին արեւելեան կողմերը և Սեւ ծովու եզերքը կան բազմաթիւ կաղնիի ծառաստաններ ու ձիմենիի անտառներ։ Բիզէի մէջ ու շրջակաները յաղուզապէս կ'աճին լեմոնի ու նարինջենին։

Կուսակալութեան արեւմտեան մասին մէջ կը գտնուին խազողի այգիներ և ամէն տեսակ պտղատու ծառերու գեղեցիկ պարտէզներ։

Նահանգին գրեթէ $^1/_5$ մասը ծածկուած է բարձրարերձ անտառներով, որոնց մէջ կը գտնուին չոճի, եղեւնի, կաղնի, չագանակենի, հացի, լաստենի եւայլն։

Վաճառականութիւնը բանուկ է։

Նահանգին գլխաւոր արտադրութիւններն են արմաւիք, եգիպտացորեն, կտաւատ, ծխախոտ, լուբիա, կաղին, ընկոյզ, մեղրամոմ, ոսկոլոր, չինութեան փայտ, արմատ, կարագ, մորթ, բուրդ եւայլն։

Ներածութիւնները են տարազագործուած արտադրութիւններ, մետաղներ, ապակեղէն, քարիւղ եւայլն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Տրապիզոնի կուսակալութիւնը կը բաժնուի 4 գաւառներու։

1. Տրապիզոն, 2. Ճանիկ (Սամսոն), 3. Րիզէ (Լազիսթան), 4. Կիւմիւշխանէ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Տրապիզոն (55,000) Սեւ ծովու վրայ Օսմանեան պետութեան կարեւորագոյն նաւահանգիստներէն մին, որ Պարսկաստանի Արեւմուտքի հետ վաճառականութեանն ալ իր դուռը կը ծառայէ։

Կիրասոն (10,000) նոյնպէս նաւահանգիստ Սեւ ծովուն վրայ։

Օրտու (6000), փոքր նաւահանգիստ։

Սամսոն (25,000) բանուկ նաւահանգիստ՝ մանաւանդ Սրվազի կուսակալութեան։

Պաֆրա (9000) վաճառաշատ քաղաք Ըրզըլ-Ըրմաքի վրայ։ Կ'արտածէ ընտիր ծխախոտ որ մեծ համբաւ ունի, և սեւ խաւեար։

Րիզէ, փոքր այլ գեղեցիկ նաւահանգիստ։

Կիւմիւշխանէ (3500) մօտերը կան արծաթի հանքեր։

---

11. ՍՐՎԱԶԻ ՆԱՀԱՆԳ

Սրվազի նահանգը կը տարածուի Տրապիզոնի կուսակալութեան հարաւային կողմը, Գասթէմունիի, Էնկլիբրիւի, Աւանայի, Հալէպի, Խարբերդի և Էրզրումի նահանգներուն մէջտեղ։

Երկիրը ընդհանրապէս լեռնային է։ Հիւսիսային և արեւելեան լեռնագաշտերուն վրայ ձմեռը երկար և խիստ կ'ըլլայ, իսկ ամառը կարճ, բարեխառն եւ չոր։ Հարաւային և արեւմտեան մասերուն մէջ ձմեռը բարեխառն է եւ ամառը չատ տաք։

Անտառոլուի այս մասին լեռները ընդհանրապէս պարարտ արօտատեղիներով ծածկուած են, իսկ դաշտագետինները ընդունակ են մեծ նաւադարմիքի մշակութեան։

Երկրագործական արտադրութիւններն են ցորեն, գարի, եգիպտացորեն, կտաւատ, ընդեղէններ, ծխախոտ, դեհնախնձոր, կանեփ, դժնիկի հատիկ, գազի խէժ, աֆիոն, մրգեղէններ։

Հողը կը պարունակէ արծաթախառն կապարի հանքեր (Շապին Գարահիսար) ինչպէս նաեւ մարմարի եւ Ալապաստրի հանքեր։ Սրվազի նահանգին մէջ կան նաեւ պղինձ, երկաթ եւ հանքածուխ։

Ձարտարական արտադրութեանց մէջ նշանաւոր են գորգերն ու գուլպաները (Սրվազ եւ Զարա), բրդեղէնները (Կիւրին), դանակեղէնները (Սրվազ), և բամպակեղէնները (Շապին Գարահիսար, Ամասիա եւ Մարսուան)։

Թօքադ ունի պղինձի ձուլարան մը ու բազմաթիւ խազախորդարաններ։

Նահանգին գլխաւոր արտածութիւններն են՝ երկրագործական բերքեր, արմատ, գորգ, մեղր և մեղրամոմ, անզուտ մետաղներ, եւն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Սրվազի կուսակալութիւնը կը բաժնուի 4 գաւառներու Սրվազ, Շապին Գարա-հիսար, Թօքադ, Ամասիա։

Գլխաւոր քաղաքներն են

Սրվազ կամ Սեբաստիա (45000 բն.) Ըրզըլ-Ըրմաքի մօտ մեծ դաշտի մը մէջ գեղեցիկ քաղաք, և ճարտարագործական ու առեւտրական կարեւոր կեդրոն, ու Սեւ ծովու, Միջագետքի և Միջերկրականի միջեւ երթեւեկող կարաւաններուն կեդրոնատեղին։ Ունի կարեւոր ազատհանքեր։

Տիվրիկ (3000) կուսակալութեան արեւելեան կողմը ընդարձակ դաշտի մը մէջ գեղեցիկ և վաճառաշատ քաղաք։

Կիւրին (1500) Թօքատ-ոսւ գետակին վրայ ճարտարարուեստ, այլ վատառողջ քաղաք։ Համբաւաւոր են չալերը։

Շապին Գարահիսար (15000) Իրմակ մէկ փոքր ճիւղին վրայ. մօտերը կան արծաթախառն կապարի ու պղինձի հանքեր։

Թօքադ կամ Եւդոկիա (26000) Իրմակ մէկ գետակցին վրայ ճարտարարուեստ ու գեղեցիկ քաղաք։ Գլխաւոր արտադրութիւնն է ծխախոտ։ Ունի պղինձի ձուլարան ուր կը զտուին Խարբերդի հանքերը։

Ամասիա (30000) Իրմակ վրայ ճարտարարուեստական չատ հին քաղաք։ Հայերնիք Սմբատին։ Ունի մետաքսեղէնի և գորգի գործարաններ ու գեղեցիկ ջազացքներ։ Կ'արտածէ գլխաւորաբար ցորեն, պամբ, խոզակ, այծի մորթ, խնձոր, սալոր և ուրիշ մրգեղէններ, եւայլն։

Մարսուան (18000) Ամասիայէ հիւսիսային կողմը՝ բարերար դաշտի մը մէջ։ Ունի երկրագործական բերքեր։

Լաֆիֆ անուանի է իր գորգերով։

12. ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ

Էրզրումի նահանգը կը տարածուի Ասիական Թուրքիոյ հիւսիսային-արեւելեան ծայրը, իրեն սահման ունենալով արեւելքէն Կովկասիան և հիւսիսէն Տրապիզոնի կուսակալութիւնը։

Կլիման՝ ամառը տաք է, բայց կարճատեւ, իսկ ձմեռը չատ խիստ, ցուրտ ու երկարատեւ։

Երկրագործական արտադրութիւններն են գլխաւորաբար արմաւիք, պաղտատ ծառեր, թթենի, սեխ և ձմերուկ։

Սարերի գաւառին մէջ կը չահագործուին արծաթի հանքեր, Ճորոխի և Մուրատ Սուի հովիտները ունին բազմաթիւ հանքային ջուրեր, որոնց մէջ ամենէն կարեւորներն են Պայպուրթի և Պայազիտի չրջակաները գանուածները։

Երկրին գլխաւոր արտածութիւններն են արմաւիք, մորթ, անզուա ու բանուած մետաղներ։

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԱԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Էրզրումի կուսակալութիւնը կը պարունակէ 3 գաւառ։

1. Էրզրում, 2. Էրզինկեան, 3. Պայազիտ։

Կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են.

Էրզրում (40000), ծովէն մակերեւոյթէն 5900 ոտք բարձրութեամբ մեծ ու վաճառաշահ բերդաքաղաք և կեդրոնատեղի Տրապիզոնի, Պայբուրթի, Սրվազի, Տիարպէքիրի, Պաղտատի, Դաւրէժի և Թիֆլիսի վաճառականութեան։

Շրջակաները կը գանուին բազմաթիւ չերմուկներ, ինչպէս Ըլըճէ, Առծաքի և Աղտաբերդ։

Գլխաւոր ձեռարուեստներն են գորգ, մանուածայ, հատիկ զէնքեր որ չատ յարգի են։

Էրզրում կ'արտածէ գլխաւորաբար բուրդ, կտաւատ, իւղալից հունտեր, այծու մազ, մորթ, դեղին մեղրամոմ, խէժ, ընտիր ձիեր, եղ. ոչխար, գորգեր եւայլն։

Թօրթում համբաւաւոր բերդաքաղաք Միջին Դարու մէջ (Թօրթում Քալէսի)։

Հասան-Գալէ՝ երեսխի մէկ ճիւղին վրայ Բասէն գաւառին մէջ։

Պայպուրթ (3000) Ճորոխի վրայ ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք։ Ունի արծաթի հանք։

Էրզինկեան (20,000) ճարտարարուեստ քաղաք գեղեցիկ դաշտավայրի մը մէջ, զոր կ'ոռոգէ Գարասու կամ Արեւմտեան Եփրատ։ Սահմանուած են հայազգարանները ու կամուտյատ գործարանները։

Պայազիտ (3000) Ռուսիոյ սահմանին վրայ կիսաւեր քաղաք։ Հիւսիսային կողմը կը գրաւէ Սուլթան Պայազիտի օրով Արարատ լիանան դիմացը ժայռի մը քով կառուցուած ամրոց մը։

13. ՎԱՆԱՁ ՆԱՀԱՆԳ

Վանայ նահանգը կը տարածուի Պարսկաստանի արեւմտեան կողմը՝ հիւսիսէն Էրզրումի և հարաւէն Մուսուլի կուսակալութեանց մէջտեղ։

Կլիման ընդհանրապէս առողջ է. հիւսիսային կողմերը ցուրտ և խիստ, հարաւային մասերու մէջ բարեխառն և տեղ տեղ ալ տաք։

Հողը չատ բարեբեր է և առատօրէն կ'արտադրէ ցորեն, գարի, եգիպտացորեն, կորեկ, ընդեղէն, խաղող և ուրիշ մրգեղէններ, ծխախոտ, եւայլն։

Արօտատեղիները կը մնուցանեն բազմաթիւ արջառներ, մանաւանդ ընտիր ձիեր։

Ձեռագործներու մէջ անուանի են բրդեղէն գործածածները։

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Վանայ կուսակալութիւնը կը բաժնուի 2 գաւառներու.

Վան և Հէֆֆեարի։

Կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են՝

Վան (35,000) համանուն լճին արեւելեան կողմը կուսակալանիստ քաղաք։ Ունի գեղեցիկ այգեստաններ, բրդեղէն գործածածներ։ Նշանաւոր են հին բերդերն ու քարաժայռերը։ Վանայ մօտն է Վարագայ լեռը որուն վրայ կան 12 եկեղեցիներ և Ս. Նշանի համբաւաւոր վանքը։

Վան ընդարձակ վաճառականութիւն ունի չրջակայ գաւառներու հետ։

Վանայ ծովու բոլորտիքը կը գտնուին բազմաթիւ գիւղեր ու աւաններ, որոնց մէջ կաթնեւոր են. Արտամետ, Ոստան՝ ուր է Նարեկայ վանքը։

Ձուլամերկ (4500) լեռնային գիրքի մը մէջ՝ գեղեցիկ քաղաք։

Ամասիէ՝ (4000) Տիգրիսի վրայ, ունի նախնի գարեբէ մնացած աւերակներ։

Պարսկաստանի սահմանագլխին մօտ՝ Աղբակ գաւառին մէջ կը գտնուին խօշապ՝ որ ունի հին ու չքեղ ամրոցներ, և Պաւբայէ որուն մօտ կը գտնուի Ս. Բարթուղիմէոսի հռչակաւոր վանքը։

Վանայ ծովուն մէջ կը գտնուի Աղթամար կղզին՝ աթոռ համանուն կաթողիկոսութեան։

14. ՊԻԹԼԻՍ

Պիթլիսի նահանգը կը տարածուի Էրզրումի, Վանայ և Տիարպէքիրի կուսակալութեանց մէջտեղ։

Պատկ. 64. — ՊԻԹԼԻՍ

Ունի առողջ բայց ցուրտ կլիմայ, երկաթուտ ու սաստիկ ձմեռներով։

Երկրագործական բերքերն են գլխաւորաբար ցորեն, հաճար, գարի, կորեկ, ծխախոտ, խաղող, քիմիրէ, դիմոտր ու մրգեղէն։

Հանքային ջուրերը չատ բազմաթիւ են։

Սղերդի չրջակաները կան հարուստ աղահանքեր։

Ջեռագործական արտադրութիւններն են բամպակեղէն և բրդեղէն, երեսնագործական առարկաներ, խեցեղէններ։

ՎԱՐՉԱԿԱՆ ՐԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Պիթլիսի կուսակալութիւնը կը պարունակէ չորս գաւառներ.*

Պիթլիս, Սղերդ, Մուշ, Կիցն։

Գլխաւոր քաղաքներն են.

Պիթլիս (40,000) *Վանայ ծովուն արեւմտեան կողմը կուսակալանիստ քաղաք, և առեւտրական կեդրոն։ Ունի գեղեցիկ դիրք, զուարճալի պարտէզներ, հանքային ջուրեր, և բամպակեղէն ու բրդեղէն ձեռագործներ։*

Սղերդ (15,000) *Տիգրիսի արեւելեան ճիւղին վրայ բարձրադիր ու բարեբեր դաշտի մը մէջ, ճարտարարուեստ քաղաք։ Համբաւաւոր են զէնքերն ու եւրոպագործական առարկաները։*

Մուշ (25,600) *Եփրատի արեւելեան հովտին մէջ լեռնաշղթայի մը ստորոտը խիտ զուարճալի ու բարեբեր քաղաք մըն է պարտէզներով չրջապատուած։ Երկրագործական կարեւոր կեդրոն. ունի հին բերդեր և աւերակներ։*

Մուշի չրջակաները կան 100ի չափ գիւղեր, իսկ 8 ժամ հեռաւորութեամբ դէպի արեւմտեան-հիւսիս կը գտնուի Ս. Կարապետի համբաւաւոր վանքը (Նախկին Գլակայ վանք), զոր հաստատեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Այս վանքին մօտն է Աչտիչատ գիւղը ուր կայ Ս. Մեսրոպի գերեզմանը։

Պիթլիսի նահանգին արեւմտեան-հարաւային կողմը կը գտնուի Սասուն գաւառը լեռնային։

---

15. ՏԻԱՐՊԷՔԻՐ

Տիարպեքիրի կուսակալութիւնը կը տարածուի Պիթլիսի և Վանայ կուսակալութեանց արեւմտեան կողմը։

Կլիման ընդհանրապէս առողջ է։ Հիւսիսային կողմերը ձմեռը ցուրտ և ամառը սաք կ'ըլլայ։

Հողը չատ բարեբեր է։

Արմաւը կը մշակուի ներքին սպառման բաւելու չափ։ Բայց խաղողն և ուրիշ պտուղներ, ծխախոտ, կտնեփ, խոզակ, բամպակ, դեղտոր, քիմիք և թիթիմիկ՝ տեղի կուտան բաւական մեծ արտածութեան մը։

Տիգրիսի ափունքին սեխն ու ձմերուկը չատ համով և խոչոր կ'ըլլան։ Ծէղերէկ ու Նիսպինի մեղուները կուտան պատուական մեղր ու մոմ։

Ընտանի կենդանիներուն մէջ որ չատ բազմաթիւ են, համբաւաւոր են ձիերը և եզերը։

Ջեռարուեստը՝ որուն երկու գլխաւոր կեդրոններն են Տիարպէքիր և Մարտին, բաւական զարգացած է։

ՎԱՐՉԱԿԱՆ ՐԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Տիարպէքիրի կուսակալութիւնը կը բաժնուի 3 գաւառներու։*

1. Տիարպեքիր, 2. Աւղանա, 3. Մարտին։

Գլխաւոր քաղաքներն են՝

Տիարպեքիր (38,000) *Տիգրիսի արեւմտեան ճիւղին վրայ պատմական, հին և փառաւոր քաղաք։ Նշանաւոր է նաեւ իր կաչիներով, գորգերով, մետաքսեղէններով, բուրդէ և բամպակէ գործուածներով, պղնձէ անօթեղէններով և խեցեղէններով։*

Շերամաբուծութիւնը՝ վերջերս մանաւանդ՝ մեծ մղում ստացած է քաղաքին մէջ։

Վաճառաչահ քաղաքներ են նաեւ՝

Սեվերեկ (10000),

Աւղանա (7000) *բարեբեր հովտի մը մէջ։ Ունի պղնձի հանք։*

Բալու (7000) *Եփրատի վրայ հին քաղաք։*

Մարտին (25000) *երկրագործական կեդրոն ու ճարտարարուեստ քաղաք։*

Նիսիպին և Ձեզիրէ, *որոնք ունին պատուական մեղր ու մոմ։*

---

16. ՄԱՄՈՒՐԷԹ-ԻԼ-ԱԶԻԶ

Խարբերդի կամ Մամուրէթ-իւլ-Ազիզի նահանգը կը տարածուի Սըվազ, Էրզրում, Տիարպէքիր և Հալէպ կուսակալութեանց մէջտեղ։

Կլիման չատ առողջ է բայց ընդհանրապէս ցուրտ։ Երկրագործական կարեւորագոյն արտադրութիւններն են արմաւը (ցորեն, գարի), եղիպտացորեն, բրինձ, աֆիոն, ծխախոտ, բամպակ, ընդեղէններ, մրգեղէն, մետաքս, բուրդ, գինի և մեղր։

Ջեռագործական արտադրութիւններն են գորգեր, մետաքէ և բամպակէ գործուածներ, և մանուածայ, որուն կարեւոր կեդրոններն են Խարբերդ, Արաբկիր, Էլիհն և Մեզրէ։

Վաճառականութիւնը պէտք եղածին չափ չէ ընդարձակուած։

ՎԱՐՉԱԿԱՆ ՐԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Մամուրէթ-իւլ-Ազիզ կուսակալութիւնը կը պարունակէ հետեւեալ 3 գաւառները.*

1. Խարբերդ, 2. Մալաթիա, 3. Տերսիմ.

Գլխաւոր քաղաքներն են՝

Խարբերդ (25000) *վաճառաչահ քաղաք փոքր բլուրի մը վրայ։*

Մեզրէ կամ Եգնի Խարբուր (5000) *նախորդէն 6 քիլօմէթր դէպի հարաւ-արեւմուտք կուսակալանիստ քաղաք։*

Արաբկիր (20000) *Եփրատի մօտ՝ մշակուած դաշտերով չրջապատուած վաճառաչահ և ճարտարարուեստ քաղաք է։ Ունի բանուկ վաճառականութիւն մանուածայի և կէզիի։*

Էգին (18,000) *Եփրատի ալ եզերքին վրայ այգեստաններով ու գեղեցիկ պարտէզներով չրջապատուած ճարտարարուեստ քաղաք է։ Ունի նայի պէս մեծ առեւտուր Մանուածայի և եագմայի։*

Քեպան-Մաէճ (1.500) *ունի պղնձի և արծաթամատան կապարի հանք։*

Մալաթիա (30,000) *գեղեցկադիր ու զուարճալի հովտի մը մէջ՝ այգեստաններով ու պարտէզներով չրջապատուած վաճառաչահ քաղաք։ Ունի աֆիոն։*

Պհինեսի, *կուսակալութեան հարաւային կողմը վաճառաչահ քաղաք։*

Խոզաք, Զմբկածագ, Մծրկերտ, Ջարսանճագ և *ուրիշ մէկ քանի գիւղեր ու տաններ կը կազմեն Տէրսիմի գաւառը.*

---

17. ՀԱԼԷՊ

Հալէպի նահանգը կը տարածուի Սրմադի կուսակալութեան ու Քիւթահիասանի հարաւային կողմը։ Արեւմուտքէն կը սահմանէ Միջերկրական ծովը։

Երկրին հիւսիսային և արեւմտեան մասերը լեռնային են, իսկ հարաւային և արեւելեան կողմերը՝ դաշտային։ Կլիման առողջ է, բայց

արեւելեան-հարաւային մասին մէջ գտնուած դաշտագետիններն՝ ամառը չատ տաք կ'ըլլան։

Հողը չատ բարեբեր է և առատօրէն յարակ կը բերէ ընտիր արմաւ, իւղալից հնձան, ընդեղէն, մրգեղէն, թթենի, աֆիոն, ծխախոտ, ճատուտակ (որ Միացեալ-Նահանգները կը ղրկուին)։ Անմշակ մասերու մէջ առատօրէն կ'աճին բժշկական առնկեր, լեռնեբուն մեծ մասը ծածկուած է գեղեցիկ անտառներով։

Պտաբարուեստը՝ որուն մեծապէս նպաստած է գեղեցիկ ու պարարտ արօտատեղիներուն առատութիւնը՝ գիւղացիներու և վաճառականի ցեղերու գլխաւոր հարստութեան հիմը կը կազմէ։

Կարեւոր կեդրոններու մէջ կը գործուին մետաքսեղէններ, ու ոսկի և արծաթ թելերով ընդելուզուած կտաւներ, բրդեղէն ու բամպակեղէն հիւսուածներ, գորգեր, եւայլն։

Նահանգին գլխաւոր արտածութիւններն են արմաւ և ուրիշ երկրագործական բերքեր, բուրդ, մոմ, արջառ, խաղող, կինճիթ, կտնեփ, բամբակ, խոզակ եւայլն։

ՎԱՐՉԱԿԱՆ ՐԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Հալէպի նահանգը կը բաժնուի 3 գաւառներու, 1. Հալէպ, 2. Մարաշ 3. Ուրֆա։*

Կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են՝

Հալէպ (120,000) *հին քաղաք՝ նշանաւոր վաճառականութեամբն ու արհեստագործութեամբ։ Ջեռագործներուն մէջ անուանի են ոսկեմել ու արծաթամել դիպակներն, գամասկեան կտաւները, չղարչները, մուսլինները ունք մեծ չարգ ունին Եւրոպա։*

Անտիոք *կամ* Անթաքիա (25000) *կեդրոն Միջագետքի ու Ազեքսանդրիոյ վաճառականութեան։*

Ունի խոզակ որ կ'արտածուի Պէրութ և Մարսիլիա։ Մետաքսը կը ղրկուի Հալէպ, Սուէյտիէ և մօտակայ գիւղերն ուր ընտիր կտաւներ կը գործուին։

Սուէյտիէ Անտիոքի նաւահանգիստն է։

Քիլիս (2000) *Հալէպի հիւսիսային կողմը։*

Այնթապ (43000) *երկ բլուրներու վրայ կառուցուած գեղեցիկ քաղաք է, կը ներածէ*

մեծ քանակութեամբ մանած բամպակ՝ որով առատ կը գործեն։ Կ'արտահանէ ձէթ, ալաճա և մրգեղէն, մանաւանդ պիստակ։

Իսկենտէրուն համանուն ծոցին վրայ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ։

Մարաշ (8000) ձիհուն գետին մօտ՝ Ախըր Տաղ լերան ստորոտը վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք։

Զէյթուն (5000) Մարաշի հիւսիսային-արեւմտեան կողմը լեռնային գիւղաքաղաք. ունի երկաթի հանք։

Ալպիսթան (8000) ձիհուն գետին վրայ երկրագործական քաղաք։

Ուրֆա (10,000) Միջագետքի մէջ վաճառաշահ քաղաք, և կեդրոնական Մուսուլի կարաւաններուն։

Պիրէճիք (10,000) Եփրատի վրայ երկրագործական քաղաք.

Խառան Եփրատի մէկ ճիւղին վրայ՝ հայրենիք Աբրահամու։

---

18. ՊԷՐՈՒԹ

Պէրութի նահանգը կը տարածուի Միջերկրականի արեւելեան եզերքին վրայ հիւսիսէն հարաւ, ու կը բովանդակէ Լիբանանու առանձնաշնորհեալ գաւառը։

Այս երկիրներուն ծովեզերքի օդը՝ ամառը չատ տաք կ'ըլլայ. բայց ծովին վրայէն փչող հովերը մինչեւ մէկ աստիճան չերմութիւնը կը բարեխառնեն։

Ծովեզերքն մօտ մեծ առատութեամբ կ'աճին նարինջենին, լիմոնին ու ձիթենին, ինչպէս նաև չաքարեղէգ։ Հարաւային կողմերը արմաւենին ու միջին մասերու մէջ ալ թզենին, նշենին ու սրթատունկը առատ են. Լիբանան լեռներուն ստորոտը կը մշակուի թթենին որ չերամաբուծութեան յատկացուած է։

Առանցմէ զատ Պէրութի նահանգը կ'արտադրէ արմաւիք, իւղալից հունտեր, բրինձ, լեզակ, քրքում և ծխախոտ, որուն մասին համբաւաւոր է մանաւանդ Լաթաքիա։

Երկրին վաճառականութիւնը խիստ բանուկ է։ Արտածութեան կարեւոր նիւթեր են ծխախոտ, կնճիթ, բամպակ, մրգեղէն, սակամոնի, ներկի նիւթեր, խոզակ, մետաքսեղէն, ևայլն։

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ.— Պէրութի կուսակալութիւնը կը բաժնուի 5 գաւառներու.

Պէրութ, Լադաֆիա, Թրիփոլի, Աճեա, Նաբլուզ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Պէրութ (200,000) մեծ և գեղեցիկ քաղաք և խիստ բանուկ նաւահանգիստ, որ երկաթուղիով միացած է Դամասկոսի հետ։

Սայտա և Սուր, Միջերկրականի վրայ փոքր նաւահանգիստներ են։

Լաթաֆիա (10,000) կամ Լազգիյէ, հին Լաւոդիկէ. բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ։

Թրիբոլի (Թարապղուս հչ Շամ 25,000) նոյնպէս բանուկ նաւահանգիստ Միջերկրականի վրայ։

Աճեա (8000) Միջերկրականի վրայ անուշահոտ բերդաքաղաք։

Երեւելի են նաև Հայֆա՝ փոքրիկ նաւահանգիստ կարմելոս լեռան ստորոտը. Նազարէթ և Տիբերիա որոնք յաճախ յիշատակուած են Աւետարանին մէջ։

Նաբլուզ (10,000) Ծորդանան գետին մօտ՝ հարուստ հովտի մը մէջ. կ'արտադրէ օճառ։

Սամարիա վաղեմի մայրաքաղաք Իսրայէլի 10 ցեղերուն թագաւորութեան։ Հոս են Յովհաննէս Մկրտչի և Ելիսէ մարգարէին գերեզմանները։

Կեսարիա՝ նախկին մայրաքաղաք Պաղեստինէ, տաճարին կործանումէն յետոյ։ Ունի գեղեցիկ աւերակներ։

---

19. ԼԻԲԱՆԱՆ

1864ին Բարձրագոյն Դուռէն տրուած առանձին հրովարտակով այս գաւառը կը կառավարուի քրիստոնեայ կառավարիչով մը որ Սուլթանէն կ'անուանուի և ուղղակի կայսերական կառավարութենէն կախում ունի։ Այս կառավարիչը որ Միւշիրի աստիճան ունի, կը պաշտօնավարէ ցկեանս։

Մարօնիներ կը բնակին կեդրոնական հովիտներուն մէջ եւ Լիբանանու բարձրագոյն չղթաներուն վրայ, Պէրութէն մինչեւ Թրիփոլի։

Լիբանանու մէջ կան 150ի չափ վանքեր,

որոնց մէջ կը գտնուին 10,000էն աւելի Մարոնի կղերականներ։ Կիրճերուն մէջ և լեռնադաշտերուն վրայ՝ հարուստ բուսաբերութեան մը մէջ կը տեսնուին գեղեցիկ գիւղեր ուր բազմաթիւ մարդիկ կը բնակին։

Երկրագործական արտադրութիւններն են մետաքս, ձէթ, ծխախոտ, խաղող եւ ուրիշ պտուղներ։

Հանքային արտադրութիւններն են Ասֆալթ, փայտաքար, երկաթ, պղինձ ու կապար։

Թթենին, սրթատունկն ու թզենին կը մշակուին Լիբանանու ամէն մասերուն մէջ. Զիթենիի գլխաւոր պարտէզները կը վերաբերին Շուֆ եւ Քուրա գաւառակներուն։ Ծխախոտը կը մշակուի Ձէզինի, Քէօսրէվանի եւ Քուրայի մէջ։ Շատ յարգի է նաեւ Լիբանանու գինին։

Ներմաբուծութիւնը չատ ընդհանրացած է Լիբանանու մէջ, ուր կը հաշուուին 120 մանածարաններ։

Լիբանանու գլխաւոր աւաններն են Զահլէ եւ Տէյր-էլ-Քամէր որ արմաւիքի կարեւոր հրապարակներ են։

---

20. ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երուսաղէմի գաւառը (Սանճագ) կը տարածուի Պէրութի կուսակալութեան հարաւային կողմը, և կախում ունի ուղղակի Ներքին Գործոց նախարարութենէն։

Երկրագործական բերքերն են արմաւիք, չամիչ, և ուրիշ մրգեղէններ, մանաւանդ նարինջ որ մեծ համբաւ ունի։

Զիմանանութիւնը, օճառաշինութիւնը, ապակեգործութիւնն ու ատամփագործութիւնը բաւական կարեւոր տեղ մը կը գրաւեն։ Վաճառականութիւնը կ'ըլլայ Եաֆայի ճամբով, որ գաւառին միակ նաւահանգիստն է։

Գլխաւոր արտածութիւններն են ձէթ, կնճիթ, վուշ, թարմ պտուղներ, նարինջ, լիմոն և բարեպաշտական առարկաներ (խաչ, հաստիչ և ուրիշ աստաւիճ ու ձիթափայտէ զանազան առարկաներ)։

Երուսաղէմի գաւառը կը բաժնուի 4 գաւառակներու (գազա)։ Ունի իբր 250,000 բնակիչ։

Նշանաւոր վայրեր բազմաթիւ են գաւառ-



Պահ. 69. — ՏԵՍԻԼ ՄԸՍՐԻ ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԻՆ

ռին մէջ, մանաւանդ Քրիստոնէին համար։ Ցիշատակութեան արժանի են՝

Երուսաղէմ (35,000) Քրիստոնէութեան կարեւորագոյն ուխտատեղին։ Գալաքին բնական դիրքն անդրագոյր է և լեռնային։ Քրիստոնեայ ազգութիւններ ունին հոս վանքեր ու եկեղեցիներ։ Հայերն ալ ունին Ս. Յակոբայ անուանի վանքը, Պատրիարքարան, դպրոց ու տպարան։



Պատկ. 66. — ՏԻԲԻ ԵՒ ՊԱԳՏԱՏԻ ՄԷՋՏԵՂԸ ԵՓՐԱՏԻ ՏԵՍԱՐԱՆԸ

Երուսաղէմի շրջակաները կը գտնուին Բեթլեհեմ, Հեփրոն, Ռեմլէ (Արեմտեան) և Գազա։

Երուսաղէմի միակ նաւահանգիստն է՝

Եաֆա կամ Ցոպպէ գեղատեսիլ քաղաքը որ երկաթուղիով կապուած է Երուսաղէմի հետ։

21. ՍՈՒՐԻԱ

Բուն Սուրիոյ կամ Դամասկոսի կուսակալութիւնը կը տարածուի Պէյրութի նահանգին արեւմտեան կողմը, սահման ունենալով հիւսիսէն Հալէպի կուսակալութիւնը, արեւելքէն՝ Սուրիոյ անապատը և հարաւէն Արաբիան։

Կուսակալութեան արեւմտեան սահմանները միայն լեռնային են։ Հիւսիսային, միջին և արեւելեան մասերուն մէջ կը տարածուին ընդարձակ դաշտագետիններ, ընդհանրապէս լաւ մշակուած, որոնք կ'արտադրեն արմաւիք, իւղայլեւ հնձան, պիտակ, չամիչ, բուրդ, մորթ. մեղրամոմ, ալաճա և Բուխնու, սատափով պրուակուած կարասիներ, ընտիր ձիեր, վարդեղուր և այլն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿԱՅԱՆՈՒԹԻՒՆԵՐ ԵՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ. — Սուրիոյ կուսակալութիւնը կը պարունակէ հետեւեալ 4 գաւառները.

Դամասկոս, Համա, Հօրաճ, Մա'ան կամ Պելքա։

Կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Դամասկոս (200,000) կամ Շամ՝ հին և մեծափառիմամ քաղաք Պարատայի գեղազուարճ հովտին մէջ։ Ունի բազմաթիւ գեղեցիկ մզկիթներ և ընդարձակ չուկաներ։ Կ'արտադրէ Տամասքոյ կոչուած կերպասը։

Պաալպէք՝ Անդի-Լիբանանու ստորոտը. ժամերը կան հոյակապ աւերակներ։

Համա (40000) Որոնդէսի վրայ վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք։ Ունի մետաքսէ և բամպակէ ձեռագործներ։

Հոմս (50000) նոյնպէս Որոնդէսի վրայ վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք։

Հօրանի գաւառը գիւղեր միայն կը պարունակէ և չունի կարեւոր քաղաքներ։ Իր ընդարձակ հողերուն մեծ արգասաւորութեան պատճառով Հօրան՝ Աստիոյ չտամարանը կը նկատուի։

Մաանի գաւառին մէջ, որ դեռ նոր հաստատուած է Մեհեմետ Ծովուն հարաւակողմը՝ վրանաբնակ պէտուիններ անզուսպելու ն պատակով՝ չկան նոյն իսկ մեծ քաղաքներ։

Ցիշատակութեան արժանի են միայն՝

Մաան և Պելքա իրր կայաններ Մէքքէի ուխտագնացութեան. և Քերաք, Մեհեմետ Ծովուն հարաւ-արեւելեան կողմը, որ ունի ժայռերու մէջ փորուած հետաքրքրաշարժ դամբաններ։

22. ՋՕՐ

Ջօր գաւառը (աւձաց) որ ուղղակի Ներքին Դարձոց նահանգապետութենէն կախում ունի՝ կը տարածուի Սուրիոյ անապատին հիւսիսահայ կողմը՝ Տիարպէքիրի, Հալէպի, Մուսուլի և Պաղտատի նահանգներուն միջեւ։

Կլիման առողջ է բայց չատ տաք։ Գլխաւոր բերքերն են ցորեն, գարի, տարը կամ ճերմակ եգիպտացորեն, կնճիթ, կարագ, և պէտուիններու վրաններուն համար սեւ բուրդէ հիւսեղէններ։

Կ'արտածէ ոչխար, բուրդ, մորթ, կարագ և տարը։

Գաւառին գլխաւոր քաղաքն է Տէյր-էլ-Ջօր (7000 բն.) Եփրատի վրայ։

Միւս նշանաւոր վայրերն են Մէյատին՝ նոյնպէս Եփրատի վրայ, և Թատմօր՝ ուր կը գտնուին հին Բալմիրի սքանչելի աւերակները։

23. ՄՈՒՍՈՒԼ

Մուսուլի նահանգը կը տարածուի Ասիական Թուրքիոյ Արեւելեան սահմանին վրայ՝

Պատկ. 67. — ԵՐԿԲԱԴՕՐԾՈՒԹԻՒՆԸ ԵԼՄԻՆԻ ՄԷՋ. — ԵԼՄԻՆԻ ԵՂՆԵՐԸ ՍԱՊԱՏ ՈՒՆԵԻՆ

Վանայ և Պաղտատի կուսակալութեանց մէջտեղ։

Երկրին հիւսիսային կողմերն ընդհանրապէս լեռնային ըլլալուն ձմեռը բաւական ցուրտ կ'ըլլայ, բայց ամառը տաք։

Տիգրիս գետն ու իր բազմաթիւ գետակները կ'ոռոգեն ու կ'արգասաւորեն հողը որ թէպէտ ամէն տեսակ մշակութեանց գերազանցօրէն ընդունակ՝ կ'արտադրէ մանաւանդ ցորեն, գարի, բրինձ, բամպակ, նարինջ, արմաւ, խաղող եւլն.։ Կանեփը, ծխախոտը, կնճիթը, գիւտորը, քիմբէն և ընդեղէնները երկրորդական տեղ մը միայն կը գրաւեն։ Բամպակն ու բրինձը չատ լաւ կը յաջողին և առատօրէն կ'աճին Ա.քիայի գայմագամութեան մէջ, հողագործներուն հարստութեան գլխաւոր աղբիւրը ձեւացնելով։

Ջերմուկներն ու հանքային ջուրերը բազմաթիւ են մանաւանդ Մուսուլի շրջակաները։ Քէրքուքի մօտ կը գտնուի նաւթահոր մը։

Ջեռագործները որ երբեմն չատ բարգաւաճ վիճակ մը ունէին, ինկած են այսօր։ Ցիշատակութեան արժանի են սակայն բամպակէն ձեռագործները (Մուսուլին), մետաքսեղէնները ու գորգերը։

Տիգրիսի վրայ՝ Մուսուլի և Պաղտատի միջեւ չոգենաւերու կանոնաւոր երթեւեկու-

թիւն մը պիտի կրնար ա՛լ աւելի հարըստացնել այս արգաւանդ երկիրը։ Քէլէկները (տեսակ մը լաստափայտ) չատ հին ժամանակներէ ի վեր գոյութիւն ունին ու վաճառք կը տանին Պաղտատ։

Արտածութեան գլխաւոր նիւթերն են արջառ, բուրդ, մորթ, ներկի նիւթեր, գորգ և այլն։ Առնցմէ յետոյ կու գան արմաւիք, այծի մորթ, ոչխարի մորթ, այծու մազ, քիլիմ, մանած բամպակ, տեղական բամպակեղէններ։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Մուսուլի նահանգը կը բաժնուի երեք գաւառներու.*

1. Մուսուլ, 2. Շեհրիզօր, 3 Սիւլէյմանիյէ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Մուսուլ (60,000) Տիգրիսի վրայ վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք՝ Նինուէի աւերակներուն մօտ։ Մուսլինի, կաշիի և ներկի նիւթերու բանուկ վաճառականութիւն ունի։

Խօրսապատ՝ Նինուէի մօտ, իր հնութիւններով անուանի։

Քէրքուք (20,000) վաճառաշահ քաղաք, մօտերը կան նաւթի հօրեր, ազահանք և հանքային ջուրեր։

Էրպիլ՝ ուր Մեծն Ալեքսանդր յաղթեց Դարեհի, Քրիստոսէ առաջ 331ին։

Սիւլէյմանիյէ (10,000) Պարսկաստանի սահմանագլուխին մօտ։

---

24. ՊԱՂՏԱՏ

Պաղտատի նահանգը որ կը պարունակէ Միջագետքի հարաւային ու Բաբելոնի հիւսիսային մասերը, կը տարածուի Մուսուլի նահանգին և Ջօռ գաւառին հարաւային կողմը, Սուրիոյ անապատին ու Պարսկաստանի մէջտեղ։

Միջագետքի կլիման ամառը սաստիկ տաք է, ձմեռը մեղմ ու քաղցր։ Պաղտատի չրջականները ձմեռը չոր ցուրտեր կը պատահին, բայց ձիւնը չատ հազուագիւտ է։

Երկիրը կը ձևացնէ ընդարձակ դաշտագետին մը, զոր կ'ոռոգեն Եփրատ և Տիգրիս։ Հարաւային կողմերը մանաւանդ կը գտնուին խիտ արգաստաբեր հովիտներ ուր յատուկ կու գան արմաւիք, բրինձ, ընդեղէններ, ծխախոտ, կնճիթ, նարինջ, լեմոն, արմաւ, նուռ, սեխ և ուրիշ բանջարական բերքեր։

Պատկ. 68. — ԵԱՄՊՈՑԻ (Մէտիճէի նաւահանգիստը) ԸՆԴԱ. ՏԵՍԱՐԱՆԸ

Հանքային արտադրութիւններն են կապար, նաւթ, ճերմակ քէֆռօլ և ազ։

Ընտանի կենդանիներ բազմաթիւ են։ Աշխարհի ամէն կողմը մեծ համբաւ կը վայելեն արաբական նժոյգները։

Ջուռապտղներուն մէջ անուանի են մեւաքսէղէնները, բամպակեղէն ու կաշեղէն դարձուածները և գորգերը։

Վաճառականութիւնը բանուկ է. Պաղտատի ու Պասրայի միջեւ չոգենաւեր կ'երթեւեկեն Տիգրիսի վրայ։ Արտածութեան նիւթերն են արմաւիք, արմաւ, գիտուր, բուրդ, մորթ, արաբական խէժ, թէմպէքի եւն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Պաղտատի կուսակալութիւնը կը բաժնուի 3 գաւառներու.*

1. Պաղտաս, 2. Հիլլէ, 3. Քէրպելա։

Գլխաւոր քաղաքներն են՝

Պաղտաս (180,000) Տիգրիսի վրայ բարգաւաճ ու վաճառաշահ քաղաք, զոր Ապուճաֆէր էլ Մանսուր խալիֆան կառոյց Ք. Յարուն։ Հնդկաստանի, Պարսկաստանի, Արաբիոյ և Սուրիոյ հետ՝ Միջագետքի վաճառականութեան կարևոր կեդրոնն է։ Ունի գեղեցիկ մզկիթներ, հարուստ վաճառատեղիներ, բամպակեղէն, մետաքսեղէն ու կաշեղէն գործուածներ, գորգեր և դանակեղէն։

Պաղտատէն դէպ ի հարաւ՝ Տիգրիսի վրայ կը գտնուին հին Սելեւկիայի աւերակները։

Ձեզիւե և Պահուպա երկրագործական կեդրոններ են։

Հիլլէ՝ Եփրատի վրայ, Դամասկոսէն և Հալէպէն Պաղտատ գացող կարաւաններու կեդրոնատեղին է։

Հիլլէ (30,000) Եփրատի վրայ վաճառաշահ քաղաք և երկրագործական կեդրոն՝ Բաբելոնի աւերակներուն մօտ։

Քէրպելա կամ Մեշհետ-Հիւսէյին, Պարսկներու ուխտատեղի է. ունի հարուստ մզկիթներ։

Քէֆիլ՝ հոս կը ցուցուի Եզեկիել մարգարէի գերեզմանը։

Նէճէֆ կամ Մեշհետ-Ալի՝ Պարսիկներու ուխտատեղի։

---

23. ՊԱՍՐԱ

Պասրայի նահանգը կը տարածուի Ասիական Թուրքիոյ հարաւային-արեւելեան ծայրը, Պաղտատի նահանգին, Պարսկաստանի և Սուրիոյ անապատին մէջտեղ՝ իրեն հարաւային սահման ունենալով Պարսկային ծոցը։

Մէկ քանի քաղաքներէ զատ (ինչպէս Ամարա, Շաթթա, եւն.) կլիման ընդհանրապէս վատառողջ է, ճահիճներուն պատճառով։

Հողը բարեբեր է և կ'արտադրէ ցորեն, գարի, բրինձ. եգիպտացորեն, կորեկ, արմաւ, չաքարեղէգ, խառնէ, բամպակ, ծխախոտ եւ մրգեղէն։

Ընտանի կենդանիները բազմաթիւ են, սակայն ամէնէն աւելի համբաւաւոր են Արաբական նժոյգները։

Վաճառականութիւնը բանուկ է Եւրոպայի, Հնդկաստանի և Պարսկաստանի հետ։

Երկրին գլխաւոր արտածութիւններն են բուրդ, արմաւ, ցորեն, գարի, բրինձ, արաբական խէժ, գիտուր, սուսամ, մորթ և ընտիր ձիեր։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — *Պասրայի կուսակալութիւնը կը բաժնուի 4 գաւառներու.*

1. Պասրա, 2. Ամարա, 3. Միւնթէֆիք, 4. Նեճս։

Գլխաւոր քաղաքներն են՝

Պասրա (20,000) Պարսկային ծոցին մօտ՝ Շատ էլ Արապի ափ եզերքին վրայ, բանուկ նաւահանգիստ որ չոգենաւային կանոնաւոր երթեւեկութեամբ կապուած է Պաղտատի հետ։

Ֆաօ՝ Պարսկային ծոցին վրայ, Շատ էլ Արապի բերանը։

Խուռնա՝ Տիգրիսի և Եփրատի իրար խառնուած տեղը։

Ամարա և Նասարիյէ՝ երկրագործական կեդրոններ։

---

26. ՀԻՃԱԶ

Հիճազի կուսակալութիւնը կը տարածուի Կարմիր ծովուն հիւսիսային-արեւելեան եզերքը, և Օսմանեան Կայսրութեան միւս մասերէն կը զանազանուի իր ընդարձակ ու աւազուտ անապատներով և տարապայման տաքերով։

Հիճազ ամուլ երկիր մըն է և բա՛ն մը չարտադրեր. հողը՝ գրեթէ ամէն տեղ լեռնոտ ու անջրդի, մշակուած է միայն ծովեզերին մօտ մէկ քանի տեղեր. մանաւանդ Թայիֆ՝ Հիճազի կուսակալութեան ամէնէն բարեբեր մասն է, ուրկէ ձիւտէ կը զրկուին ամէն տեսակ ընդեղէններ ու մրգեղէններ։

Ընտանի կենդանիները բազմաթիւ են. բայց ամէնէն աւելի համբաւաւոր են ձին, ուղտն ու էշը։

Վաճառականութիւնը բանուկ է. Հիճազ ուղղակի յարաբերութիւններ ունի Հնդկաստանի, Ափրիկէի արեւելեան ծովեզրին, Եգիպտոսի, Անգլիոյ, Ֆրանսայի, Աւստրիոյ և Հո-

լանտայի հետ, որոնց կը դրկէ սատափ, բուտա, խէժ, գեղին մեղրամոմ, կրեայլ պատեան, այծի ու ոչխարի մորթ, արմատ, նուշ։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՓՈՂԱՀԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Հիճազի կուսակալութիւնը որ կը պարունակէ միայն բուն Հիճազի նահանգը՝ բաժնուած է երկու անհաւասար մասերու։ Մեքքէ և Մեդինէ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Մեքքէ (80,000) Իսլամներու Մարգարէին հայրենիքը, և բոլոր Մահմետականներուն նշանաւոր ուխտատեղին ուր ամէն տարի Թուրքիոյ Պայրամին առթիւ բիւրաւոր ուխտաւորներ կը դիմեն։

Ճիտտէ (25,000) Մէջքէէն 8 քիլոմէթր հեռու կարմիր ծովու վրայ, Հիճազի միակ կարեւոր նաւահանգիստը։

Մեդինէ (40,000) Մէջքէէն 12 օրուան հեռաւորութեամբ ամուր և վաճառաշահ քաղաք, ուր կը գտնուի Իսլամներու մարգարէին գերեզմանը, և որ ուխտատեղի է։

Թայիֆ՝ Մէջքէէն 4 օր դէպի արեւելք, բարեբեր երկրի մը մէջ։ Բերքերն են ընդեղէն ու մրգեղէն։

Եամպօ Մէտինէի նաւահանգիստն է։

---

27. ԵՄԷՆ

Եեմենի նահանգը կը տարածուի Հիճազի հարաւային կողմը։

Կլիման չատ տաք է։ Կան սակայն բարձրադիր տեղեր, որ զով են և ուր ձմեռը ցուրտէն չուրերը կը սառին։

Հողը չատ բարեբեր է մէկ քանի մասերուն մէջ. կ'արտադրէ լնակեր խահուէ՝ որ ամէն կողմ մեծ համբաւ ունի «Եեմէնի քահվէսի» անունով. խէժ, խայծդան, հալուէ, պալասան, լեզակ, արմաւիք (ցորեն, գարի և տուրա- sorgho), ծխախոտ, բամպակ։

Կը մշակուին նաեւ պտղատու ծառեր (մանաւանդ նարգիլականի և արմաւենի), որթատունկ, չաքարեղէգ, եղջերենի, թամարինի (տէմիր հինտի) և այլն։

Ջեռագործական արտադրութեանց մէջ կրնան յիշուիլ գաճեղէնները, բամպակէ հիւսածները, բուրդէ և այծու կամ ուղտի մազէ չինուած գորգերը։

Վաճառականութիւնը բաւական բանուկ է։ Արտածութեան նիւթերն են խահվէ, արմատ, մորթ, ձի, լեզակ, ինկեղէն, բժշկական տունկեր, հալուէ, խէժ, չաքարեղէգ, և այլն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՓՈՂԱՀԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ. — Եեմենի նահանգը կը պարունակէ հետեւեալ չորս գաւառները.

Սանա'ա, Հոտէյտա, Ասիր, Թա'ազ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Սանա'ա ծովէն մակերեւոյթէն 2140 մեդր բարձրութեամբ, զուարճալի, բարեբեր և հարուստ քաղաք մըն է։

Հոտէյտա (45,000) կուսակալութեան կարեւոր նաւահանգիստը

Մոխա՝ երբեմն կարեւոր նաւահանգիստ էր խահվէի արտածութեան յատուկ, այսօր պարզ ու անչէն գիւղ մըն է միայն։

ՍԱՄՈՍ ԿՂԶԻ

Սամոս կղզին կամ Սուսամ Աւտսը Արշիպելագոսի մէջ Զէյմէ թերակղզիին հարաւային կողմը լեռնային կղզի մըն է որ 1832էն ի վեր եղած է ինքնօրէն իշխանութիւն հարկատու Բարբարացոյն Դրան.

Սամոսի լեռները ծածկուած են նոճիի ու չոճիի անտառներով. կլիման չոր է։ Հողին գլխաւոր բերքերն են արմաւիք և ձիթապտուղ։ Վաճառի շրջականերուն այգինները անուանի գինի մը կ'արտադրեն։

Կղզիին տարածութիւնն է 470 քլմ. քառակուսի, բնակիչներուն թիւը՝ իբր 50,000, մեծ մասը յունադաւան։

Գլխաւոր քաղաքն է՝

Վաթի՝ հիւսիսային ծովեզրին վրայ։

ԿԻՊՐՈՍ ԿՂԶԻ

Կիպրոս կղզին կը գտնուի Իսկէնտէրունի ծոցին դիմացը՝ Միջերկրականի մէջ։ Ունի 9600 քլմ. քառակուսի տարածութիւն և իբր 210,000 բնակիչ մեծ մասամբ յունադաւան։

Գլխաւոր քաղաքներն են.

Նիխոջիա կամ Լեւկոջիա կառավարչանիստ քաղաք։

Լարնաքա և Լիմասոս վաճառաշահ քաղաքներ են կղզիին հարաւային ծովեզրին վրայ։

Կիպրոսի կլիման ընդհանրապէս առողջ է գարունը միշտ գեղեցիկ, բայց ամառը տաք ու չոր։

Բերքերն են արմաւիք, վուշ, բամպակ, կնճիթ, ծխախոտ, որթատունկ, կիպրոսի գինին համբաւաւոր է։

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՓՐԻԿԷԻ ՄԷՋ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

1. ԵԳԻՊՏՈՍԻ ՓՈԽԱՐՔԱՑՈՒԹԻՒՆ

Օսմանեան պետութեան գերիշխանութեան ներքեւ կը գտնուի Եգիպտոսի Փոխարքայութիւնը։

Ունի երեք մեծ բաժանումներ, Ստորին Եգիպտոս, Վերին Եգիպտոս և Սուէզ։

Ամբողջ Եգիպտոս ունի գրեթէ 7 միլիոն բնակիչ որոնց մեծամասնութիւնը հողագործ (ֆէլլահ) են։ Կան նաեւ Ղփտիներ, Արաբ Պէտէվիներ, Սուտանցիներ, Արեւելցիներ, օտարազգիներ և այլն։

Տիրող լեզուն է Արաբերէնը և ամէնէն աւելի տարածուած կրօնքը՝ Իսլամութիւն։

Գլխաւոր քաղաքներն են.

Գահիրէ (500,000) փոխարքայանիստ քաղաք Նեղոսի մօտ։ Մօտերը կը գտնուին հին Մեմֆիս քաղաքին աւերակները, բուրգերը և գեղանուէր գերեզմանները ուր կան 3000 տարիներէ ի վեր պահուած մոմիաներ։

Աղեքսանդրիա՝ Միջերկրականի վրայ մեծ վաճառաշահ նաւահանգիստ, ունի նոր և եւրոպական ճաշակով չինուած թաղեր։

Բոռ Սայիտ՝ Միջերկրականի վրայ, և Սուէզ կարմիր ծովուն վրայ, բանուկ նաւահանգիստներ են Սուէզի ջրանցքին երկու ծայրերը։

---

2. ՂԱՐՊ-ԹԱՐԱՊՈՒԼՈՒՍ

Թարապուլուս կը տարածուի Ափրիկէի հիւսիսային կողմը՝ Միջերկրականի վրայ։ Ընդարձակ և անապատային երկիր մըն է ուր կը բնակին Արաբ և Պէրպէր ցեղեր։

Ունի տաք և չոր կլիմայ։ Երկրին բերքերն են ձիթենի, արմաւենի, պղպատու ծառեր, արմաւիք և ընդեղէններ։ Պահարաբուծութիւնը բաւական զարգացած է մանաւանդ արեւելեան մասին մէջ (Պէնկազի)։ Ունի այծ, ոչխար, եզ, ձի, ուղտ։ Պէնկազի ունի նաեւ հարուստ ապառնիքներ։

Ղարպ-Թարապուլուս ունի իբր 900,000 քլմ. քառակուսի տարածութիւն և մօտաւորապէս 1,200,000 բնակիչ։

Կը պարունակէ 1 կուսակալութիւն որ է Ղարպ Թարապուլուս և ուրոյն սանճագ որ է Պէնկազի։

Գլխաւոր քաղաքներն են։

Թարապուլուս (30,000) կուսակալանիստ քաղաք և ապահով նաւահանգիստ Միջերկրականի վրայ։

Մուրզուխ՝ Ֆէզզանի մէջ, Սուտանի կարաւանականերուն չուկէան է։

Պենկազի՝ բնական սիրուն նաւահանգիստ մըն է Միջերկրականի եզերքը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԱՐԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

Օսմանեան կայսրութիւնը ո՛ր ցամաքներուն վրայ կը տարածուի. — Ո՛ր ծովերը ունի իր եզերքներուն շուրջը. — Օսմ. կայսրութիւնը քանի՛ մասերէ կը բաղկանայ. — Եւրոպական Թուրքիոյ շուրջը ո՛ր երկիրները կան. — Եւրոպական Թուրքիոյ ծովեզրը քի՛չ մասնաւոր յատկութիւններ ունի. — Ո՛ր ծովերը կը բռնեն իր եզերքները. — Այդ ծովերուն ո՛ր ծոցերը և ելուզակները կազմուած են. — Եւրոպական Թուրքիա ցամաքի՛ն թէ կաշտային երկիր մըն է. — Ո՛ր լեռները կը բարձրանան իր ցամաքին վրայ. — Ո՛րն է իր ամենեն բարձր գագաթը. — Եւրոպական Թուրքիոյ լեռները քանի՛ մասերու կը բաժնուին. — Որո՛նք են իւրաքանչիւրին ծագումէ առնող լեռներուն շղթաները. — Ինչո՛ւ համար Եւրոպական Թուրքիոյ մէջ ընդարձակ հովիտներ և մեծ գետեր չի կան. — Որո՛նք են գլխաւոր գետերը և անոնց գետակիցները. — Եւրոպական Թուրքիոյ գետերը ո՛ր ծովերը կը թափին. — Որո՛նք են Եւրոպական Թուրքիոյ գլխաւոր լիճերը. — Երկրին ո՛ր մասին մէջ ամենեն աւելի բազմաթիւ են անոնք. — Եւրոպական Թուրքիոյ կլիման քի՛չ պէս է. — Ինչո՛ւ այնքան տարբեր կլիմաներ ունի. — Եւրոպական Թուրքիոյ ամենեն

բարեբեր մասերը որո՞նք են. — Ինչո՞ւ. — Որո՞նք են իր գլխաւոր արտադրութիւնները. — Ինչո՞ւ անասնաբուծութիւնը այնչափ զարգացած է Եւրոպական Թուրքիոյ մէջ. — Որո՞նք են իր գլխաւոր անասունները. — Որտեղութիւնն ու ձկնորսութիւնը զարգացա՞ծ են. — Ո՞ր հանքերը ամենէն աւելի աղը առաս են Եւրոպական Թուրքիոյ մէջ. — Որո՞նք են հաղորդակցութեան ամենէն բանուկ ճամբաները. — Եւրոպական Թուրքիոյ վաճառականութիւնը շա՞տ զարգացա՞ծ է թէ ոչ. — Ինչո՞ւ. — Եւրոպական Թուրքիա արտածո՞ղ թէ ներածող երկիր մըն է. — Որո՞նք են իր արտածման եւ ներածման գլխաւոր առարկաները,—Եւրոպական Թուրքիոյ մէջ ո՞ր ժողովուրդներ եւ ցեղերը կ՚բնակին. — Ամենէն աւելի ո՞ր ցեղը բազմաթիւ է. — Ո՞րն է Օսմանեան կայսրութեան կառավարական ձեւը. — Ինչ կըսէ Սահմանադրական Միապետութիւն. — Ո՞ր նախարարութիւններու յանձնուած է երկրին կառավարական նոգը. — Նահանգներու վարչութեան ձեւը ինչպէ՞ս է. — Եւրոպական Թուրքիա քանի՞ կուսակալութիւններու բաժնուած է. — Տեղեկութիւններ տո՛ւր կ. Պոլսոյ կուսակալութեան բնական եւ բաղմական նկարագրին վրայ. — Ո՞րն է Օսմ. կայսրութեան մայրաքաղաքը. — Ինչո՞ւ այնման կարեւոր է այս քաղաքը.—Լեւտինեի կուսակալութիւնը ո՞ւր կ՚ինայ եւ որո՞նք են իր բնական եւ բաղմական նկարագիրը. — Նոյնպես Սելանիկի կուսակալութեան. — Մանաստրըի կուսակալութեան. — Բոսովայի կուսակալութեան. — Շհոտրայի եւ Եանինայի կուսակալութեան:

Որո՞նք են Եւրոպ. Թուրքիոյ ամենէն կարեւոր քաղաքները, որոնք 10,000է աւելի բնակիչ ունին. — Եւրոպական Թուրքիոյ գետերուն կամ լիճերուն վրայ մեծ քաղաքներ կա՞ն. — Որո՞նք են արտադրութեան տեսակետով ամենէն կարեւոր կուսակալութիւնները:

Ախթական Թուրքիա ո՞ր ծովերուն կը բռնէ. — Իր շուրջը ո՞ր երկիրները կան. — Ախթական Թուրքիոյ ծովափնեայը ինչ նկարագիր ունին. — Ախթական Թուրքիոյ բոլոր ծովեզերն ալ իրարու կը նմանի՞ն. — Ինչ տարբերութիւն կամ նմանութիւն ունին իրարու հետ. — Ախթական Թուրքիոյ ծովերուն ո՞ր ծոցերը եւ ընդուցները կազմուած են. — Ախթական Թուրքիոյ հրուանդաններուն որո՞նք են. — Ախթական Թուրքիոյ ծովերուն ո՞ր կարեւոր նաւահանգիստները կան. — Ախթական Թուրքիոյ գետերուն վրայ ո՞ր կարեւոր քաղաքները կան. — Ախթական Թուրքիոյ հարաւարեւելեան մասի ամենէն կարեւոր քաղաքները որո՞նք են. — Արաբիոյ ո՞ր մասը Օսմ. կայսրութեան կը վերաբերի. — Որո՞նք են այդ մասին կարեւոր քաղաքները. — Մեքքէ եւ Մեդինէ քաղաքները ինչ բանով կարեւոր են Մահմետականներուն համար. — Արշիպելագոսի մէջ ո՞ր կղզիները Օսմանեան կայսրութեան կը վերաբերին. — Որո՞նք են ամենէն կարեւորները:

Օսմանեան պետութիւնը Ափրիկէի ո՞ր մասին տէր է. — Ինչ տեղեկութիւններ գիտես Եգիպտոսի վրայ. — Որո՞նք են Եգիպտոսի գլխաւոր քաղաքները. — Միջերկրականի վրայ ո՞ր կարեւոր նաւահանգիստը ունի Եգիպտոս. — Դարձ-Թարապրուս իր կլիմայով, դիրքով ու արտադրութիւններով կը նմանի՞ Եգիպտոսի. — Ի՞նչ կ՚արտադրէ. — Որո՞նք են իր գլխաւոր քաղաքները:

Գլխաւոր պարապմունքները. — Եւրոպական Թուրքիոյ մէջ Սլաւոնիկ եւ Ախթական Թուրքիոյ մէջ Իզմիր ինչո՞ւ այնչափ կարեւոր նաւահանգիստներ եղած են:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԱՇԽԱՐՀԻՍ ՀԻՆԳ ՄԱՍԵՐԸ

ԴԱՍ ԱՌԱՋԻՆ.

ԵՒՐՈՊԱ.

ԴԻՐՔ, ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԱՀՄԱՆ

Եւրոպա գետնպատած է ամրողջովին Հիւսիսային կիսագունտին մէջ և Ասիական ցամաքին արեւմտեան կողմը անոնցն թերակղզի մը կը ձեւացնէ:

Եւրոպա Ասիայէն բաժնուած է՝ արեւելքէն՝ Ուրալ լեռներով և Ուրալ գետով, հարաւէն՝ Կովկասի լեռնագօտիով. սակայն Փոքր-Ասիա կամուրջի մը պէս կ՚երկարի Եւրոպայի և Ասիոյ մէջտեղ, որմէ վստիարի նեղուցին վրայ հազիւ իրարմէ կէս մղոն հեռաւորութիւն ունին:

Եւրոպա իր հարաւային ծայրով չատ կը մօտենայ Ափրիկէի ծովեզրին, որմէ հազիւ 3-4 մղոն հեռու կը գտնուի Ճիպրալթարի նեղուցով:

Եւրոպայի ամենէն արեւմտեան երկիրները (Իրլանտա) 770 մղոնի հեռաւորութիւն մը ունին Ամերիկեան ցամաքէն: Բայց Իսլանտա կղզին՝ Հին և Նոր Աշխարհի կէս ճամբուն վրայ է:

Եւրոպայի հիւսիսային ծայրը՝ որ կը կոչուի Հիւսիսային Հրուխ՝ 500 մղոն միայն հեռու է բեւեռէն:

Եւրոպա ունի իբր 10 միլիոն քառակուսի քիլոմէդր տարածութիւն. Ասիայէն 4 անգամ և Ափրիկէէն 3 անգամ աւելի փոքր է:

ԱՐՏԱՔԻՆ ԱՏԱՊԱՆԳԷ ԵՒ ԾՈՎԱՓՈՒՆԳ. — Աշխարհիս հինգ մեծ բաժանումներուն մէջ Եւրոպան ամենէն փոքրն է, բայց ամենէն բազմամարդն՝ իր տարածութեան բազդատմամբ, և ամենէն քաղաքակիրթն ու ամենէն հարուստը:

Այս գերակշռութիւնը կը պարտի մասամբ իր արտաքին կերպարանքին, և հոգին ու կլիմային բնութեան:

Աշխարհիս հինգ մասերուն մէջ Եւրոպան է որ իր տարածութեան դայեակով ամենէն աւելի ընդարձակ ու մանուածապատ ծովափունքը ունի, ինչ որ իր առեւտրական բարգաւաճման գլխաւոր պատճառներէն մէկն է:

Իր ծովեզերքները խրխռլ երկար մեծ ծովերը՝ Սառուցեալ Ովկիանոս, Ատլանտեան Ովկիանոս և Միջերկրական ծով՝ երբեմն չատ խորունկ կերպով դէպ ի ցամաք կը մտնեն և կը ձեւացնեն բազմաթիւ ներքին ծովեր ու երկրորդական ծոցեր, որոնց մէջտեղ եղած հեռաւորութիւնը չատ քիչ է:

Սառուցեալ Ովկիանոսէն կը ձեւանայ Սպիտակ ծովը Ռուսիոյ ծովեզերքին վրայ:

Ատլանտեան Ովկիանոսը կը ձեւացնէ Պալթիկ ծով, ուրկէ կը կազմուին Պոթնիոյ, Ֆինլանտիոյ և Լիվոնիոյ ծոցերը. Հիւսիսային ծով, Մանշի ծով, Իրլանտայի ծով և Կասկոնեան ծոց:

Միջերկրական ծովը՝ գերազանցապէս ներքին ծով մըն է, որ Ատլանտեանի ջուրերուն հետ կը հաղորդակցի Եւրոպան Ափրիկէէն բաժնող Ճիպրալթարի նեղուցով:

Միջերկրականէն կազմուած են Լիոնի և Ձենովայի ծոցերը, Տիւրենեան ծովը, Ադրիական ծովը, Յոնիական ծովը, ուրկէ կը կազմուի Տարենտոնի ծոցը, Եգեական ծովը կամ

Արշիպելագոսը, ուրկէ կը ձեւանայ Սելաճիկի ծոցը, և Սեւ ծովը, որ Արշիպելագոսի հետ կը հաղորդակցի երկայն անցքով մը, որուն երկու ծայրերը նեղնալով կը ձեւացնեն Վոսփորն ու Տարտանելը և որուն կեդրոնական մասը լայննալով կը ձեւացնէ Մարմարայի ծովը։

Սեւ ծովէն կը ձեւանայ Ազախու ծովը։

ԾՈՎԱՄՈՒՏՔԸ. — *Բոլոր այս ծովերը իրարու հետ հաղորդակցութեան մէջ են։ Պալթիկ ծովը՝ Հիւսիսային ծովուն հետ կը հաղորդակցի Սունտ, Քադեկար, Մակկերաֆ նեղուցներով։*

Հիւսիսային՝ ծովը Մանչի հետ կը հաղորդակցի Քալէի անցքով (Բա-տը-Քալէ)։

Իրլանտայ ծովը Ատլանտեանի հետ կը հաղորդակցի Ս. Գէորգի Ջրանցքով և Հիւսիսային Ջրանցքով։

Ատլանտեան ովկիանոսը Միջերկրականի հետ կապուած է 50 քիլոմէտր երկայնութեամբ և 27էն 45 քիլոմէտր լայնութեամբ նեղուցով մը, այն է Ճիպրալթարի նեղուցը, որ Եւրոպան Ափրիկէէն կը բաժնէ։

Տիւրենեան ծովը Ճանալ կանէն հետ կը հաղորդակցի Մեսինայի նեղուցով, և Յունական ծովը ալ Ագրիականին հետ՝ Օթրանթի Ջրանցքով։

Արշիպելագոսը Մարմարայի հետ կը հաղորդակցի Տարտանելի նեղուցով, և Մարմարան ալ Սեւ ծովուն հետ՝ Վոսփորի նեղուցով։

Սեւ ծովը Ազախու ծովուն հետ կը հաղորդակցի Կերչի կամ Եենի գալէի նեղուցով։



Պատկ. 69. — ՓԱՅՏԱԿԱՆԵՐ ԵՒ ՀՈՐԱԿԱՄՈՒՐՋՆԵՐ

Այս զանազան տնտարանները կը ցուցնեն այն դժուարութիւնները որոնց մարդիկ յաղթած են ամէն կողմ երկաթուղիներ հաստատելու համար։ Ամէն արգելքի առջեւ ալ չեն կասիր. փապուղիներ կը փորեն կ'անցնին ամէնէն բարձր լեռներուն տակին. ատամնաւոր անիւներով երկաթուղիներ կը մագլցին անոնց կողերն ի վեր եւ ձորակաւորներ կը կտրեն կ'անցնին ամէնէն խորունկ ձորերուն. անդունդներուն վրայէն։ Բիւրաի ատամնաւոր երկաթուղին (Զուիցերիա) 441 մէտր բարձրութենէն 2070 մէտր բարձրութեան կը հասնի ճամբորդներ։ Մոլի-Արնիի բլուրէն որ 13 քիլոմէտր երկայնութիւն ունի կը փորէ 3000 մէտր բարձրութիւն ունեցող Ալպեան լեռներէն եւ Ֆրանսային Իտալիա երթալիք ճամբան կը դիւրացնէ։ Կառապիրի ձորակաւորը, Ֆրանսայի կլիմայական լեռնակոտինի մէջ, 122 մէտր բարձրեն կը կտրէ կանցնի Թունէլոյի գետը։

Աջիպտոսի Մեծ Պիրամիտները, Ասորեստանի Նինուէի աւերակները, Պաբելոնի Աշտարակը, Յունական Պարթենոնը, Հռոմէական Կոլիզէումը, Ֆրանսայի Ֆոնթէն-պլոյի պալատը, Անգլիոյ Վինտսորի պալատը, Գերմանիոյ Պերլինի Պրանտենպուրկեան դուռը, Ռուսիոյ Սուրբ Իսահակ եկեղեցին, Աւստրիոյ Վիեննայի Սուրբ Ստեփանոս եկեղեցին, Իտալիոյ Միլանի Տուոմօ եկեղեցին, Սպանիոյ Մատրիտի Ալֆոնսոյ եկեղեցին, Պելճիքայի Պրիւքսէլի Տաղաւարը, Հոլանտայի Ամսթերտամի Պուրսը, Շուէտի Ստոկհոլմի Ռատհուսը, Նորվեգիոյ Քրիստիանիայի Ստորթինկը, Դանիոյ Քոփընհակընի Քրիստիանսպորկ պալատը, Շուիցերիոյ Պեռնի Պունտէսհաուզը, Պորթուգալիոյ Լիսաբոնի Ազնուականաց տունը, Յունաստանի Աթենքի Պարլամենտը, Թուրքիոյ Կ. Պոլսոյ Սուլթանի պալատը, Պուլկարիոյ Սոֆիոյ Պարլամենտը, Ռումանիոյ Պուքրէշի Պարլամենտը, Սերպիոյ Պելկրատի Պարլամենտը, Մոնթէնեկրոյի Ցէթինիէի Պարլամենտը, Պոսնիոյ Սարայեւոյի Պարլամենտ

Ուրալի և Կովկասի միջեւ ընդարձակ տափարակութիւն մը կը ձեւացնէ Կասպից ծովը իր չրջակայ տափաստաններով, որոնց մակերեւոյթը Միջերկրականի մակերեւոյթէն 25 մէտր աւելի ցած է։



ՊԻՐԵՆԵԱՆ ԼԵՌՆԵՐՈՒ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ա. Կավառնի կիրճը։ Բ. Պիրենեան լերանց տեսարաններ, Սէն Ժան Փիէ տը Փոռի կողմէ դիտուած

Ռուսական դաշտագետներու չարունակութիւնն է տրեւմտեան կողմը՝ Հիւսիսային Կովկասեան դաշտագետները, որուն ծովեզերեայ մասերն ալ ուազուա են ընդհանրապէս։

Եւրոպայի կեդրոնական մասին մէջ կը կանգնի Ալպեաններու հաստատուածը, որ ցամաքին բարձրագոյն լեռները կը պարունակէ, և որ երկրիս բնական ամրոցներէն հետաքրքրաշարժ ուսումնասիրել արեւելեայները կ՚ընծայէ։ Ալպեաններուն վրայ մարդ քանի մը ժամուան մէջ՝ բարեխառն կլիմայէն բեւեռային կլիմային մէջ կը մտնէ. նաւվիտներուն, դալարագետ մարգագետիններուն կը յաջորդեն անտառները, որոնք ծովուն երեսէն 1700 մէտր վեր կը դադրին այլեւս և տակաւին արօտավայրերու ուր ծառեր կ՚արածին ամառները։ 2400 մէտր բարձրութենէ վեր կը սկսին ձիւները։

Ալպեանները ովկիանոսին ու Միջերկրականի ծովուն մէջտեղ գտնուելով կ՚ընդունին առատ անձրեւ և ձիւն։ Իրենց անհամար առուներէը կը սնուցանեն մեծ գետեր, որոնք Ալպեաններու սահմանէն դուրս կելլեն առաջ կը զատին Ջինջ ու չքեղ լիճերու մէջ։

Ալպեանները կը չրջապատեն հիւսիսային կողմը՝ 500 մէտր բարձրութեամբ լեռնադաշտ մը՝ որ կը կոչուի Պավիեռայի լեռնադաշտ. իսկ հարաւէն, արեւմուտքէն և արեւելքէն կը չրջապատեն բարեւոր հովիտներ, ինչպէս Բոյի դաշտագետինը, Ռոնի հովիտն և Հունգարիոյ դաշտագետինը։

Ալպեաններուն չուրջը կը կանգնին Ժիւրա, Վոժ, լեռները, Նէե Անտառը և Պոհեմիոյ լեռները՝ հիւսիսային կողմը։

Սեվեն լեռները՝ արեւմտեան կողմը։

Արեւելեան կողմը կը տարածուին Կարպաթեան լեռները, որոնք Հունգարիոյ դաշտագետինին հիւսիս ա-րեւելեան սահմանը կը գծեն։ Կարպաթեան լեռնագօտիին հարաւային ճիւղը կը ձեւացնէ Թրանսիլուանիոյ լեռներն՝ որոնք կը տիրեն Մոլտովալաքիոյ դաշտագետիններուն։

Հարաւային Եւրոպայի երեք լեռնային ցամաքակղզիներուն ամէնէն առաջինն է Սպանիա, զոր հիւսիսէն և հարաւէն կը չրջապատեն երկու բարձր չղթաներ, Պիրենեան լեռնագօտի, և Սիերա-Նեվատա, և որուն կեդրոնը կը կանգնին 7-800 մէտր բարձրութեամբ մեծ լեռնադաշտեր, որոնք կը կոչուին Գասթիլիոյ լեռնադաշտ։

Իտալական ցամաքակղզին ամբողջովին ծածկուած է Ապենինեան լեռներով, որոնց հարաւային մասը հրաբխային է։ Նաբոլիի ծոցին վրայ նշանաւոր է Վեսուվ հրաբուխը։

Ապենինեան գօտին կը տարածուի նաեւ Մահնայի նեղուցէն անդին Սիկիլիոյ մէջ, որուն արեւելեան ծովեզերին վրայ կը կանգնի Եցնա լեռը իր վիթխարի խառնարանով։

Ալպեաններէն դէպ ի արեւելեան հարաւ կը մեկնին Տինարեան Ալպեանները, որոնք կը նային դէպ ի Ադրիատական ծով։

Թուրքո-Հելլենական ցամաքակղզիին հիւսիսակողմը կը կանգնի տեսակ մը լեռնադաշտ, որուն բարձրագոյն հատուածն է Զար-Տաղ։

Այս գլխաւոր հատուածէն կը մեկնին 3 գլխաւոր չղթաներ։ Դէպ ի արեւելք՝ Պալքաններու անտառաւախիտ չղթան որ կը յանգի մինչեւ Սեւ ծով, և կը տիրէ մեկ կողմէ Դանուբի ընդարձակ հովիտին ու միւս կողմէ Թրակիոյ հովիտներուն և դաշտագետիններուն։

Դէպ ի հարաւ արեւելք՝ Հռոդոպի ջղրան կամ Տեսիթոր-տաղ որ կ՚երկարի մինչեւ Աբչիպելագոս։

Դէպ ի հարաւ՝ Հելլենական Ալպեանները, կամ Պինդոսի գօտին որ կը ծածկէ ամբողջ Յունաստանը ու կ՚երթայ կը վերջանայ Մօրէայի հարաւակողմը՝ երեք հրաբուխներով որոնց գլխաւորն է Մադաբան։

Լեռնային այն զանազան խումբերը զորս նկարագրեցինք մինչեւ հիմա, գրեթէ ամէնքն ալ իրարու կապուած են Պալքաններէն սկսելով մինչեւ Պոհեմիոյ լեռները և կարպաթեան-ներէն մինչեւ Սիերա-Նեվատայի գագաթները։ Նոյն բանը չէ սակայն Մեծն-Բրիտանիոյ, Իռլանտայի և Սկանտինաւեան ցամաքակղզիին լեռնաչղթաներուն համար, որոնք առանձին խումբեր կը ձեւացնեն։

Մեծն Բրիտանիոյ մէջ կը կանգնին երկու անջատ հատուածներ. Կալեխի երկրին լեռները, և Սկովտիոյ լեռները, որոնց գլխաւոր չղթան է Կրամբեան լեռներու չղթան։

Իռլանտա հրաբխային մեծ կղզի մըն է, ուր կը տիրեն ձիւնապատ գագաթներ։ Կղզիին հարաւ արեւմտեան ծայրը՝ դաշտագետի մը մէջտեղ ուր կը ժայթքին կեյզեր անուանով նշանաւոր տաք ջուրի աղբիւրներ. կը կանգնի հրաբխային լեռներու չղթայ մը, որոնց գլխաւորն է Հեխլա (1500 մէտր բարձրութեամբ)։

Սկանտինաւեան ցամաքակղզիին մէջ կը տարածուի Սկանտինաւեան լեռնագօտին, որուն գլխաւոր բազուկներն են Գեօլեն և Տօվրին լեռները, որոնք Եւրոպական ցամաքին միւս չղթաներէն բաժնուած են Հիւսիսային և Պալթիկ ծովերով և հիւսիսային Եւրոպայի դաշտագետիններով։

Հարյատան. — Որո՞նք են Եւրոպայի մակերեւոյթին գլխաւոր բաժանումները. — Ռուսական դաշտագետինին արեւելեան սահմանը ո՞րն է. — Ռուսական դաշտագետինը կեդրոնական Ասիոյ դաշտագետիններէն զատուած է. — Ո՞րոնք են այս դաշտագետինին բարձրագոյն մասերը և որոնք են ամէնէն ցած մասերը. — Որոնք են հիւսիսային Եւրոպայի գլխաւոր լեռները — Ո՞ր մեծ գետերուն ակունքը կը տարածուին Ալպեան լեռները, և ի՞նչ ուղղութիւն ունին.— Ալպեաններու երկու զառիվայրերն ալ միեւնոյն երեւոյթը ունի՞ն. — Ինչո՞ւ այնքան անձրեւ և ձիւն կը տեղայ Ալպեաններու վրայ. — Ինչ կ՚ըլլան Ալպեաններու վրայ տեղացած անձրեւներէն ու ձիւներու հալեցումէն յառաջ եկած ջուրերը. — Ալպեանները չրջապատող դաշտագետինները որո՞նք են. — Ալպեաններու հիւսիսակողմը ո՞ր լեռները կան. — Որո՞նք են Ալպեաններու արեւմտեան և արեւելեան կողմերը տարածուող լեռները. — Ո՞նք են Տաբաւակողմին լեռները. — Հարաւային Եւրոպայի ցամաքակղզիներուն ամէնէն մեծը ո՞րն է. Ալպեան լեռները Պիրենեան լեռներէն ի՞նչ տարբերութիւն ունին։

ԳԵՏԵՐ ԵՒ ԼԻՃԵՐ

ԴԵՏԵՐ. — Այս այլ և այլ լեռնաչղթաներէն իջնող գետերը երկու զառիվայրներու կը հետեւին, ասոնք, դէպ ի հիւսիս և հիւսիսային արեւմուտք ուղղուելով Սառուցեալ Ովկիանոսին, Ատլանտեան Ովկիանոսին և ապէ կազմած ծովերուն մէջ կը թափին։ Ուրիշներ ալ կը նային դէպ ի հարաւ և հարաւային արեւելք ու հարկատու են Միջերկրականին, Սեւ Ծովուն և Կասպից ծովուն։

Այս երկու զառիվայրներր իրարմէ բաժնուած են Պիրենեան, Ալպեան և Կարպաթեան լեռներով ու Ռուսիոյ նուազ բարձր բլուրներով (Վալտայի լեռնագաչտ)։ Բարձրութիւններու այս չարքը կը ձեւացնէ ջուրերուն բաժանման գիծը։

Հիւսիսային և հիւսիս արեւմտեան զառիվայրին գլխաւոր գետերն են.

Բէչօրա, որ կը թափի Սառուցեալ ովկիանոս։

Տվինա, որ կը թափի Ապիսակ ծով։

Նեվա, Տուճա, Նիեմեն, Վիսթուլա, և Oder, որոնք կը թափին Պալթիկ ծով։

Էլպա՝ գերմանական դաշտագետինին մեծագոյն գետը, Վեզեր, Հոլենս, Մեօզ, Էսֆօ և Թամիզ, որոնք կը թափին Հիւսիսային ծով։

Սեճ գետը հարկատու է Մանչի ծովուն։

Լուառ, Կարօն, Տուրօ, Թակօ, Կուատիանա և Կուատալխիվիր կը թափին ուղղակի Ատլանտեան ովկիանոսը։

Հարաւային և հարաւ-արեւելեան զառիվայրը որ նախորդէն աւելի ընդարձակ է, կը պարունակէ ցամաքին մեծագոյն գետերը։ Գլխաւորներն են.

Էպրօ, Թօճ և Տիբեր որ կը թափին Միջերկրական։

Բօ և Աթիճ հարկատու են Ադրիատիկի։

Մարիձա՝ հարկատու Արշիպելագոսի։

Դանուբ, Տնիեսթեր և Տնիեբեր կը թափին Սեւ ծով։

Դանուբ գետը կը կարէ Եւրոպան սրեւմուտքէն արեւելք, Սեւ անառակէն մինչեւ Սեւ ծով, ուր կը ձեւացնէ Տէլդա մը։ Դանուբ՝ Եւրոպայի ամէնէն յորդահոս գետն է։

Տօճ գետը հարկատու է Ազաթու ծովուն։

Վոլկա և Ուրալ կը թափին Կասպից ծով։

Վոլկա Եւրոպայի ամէնէն երկայն գետն է, և Ռուսիոյ պատմական ու ազգային գետն ու անոր առեւտրական մեծ չնչերակը։

Լիճեր. — *Եւրոպայի լիճերը հաւաքուած են երկու որոշ սահմաններու մէջ. 1. Ալպեան-նեններու չուրջը և 2. Պալթիկ ծովուն չուրջը։*

Պալթիկի չուրջը ցրուած լիճերն են.

Ռուսական լիճերը, որոնց գլխաւորներն են Լատոկա Եւրոպայի մեծագոյն լիճը, Օնեկա և Բեյբուս։

Սկանտինաւեան լիճերը, որոնց կարեւորներն են Մեյար, Վէներ, և Վէթեր։

Ալպեաններուն չուրջը գտնուած լիճերն են.

Զուիցերիական լիճերը, որոնց գլխաւորներն են Ձիւնեւրա, Ֆօնսթաճցա, Նէօշաթէլ, Ցուրիխ, Լուչեռնա։

Իտալական լիճերը, Ալպեաններուն հարաւակողմը, որոնց մեծագոյններն են Մաճիօրէ, Քօմօ և Կարտա։

Հարցաքնն. — *Ո՞ր կը գտնուին Եւրոպայի գլխաւոր լիճերը — Ո՞րն է Եւրոպայի մեծագոյն լիճը. — Ո՞րն է Եւրոպայի մեծագոյն գետը և ո՞ւրկէ կը ըղխի. — Ո՞րն է մեծագոյն գետը որ Եւրոպան կը կարէ արեւմուտքէն արեւելք. և ո՞ր ծովը կը թափի.— Ո՞րոնք են այն մեծ գետերը որ ուղղակի Ատլանտեան ովկիանոսը կը ըղխեն. — Ո՞րն է գերմանական դաշտագետինին մեծագոյն գետը. — Եւրոպայի ո՞ր մասերն են ուր ամէնէն քիչ կը գտնուին նաւարկելի գետեր։*

ԿԼԻՄԱՑ ԵՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպայի մեծագոյն մասը կը գտնուի հիւսիսային բարեխառն գօտիին տակ, և սակայն երկաք գլխաւոր կլիմաներ կը զանազանուին Եւրոպայի մէջ։

1. *Ովկիանոսային կամ ծովային կլիմայ, որ կը տիրէ Արեւմտեան Թրանսայի, Պելճիգայի, Հոլանտայի, Բրիտանական կղզիներուն ու հարաւային Նորվեկիոյ մէջ, որովհետեւ լայնութեան աստիճանին տակ գտնուած ցամաքային երկիրներու բարեխառնութենէն աւելի բարձր բարեխառնութիւն ունին, չնորհիւ Ատլանտեանի տաք հոսանքներուն (Կոլֆ-Սթրիմի)։*

Այսպէս մինչդեռ երկրագործութիւնը անկարելի կը թուի Լապրատորի մէջ (Հիւսիսային Ամերիկա), ընդհակառակն չատ ծաղկած է Անգլիոյ և Հոլանտայի մէջ։

Յունուար չատ աստիճ է Նիւ-Եօրք (Ամերիկա), որ սակայն միեւնոյն լայնութեան աստիճանին տակ կը գտնուի Նափոլիի հետ (Իտալիա)։

2. *Ցամաքային կլիմայ, առջինէն աւելի չոր, որ կը տիրէ ամբողջ արեւելեան Եւրոպայի մէջ, ուր չատ աստիճ կ'ըլլան ձմեռները և չատ տաք ամառները։*

Ռուսական գետերը ամէն ձմեռ կը սառին, բայց ամրան աստիճ չնմանութիւնը՝ բուսական կեանքը կ'ուժոլցնէ։

3. *Միջերկրականի կլիման, որ կը տիրէ Սպանիա, Իտալիա, Թուրքիա և Յունաստան, և զոր կը տաքցնեն Ափրիկէէն անցնող կիզիչ հովերը (հարաւային և հարաւ արեւելեան հովերը), կը զանազանուի մանաւանդ իր ձմեռներուն մեղմութեամբ և ամառներուն չորութեամբ։*

Այս պայմանները թոյլ կուտան որ մշտադալար ծառեր, ինչպէս է ձիթենին, աճին այս կլիմային տակ։ Նարնջենին ու լիմոնին ալ կ'աճին ամէնէն լաւ պատսպարուած մասերուն մէջ. բայց անոր փոխարէն հազուագիւտ են հոն գալարագիլ մարգագետինները։

Արտադրութիւններ. — *Եւրոպան կըրնայ բաժնուիլ երեք երկրագործական գօտիներու։*

1. *Միջերկրականի գօտին, ուր հողին երեսը այնքան չոր է որ արմաւիքներու և խաղողէն առնկերու մշակութեան չի գար չատ։ Ամէնէն աւելի կը յարմարի ծառերէն մշակութեանց, ինչպէս են նարնջենի, ձիթենի, թթենի, արմաւատնկ և այլն։*

2. *Կեդրոնական Եւրոպա, որ աւելի խառնաւորութիւն կ'ընդունի, և արմաւիքներու սահմանն է գերազանցելու։*

Արմաւատնկը կը մշակուի կեդրոնական Եւրոպայի ամէնէն նպաստաւորուած մասերուն մէջ։

3. *Հիւսիսային Եւրոպա, որ նախորդներէն կը զանազանուի իր հարուստ և ընդարձակ անտառներով, և ուր կը մշակուին նաեւ այն պիսի արմաւիքներ, որոնք կրնան ընտելանալ ազքատ հողի և նուազ ջերմութեան, ինչպէս են գարին և վարսակը։*

Կենդանիներ. — *Կենդանական կեանքը նուազ այլազան է Եւրոպայի քան Ասիոյ և Ափրիկէի մէջ. բայց կ'ընծայէ աւելի օգտակար տեսակներ և իսկոյն քիչ վնասակար կենդանիներ։*

Ընտանի ցեղերէն ձի, ոչխար, ձի, այծ, խոզ տարածուած են ամբողջ Եւրոպայի մէջ. բայց ամէնէն աւելի կը գտնուին հիւսիս-արեւմտեան ու կեդրոնական երկիրներուն և Ռուսիոյ անհուն տափաստաններուն մէջ. մինչդեռ ջերմատուածութիւնը, հաւատուածութիւնն ու մեղուատուածութիւնը կեդրոնացած են մանաւանդ հարաւային երկիրներու մէջ։ Հիւսիսի երկիրները՝ Սկանտինաւիա և Հիւսիսային Ռուսիա, ընտելացուցած են Ռեն կոչուած տեսակ մը եղջերուն որ անձնաւոր է մեր երկիրներուն։

Գալով վայրի կենդանիներուն, մարդուն աննդեան ծառայողներէն եղջերու, այծեամ, նապաստակ, և որսի թռչուններ կը վիսան մանաւանդ Ռուսիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ և Թուրքիոյ անտառներուն մէջ. մանչատեսակ կենդանիները, սիւս, կզաքիս, և այլն, կը նախընտրեն Հիւսիսային Եւրոպայի եղերքները. միակ կաթնաղ գազաններն են գայլը, որ ամէնէն աւելի կը գտնուի Ռուսիոյ և Արեւելեան Գերմանիոյ անտառներուն ու դաշտագետիններուն մէջ, և արջը՝ որ չատ անգամ կը տեսնուի Պիրենեան, Ալպեան, և Կարպաթեան լեռներուն մէջ և որ սակայն կ'ապրի մանաւանդ Ռուսիա և Սկանտինաւիա։

Հանդուցեալ արտադրութիւններ. — *Եւրոպա՝ թէպէտ թանկագին մետաղներու մասին ազքատ՝ առատօրէն ունի գործածական մետաղներէն՝ երկաթ, կապար, պղինձ, անագ և մղպիկ. հանքային կիզանիւթներէն՝ հանքածուխ և քարիւղ։*

Եւրոպա ունի նաև ազուճակի, ինչպէս նաեւ մարմարիոնի և շինութեան քարերու հարուստ հանքեր։

Հարցաքնն. — *Որոնք են Ամերիկայի այն երկիրները որ Եւրոպայի հետ միեւնոյն լայնութեան աստիճանին տակ կը գտնուին. — Եւրոպայի կլիման այդ երկիրներու կլիմային միեւնոյնն է. — Ինչո՞ւ համար արեւմտեան Եւրոպայի կլիման աւելի մեղմ է ոքքան չէր սպասուեր իր լայնութեան աստիճանին. — Ինչ տեսակ կլիմայ ունի Արեւելեան Եւրոպա. — Որոնք են Եւրոպայի ամէնէն անծառանդ մասերը. — Ինչով կը զանազանուի Միջերկրականի ծովեզերքներուն կլիման և ծր տունկերը ամէնէն ազէկ կը յարմարին այս կլիմային. — Ինչո՞ւ համար անապատներ չի կան Եւրոպայի մէջ. — Որոնք են Եւրոպայի կլիմային առանձնայատկութիւնները. — Եւրոպայի քարտէսի մը վրայ նշանակեցէք նաղնջենիի, ձիթենիի, թթենիի, կաղնիի, և եղեւնիի աճման սահմանը. — Տարբեր գոյներով ցոյց տուէք որթատունկի, ցորենի և ճակնդեղի արտադրութեան գլխաւոր կեդրոնները, անտառաշատ երկիրները. — Ընտանի անասուններու մասին ինչպէս է Եւրոպա. — Որոնք են Եւրոպայի գլխաւոր հանքային հարստութիւնները և ինչ գեր կը խաղան անոր ճարտարարուեստական զարգացման մէջ։*

ԲՆԱԿԻՉ, ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ, ԿՐՕՆՔ ԱԶԳ ԵՒ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպա կրնայ բաժնուիլ 3 մեծ մասերու, Հիւսիսային, Կեդրոնական և Հարաւային։ Ասոնց իւրաքանչիւրը կը պարունակէ չատ մը երկիրներ կամ տէրութիւններ, որոնք իրարմէ կը զանազանուին իրենց բարքերով ու լեզուով։

Հիւսիսային մասին մէջ կը գտնուին 4 երկիրներ Մեծն-Բրիտանիա, Տանիմարք, Շուէտ-Նորվեկիա և Ռուսիա։

կեդրոնական մասը կը պարունակէ Ֆռանսա, Զուիցերիա, Պելճիգա, Հոլանտա, Գերմանիա և Աւստրօ-Հունգարիա։

Հարաւային Եւրոպա կը պարունակէ Սպանիա և Փորթուկալ, Իտալիա, Ռումանիա, Սերպիա, Գարաստաղ, Եւրոպական Թուրքիա, Պուլկարիա և Յունաստան։

Ամբողջ Եւրոպա ունի 404 միլիոն բնակիչ, որ ըսել է բոլոր երկրագնտիս բնակիչներուն մէկ քառորդը։ Ասոնց գրեթէ ամէնքն ալ կը պատկանին Սպիտակ կամ Կովկասեան գեղին, բաց ի Լաբոնները և Սամոյէտները (Հիւսիսային Ռուսիա) որոնք Մոնկոլեան ցեղէն են։

Եւրոպայի բնակիչները իրենց խօսած լեզուներուն նայելով կրնան բաժնուիլ 3 մեծ խումբերու կամ ընտանիքներու. այսպէս՝

1. Նորալատին ընտանիք, *որ կը պարունակէ Ֆռանսայիները (Ֆռանսայի, Պելճիքայի և Զուիցերիոյ մէջ), Իտալացիները (Իտալիոյ մէջ), Սպանիոլները և Փորթուկէզները (Սպանիական ցամաքակղզիին մէջ), և Ռումէնները (Ռումանիոյ ու Աւստրօ-Հունգարիոյ մէջ)։ Այս ընտանիքին կրնան վերաբերուիլ նաև Յոյները (Յունաստան և Թուրքիոյ մէջ)։*

2. Գերմանական ընտանիք, *որ կը պարունակէ Գերմանները (Գերմանիոյ, Զուիցերիոյ և Աւստրիոյ մէջ), Սկանտինաւեան ազգերը (Շուէտի, Նորվեկիոյ և Տանիմարքայի մէջ), Հոլանտացիները և Անկլօ-Սաքսոնները (Մեծն Բրիտանիոյ մէջ)։*

3. Սլաւական ընտանիք, *որ կը պարունակէ Ռուսերը (Ռուսիոյ մէջ), Լեհերը (Ռուսիոյ, Բրուսիոյ և Աւստրիոյ մէջ), Չեհերը (Աւստրիոյ մէջ), Խռուաթներն ու Սլաւոնները (Աւստրօ-Հունգարիոյ մէջ), Սերպերն ու Պուլկարները (Աւստրօ-Հունգարիոյ, Սերպիոյ և Թուրքիոյ մէջ), Պուլկարները (Եւրոպական Թուրքիոյ և Պուլկարիոյ մէջ, և Սեւ Լեռնցիները (Գարաստաղի մէջ)։*

Այս երեք մեծ խումբերէն զատ կան նաեւ նուազ բազմաթիւ խումբեր. այսպէս՝

Ուրալեան ընտանիք, *որ կը պարունակէ Թուրքերն ու Թաթարները (Եւրոպական Թուրքիա և Ռուսիա), Մաճառները (Հունգարիա) և Լաբոնները (Ռուսիա և Սկանտինաւիա)։*

Սեմական ընտանիք, *որ կը պարունակէ բոլոր Եւրոպայի մէջ ցրուած Հրէաները (իբր 6 միլիոն)։*

Քրիստոնէութիւնը կը տիրէ գրեթէ ամբողջ Եւրոպայի մէջ. Թէպէտ կան նաեւ Մահմետական ազգեր և Հրէաներ։

Մահմետական են Պալքանեան ցամաքակղզիին Թուրքերն ու Հարաւային Ռուսիոյ Թաթարները, որոնք կը հաշուուին իբր 8 միլիոն։

Հրէաները տարածուած են ամէն կողմ և պահած են իրենց մասնաւոր կրօնքը։

Եւրոպա իր բնակիչներուն գործունէութեան կը պարտի իր ճարտարարուեստական ու առեւտրական մեծ չարժումը. և անոնց ձեռնարկու ոգիին չնորհիւ է որ իր գերակշռութիւնը հաստատած է աշխարհիս մեծ մասերուն վրայ։

Այս աէրութիւնները իրարմէ կը տարբերին իրենց ընդարձակութեամբ և կարեւորութեամբ. ամէնէն ընդարձակը որ է Ռուսիա՝ Եւրոպայի կէսէն աւելին կը գրաւէ և 100 միլիոնէ աւելի բնակիչ ունի։ Ամէնէն փոքրը՝ որ է Մոնթէնեկրօ՝ Եւրոպայի տակաւ մէկ հազարերորդ մասը կը կազմէ և ունի միայն 230,000 բնակիչ։ Ամէնէն բազմամարդը իր տարածութեան նայելով՝ Պելճիքան է որ Ռուսիայէն 480 անգամ փոքր ըլլալով կը մնուցանէ 6,845,000 հոգի։ Այս հաշուով Ռուսիա 1000 միլիոնէն աւելի բնակիչ ունենալու էր։

Եւրոպայի 6 կլխաւոր աէրութիւններն են Ռուսիա, Գերմանիա, Աւստրօ-Հունգարիա, Ֆռանսա, Անգլիա, Իտալիա։

Եւրոպական աէրութիւնները իրարմէ կը տարբերին վերջապէս իրենց քաղաքական կազմակերպութեամբ։ Բացի Ֆռանսայէն, Զուիցերիայէն և Բորթուկալէն որոնք հանրապետութիւն են, մնացեալ աէրութիւնները կը կառավարուին միապետ (իշխան, թագաւոր, կայսր)։

Հարցապատ. — Ըրդեն բնակիչ ունի Եւրոպա և մարդկային ո՞ր ցեղերուն կը պատկանին անոնք.—Եւրոպայի մէջ տիրող կրօնքը ո՞րն է. — Քանի՞ երկիրներու կը բաժնուի Եւրոպա. — Աշխարհիս մէջ մասերուն հետ բազդատութեամբ Եւրոպա ի՞նչ առաւելութիւններ ունի։

ԳԼՈՒԽ Ը.

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

1. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ

Բրիտանական կղզիներու կամ Անգլիոյ *թագաւորութիւնը* կը տարածուի Եւրոպայի հիւսիս-արեւմտեան կողմ, Ատլանտեան ովկիանոսին ու Հիւսիսային ծովուն մէջտեղ։ Կը պարունակէ երկու մեծ կղզիներ, Մեծն Բրիտանիա և Իրլանտա, *որոնց չուրջը կը գտնուին բազմաթիւ փոքր կղզիներ։* Հետայ՝ Մանչի ծովուն մէջ. Սիլլի կամ Սոլլինկ կղզիք՝ Գոռնուալլի թերակղզիին հարաւ-արեւմտեան կողմը. Մէնն և Էնկլսի Իրլանտայի ծովուն մէջ. Հեպրիտեանք Սկովտիոյ արեւմտեան կողմը. Օրքատեան և Շեթլընտ կղզիները հիւսիսակողմը։ Անգլօ-Նորմանեական կղզիք՝ Մանչի մէջ Ֆրանս. ծովեզերքին մօտ։

Բրիտանական կղզիներուն ամբողջ տարածութիւնն է 314660 քիլոմէթր քառակուսի։ Բնակիչներուն թիւը՝ 42 միլիոն։

Մեծն Բրիտանիա *կը պարունակէ հարաւային կողմը՝ Անգլիա, հիւսիսակողմը՝ Սկովտիա, և արեւմտեան կողմը՝ Կալլեսի երկիր։ Իր հիւսիսային և արեւմտեան մասերուն մէջ ծածկուած է նուազ բարձր բայց գեղեցիկ լեռներով. իսկ հարաւ-արեւելեան մասին մէջ դաշտային է։*

Իրլանտա *որ ծովախորշերով ու թերակղզիներով ծամածուռ ծովափունք մը ունի, իր ներքին մասին մէկ կը ձեւացնէ մեծ դաշտահարթ մը՝ զարմանալի արօտաւետներով ծածկուած, զոր տեղ տեղ կ'ընդմիջեն ճախճախուտ գետիններ։*

Բրիտանական կղզիները ունին ծովային կլիմայ, որ զով է չափազանց տաքէ և չափազանց ցուրտէ, բայց ենթակայ են յաճախադէպ ու թանձր մշուշներու։

Անգլիոյ և Բրիտանական կղզիներուն մայրաքաղաքն է՝

Լոնտրա (4½ *միլիոն բնակիչ, իր արուարձաններով մէկտեղ իբր 7½ միլիոն*) *որ աշխարհիս առաջին վաճառականական նաւահանգիստն է և միանգամայն երկրագունտին մեծագոյն քաղաքը իր տարածութեամբ և բազմամարդութեամբ։*

Լոնտրայէն յետոյ Անգլիոյ գլխաւոր քաղաքներն են՝

Լիվրբուլ (700,000) *Իրլանտայի ծովուն վրայ, Անգլիոյ երկրորդ վաճառականական նաւահանգիստը։*

Մանչեսթեր (550,000) *Լիվրբուլի մօտ, բամպակեղէն կերպասներու համար աշխարհիս առաջին տպարանն է։*

Պրմինկեմ (530,000) *Անգլիոյ կեդրոնը. ունի թնդանօթի, մեքենաներու գործարաններ։*

Շեֆֆիլտ (380,000) *Մանչեսթերի արեւելեան կողմը, անուանի է իր դանակեղէններով։*

Լիտըս (440,000) և Պրատֆորտ (285,000) *ունին մեծ վաճառականութիւն բուրդի և չուխայի։*

Հըլլ, *Հիւսիսային ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է և Հիւսիսային Եւրոպայի նաւահանգիստներուն հետ յարաբերութիւն ունի։*

Նիւքասըլ, *նոյնպէս Հիւսիսային ծովուն վրայ, ի՛արտածէ առատ հանքածուխ։*

Քարտիֆ, *Պրիսթոլի ծոցին վրայ նաւահանգիստ. ի՛արտածէ հանքածուխ։*

Բորթսմաութ և Բլիմաութ՝ *Մանչի վրայ, Անգլիոյ գլխաւոր պատերազմական նաւահանգիստներն են։*

Տուվր և Սաութհեմբթըն՝ *Մանչի վրայ բանուկ նաւահանգիստներ են, որոնք առօրեայ յարաբերութիւն ունին Ֆռանսայի հետ։*

Սկովտիոյ մայրաքաղաքն է՝

Էդինպուրկ (320,000)։ *Հիւսիսի Աթէնքը. բայց ամէնէն բազմամարդ և վաճառաշահ քաղաքն է Կլասկօ (760,000)։*

Իրլանտայի մայրաքաղաքն է Տպլին (350 *հազար*) *Իրլանտայի ծովուն վրայ, նաւահանգիստ։*

Պելֆաստ (350,000)։ *Իրլանտայի ճարտարարուեստական գլխաւոր քաղաքն է։*

Անգլիա աշխարհիս ամէնէն աւելի լաւ մշակուած երկիրներէն մէկն է. ունի չատ կատարելագործուած երկրագործութիւն. իր խոնաւ ու չրաստան հողը նպաստաւոր է մարգագետիններու և արօտատեղիներու, որոնք կը մնուցանեն ոչխարի, կամ հնաւատու կովերու, ոչխարի և ձիու ընտիր ցեղեր։

Մեծն Բրիտանիա առաջին կարգը կը գրաւէ հանքածուխի արտադրութեան, վաճառա-

կանութեան, ճարտարարուեստի և ծովային զօրութեան մասին։

Անգլիոյ անտեսական բարգաւաճութեան մեծագոյն պատճառներէն մէկն է իր գաղթական կայսրութեան անբաւ տարածութիւնը։ Անգլիա իր գաղթականութիւնները մէջ կը գտնէ ոչ միայն անսահման հրապարակներ՝ իր վաճառականութեան համար, այլ և նախնական նիւթերու անսպառ աղբիւր մը՝ իր ճարտարարուեստին համար։ Աշխարհիս հինգ մասերուն մէջ ցրուած այս գաղթականութիւններն ամբողջ Եւրոպայի կրկնակի աւելի տարածութիւն ունին և կը պարունակեն իբր 370 միլիոն բնակիչ։

Եւրոպայի մէջ Անգլիոյ կը պատկանի ձիպրալդար բերդաքաղաքը՝ որ համանուն նեղուցին մուտքին կը տիրէ, և Մալդա կղզին՝ Միջերկրականի կեդրոնական մասին մէջ։

Անգլիացիները չատ գործնական և չատ յամառ ժողովուրդ մըն են. հին սովորութեանց նախանձախնդիր թէպէտ հաւատարիմ հպատակներն են իրենց վեհապետին։ Մեծ մասամբ բողբոջական են. կաթոլիկութիւնը կը տիրէ Իրլանտայի մէջ։ Շատ հարուստ են, բայց հարստութիւնը կը վերաբերի փոքրամանութեան, և չատ թշուառներ հազիւ ապրուստ մը կրնան գտնել, մանաւանդ Իրլանտայի գիւղացիները։

Հարցապատ. — Անգլիա քանի՞ մասերէ կը բաղկանայ և ի՞նչ դիրք ունի. — Ինչ տեսակ երկիր է Սկովտիա. — Բրիտանական կղզիներու կլիման ինչպէս է. — Անգլիա ինչ առաւելութիւն կը պարտի իր դիրքին. — Գծեցէ՛ք տախտակին վրայ Մեծն-Բրիտանիոյ քարտէսը և նշանակեցէ՛ք վաճառականական և ճարտարարուեստական գլխաւոր քաղաքները. — Ո՞րն է Անգլիայի մայրաքաղաքը և ինչ գիտես անոր վրայ. — Լօնտրայէն յետոյ Անգլիայի երկրորդ նաւահանգիստը ո՞րն է. — Ինչ բանով կարեւոր են Մանչեսթր, Փրմինկէմ, Շեֆֆիլտ, Նիւքէսըլ քաղաքները. — Որո՞նք են Անգլիայի գլխաւոր պատերազմական նաւահանգիստները. — Ո՞րն է Սկովտիայի մայրաքաղաքը. — Իրլանտայի մայրաքաղաքը։

2. ՏԱՆԸՄԱՐՔԱ

Տանիմարքայի թագաւորութիւնը կը բաղկանայ Եւրոպայի Թերակղզիէն և Դանիական Արշիպեղագոսէն, որոնց գլխաւոր կղզիներն են Սեէլանտ, Ֆիւնիա, Լալանտ։



Պատկ. 71. — ՆՈՐՎԵԿԻԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ա. Պօռկունտի եկեղեցին. — Բ. Կուտվանկէնի փիօրտը

Նորվեկիա Եւրոպայի ամենեն նկարագեղ երկիրներէն մէկն է և բազմաթիւ ճամբորդներ ամեն տարի հոն կ'երթան կիսշերուան արեւը դիտելու ու ֆիորտներուն մէջ թափառելու։ Ֆիորտները ծովերու խոր և նեղ մասեր են որոնք երթալով ցամաքին մէջ շատ յառաջ կ'երթան և որոնց երկու կողմը բարձր ժայռերէ կազմուած պատերով փակուած են։ Այդ ժայռերուն շատ անգամ ջրվէժներ կ'իյնան վար կամ սառնարաններ կը կախուին անդունդին վրայ։

Եւրոպայի մէջ Անգլիոյ կը պատկանի ձիպրալդար բերդաքաղաքը՝ որ համանուն նեղուցին մուտքին կը տիրէ, և Մալդա կղզին՝ Միջերկրականի կեդրոնական մասին մէջ։

Անգլիացիները չատ գործնական և չատ յամառ ժողովուրդ մըն են. հին սովորութեանց նախանձախնդիր թէպէտ հաւատարիմ հպատակներն են իրենց վեհապետին։ Մեծ մասամբ բողբոջական են. կաթոլիկութիւնը կը տիրէ Իրլանտայի մէջ։ Շատ հարուստ են, բայց հարստութիւնը կը վերաբերի փոքրամանութեան, և չատ թշուառներ հազիւ ապրուստ մը կրնան գտնել, մանաւանդ Իրլանտայի գիւղացիները։

Հարցապատ. — Անգլիա քանի՞ մասերէ կը բաղկանայ և ի՞նչ դիրք ունի. — Ինչ տեսակ երկիր է Սկովտիա. — Բրիտանական կղզիներու կլիման ինչպէս է. — Անգլիա ինչ առաւելութիւն կը պարտի իր դիրքին. — Գծեցէ՛ք տախտակին վրայ Մեծն-Բրիտանիոյ քարտէսը և նշանակեցէ՛ք վաճառականական և ճարտարարուեստական գլխաւոր քաղաքները. — Ո՞րն է Անգլիայի մայրաքաղաքը և ինչ գիտես անոր վրայ. — Լօնտրայէն յետոյ Անգլիայի երկրորդ նաւահանգիստը ո՞րն է. — Ինչ բանով կարեւոր են Մանչեսթր, Փրմինկէմ, Շեֆֆիլտ, Նիւքէսըլ քաղաքները. — Որո՞նք են Անգլիայի գլխաւոր պատերազմական նաւահանգիստները. — Ո՞րն է Սկովտիայի մայրաքաղաքը. — Իրլանտայի մայրաքաղաքը։

մարկն գլխաւոր նաւահանգիստն է Քօքենհակ (514000 բն.), Սէէլանտ կղզիին մէջ՝ Սուննտ նեղուցին վրայ։

Տանիմարքա իսկապէս երկրագործական երկիր մըն է. իր միակ կարեւոր ճարտարարուեստն է ձկնորսութիւնը։

Տանիմարքայի կը պատկանին Եւրոպայի մէջ՝ Ֆեր-Օեր կղզիները ու Իսլանտա մեծ և տրթաբխային կղզին։

3. ՍԿԱՆԴԻՆԱՒԻԱ

Սկանտինաւեան ցամաքակղզին կը պարունակէ երկու որոշ երկիրներ՝ Շուէտ և Նորվեկիա, որոնք ունին առանձին վարչութիւն և առանձին թագաւորներ թէպէտ մինչեւ 1905 մէկ թագաւորով կը կառավարուէին։

Նորվեկիա լեռնային ու անտառներով ծածկուած բարձր երկիր մըն է. իր խորաքանդ ծովեզերքները կատուած են Ֆիորս կոչուած նեղ ու խորունկ անթիւ ծոցերով։

Շուէտ դաշտային է, և մարգագետիններով, վիճերով ու անհուն անտառներով ծածկուած։

Նորվեկիոյ տարածութիւնն է 325,000 քմ. քառկ., բնակիչներուն թիւը կը հասնի 2 միլիոն 240000 ի։

Քրիսթիանիա (230,000) Նորվեկիոյ մայրաքաղաքն ու առեւտրական նաւահանգիստը՝ կը կանգնի համանուն ծոցին խորը։

Պէրկեն վաճառաչահ և բանուկ նաւահանգիստ, որ ունի չատ կարեւոր նաւարաններ։

Շուէտ ունի 450,000 քմ. քառ. տարածութիւն և իբր 5 միլիոն բնակիչ։

Սթոքհոլմ (330000) Շուէտի մայրաքաղաքն ու առաջին նաւահանգիստը՝ շինուած է Մէլար լիճին վրայ։

Ուփսալա ունի անուանի համալսարան, և

Կոթէնպուրկ՝ Շուէտի երկրորդ քաղաքն ու ամենէն վաճառաչահ նաւահանգիստը։

Նորվեկիոյ հիւսիս արեւմտեան ծովեզերին վրայ ցրուած են Լոֆոտեն կղզիները, որոնց մօտ տեղի կ'ունենայ Մօռիւի ձկնորսութիւնը։ Ամէն տարի այս չուրերուն մէջ որսացուած «մօռիւ» նեռուն թիւը 22 միլիոնը կ'անցնի։

Սկանտինաւեան ցամաքակղզին տարին 6–7 ամիսներ ամբողջ ձիւնով ծածկուած կը մնայ, բայց վաճառականական մեծ կարեւորութիւն ունի չնորհիւ իր հարուստ ձկնորսարաններուն, եղեւինի անտառներուն, երկաթի և պղնձի հանքերուն։

Հարցապատ. — Որո՞նք են Սկանտինաւեան երկիրները. — Ինչի՞ մասերէ կը բաղկանայ Տանիմարքայի Թագաւորութիւնը. — Ինչ տեսակ երկիր է Տանիմարքա. — Ո՞րն է գլխաւոր հարստութիւնը. — Տանիմարքայի մայրաքաղաքը ո՞րն է. — Եւրոպայի մէջ ինչ ստացուածքներ ունի Տանիմարքա։

Սկանտինաւեան ցամաքակղզին կլիման ինչպէս է. — Շուէտի և Նորվեկիայի բնական հարստութիւնները ինչ բանի մէջ կը կայանան. — Որո՞նք են այս երկու երկիրներուն մայրաքաղաքները։

4. ՌՈՒՍԻԱ

Ռուսական Կայսրութիւնը կը գրաւէ Եւրոպայի կէսէն աւելին։ Տարածութիւնն է $5^1/_2$ միլիոն քիլօմէթր քառակուսի։ Բնակիչներուն թիւը 110 միլիոնէն աւելի է. (Ասիական Ռուսիան ալ մէկտեղ առնելով 136 միլիոնը կ'անցնի)։ Ռուսիոյ կայսրը կը կոչուի Ցար։

Ռուսաստան անհուն դաշտագետին մըն է, որուն միօրինակութիւնը հազիւ կը խզուի բլուրներու մէկ քանի չղթաներ։ Հիւսիսի դաշտագետինները ցուրտ և անբեր են և ոչ այնքան բազմամարդ։ Ֆինլանտիոյ ծոցին չուրջը՝ այս դաշտագետինները ծածկուած են անտառներով ու անդամալիճերով։ Կեդրոնական ու արեւմտեան մասը որ Սեւ Հողեր կը կոչուի՝ չատ արգաւանդ է և խիտ յարմար ցորենի և վուշի մշակութեան։ Հարաւային և հարաւ արեւելեան կողմերը կը գտնուին խոտաւէտ դաշտագետիններ, Տափաստան կոչուած, որ կը մնուցանեն բազմաթիւ ձգներ, ոչխարներ ու ձիեր։

Ռուսիոյ կլիման ծայրահեղ է, ձմեռը չատ ցուրտ, ամառը չատ տաք։

Կայսրութեան մայրաքաղաքն է Ս. Փեթերսպուրկ (1,467,000) նաւահանգիստ Նեվա գետին բերանը։ Այս քաղաքը՝ զոր հիմնեց Մեծն Պետրոս 1703ին, պաշտպանուած է Քրոնշտատի ամրոցով։

Հին մայրաքաղաքը՝ Մոսկուա (1,480,000) կայսրութեան ճիշդ կեդրոնը՝ վաճառաչահ և ճարտարարուեստ քաղաք է։

Վարշավիա (675,000) *Վիսթուլ գետին վրայ՝ Բոլոնիոյ հին թագաւորութեան մայրաքաղաքն էր։*

Ռիկա (300,000) *նաւահանգիստ Տուինա գետին բերանը, կ՚արտածէ չինութեան փայտ, կանեփ և վուշ՝ պալթիկեան գաւառներէ։*

Օսեսա (40,000) *նաւահանգիստ Սեւ Ծովուն վրայ. կ՚արտածէ մնծաքանակ ցորեն։*

Քիեվ (250,000) *Ռուսերուն սուրբ քաղաքն է։*

Ռուսիա Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ՝ ամէնէն չատ արմաւիք, վուշ և կանեփ արտադրող երկիրն է։ Առաջին կարգը կը գրաւէ պաճարաբուծութեան մասին։

Հարցարան. — Որո՞նք են այն բնական սահմանները որ Ռուսիայի Եւրոպական մասը Ասիական մասէն կը զատեն. — Ինչ տեսակ երկիր է Ռուսիա. — Ինչ է դէպ ի հիւսիսային ծովերը հոսող Ռուսական գետերուն բնութիւնը. — Որո՞նք են Պալթիկ և Սպիտակ ծովերը թափող Ռուսական գետերը. — Ռուսիոյ ջրագրութեան մէջ գետերէն զատ նչանակութեան արժանի բան մը չկա՞յ. — Հողին մակերեւոյթին տափակութիւնը ինչ առաւելութիւններ չնորհած է Ռուսիոյ գետերուն.— Ռուսիոյ կլիմային գլխաւոր յատկանիշները որո՞նք են. — Հիւսիսային կողմերը տիրող կլիմայական պայմանները որո՞նք են. — Լայնութեան քանի՞ւ բոզդ աստիճանէն սկսելով կը գտնուին անտառները.— Սեւ հողերուն մշակութիւնը միայն ցորենն է. — Ո՞րն է այն մեծ նաւահանգիստը ուրկէ կ՚արտածուի սեւ հողերուն ցորենը։

Ինչ է Ռուսական կայսրութեան բովանդակ տարածութիւնը. — Ո՞րն է այն երկիրը որ իր տարածութիւնով ամէնէն ուշիլ կը մտնէ Ռուսիոյ. — Եւրոպայի այն տերութիւններուն մէջ որոնք աշխարհիս այլ և այլ մասերուն մէջ գրաւած գաղթականութիւններ ունին, չկա՞յ բնաւ երկիր մը որ իր գրաւած տարածութիւնով կարենայ բաղդատիլ Ռուսական կայսրութեան հետ. — Եւրոպայի մէջ կան այնքան բազմամարդ երկիրներ որքան Ռուսիա. — Ռուսիոյ ամէնէն մարգաշատ մասը ո՞րն է. — Ռուսիոյ բնակիչներն համացի՞ղ են. — Հիւսիսային երկիրներուն բնակիչներն որոնք են. —Ո՞րն է Ռուսիոյ նախկին մայրաքաղաքը. — Որո՞նք են Ռուսիոյ մեծ քաղաքները. — Ինչ բանի կապուած է Օտեսայի կարեւորութիւնը. — Ո՞րն է Պալթիկեան գաւառներուն գլխաւոր նաւահանգիստը.— Վոլկայի վրայ գտնուած գլխ. քաղաքները որո՞նք են։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱ

1. ՖՐԱՆՍԱ

Ֆրանսա Կեդրոնական Եւրոպայի արեւմտեան մասը կը գրաւէ։ Բևեռէն և հասարակածէն հաւասարապէս հեռու ըլլալով՝ քաղցր ու բարեխառն կլիմայ մը կը վայելէ։ Ունի 530000 քիլոմէթր քառակուսի տարածութիւն և 39 միլիոն բնակիչ։

Երկրին հիւսիսային և արեւմտեան մասերը դաշտային են. հարաւային ու արեւելեան մասերը՝ ծածկուած են լեռներով։

Ֆրանսայի մայրաքաղաքն է

Բարիզ (2,767,000 բն.) *Այն գետին երկու եզերքներուն վրայ. աշխարհիս առաջին քաղաքն է գրականութեան, գիտութիւններու և արուեստներու մասին։*

Բազմամարդութեան մասին երրորդ կարգը կը գրաւէ. առաջին կարգը կը պատկանի Լոնտոնի և երկրորդ կարգը Նիւ-Եորքի։

Լիօն (467,000) *Սոն և Ռոն գետերուն իրար խառնուած տեղը. ունի մետաքսեղէնի գործարաններ։*

Մարսիլիա (320000) *Միջերկրականի վրայ՝ Ֆրանսայի առաջին վաճառականական նաւահանգիստն է։*

Որso (256.700) *նաւահանգիստ Իտալիոյ սահմանի վրայ։ Աստղանի է իր ընտիր գինիներով։*

Լիլ (215,600) *Ֆրանսայի հիւսիսակողմը՝ ճարտարարուեստական մեծ քաղաք է։*

Թուլուզ (150,000 *կաթոլիկ գետին վրայ մեծ և հարուստ քաղաք և առեւտրական կեդրոն ընդ մէջ Ֆրանսայի և Սպանիոյ։*

Նանթ *Լուար գետին վրայ, չատ վաճառաշատ նաւահանգիստ։*

Սեներ-Էքիեն *նանգածուխի մեծ խառնուքի մը կեդրոնը։ Ունի գինագործարաններ և ժապաւէնի բազմաթիւ գործարաններ։*

Ռուան, *Սէն գետին վրայ, վաճառաշատ նաւահանգիստ։ Ունի բամպակեղէնի գործարաններ։*

Լը Հավր, *Սէն գետին բերանը, Ֆրանսայի երկրորդ առեւտրական նաւահանգիստը, որ կանոնաւոր յարաբերութիւն ունի Անգլիոյ, Հիւսիսային Եւրոպայի և Նոր Աշխարհի հետ։*


ԱՄՍՏԵՐԴԱՄ
ՀԱԼԱՆԴԱ
ՀՈԼԱՆԴԱ
ՀՈԼԱՆԴԱ
ՀՈ

Ռուպէ՝ Լիլի մօտ, բրդեղէն կերպասներու գործարաններ ունի։

Ռէյմս, ուր մանարաններ, բրդեղէնի հիւսարաններ, և չամբանակա գինիի մեծ առուտուր։ Իր գեղեցիկ Մայր-Եկեղեցիին մէջ է որ կ'օծուէին Ֆռանսայի թագաւորները։

Նիս, Միջերկրականի վրայ, նշանաւոր է իր կլիմային քաղցրութեամբ։

Նիսի և Մարսիլիոյ մէջտեղ՝ նոյնպէս Միջերկրականի վրայ՝ կարեւոր է նաեւ Թուլօն Ֆռանսայի առաջին զինուորական նաւահանգիստը և կարեւորագոյն նաւարանը։

Պատկ. 72.
ԹՈՒԼՕՆ ՄՈՒԾԻԿԸ ՄԸ

Ատլանդեան ովկիանոսի վրայ նշանաւոր է Պրեսթ բովանդակ Եւրոպայի ամէնէն ընդարձակ և ամէնէն ապահով զինուորական նաւահանգիստներէն մին։

Ֆռանսա Եւրոպայի ամէնէն բարեբեր երկիրներէն մէկն է, ուր կը յաջողին ամէն տեսակ մշակութիւններ։

Կեդրոնական և հարաւ արեւմտեան մասերը կ'արտադրեն առատ արմաիք, եգիպտացորեն, չաղանակ և գինի, որ արմաիքէն յատոյ Ֆռանսայի երկրագործական մեծագոյն հարստութիւններէն մէկն է։

Միջերկրականի սահմանակից գաւառներուն մէջ կ'աճին նաեւ ձիթենի, թզենի և թթենի։

Ցորենն ու գետնախնձորը ամէն տեղ կը մշակուին։

Ֆռանսա աշխարհիս ճարտարարուեստական մեծ պետութիւններէն մէկն է։ Թէպէտ ճարտարագործական արտադրութիւններու քանակի մասին Անգլիոյ և Միացեալ Նահանգներուն չի կրնար հասնիլ, բայց անոնց ընտիր ճաշակին ու կատարելագործութեան տեսակէտով առաջնութիւնը ուրիշ և ոչ մէկ ժողովուրդի չի տար։

Վաճառականութեան գալով Ֆռանսա իրաւ է որ Անգլիոյ չի կրնար հասնիլ, բայց Միացեալ-Նահանգներէն ու Գերմանիայէն ալ վար չի մնար։

Անգլիայէն յետոյ Ֆռանսա բոլոր Եւրոպական աէրութեանց մէջ՝ ամէնէն աւելի ընդարձակ գաղթականութիւն ունեցող երկիրն է։

Հարցարան. — Որո՞նք են Ֆռանսայի գլխաւոր լեռնաշղթաները. — Ֆռանսայի կլիման ինչպէս է. — Որո՞նք են Ֆռանսայի գլխաւոր արտադրութիւնները բուսական, կենդանական եւ հանքային. — Որո՞նք են Ֆռանսայի զինուորական նաւահանգիստները և առեւտրական նաւահանգիստները. — Ինչ է Ֆռանսայի կառավարութեան ձեւը. — Ֆռանսա երկրագործական երկիր է. — Ինչ արմտիքներ կը մշակուին այս երկրին մէջ. ո՞ւր կը մշակուին ամէնէն աւելի եգիպտացորեն ու գետնախնձորը. — Որո՞նք են այգեգործական գլխաւոր կեդրոնները. — Որո՞նք են բուրգի, մետաքսի եւ բամպակի հիւսուածական ճարտարարուեստին կեդրոնները. — Որո՞նք են Ֆռանսայի ամէնէն վաճառաշահ երեք քաղաքները. — Ինչպէս կը բազդատուի Ֆռանսա Անգլիայի հետ ճարտարարուեստական տեսակէտով — Ֆռանսայի ո՞ր մասին մէջ աւելի առատածուած է ճարտարարուեստը։

2. ՋՈՒԻՑԵՐԻԱ

Ջուիցերիա փոքր երկիր մըն է Եւրոպայի հիւսիս կեդրոնը, և բնաւ ծով չի տեսներ։ Ունի 41,000 քիլօմէթր քառակուսի տարածութիւն և $3^1/_2$ միլիօն բնակիչ։

Բազմաթիւ տարաբնակներ Ջուիցերիա կ'այցելեն ամէն տարի հետզհետէ դիտելու համար անոր բարձր լեռները, առուները, գեղեցիկ լիճերն ու նկարագեղ գիւղերը։

Ջուիցերիա բաժնուած է 22 դաշնակից նահանգներու, որոնք կը ձեւացնեն Հելվեթիական Դաշնակցութիւնը։

Դաշնակցութեան մայրաքաղաքն է՝

Պեռն (70,000) Աար գետին վրայ։

Կարեւոր քաղաքներ են՝

Ձիւնեւրա (110000) համանուն լճին հարաւային ծայրը։ Անուանի է իր գոնարեղէններով և ժամացոյցներով։

Պալ (120000) Հռէնոսի վրայ, վաճառաշահ քաղաք։

Ցուրիխ (180000) համանուն լճին վրայ ճարտարարուեստ և վաճառաշահ քաղաք։ Ունի մետաքսեղէնի գործարաններ։

Լօզան (60000) Լէման կամ Ձիւնեւրա լիճին հիւսիսային եզերքը, Ջուիցերիոյ գեղեցկագոյն քաղաքներէն մէկն է։

Զուիցերիացիները Գերմաներէն կը խօսին հիւսիսային և արեւելեան կողմերը, Ֆռանսերէն՝ Ֆռանսայի մօտերը, և իտալերէն՝ Իտալիոյ սահմանագլխին վրայ։

Զուիցերիա կը մնուցանէ անթիւ հօտեր կովու որոնց կաթէն կը շինեն Կրիւյէրի համբաւաւոր պանիրը։

Հողը ընդհանրապէս աղքատ է, սակայն բնակիչները խիստ քաջաբուեստ են։

Հակառակ լեռնային երկիր մը ըլլալուն, Զուիցերիա՝ իր արօտատեղիներուն, իր անտառներուն, իր ճարտարարուեստին, իր կրկամուղիներուն և վերջապէս ժողովրդական կրթութեան գերակշռութեան կը պարտի՝ իր տարածութեան հետ անհամեմատ կարեւորութիւն մը։

Հարցարան. — Ո՞ւր կը գտնուի Զուիցերիա. որչափ տարածութիւն ունի, եւ ո՞րչափ բնակիչ. — Ինչ տեսակ երկիր է. ո՞րն է մայրաքաղաքը. — Որո՞նք են իր գլխաւոր քաղաքները.— Որ լիճերը կան Զուիցերիոյ մէջ։

ՊԵԼՃԻԳԱ

Պելճիգա փոքր երկիր մըն է Ֆռանսայի հիւսիս-արեւելեան կողմը։ Ունի 29,500 քառակուսի քիլօմէթր տարածութիւն և 6,800,000 բնակիչ։ Համեմատաբար իր տարածութեան, Պելճիգա Եւրոպայի բոլոր երկիրներուն ամէնէն բազմամարդն է։

Պելճիգայի մայրաքաղաքն է

Պրիւսել (600,000) մեծ և գեղեցիկ քաղաք. անուանի է իր կատեդրէններով և ժանեակներով։

Գլխաւոր քաղաքներն են՝

Անվերս (290,000), Լաքօի վրայ՝ Եւրոպայի գլխաւոր նաւահանգիստներէն մէկն է։

Կաճ (160,000), և Լիէժ (170,000) ճարտարարուեստական կարեւոր քաղաքներ են։

Պելճիգա ամէն բանէ առաջ երկրագործական երկիր մըն է. իր պարարտ դաշտագետինները մէջ կ՚ածէն ցորեն, քօղպա, կանեփ, վուշ և ճակնդեղ։

Պելճիգա Եւրոպայի ամէնէն յառաջադէմ երկիրներէն մէկն է չնորհիւ իր աշխատասիրական նպաստաւոր դիրքին, իր հողագործական բազմաթիւ միջոցներուն, իր խիտ բնակչութեան և գերազանցօրէն լաւ մշակուած հողին, և իր հիւսուածքական ու մանուածոյ մետաղագործական ճարտարարուեստին, որուն մնուցանող կուտան Սամպռի և Մէօզի հովիտները մէջ գտնուած հարուստ ածխահանքերը։

Պելճիգայի մէջ կը խօսուին երկու լեզուներ. հարաւակողմը՝ Ֆռանսերէն, հիւսիսակողմը՝ Ֆլամաներէն որ տեսակ մը Գերմանական գաւառաբարբառ է։

ՀՈԼԱՆԴԱ

Հոլանտա Եւրոպայի ամէնէն տափարակ երկիրն է։ Շատ տեղ իր հողը ծովուն մակերեւոյթէն ցած՝ պաշտպանուած է թումբերով, ովկիանոսին ալոցումներուն դէմ։ Հոլանտա ունի 33,000 քմ. քառակուսի տարածութիւն և իբր 5 միլիոն բնակիչ։

Մայրաքաղաքն է Լա Հէ (230,000) գեղեցիկ և չքեղ քաղաք։

Կարեւորագոյն են սակայն Ամսդերտամ (550,000) խիտ բանուկ նաւահանգիստ Զուիտերզէ ծոցին վրայ, և կեդրոն ադամանդի վաճառականութեան։

Ռօթերտամ (350,000) Հոլնտոյի մէկ ճիւղին վրայ նոյնպէս շատ կարեւոր նաւահանգիստ։

Հոլանտա էապէս երկրագործական երկիր մըն է։ Մարգագետիններն ու պաճարարուեստը Հոլանտայի գլխաւոր երկրագործական հարստութիւնը կը կազմեն։ Երկիրը չունի հանքեր, և իր ճարտարարուեստը գրացի ազգերուն ճարտարարուեստէն սորվեր է. սակայն իր գետերուն, ջրանցքներուն, երկաթուղիներուն, ծովային դիրքին և իր հարուստ գաղթականութիւններուն կը պարտի առեւտրական բարգաւաճ վիճակ մը որ բաղդատութիւն չի վերցներ։

Հոլանտացիները անվեհեր նաւաստիներ են։ Ժէ. դարուն իրենց ծովային զօրութիւնը ամէնէն ահեղն էր. իրենք այսօր հազիւ 5 միլիոն կը հաչուուին Եւրոպայի մէջ, և Եւրոպայէ դուրս ունին 30 միլիոնէ աւելի հպատակներ։

Հոլանտացիք խոշոռասէր, ճարտար, կրթուած մարդիկ են։

ՄԵՆԹ ԳՈՒՍԻԹԻՒՆ ԼԻԻՔՍԷՆԲՈՒՐԿԻ

Լիւքսեմպուրկի Մեծ-Դքսութիւնը կը գտնուի Պելճիքայի, Ֆռանսայի և Գերմանիոյ միջեւ, և Հոլանտայի թագաւորին անձնական սեպհականութիւնն է։ Ունի 246,000 բնակիչ, որոնց գրեթէ ամէնքն ալ կաթոլիկ են։

Հարցարան. — Հոլանտա իր տարածութեան տեսակէտով Եւրոպայի ո՞ր երկիրներուն հետ կրնայ բաղդատուիլ. — Ո՞րն է Եւրոպական մեծ գետը որուն բերանը Հոլանտայի մէջ կը գտնուի. — Որո՞նք են Հոլանտայի գլխաւոր քաղաքները։

Պատկ. 73. — ՀՈԼԱՆՏԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Գետերու մուրճերէ կազմուած, տափակ եւ ծովու մակերեւոյթին հաւասարող մակերեւոյթով, աւազամայրերով եւ մարգագետիններով ծածկուած, խոնաւ եւ կանաչ երկիր մըն է Հոլանտա. յայն եւ դանդաղ գետեր որոնց եզերքը բոլորեր կանգնուած են ողողումներէ զերծ պահելու համար շուրջի երկիրները, մամուռ եւ բազմաթիւ գիշեր, հողմաղացներ որոնք գիշեր ցորեկ կը ծծեն գետերէն եւ ծովերէն հողին մէջ թափանցող խոնաւութիւնը, անհատական Հոլանտան։

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիա կը տարածուի Ֆռանսայի և Ռուսիոյ մէջտեղ, և կեդրոնական Եւրոպայի երկիրներուն ամէնէն հիւսիսայինն է։

Ունի 540,000 քմ. քառակ. տարածութիւն և 60 միլիոնէն աւելի բնակիչ։

Գերմանական կայսրութիւնը կը բաժնուի երկու մասերու, Հիւսիսային Գերմանիոյ և Հարաւային Գերմանիա։

Հիւսիսային Գերմանիա տափարակ է և տեղ տեղ աւազուտ. ունի ցուրտ ու մառախլապատ կլիմայ մը։ Հարաւային Գերմանիա լեռնոտ երկիր մըն է, բայց աւելի բարեխառն կլիմայ մը ունի։

Հիւսիսային Գերմանիա կը պարունակէ Բրուսիոյ թագաւորութիւնը, Սաքսոնիոյ թագաւորութիւնը, և զանազան նահանգներ։

Հիւսիսային Գերմանիոյ կարեւոր քաղաքներն են՝

Պերլին (2,100,000) մայրաքաղաք Բրուսիոյ և բոլոր գերմանական կայսրութեան։

Համպուրկ (800,000) ազատ քաղաք Էլպա գետին վրայ. Գերմանիոյ առաջին վաճառականական նաւահանգիստը և Եւրոպայի ամէնէն վաճառաշահ քաղաքներէն մին է։

Պրեմ՝ (215,000) Վեզերի վրայ երկրորդ նաւահանգիստ։

Քեօնիկսպէրկ և Տանցիկ, Պալտիկի վրայ ամուր քաղաքներ են։

Շերբեհ, (225,000) Օաէր գետին ափերը, Բրուսիոյ վաճառականական գլխաւոր նաւահանգիստն է։

Պրեսլաւ (470,000) Օաէրի վրայ, ճարտարարուեստական քաղաք մըն է։

Այն գետերը որոնց բերանները Հոլանտայի մէջ կը գտնուին. — Լաքօի գետաբերանին վրայ գտնուած նաւահանգիստը ո՞րն է եւ ո՞ր երկրին մէջ կը գտնուի։

Ո՞րն է Հոլանտայի երկրագործական գլխաւոր զբաղումը. — Քանի՞ միլիոն բնակիչ ունի Հոլանտա. — Որո՞նք են Հոլանտայի ամէնէն բազմամարդ քաղաքները. — Ո՞րն է Հոլանտայի ճարտարարուեստական քաղաքը որ իր աշխարհագրական դիրքին կը պարտի մանաւանդ իր գործունէութիւնը. — Հոլանտայի վաճառականութեան գլխաւոր կեդրոնը ո՞րն է. — Հոլանտայի գաղթային կայսրութեան տարածութիւնը ինչ համեմատութիւն ունի մայր երկրին հետ։

Ինչ է Պելճիգայի տարածութիւնը. — Իր կարեւորութիւնը համեմատական է իր տարածութեան հետ. — Ինչ բանի կը պարտի Պելճիգա իր կարեւորութիւնը. — Պելճիգայի կլիման ինչ բնաւորութիւն ունի. — Ո՞րն է Պելճիգայի մեծագոյն ջուրի ընթացքը. — Ո՞րն է Պելճիգայի ամէնէն բարեբեր մասը. — Որո՞նք են Պելճիգայի ածխահարուստ մասերը. — Որո՞նք են Եւրոպայի այն երկիրները որոնք բնակիչներու խտութեան մասին Պելճիգայի հետ կրնան բաղդատուիլ. — Ո՞րչափ բնակիչ ունի Պելճիգա. — Ո՞րն է Պելճիգայի մայրաքաղաքը. — Ո՞րն է իր մեծագոյն նաւահանգիստը. — Ինչէն է իր կարեւորութիւնը. — Որո՞նք են Պելճիգայի ճարտարարուեստական միւս կարեւոր քաղաքները։

Տրեզտա (515,000), *Աաքսոնիոյ մայրաքաղաքն է Էլպա գետին վրայ։*

Լայբցիկ (500,000) *Աաքսոնիոյ մէջ։*

Ֆրանքֆորթ (335 հազար) *Մայն գետին վրայ, աշխարհիս սեղանաւորական կարեւորագոյն քաղաքներէն մէկն է։*



Գտն. 74. — ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ա. Ջոր մը Սեւ-Անտառին մէջ. — Բ. Հին դղեակ մը Հռենոսի եզերքը. — Գ. Հռենոսի տեսարը Սէն Գոարի մէջ (Մայանսի եւ Պօննի միջեւ)

Հիւսիսային Գերմանիա գրեթէ միօրինակ անագին դաշտ մըն է, բայց հարաւային եւ կեդրոնական Գերմանիաները կազմուած են միջակ բարձրութեամբ լեռներէ եւ լեռնադաշտերէ որոնք սակայն շատ գեղատեսիլ երեւոյթ մը ունին։ Իրաւ է որ ո՛չ տիւական ձիւներ կան այդ լեռներուն վրայ, ո՛չ ալ սառնարաններ, բայց առանց փոխարէն անոնց կողերը ծածկուած են եղեւիններու ընդարձակ անտառներով։ Հռենոսը այս տիւսակ լեռնադաշտերու մէջէն կ՚անցնի Մայանսի եւ Պօննի միջեւ ուր ընդհանուրապէս կործանուած հին դղեակներով ծածկուած ժայռերու մէջէն կը հոսի անիկա։ Հռենոսի ձախ եզերքը հարթաւոր է իր եւրոպայի ամենէն նկարագեղ երկիրներէն մէկը։

Քոլոնիա (420,000) *Հռենոսի վրայ, ունի փառաւոր Մայր Եկեղեցի։*

Էսէն, Էլպերֆելտ, Տիւսէլտորֆ, Էմս-լա-Շաբել, *ճարտարարուեստական կեդրոններ են։*

Քիլ, *մայրաքաղաք Հոլշթայնի եւ զինուորական մեծ նաւահանգիստ։ Այս քաղաքէն սկսող Ջրանցք մը Պալթիկ ծովը Հիւսիսային ծովուն կը միացնէ։*

Հարաւային Գերմանիա կը պարունակէ

Պավիէրայի թագաւորութիւնը, *մայրաքաղաք՝* Միւնիխ (535,000) *որ համբաւաւոր է իր գարեջուրով։*

Գիտնական քաղաքն է Նիւրեմպերկ (300,000) *որ ունի հրաժշտական գործիներու և խազալիքներու գործարաններ։*

Վիւրեմպերկի թագաւորութիւնը՝ *մայրաքաղաք* Շթուրկար (250,000)։

Պատի Մեծ-Դքսութիւնը՝ *մայրաքաղաք* Քարլսրուհէ։ (110,000)

Պատի մեծ-Դքսութիւնը, Վիւրթեմպերկը, Պավիէրան ու Սաքսոնիան մասնաւոր կառավարութիւն մը ունին ներքին գործերու համար, բայց իրարէն՝ Բրուսիոյ սիրապետութեան տակ են 1866էն ի վեր։

Գերմանիա՝ 1871 *ին՝ Ծառանայէն առած է երկու գաւառներ. Ալզաս՝ մայրաքաղաք* Սթրազպուրկ՝ *Հռենոսի մօտ, և Լոռենի մէկ մասը, գլխաւոր քաղաք* Մեց։

Գերմանիոյ հողը նուազ բարեբեր է քան Ծառանայինը սակայն երկրագործութիւնը ծաղկած է, մանաւանդ Սաքսոնիոյ և Պավիէրայի մէջ։ Գերմանիա կ՚արտադրէ արմաւք, գետնախնձոր, ճակնդեղ, վուշ, կանեփ, ծխախոտ և գայլուկ։

Մայնի, Մէօղէլի և Հռենոսի հովիտներուն մէջ՝ կը մշակուի որթատունկ։

Գերմանիա հանքածուխի արտադրութեան մասին՝ Անգլիայէն ու Պելճիգայէն անմիջապէս յետոյ կուգայ և Անգլիոյ հետ կը մրցի վաճառականութեան և ճարտարարուեստի կողմէ։

Հարցարան. — *Որո՞նք են Գերմանիոյ բնական մեծ բաժանումները. — Վէզերի ստորին ընթացքին վրայ գտնուող մեծ նաւահանգիստը ո՞րն է. — Ո՞րն է Էլպայի գետաբերանին վրայ գտնուող մեծ նաւահանգիստը. — Ո՞րն է այն մեծ գետը որուն ընթացքը միմիայն հիւսիսային Գերմանիոյ դաշտագետիններուն կը պատկանի. — Հարաւային Գերմանիոյ փոքր ափրութիւններէն ո՞րն է կարեւորագոյնը. — Հարաւային Գերմանիոյ երկիրներուն ընդհանուր տարածութիւնը ո՞րչափ է. — Բնակիչներո՛ւն թիւը որչափ. — Ինչո՞ւ թագաւորութիւն կայ Գերմանական կայսրութեան մէջ և որո՞նք են իրենց մայրաքաղաքները. — Ո՞րն է մեծ դքսութեան մայրաքաղաքը. — Ալզաս Լոռէնը. — Կայսրութեան ուղղութիւնը որո՞ւ ձեռքն է. — Ո՞ր երկիրներէն չրջապատուած է Գերմանիա. — Գերմանական կայսրութիւնը ֆռանսայէն մե՞ծ է. — Ո՞րչափ է Գերմանիոյ բնակիչներուն թիւը. — Ո՞ր մասերուն մէջ ամէնէն աւելի թիւնը. — Գերմանիոյ ո՞ր մասերուն մէջ ամէնէն աւելի թիւ են բնակիչները. — Ինչ բանէ կախում ունի Համպուրկի մեծութիւնը. — Որո՞նք են Գերմանիոյ մեծ նաւահանգիստները։*

ԱՒՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Աւստրօ-Հունգարիոյ Կայսրութիւնը կը գրաւէ Եւրոպայի կեդրոնը. *ունի* 676,000 *քիլօմէդր քառակուսի տարածութիւն և* 47 *միլիոն բնակիչ։*

Կայսրութեան հիւսիսային և արեւելեան գաւառները կը ձեւացնեն լեռնադաշտ մը, որուն տարատր կը տարածուի անտառ դաշտագետին մը, այն է Հունգարիոյ դաշտագետինը, զոր կ՚ոռոգեն Դանուբ գետն ու իր գետակիցները. իսկ հարաւային մասերը ծածկուած են Ալպեաններուն ճիւղաւորումներով։

1867*ի դաշնագրութեան համեմատ, Աւստրիա և Հունգարիա կը ձեւացնեն երկու առանձին պետութիւններ, միեւնոյն վերնատէր մը ներքեւ, որ կայսր կը կոչուի Աւստրիոյ մէջ և թագաւոր՝ Հունգարիոյ մէջ։ Աւստրիա աւելի բազմամարդ է, իրեպէս նուազ ընդարձակ քան Հունգարիա։*

Աւստրօ-Հունգարիոյ գլխաւոր քաղաքներն են

Վիէննա (2 *միլիոն*) *Դանուբի վրայ, կայսրական մայրաքաղաքն ու Եւրոպայի գեղեցկագոյն քաղաքներէն մէկն է։*

Պուտա-Փեշթ (730,000) *Հունգարիոյ մայրաքաղաքը ձեւացած է Պուտա և Փէշթ քաղաքներուն միացմամբ, որոնք Դանուբի երկու եզերքներուն վրայ կառուցուած են և իրարու հետ կը հաղորդակցին կախուած կամուրջով մը։*

Կարեւոր են նաեւ Բռակա (420,000) *Մոլատաւ գետակին վրայ՝ խիտ գեղեցիկ քաղաք, Պռեսպուրգ մայրաքաղաքն է, ունի համալսարան։*

Պռիւն (100,000) *Մորավիոյ մայրաքաղաքը և կայսրութեան առաջին քաղաքը լրդեղէնի ճարտարարուեստի մասին։*

Բռաֆօվիա (950,00) *Վիսթուլ գետին վրայ՝ Բոլօնիոյ թագաւորութեան նախկին մայրաքաղաքը։*

Թրիեսդ (180,000) *Ադրիականի վրայ՝ Աւստրօ-Հունգարիոյ առաջին նաւահանգիստն է և Մարսիլիոյ ու Ծնովայի մրցակիցը։*

Աւստրօ-Հունգարական կայսրութիւնը բազկացած է բազմաթիւ խառն ժողովուրդներէ, որոնք ոչ միեւնոյն լեզուն ունին և ոչ միեւնոյն բարքերը։

Աւստրիոյ մէջ մեծամասնութիւն կը կազմեն Գերմանները (36%), *Հունգարիոյ մէջ՝ Մաճառները* (41%) *և Թրանսիլուանիոյ մէջ Ռումէնները։ Իսկ կայսրութեան հիւսիսային և հարաւային կողմերը կան ալաւացեղ ժողովուրդներ, որոնց կը պատկանի մեծամասնութիւնը՝ կայսրութեան ամբողջութեան մէջ։*

Աւստրօ-Հունգարական կայսրութեան գլխաւոր հարստութիւնը կը ձեւացնեն բնական արտադրութիւններ, ատաղձ, արմաւք, և արջառ։ Մանաւորապէս Հունգարիա կ՚արտադրէ առատ արմաւք։ Որթատունկը կը մշակուի Հունգարիոյ մէջ, որուն գինին անուանի է։ Հունգարիոյ ձիերն ալ նոյնպէս համբաւաւոր են իրենց ազնուութեամբ ու տոկունութեամբ։

Կարպաթեան լեռները կը պարունակեն հանքածուխի, երկաթի և աղուճակի հարուստ հանքեր։ Համբաւոր են Վիլիչքայի աղահանքերը։

Ճարտարարուեստի մասին Աւստրիա թէպէտ Գերմանիոյ չի հաւասարիր, սակայն մեծ յառաջդիմութիւն ցոյց կուտայ։

Ճարտարարուեստական գլխաւոր կեդրոնները կը գտնուին կայսրութեան հիւսիսային-արեւմտեան մասին մէջ։

Հարցարան. — Աւստրօ-Հունգարիա ո՞ր կողմէն ծով կը ունենայ. — Ինչ կարեւորութիւն ունի Դանուբ Աւստրօ-Հունգարիոյ համար. — Որո՞նք են երկրին գլխաւոր լեռնաշղթաները. — Ո՞րն է Աւստրօ-Հունգարիոյ գլխաւոր դաշտագետինը. — Ի՞նչ է իր նկարագիրը. — Որո՞նք են Աւստրօ-Հունգարիոյ գլխաւոր երկրագործական հարստութիւնները. — Ո՞ր կը գտնուին Աւստրօ-Հունգարիոյ գլխաւոր արդիւնաբերութիւնները. — Ինչ տեսակ կենդանիներ կը սնանին այս արդիւնաբերութիւններուն մէջ. — Ո՞ր կը մշակուի ծխախոտը Աւստրօ-Հունգարիոյ մէջ. — Որո՞նք են Աւստրօ-Հունգարիոյ երկու մայրաքաղաքները. — Ինչ ցեղեր կը բազկանան այս երկրին ժողովուրդը. — Ո՞ր մասերուն մէջ ժեռամասնութիւն կը կազմեն Գերմանները ու մաճառները. — Ո՞րքան տարածութիւն ունի Աւստրօ-Հունգարական կայսրութիւնը. — Ո՞րքան բնակիչ ունի Աւստրօ Հունգարիա. — Ո՞րոնք են եւրոպայի այն երկիրները որ Աւստրօ-Հունգարիայէն աւելի բնակիչ ունին. — Որո՞նք են Աւստրօ Հունգարական կայսրութեան ամէնէն բազմամարդ մասերը. — Աւստրիոյ ճարտարարուեստական գլխաւոր երկիրը ո՞րն է եւ ինչո՞ւ համար. — Որո՞նք են Աւստրօ Հունգարիոյ գլխաւոր հանքային հարստութիւնները. — Ո՞րն է Աւստրօ-Հունգարիոյ նեղքին վաճառականութեան գլխաւոր ճամբան. — Ո՞ր երկիրներուն հետ վաճառականութիւն կ'ընէ Աւստրօ-Հունգարիա Դանուբ գետին միջոցով. — Ո՞րն է Աւստրօ-Հունգարիոյ վաճառական մեծ նաւահանգիստը։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՓՈՐԹՈՒԿԱԼ

Սպանիոյ *թագաւորութիւնը* եւ Փորթուկալի *հանրապետութիւնը* միասին կը ձեւացնեն Իբերական ցամաքակղզին, որ Եւրոպայի հարաւային երեք ցամաքակղզիներուն մեծագոյնն է։

Սպանիա ունի 18 միլիոն բնակիչ, իսկ 500,000 քառ. քիլոմ. տարածութեան մը վրայ։

Գլխաւոր քաղաքները են՝

Մատրիս (540,000) *մայրաքաղաք*. կը կանգնի լեռնագագաթի մը վրայ, երկրին ճիշդ մէջտեղը։ Ունի պալատներ, գեղեցիկ չէնքեր, հատարակաց ճեմելիներ, համալսարան եւ թանգարան։

Պարչելոնա (530,000) նաւահանգիստ Միջերկրականի վրայ։ Սպանիոյ առեւտրի քաղաքն է ճարտարարուեստի եւ վաճառականութեան մասին։

Վալենցիա (240,000) նոյնպէս Միջերկրականի վրայ նաւահանգիստ. անուանի է իր նարինջներով։

Պատկ. 75
ՍՊԱՆԵՒԱՑԻ ԿԻՆ ՄԸ

Միւրսիա. *Սպանիոյ ամէնէն հարուստ եւ ամէնէն լաւ մշակուած մէկ մասին մէջ։*

Սեվիլլ (145,000) *կատարելիքերի վրայ խիստ գեղեցիկ եւ վաճառաշատ քաղաք։*

Մալակա (135,000) *Միջերկրականի վրայ երկրորդ նաւահանգիստն է։ Անուանի է պլինին։*

Գաստիլէ, *Ալանդեան ավկիանոսի վրայ բերդաքաղաք եւ նաւահանգիստ, ունի բանակ վաճառականութիւն Նոր Աշխարհի հետ։*

Ձիպրալդար բերդաքաղաքը *որ Միջերկրականի մուտքին կը տիրէ. Անգլիացիներուն ձեռքն է 1704էն ի վեր։*

Պալեարեան կղզիները՝ *Վալենցիայի դիմացը՝ կը պատկանին Սպանիոյ։*

Անտորայի *փոքր հանրապետութիւնը՝ Պիրենեան լեռներուն մէջ՝ կը գտնուի Ֆռանսայի և Ուրժէլի Սպանիացի եպիսկոպոսին պաշտպանութեան տակ։ Ունի 1920 քիլմ. քառ. տարածութիւն, և 6,000 բնակիչ։*

Փորթուկալի Հանրապետութիւնը ունի 92,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և իբր 5,500,000 բնակիչ։

Բացի Լիզպոնայէն և Բորթոյէն, որոնք 100,000է աւելի բնակիչ ունին, Փորթուկալ չունի մեծ քաղաքներ.

Լիզպոնա (350,000) *մայրաքաղաք, և գլխաւոր առեւտրական ու վաճառականական չքեղ նաւահանգիստ Թակո գետին բերանը։*

Բորթո, *անուանի է իր գինիներուն համար։*

Իբերական ցամաքակղզիին կեդրոնական մասը բազկացած է բարձր լեռնադաշտերէ, ընդհանրապէս մերկ ու անջրդի։ Այս լեռնադաշտերէն սկսելով մինչեւ ծով տարածուած սահմանը կտրտած է բլուրներով, հովիտներով ու խիստ արգաւանդ դաշտագետիններով։

Ցամաքակղզիին կլիման խիստ չոր ու տաք է ներքին մասին մէջ, ինչպէս նաեւ Միւրսիոյ և Վալենցիայի ծովեզերքներուն վրայ, իսկ հիւսիս արեւմտեան կողմը, մանաւանդ կալիցիոյ մէջ խիստ խոնաւ է։ Հազը չատ բարեբեր է հարաւային և արեւելեան մասերուն մէջ, բայց պէտք եղածին չափ մշակուած չէ։

Սպանիա և Փորթուկալ կ'արտադրեն ձէթ, գինի, նարինջ և հարաւային երկիրներու ուրիշ տեսակ պտուղներ։

Կ'արտածեն պատուական գինիներ, որոնց ամէնէն համբաւաւորներն են Սէրէսի, Ալիգանթէի, Մալակայի և Բորթոյի գինիները։

Անուանի են նաեւ Սպանիոյ աչխարհներն ու ձիերը։

Բաց ի Քարթաղոնիոյ գաւառէն որ Սպանիոյ հիւսուածական ճարտարարուեստի կեդրոնն է, երկրին ուրիչ մասերուն մէջ այնքան զարգացած չէ ճարտարարուեստը, գրամագլուխներու և հաղորդակցութեան միջոցներու անբաւականութեան պատճառով։

Փորթուկալ՝ որ իր արտադրութիւններով Սպանիոյ չատ կը նմանի, իր առեւտուրին մեծ մասը կ'ընէ Անգլիոյ հետ, որուն կը ծախէ իր գինիները. փոխարէնն անկէ ընդունելով տարազ ապրծքային արտադրութիւններ։

Սպանիացիները ԺԶ. դարուն սիրած են Նոր Աշխարհի. կը հարստանան իրենց անցեալ վաճառքով։ Քաջամարտիկ են և պատուոյ գօրաւոր զգացում ունին։

Փորթուկեզները ԺԶ. դարուն սիրած էին Ափրիկէի ծովեզերքներուն և Հնդկաստանի. իրենք են որ հիմնած են Պրազիլիան։

Հարցարան. — Ինչ է Իբերական ցամաքակղզիին չատկանշական նկարագիրը. — Ջուր չրջապատող լեռներուն մէջ ամէնէն բարձրերը որո՞նք են. — Ո՞րն է Պիրենեաններու գլխաւոր գագաթը. — Իբերական ցամաքակղզիին գլխաւոր գետերը որո՞նք են. — Ինչու համար ովկիանոսին կլիման չազգեր մինչեւ Գաստիլիական լեռնադաշտերը. — Ինչ տեսակ կլիմայ ունին այս լեռնադաշտերը. — Ո՞րոնք են այն հարաւային մշակութիւնները որոնք կը գտնուին Անդալուզիոյ լաւ ոռոգուած մասերուն մէջ. — Ո՞րն է հարաւային Սպանիոյ կարեւորագոյն մշակութիւնը. — Ո՞ր կը գտնուին Սպանիոյ գլխաւոր հանքային հարստութիւնները եւ ի՞նչ են. — Ո՞րն է Սպանիոյ ճարտարարուեստական գլխաւոր երկիրը. — Ինչ են Սպանիոյ և Փորթուկալի գլխաւոր արտածութիւնները. — Ո՞րն է Սպանիոյ գլխաւոր նաւահանգիստը. Ո՞րն է Սպանիոյ այն նաւահանգիստը որ Ամերիկայի հետ յարաբերութեան մէջ է. — Սպանիոյ ո՞ր նաւահանգիստն է որ ամէնէն աւելի գինի կ'արտածէ. — Ո՞րն է ամէնէն աւելի հանածոյ արտադրողը — Ինչ է Լիզպոնայի կարեւորութիւնը. — Գինիի արտածութեան համար Փորթուկալի գլխաւոր նաւահանգիստը ո՞րն է. — Ո՞րչափ է Սպանիոյ տարածութիւնը և բնակիչներուն թիւը. — Ո՞րոնք են Սպանիոյ ամէնէն բազմամարդ մասերը. — Ո՞ր կը գտնուին Սպանիոյ ամէնէն բազմամարդ մասերը. — Ո՞ր կը գտնուին Սպանիոյ մայրաքաղաքը և որո՞նք են իր կարեւորագոյն քաղաքները. — Որչափ տարածութիւն ունի Փորթուկալ և ո՞րչափ բնակիչ. — Որո՞նք են Փորթուկալի մեծ քաղաքները։

ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ բազաւորութիւնը *կը պարունակէ Իտալական ցամաքակղզին և Սիկիլիա ու Սարտինիա մեծ կղզիները։ Ունի իբր 286,000 քիլոմէտր քառակուսի տարածութիւն և 32½ միլիոն բնակիչ։*

Պատկ. 76
ԻՏԱԼԱՑԻ ԳԵՂԱՋՈՒԿ ՄԸ

Իտալիոյ գլխաւոր քաղաքներն են՝

Հռոմ (510,000) *Մայրաքաղաք Տիբեր գետին վրայ. Հռոմէական Եկեղեցին ամբողջ և աշխարհիս ամէնէն նշանաւոր քաղաքը հնութիւններու և գեղարուեստներու մասին։*

Երեւելի չէնքերուն մէջ նշանաւոր են Քոլոսէումը, Ս. Պետրոսի եկեղեցին՝ բոլոր աշ-

խարխլ Եկեզեցիներուն մնծագոյնը, և Վատիկանի պալատը, ուր կը նստի Հռոմի պապը։

Նաբօլի (570,000) գեղեցիկ ծովեզերքի մը

Գծատ. 77. — ՆԱԲՕԼԻ ԵՒ ՎԷԶՈՒՎԻ ՀՐԱԲԽԻԸ

Նաբօլի Իտալիոյ ամենէն բազմամարդ քաղաքն է, հաստատուած է Իտալիոյ հարաւ-արեւմտեան մասին մէջ, Վեզուվի հրաբուխին ստորոտը գտնուող ծոցի մը մէջ։ Այդ տեղատիի վրայ հրաբուխի է որ ինի դարերուն մէջ իր յաճախերուն տակ թաղից Հերուլանում եւ Պոմպէյի քաղաքները որոնց աւերակները երեւան հանեցին վերջերս։

թարը և Վեսուվ լերան ստորոտը, Իտալիոյ ամենէն բազմամարդ քաղաքն է։

Միլան (500,000) Լոմպարդիոյ մէջ, ճարտարարուեստական կեդրոն և վաճառաշատ քաղաք։ Մեռաքսեղէններու մասին Լիոնի մրցակիցն է։

Թուրին (348,000) Բօ գետին վրայ. նոյնպէս ճարտարարուեստական կեդրոն։ Ունի թնդանօթի ձուլարան և թուխի, մետաքսեղէններու և գլխարկի գործարաններ։

Ձենովա (240,000) համանուն ծովին վրայ Իտալիոյ ամենէն բանուկ նաւահանգիստն է։

Ֆիորենցա (207,000) Հռոմէն յետոյ Իտալիոյ ամենէն ճոխ քաղաքն է արուեստագիտական գործերու մասին։

Վենետիկ (154,000) Ադրիականի վրայ, եւրոպայի գեղեցկագոյն քաղաքներէն մէկն է։ Հոս է Մխիթարեանները Ս. Ղազարու վանքը։

Պրինտիզի, Ադրիական ծովուն բերանը, բանուկ յարաբերութիւն ունի Արեւելքի նաւահանգիստներուն ու Սուէզի ջրանցքին հետ։

Իտալիոյ թագաւորութիւնէն կախում ունին Սիկիլիա և Սարտենիա մեծ կղզիները, և ուրիշ մէկ քանի փոքր կղզիներ Միջերկրականի մէջ։

Սիկիլիա կղզին Իտալիոյ ցամաքէն բաժնուած է Մեսինայի նեղուցով որ 3–4 քիլոմէթր լայնութիւն ունի։ Սիկիլիա լեռնային է, ունի իր մէջ էտնա հրաբուխը։ Կղզիին օդը զուարճալի է, հողը բարեբեր։

Գլխաւոր քաղաքներն են՝

Բալեռմօ (300,000) Սիկիլիոյ մեծագոյն քաղաքը և պլխաւոր նաւահանգիստն է։

Մեսինա (150,000) համանուն նեղուցին վրայ բանուկ նաւահանգիստ։

Սարտենիա լեռնային ու անտառախիտ կղզի մըն է. հողը բարեբեր է, բայց անմշակ։

Գլխաւոր քաղաքն է Քալեարի, կղզիին հարաւային կողմը։

Թորթիբա կղզիին և Իտալիոյ մէջտեղ կը գտնուի Էլպա փոքր կղզին ուր աքսորուած է Մեծն Նաբոլէոն 1814ին։

Հիւսիսային Իտալիա հարուստ և ընդարձակ դաշտավայրն մըն է, բարեբաստ կլիմայով, և ծածկուած է արգաւանդով, նոյնջնեղի, խիճերի անկարաններով, այգեստաններով, եւայլն։ Հարաւային Իտալիա հրաբխային երկիր մըն է, ուղ ուղ ճահիճներով ու անբեր լեռնաշղթաներով ընդհատուած, և որ ոռոգուն հիանալի հարուստութիւն ունի մէջ ու մէջ ոռոգուած ու լաւ մշակուած է։

Սիկիլիա նոյնպէս բարեբեր հող ունի և կ'արտադրէ դինի, մրգեղէններ ու բամպակ։

Իտալիա վերջին տարիներուն մէջ մեծ մրցում առած է ճարտարարուեստներու այլ և այլ ճիւղերուն. և ուրիշ հանքածուխի չգտնուիլնը կը ճնշէ Իտալիոյ ճարտարարուեստական զարգացման վրայ։ Գլխաւոր գործարանները հաստատուած են Ապենիններուն մօտ, օգտակարարակս գործածելու համար գետերուն չարժիչ զօրութիւնը, և կամ կեդրոնացած են ծովուն եզերքները, խոյս տալու համար նոր ծախքերէ այն ածուխին վրայ՝ զոր բերել կուգան Անգլիայէն։

Մէն-Կօթտաւ թիւնէլին բացումէն ի վեր (1882) — ինչ որ մեծ համեմատութեամբ ընդարձակած է երկրին յարաբերութիւնները՝ Զուիցերիոյ և Գերմանիոյ հետ—, Միլան առաւելս քան երբեք Իտալիոյ առեւտրական մայրաքաղաքն եղած է։

Սան-Մարինոյի Հանրապետութիւնը՝ որ Ապենինեան լեռներուն մէկ ժայռին վրայ գետեղուած է, պահած է առանձին գոյութիւն մը. ունի զբաղիմ 9000 բնակիչ։

Հարցաբան. — *Քանի՞ մասերէ կը բաղկանայ Իտալիոյ թագաւորութիւնը.— Ո՞րչափ տարածութիւն ունի Իտալիա. — Ինչ տեսակ կլիմայ ունի. — Ո՞ր եղանակին մէջ առիներն աւելի կ'աճին Ալպեսներէն իջնող գետ՝ րուն ջուրերը. — Քոյի գաշտագետնէն յառաջանալու մշակութիւնները որո՞նք են. — Ինչ տեսակ եղիկը է հարաւային Իտալիա. — Ո՞ր նշանաւոր հրաբուխները կան Իտալիոյ մէջ. — Ինչո՞ւ համար ճարտարագործութիւնը հիւսիսային Իտալիոյ մէջ կեդրոնացած է. — Ո՞րն է Իտալիոյ մայրաքաղաքը. — Ո՞րն է ամենէն բազմամարդ քաղաքը. — Ինչ կարեւորութիւն ունի Միլան. — Որո՞նք են Իտալիոյ գլխաւոր նաւահանգիստները և ինչ կարեւորութիւն ունին. — Ո՞ր կղզիները կախում ունին Իտալիոյ թագաւորութենէն. — Ո՞րն է Սիկիլիոյ մայրաքաղաքը. — Ո՞ր նեղուցով բաժնուած է Սիկիլիա կղզին իտալական ցամաքէն. — Ո՞ր նեղուցով կը բաժնուին Սարտենիա և Թորթիբա կղզիները. — Ո՞րն է Մեծն Նաբոլէոնի աքսորավայրը. ցոյց տուր քարտէսին վրայ։*

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպայի Հարաւային երեք ցամաքակըզպիներուն ամենէն արեւելեանն է Պալքանեան Յանաքակղզին որ կը պարունակէ խիտ այրուկ ժողովուրդներ Ռումէն, Սրաւ, Թուրք, Պուլկար, Աստուստա, Յոյն եւ այլն և կը պարունակէ Թուրքիային գան՝ նաեւ հետեւեալ պետութիւնները. Ռումանիա, Սերպիա, Գարատաղ, Պուլկարիա և Յունաստան։

ՌՈՒՄԱՆԻԱ

Ռումանիա կը տարածուի Կարպաթեան լեռներէն մինչեւ Դանուբ գետ։ Կը պարունակէ Մոլտաւիոյ և Վալաքիոյ հին իշխանութիւնները ու Տոպրուճայի գաւառը։ Տարածութիւնն է գրեթէ 130,000 քառակուսի քիլոմէթր, իսկ նահիչներուն թիւը իրր 6 միլիոն։

Ռումանիա բարեբեր և ջրառատ երկիր մըն է և կ'արտադրէ առատ արմաթ։ Երկրին գլխաւոր հարստութիւններէն մէկը կը կազմեն իր ընդարձակ անտառները որոնք դեռ պէտք եղածին պէս ալ չեն շահագործուիր։ Ռումանիա ունի ազատանքեր ալ։ Այս երկիրը պիտի կրնայ ճարտարագործական ակրութիւն մը ըլլալ չնայելու հանքածուխին ու քարիւղին որ առատօրէն կը գտնուին Կարպաթեան լեռնաշղթան մէջ։

Ռումանիոյ մայրաքաղաքն է Պուքրեշ (280 հազար)։

Գալաց և Պրայիլա բանուկ նաւահանգիստներ են Դանուբի վրայ և արմաթի ու ցորենի վաճառականութիւն ունին։

Քեօսթենճէ բանուկ նաւահանգիստ է Սեւ Ծովու վրայ։

ՍԵՐՊԻԱ

Սերպիոյ թագաւորութիւնը կը տարածուի Դանուբի հարաւակողմը, և 48,000 քիլոմէթր քառակուսի տարածութեան մը վրայ կը պարունակէ 2,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքը՝ Պելկրատ՝ 75,000 բնակիչ ունի, և խիստ կարեւոր դիրք մը կը գրաւէ Սաւա գետին և Դանուբի իրար խառնուած տեղը։

Նիշ որ Պելկրատէն դեպի երկրին կեդրոնական քաղաքն է, հազիւ 20,000 բնակիչ ունի։ Նոյնպէս ամուր քաղաք է։

Սերպիա երկրագործական երկիր մըն է մանաւանդ։ Գլխաւոր հարստութիւններն են այգիները, ծաղրենիները, ոչխարներն ու խոզերը։

Օսաւ երկիրներու հետ՝ Սաւա ու Դանուբ գետերէն ու 600 քիլոմէթր երկարութենէ ուղեցող երկաթուղիէ մը զատ ուրիշ հաղորդակցութիւն մէջտեղ չունի։ Հետեւաբար բորբոքիչ Աւստրօ-Հունգարիոյ անտեսական գերիշխանութիւնն ատկ կը զգուի։ Աւստրօ-Հունգարիան է իր միակ ցամաքորդը, և անկէ է որ կ'ընդունի Սերպիա իր ներածութիւններու երեք քառորդը, որոնց մէջ գլխաւոր տեղը կը գրաւեն բանուած առարկաներ։

Դ Ա Ր Ա Տ Ա Գ

Դարատագ կամ Մոնթենեկրօ փոքր իշխանութիւն մըն է գրեթէ 10,000 քառ. քիլմ. տարածութեամբ, լեռներու մէջ թաղուած, և հազիւ 230,000 բնակիչ ունի։

Սեւ Լեռցիները ճնշուած են ինչ որ եղած են միշտ, հովիւ և զինուոր։ Մայրաքաղաքը՝ Ջեթինեն՝ պարզ գիւղաւան մըն է 4,000 բնակիչներով։

Տուլչինեօ և Անթիվարի փոքր նաւահանգիստներ են, ուր կը բանին Աւստրիական Լոյդի չոգենաւները։

Պ Ո Ի Լ Կ Ա Ր Ի Ա

Պուլկարիա Արեւելեան Բումելիի՝ հետ ամանձին թագաւորութիւն կը կազմէ 1909էն ի վեր Պալքաններուն և Թանուբ գետին ու Սեւ ծովուն միջեւ։

Տարածութիւնն է 96,000 քիլոմէտր քառակուսի. և բնակիչներուն թիւը 4 միլիոնէն աւելի է։

Մայրաքաղաքն է Սոֆիա, որ ունի 48,000 բնակիչ։

Ֆիլիպե (45,000) Արեւելեան Բումելիի մէջ, աւելի կարեւոր քաղաք մըն է առեւտրականն տեսակէտով. և աւելի ապագայ ունի Մարիձայի հովտին հարստութեան պատճառով։

Միւս գլխաւոր քաղաքներն են Ռուսճուք՝ նաւահանգիստ Դանուբի վրայ, և Վառնա՝ Սեւ Ծովու վրայ։

Պուլկարիա երկրագործական մեծ ապագայ ունի, իր հողին արգասաւորութեամբ. բայց տակաւին ոչ մէկ ճարտարարուեստ չունի, թէպէտ հանքածուխ գտնուած է երկրին մէջ։

Դանուբի նաւահանգիստներուն ու Վառնայի ճամբով կ'ըլլայ իր առեւտուրը։ Աւստրօ-Հունգարիա առաջին տեղը կը բռնէ այս առեւտուրին մէջ, Պուլկարիոյ ծախելով ճարտարարուեստական արտադրութիւններ։

Անգլիա որ Աւստրիայէն յետոյ կը գայ՝ գլխաւոր յաճախորդն է Պուլկարիոյ՝ որուն արտածութեան առարկաներն են ածխածք, մետաքս և մոմ։

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Յունաստան՝ Եւրոպայի ամէնէն հարաւային երկիրն է։ Կը բաղկանայ 4 որոշ մասերէ. հիւսիսային կողմը՝ Հելլադա, յամառային մասն է, որ Կորնթոսի ջրանցքով բաժնուած է հարաւային մասէն այն է Մորեա։

Արեւելեան կղզին Արջիպելագոսի Կղզիները, արեւմտեան կողմը Յոնիական կղզիները։

Յունաստանի ամբողջ տարածութիւնն է 65,000 քիլոմ. քառակուսի, բնակիչներուն թիւը՝ 2,600,000 էն աւելի է։

Յունաստան գեղեցիկ երկիր մըն է, որուն ջինջ երկինքը, վճռաչուք լեռները, գեղածիծաղ բլուրները և կապուտակ ալիքները հազար անգամ երգուած են բանաստեղծներէ։

Իր կլիման ընդհանրապէս առողջ է, հողը՝ բարեբեր, բայց քիչ մշակուած, կարասիէ չափ, գինի, ձէթ, մեղաքա, նարինջ, լիմոն, թուզ և ընտիր մարմարիոն։

Յունաստանի մայրաքաղաքն է՝

Աթէնք (130,000) անուանի է իր մեծ յիշատակարաններով ու գեղեցիկ շէնութիւններով։

Ամէնէն նաւահանգիստն է Պիրեոն կամ Բիրեա։

Բարբաս, Բիրէայէն յետոյ՝ Յունաստանի ամէնէն վաճառաշահ քաղաքներէն մէկն է, ունի չամիչի մեծ վաճառականութիւն։

Շիրա, կարեւոր նաւահանգիստ է կիկլատեան արշիպելագոսին մէջ։

Բօրժու, նոյնպէս վաճառաշահ նաւահանգիստ Յոնիական կղզիներուն մէջ։

Հարցարան.—Պալքանեան ցամաքակղզին ո՞րկէ առած է իր անունը. — Թանուբ գետը ի՞նչ կերպով կը վերաբերի Պալքանեան ցամաքակղզիին. — Թանուբի Տելտային երեք ճիւղերը որո՞նք են. — Ո՞րն է Պալքանեան ցամաքակղզիին երկրագործական գլխաւոր գաշտավայրը. — Սերպիոյ գլխաւոր մշակութիւնը ո՞րն է. — Ե՞րբ առած են Օսմանցիները Պոլիս քաղաքը. — Ինչ տարբեր ցեղերէ կազմուած են Պալքանեան ցամաքակղզիին բնակիչները. — Ի՞նչ կարեւորութիւն ունի Սոֆիա երբ Պուլկարիոյ մայրաքաղաք. — Ո՞րն է Պուլկարիոյ ամէնէն բազմամարդ քաղաքը. — Թանուբի վրայ Պուլկարիոյ գլխաւոր նաւահանգիստ ո՞րն է. — Սեւ ծովի վրայ Պուլկարիա ի՞նչ կարեւոր նաւահանգիստ ունի. — Պուլկարիոյ գլխաւոր անասնական հարստութիւնը ի՞նչ է. — Ո՞րն է այն երկիրը որուն հետ կ'ըլլայ Պուլկարիոյ արտաքին վաճառականութեան մեծ մասը. — Ո՞ր՞նք են Սերպիոյ գլխաւոր քաղաքները. — Ի՞նչ գիտես Մոնթենեկրոյի վրայ. — Ո՞ր ափերուն հետ ամէնէն աւելի կապուած են Սերպիա և Մոնթենեկրօ անասնական առեւտուրով. — Ո՞րոնք են Թուրանեան գլխաւոր քաղաքները. — Թուրանական հողին գլխաւոր հարստութիւնները որո՞նք են։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՐԹՈՒԹԻՒՆ. — Եւրոպա քաղաքակրթութեան չարժուձիին գլուխը կը գտնուի այսօր։ Հոն է որ եղած են բոլոր արդի մեծ գիւտերը, չոգին, էլեկտրականութիւնը ևայլն, իրենց գործնական բազմաթիւ կիրարկութիւններով որոնք աշխարհս կերպարանափոխ ըրած են։

Եւրոպական բոլոր պետութիւնք ունին այսօր երկաթուղիներ և ցամաքային Եւրոպայի բոլոր մեծ քաղաքները կապուած են երկաթուղիներուն բավանդակ ցանցին հետ։ Այսպէս կարելի է Գաճիչէն կամ Լիսպոնայէն (Ատլանտեան Ովկիանոսին վրայ) երթալ մինչեւ Օրէնպուրկ (Ուրալ գետին վրայ) կամ Կալկաթ ապրելով, այսինքն մինչեւ Ասիոյ գաւառները։

Հիւսիսային և Հարաւային Եւրոպայի երկիրներուն միջեւ աւելի բազմաթիւ են երկաթուղիները, մանաւանդ Կեդրոնական Եւրոպայի մէջ։ Ամէնէն բարձր լեռներն իսկ անցուղիներ արդէն մը չեն յարուցած. անոնց մէջ ալ թիւնէլներ պեղած են։

Ոչ նաւազ կարեւոր են ծովային հաղորդակցութիւնները։ Աւազաւանանաւերու և չափնաւերու բազմաթիւ տարիք մը կ'երթեւեկէ այլ եւ այլ մարզերու նաւահանգիստները և այսպէս Եւրոպայի երկիրները աշխարհիս միւս մասերուն հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ։ Ծովային հաղորդակցութիւնք երեք գլխաւոր կեդրոններ ունին։ 1. Պալթիկ ծով (Սթոքհոլմ, Ս. Փեթերսպուրկ, Ռիգա, Տանձիկ, Քօպէնհակ) և Հիւսիսային ծով (Համպուրկ, Պրէմ, Ամսթէրտամ, Ռոթէրտամ, Անվերս, Լոնտոն). 2. Սպանական ովկիանոս (Գատէս, Լիվըրպուլ, Տըպլին, ՍաուԹհէմփթըն, Լը Հաւր, Պորտոյ, Լիսպոնա, Գաճիչ). 3. Միջերկրական ծով (Պարչելոնա, Մարսիլիա, Ճենուա, Բալերմոյ, Թրիէսթէ, Կ. Պոլիս. և Օտեսա (Սեւ ծովուն վրայ)։

Եւրոպա աշխարհիս ճարտարարուեստական կեդրոնը եղած է այսօր. երկրի միւս մասերէն կ'ընդունի բոլոր այն նախնական նիւթերը որոնցմէ պէտք եղածին չափ չունի կամ բոլորովին զուրկ է։ Անոնց կը հատուցանէ գործուած առարկաներ, մեքենաներ, անօթներ, գինքեր, հանդերձեղէններ, գործի նիւթեր և այլն։ Այսպէս ալ հարիւրին միւս չորս մասերը հարկաւոր են Եւրոպայի։

Անգլիա ճարտարարուեստական, առեւտրական և ծովային գործունէութեան մասին Եւրոպացոց ակնթանքի մէջ առաջին կարգը կը գրաւէ. յետոյ կու գան Գերմանիա և Գերմանիա։

Եւրոպական ժողովուրդները բոլոր ցամաքներուն վրայ հիմնած են կարեւոր գաղթականութիւններ, բնդարձակ երկիրներ, ինչպէս են Հնդկաստան, Հնդկաչին, Սիպերիա, Արեմուտքի մեծագոյն մասը, Աւստրալիա, Գանատա եւայլն Եւրոպացի կառավարութիւններ են նոյնպէս որ ամբողջ Ամերիկան լեցուցած են գաղթականութեամբ։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Ա ՍԻ Ա

Բ Ն Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ԴԻՐՔ. ՍԱՀԱՐԱՆ. — Ասիա հին ցամաքին արեւելեան մասը կը գրաւէ և աշխարհիս հինգ մասերուն մեծագոյնն է։ Ունի 44 միլիոն քառակուսի քիլոմէտր տարածութիւն. ըսել է Եւրոպացին $4^1/_2$ անգամ աւելի մեծ է։

Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ Ովկիանոս, Արեւելքէն՝ Խաղաղական Ովկիանոս, Հարաւէն՝ Հնդկային Ովկիանոս, Արեւմուտքէն՝ կարմիր ծով և Սուէզի ջրանցք, (որնցմով կը բաժնուի Աֆրիկէն), և Միջերկրական ծով ու Եւրոպա։

ԾՈՎԱՓՈՒՆԴ. — Ասիա ունի չատ անհուն ծովախորշեր, որոնք կ'ընծայեն բազմաթիւ ծոցեր ու թերակղզիներ։

Խաղաղական Ովկիանոսը կը ձեւացնէ Պեհրինկի Ծովը, Օխոցքի Ծովը, Ճաբոնի Ծովը, Դեղին Ծովը, որմէ կազմուած է Բէնկալի ծոցը,

և Ջինու Ծովը, որմէ կը ձեւանան Փօնիիկիէ-ևու Սիամի ծոցերը։

Հնդկային Ովկիանոսը կը ձեւացնէ Պենկալայի Ծոցը, Օմանի Ծովը, Պարսկային Ծոցը, Աէճնի ծոցը և Կարմիր Ծովը։

Միջերկրականէն կազմուած են Խակճնիտրուճնի և Ատալիայի ծոցերը։

Սառուցեալ Ովկիանոսի ծովեզերքները ծածկուած են առատ ճահիճներով կամ բուիստրանեներով։

Ջինու Ծովուն և Հնդկային Ովկիանոսին մէջ սակայն մրրիկներ կ'ըլլան Սիէլօն կոչուած։

Սառուցեալ Ովկիանոսը՝ Յապազականին հետ կը հաղորդակցի Պեհրինկի նեղուցով, որ Ասիան Ամերիկայէն կը զատէ։

Յապազական Ովկիանոսը՝ կը հաղորդակցի *Հնդկային Ովկիանոսին* հետ՝ Մալաքքայի նեղուցով։

Հնդկային Ովկիանոսը՝ Կարմիր Ծովուն հետ հաղորդակցութիւնն մէջ է Պապ-էլ Մանտեպի նեղուցով, Պարսկային Ծոցը՝ Օմանի Ծովուն հետ՝ Օրմուզի նեղուցով։ Կարմիր Ծովը՝ *Միջերկրականի* հետ կը հաղորդակցի Սուէզի ջրանցքով։ Արշիպելագոսը՝ Մարմարայի հետ՝ Տարտանելի նեղուցով և Մարմարան Սեւ Ծովու հետ՝ Պոսֆորի նեղուցով։

Ասիա երկու թերակղզիներ կ'ընծայէ արեւելեան կողմը, Քամչաթկա և Քօրեա։ Երկրի հետ ոչ հարաւային կողմը, Հնդկաչին, որ կը վերջանայ Մալաքքայի երկար ու նեղ թերակղզիով, Հնդկաստան և Արաբիա։

Ասիոյ արեւմտեան կողմը կ'երկարի Փոքր Ասիոյ *կամ* Անատօլուի թերակղզին։

Ասիոյ ծայրագոյն կէտերն են Չելիուսքին Հրուանդանը՝ հիւսիսակողմը, Սառուցեալ Ովկիանոսի վրայ։ Արեւելեան Փլուխ՝ հիւսիս-արեւելեան ծայրը, Ամերիկայի դիմացը։ Ծօմալինգա Հրուանդանը՝ Մալաքքա թերակղզին հարաւային կողմը։ Քոմորին Հրուանդանը՝ Հնդկաստանի հարաւակողմը։

Ասիական ցամաքին մեծ կը կազմեն բազմաթիւ կղզիներ։ Անոնցմէ գլխաւորները որ կը գտնուին արեւելեան կողմը, չորս մեծ և բազմաթիւ հարաւային կղզիներ։ Անոնք են Սախալին կղզին, Ճապոնական կղզիները որ կը տարածուին Քուրիլեան կղզիներէն մինչեւ Քորմոզա և Հնդիկ կղզեխումբը *կամ* Մալայեան Արշիպելագոսը։ Ցիւնամարմիանան տարածուն են նաեւ Սեյլան կղզին Հնդկաց ովկիանոսին մէջ։ Կիպրոս, Հռոդոս և Օսմանեան Արշիպելագոսը։

ՀՈՂԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹԻՒՆՔ. ՊԱՅՄԱՆՆԵՐ - ԹԻՒՆԵՐ. — *Բոլոր ցամաքներուն մէջ* Ասիա ամենէն բարձր է։ Իր բարձրագոյն լեռնագագաթով և հսկայ լեռնաշղթաներով կը գտնուի միւս ցամաքներէն։ Փոքր Ասիոյ, Իրանի, Թիպէթի, Մոնկոլիոյ լեռնագագաթները կը ձեւացնեն բարձրաւանդակներու անհուն պատ մը, մանրիկ ձեւով, որ Միջերկրայ լեռներով կը չարունակուի մինչեւ Արեւելեան ովկիանոս։

Այս բարձրագոյն մարզը կը բաղկանայ երկու մասերէ, մէկը արեւելեան, միւսը արեւմտեան, զորոնք իրարու կը միացնէ Հինտուքուշ լեռնաշղթան։ Կեդրոնական և Արեւելեան բարձրաւանդակները կը պարունակեն Թիպէթի Բամիրի և Մոնկոլիոյ լեռնագագաթները. Հիմալայա, Քարաքորում, Քուէնլուն, Թիէնշան (*երկնային լեռներ*), Ալթայի լեռնաշղթաները, ինչպէս նաեւ Հնդկաչինու, Ջինու և Սիպերիոյ լեռները։

Արեւմտեան բարձրաւանդակները կը պարունակեն Իրանի և Անատօլուի լեռնագագաթները և Էլպրուզի, Տորոսի և Կովկասի լեռնաշղթաները։

Դաչտագետնները որ լեռնագագաթներէն ոչ հեռու ընդարձակութիւն ունին, կը գտնուին ցամաքին չորրդը. դլխաւորներն են Սիպերիոյ դաչտագետինը զոր Ուրալ լեռնաշղթան կը բաժնէ Ռուսական դաչտագետնէն, Տուրանական դաչտագետինը, Արալ ծովուն չորրդը. Ջինու դաչտագետինը Յապազականի եզերքը, Գանգեսի և Ինդոսի դաչտագետինը, որոնք Տէքքանի լեռնագագաթը կը միացնեն Ասիական ցամաքին. վերջագոյս Եփրատի և Տիգրիսի դաչտագետինը Արաբիոյ լեռնագագաթը կը միացնէ արեւմտեան բարձրաւանդակներուն։

ԴԱՏԵՐ. — *Բոլոր այս դաչտագետիններէն* ոտգոյ գետերուն մեծագոյն մասը կ'երթայ Կեդրոնական հասարակեաղն և կը թափին Սառուցեալ Ովկիանոս, Յապազական Ովկիանոս և Հնդկային Ովկիանոս։

Սառուցեալ Ովկիանոս թափող գետերն են Օպի որուն գլխաւոր գետակիցն է Իրթիչ, Եենիսէյ, որուն մէկ գետակիցը՝ Անկարա՝ կ'երկայ Պայքալ լիճէն։

Լէնա որ կ'երկայ նոյն լիճին չորրդականերէն։

Այս երեք գետերը տարին 9 ամիս ամրողջ սառած կը մնան։

Յապազական Ովկիանոսին հարկատուներն են՝ Ամուր, Հօանկ-Հօ (*Դեղին գետ*), Եանկ Ձէ Քեանկ (*Կապոյտ գետ*) և Սիբիրանկ որոնք երկար և մանուածապատ ընթացքով կ'ոռոգեն խոտ արգաւանդ և բազմամարդ երկիրներ։

Ջինու ծովուն հարկատուներն են Սանկէոյ *կամ* Կարմիր գետ և Քանկոն *կամ* Մեհոնկ։

Հնդկաց Ովկիանոսին հարկատուներն են՝ Սալուէն, Իրաուաթի, Պրահմափուտրա և Գանկես որոնք կը թափին Պէնկալայի ծովը։

Ինդոս որ կը թափի Օմանի ծովը։

Տիգրիս և Եփրատ որ կ'ոռոգեն *Միջագետքը* և միասին Շադ-էլ-Արապը ձեւացնելով կը թափին Պարսից ծոցը։

Ասիա ունի նաեւ գետեր որոնք ոչ ոքի ծով չեն տանիր. այսպէս են Սիր Տարիա և Ամու Տարիա որոնք Արալ լիճը կը թափին. Կուր և Արաքս որ կը թափին Կասպից ծովը։

Ասիական գետերուն մեծագոյն մասը իրենց գետաբերանին մօտ բարերար ակրպաներ կը ձեւացնեն։

ԼԻՃԵՐ. — *Ասիոյ լիճերուն* գրեթէ ամէնքն ալ ազատ են։ Գլխաւորներն են Արալ լիճը Թուրքստանի մէջ. Պալխաշ և Պայքալ *Սիպերիոյ մէջ*. Վանայ ծովը՝ Ասիական Թուրքիոյ մէջ. Ուրմիոյ լիճը՝ Պարսկաստանի մէջ. և Մեռեալ ծովը՝ Պաղեստինու մէջ։

Հարցարան. — Որո՞ւ կը գտնուի Ասիա և որո՞նք են իր սահմանները. — Ինչ ծովեր կը ձեւանան Խաղաղական Ովկիանոսէն, Ասիոյ ծովափերքներուն վրայ. — Որո՞նք են Ասիոյ հարաւային երեք ցամաքակղզիները և ինչ նմանութիւն ունին Եւրոպայի հարաւային երեք ցամաքակղզիներուն հետ. — Որո՞ն է Ասիոյ արեւմտեան մեծ թերակղզին և ո՞ր նեղուցներով քաժնուած է Եւրոպայէն. — Որո՞նք են Ասիոյ մասը կազմող գլխաւոր կղզիները. — Ցոյց տուէք քարտէսին վրայ ո՞րն է Մալայեան արշիպելագոսը կամ Հնդիկ-Կղզեխումբը. — Ինչպէս է Ասիոյ մակարդային պէսպիսութիւնը. — Ինչով կը զանազանուի Ասիան միւս ցամաքներէն. — Որո՞նք են Ասիոյ մեծագոյն լեռնագագաթները. — Որո՞ն է Ասիոյ և աշխարհիս բարձրագոյն գագաթը. — Թուէք ցեղ Ասիոյ մեծ գետերը և ցոյց տուէք թէ ուրկէ կը բխին. — Ասիոյ ո՞ր մասին մէջ կը գտնուին ամենէն ընդարձակ անապատները և ինչո՞ւ. — Ասիոյ լիճերը որո՞նք են. — Ո՞ւր կը գտնուի Պայքալ լիճը. — Որո՞նք են Ասիոյ գլխաւոր գաշտագետինները, և ո՞ր գետերը կը թրջեն զանոնք։

Պարապմունք. — Գծեցէք Ասիոյ քարտէսը և առանձին գոյներով ցոյց տուէք լեռնագագաթերն ու գաշտագետինները, նշանակեցէք գլխաւոր գետերը։

ԿԼԻՄԱ. — Ասիա ունի գրեթէ ամէն տեսակ կլիմաներ. մինչդեռ իր հիւսիսային մասը Սառուցեալ գօտիին տակ կ'իյնայ, Մալայեան արշիպելագոսը Հասարակածին վրայ կը գտնուի։ Ասիոյ ամենամեծ մասը կը վերաբերի Բարեխառն գօտիին. այս մարզին մէջ գտնուած երկիրներուն անունք որ անձրեւներ կ'ընդունին, օրինակի համար չորս տարիներ, կրնան տասը տարի չորս մնալ։ Իսկ Կեդրոնական Ասիա երաշտահարնել կը նեղուի։

Ասիոյ ամենէն տաք, ամենէն խոնաւ և ամենէն արդաւանդ մասն է հարաւ-արեւելեան մասը, որ կը պարունակէ Հնդկաստան, Հնդկաչին, Հնդիկ կղզեխումբը և հարաւային Ջինաստան։ Դժբախտաբար այս մասին կլիման ընդհանրապէս վատառոգի է Եւրոպացիներուն համար. եղանակները կը զանազանուին երբեմն ոչ թէ չափազանց ջերմի տարբերութեամբ մը, հապա մէկը չոր և խոնաւը անձրեւային ըլլալնուն համեմատութեամբ։ Ասիական ցամաքին այս մասը Մուսոններուն մարզն է. Մուսոնները՝ պարբերական հովեր՝ Սեպտեմբերէն մինչեւ Մարտ կը փչեն հիւսիսային արեւելքէն, իսկ յունուար վերջ ամիսներուն կը փչեն հարաւային արեւմուտքէն։ Պրահմափուտրայի տարին տասը զանոնք այնպէս մէկն է։

ԲՈՒՍԱԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ. — Ասիոյ հողային հարստութիւնները այսպէս են իր կլիմային պէս. հիւսիսային կողմը, սառուցեալ ովկիանոսի եզերքը կը տարածուի խոնարհներու (*տասը ճահիճներ*) մարգը ուր չիկան ծառեր և ուր կը սերտասերեն մամուռներ և քարքարոտներ։ Այս մարգին հարաւակողմը կը տարածուին անհուն անտառներ՝ գլխաւորաբար ցա-

բաներէ, կոնարներէն և կոշիններէ բազկացած։ Այս մարդին կը յաջորդէ խառաւէտ տարփառաններու և անապատներու մարդը որ կը բովանդակէ Կեդրոնական Ասիոյ բարձր լեռնադաշտերը և Թուրքստանի, Իրանի և Արաբիոյ միջագոյն մասը։

Արեւմտեան Ասիոյ արդատնդ մասերուն մէջ կը մշակուին ցորեն, բրինձ, որթատունկ, ծխախոտ, և պաղատու ծառեր՝ ինչպէս ծիրանի, դեղձի, թզենի, ձիթենի և ուրիշ տաք մասերուն մէջ արմաւենի։ Պարսկաստանի, Տաբասային Կովկասոյ և Ասիական Թուրքիոյ կը պարունք ցորենը, որթատունկը և Եւրոպայի հարաւային կողմով արմաւիքներու, ընդհանրապէս և պաղատու ծառերու միջագոյն մասը։

Արեւելեան Ասիա (Չին և Ճապան) արմաւիքներէն և ընդհանրապէս չատ մը օգտակար արտադրութիւններ, ինչպէս թէյ, բամպակ, շաքարեղէգ, քարուր, լուլակ, բուսական իւղեր, ինչպէս նաեւ թիթենին որ չերամաբուծութեան կը նպաստէ։

Սակայն քուսաբերութեան տեսակէտով ոչ մէկ մարզ այնքան հարուստ է որքան Հնդիկ ցամաքակղզիները (Հնդկաստան և Հնդկաչին) և Հնդիկ կղզեխումբը (Մալայեան արշիպելագոս)։ Հոն է որ կ'աճին նարդիլակենին, արմաւենին, պղպեղենին, կինամոնին, մչկընկուզին, մեխակենին, պանանենին, հնդկեղէգը (պամպու), թանկագին փայտեր, լեղակենին, արճենին, բրինձը, բամպակենին, շաքարեղէգը, են։ Ինչ երկիրներ ասելի այդպան մնայնդներ և ասելի համեղ պտուղներ կը հայթայթեն մարդուն։

ԱՆԴԱՍՆԵՐ.— Ասիան է որ աշխարհի մնացած մասին առած է ընտանի կենդանիները։ Արեւմտեան և կեդրոնական Ասիոյ մէջ ընտելացուցած են ժամանակաւ չունը, եզը, այծը, ոչխարը, խոզը, էշը, ձին և ուղտը։ Սիպերիոյ մէջ եղջերուն (ռէնը) և չունը մեծ ծառայութիւններ կը մատուցանեն։ Թիպէտի մէջ եակը և Հնդկաստանի մէջ փիղը նոյնպէս ընտանի անասուններ են։

Իրը վայրի անասուն՝ Սիպերիոյ մէջ կան մուշտակաւոր կենդանիներ, կնգուռ, կզաքիս, սամոյր, սպիտակ արջ, ագռաւ, լուտան, եղջերու (ռէն)։

Կեդրոնական Ասիոյ լեռներուն ու տափաստաններուն մէջ կ'ապրին դեռ վայրի վիճակի մէջ ձի, էշ, այծ, ոչխար, կատու, ուղտ, եաք։ կը գտնուին նաեւ յամոյներ, գայլեր, աղուէսներ։ Արեւմտեան Ասիա Ափրիկէի հետ նմանութիւն ունի իր առիւծներով, չնագայլերով, բորենիներով, գայլերով աղուէսներով, կարիճներով և մարախներով։ Արեւելեան մարզը (Չինաստան և Ճապան) ունի կապիկ, արջ, գայլ, կրիայ, օձեր, վտակաձկներ, եւլն։

Հնդիկ ցամաքակղզիներուն և Հնդիկ կղզեխումբին մէջ կենդանիներն ալ բոլորովին պէս պէս անդուր ձեռնարկութիւն և գանազանութիւն ունին, կատաղի գազաններէն վագրը, յաճախ ու ընձառիւծը երկիւղալի են թուռնուար օձերուն չատ։ Կապիկները կը վխտան անտառներուն մէջ, կոկորդիլոսները՝ գետերուն մէջ։ Փիղ և ռնգեղջիւր ալ կան հոն։ Թռչուններէն սիրամարգն ու թռչնամակը կը գայլին իրենց հիանալի փետուրներով։

ՀԱՆՔԱՅԻՆ.— Ասիոյ հանքային արտադրութիւնները այլազան և առատ են։ Թանկագին մետաղներէն ոսկի, արծաթ, լրագին և օգտակար մետաղներէն՝ երկաթ, պղինձ, կապար, գինկ, ինչպէս նաեւ հանքային կիզանիւթերէն՝ հանքածուխ և քարիւղ։

Ասիոյ հանքահարուստ մարզերն են՝ Սիպերիա, Կովկասիա, Ասիական Թուրքիոյ հիւսիս արեւելեան երկրամասը, Հնդկաստան, Հնդկաչին, Չինաստան, Ճապան և Մալայեան Արշիպելագոս։ Ասիոյ հանքային հարստութիւններէն չատ ալ դեռ ճանչցուած չեն կամ թեռածանօթ են։

Հարցարան. — Ասիոյ ո՞ր կէտերէն կ'անցնին Խեցգետնի արեւադարձն ու Արջային բեւեռական Շրջանակը։ — Ո՞րն է Ասիոյ ամէնէն առատ անձրեւ ընդունող մարզը, և ի՞նչ էատոր պատճառը։ — Գծեցէք Ասիոյ քարտէսը և առանձին գոյնով նշանակեցէք Մուսսոններուն ենթակայ երկիրները։ — Որո՞ք են Ասիոյ ամէնէն բաթեխառն երկիրները։ — Որո՞ք են Ասիոյ այն երկիրները որ ցամաքային կլիմայ ունին։ — Գծեցէք Ասիոյ քարտէսը և առանձին գոյներով ցոյց տուէք Թուռնարաններու մարզը, անտառներու մարզը և անապատներու մարզը։ — Որո՞ք են Ասիոյ ամէնէն արգասաւոր մասերը և ի՞նչ են ատոնց բերքերը։ — Որո՞ք են Արեւելեան Ասիոյ բուսական հարստութիւնները — Գծեցէք Ասիոյ քարտէսը և առանձին գոյնով նշանակեցէք այն երկիրները ուր չերամաբուծութիւնը չատ ծաղկած է։ — Մուշտակաւոր կենդանիները Ասիոյ ո՞ր մասին մէջ կը գտնուին ամէնէն ասելի։ — Բուսական և կենդանական տեսակներու մասին Ասիոյ ամէնէն հարուստ մարզը ո՞րն է։ — Գծեցէք Ասիոյ քարտէսը և նշանակեցէք ամէնէն հանքահարուստ մարզերը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասիա ունի իրր 865 միլիոն բնակիչ. ըսել է ամբողջ երկրագնդի բնակչութեան կէսէն ասելին. սակայն իր տարածութեան նայելով Ասիա երկու անգամ ասելի քիչ բնակիչ ունի քան Եւրոպա։

Ասիոյ հարաւային և արեւելեան երկիրները՝ Հնդկաստան և Չինաստան՝ երկրագնդին ամէնէն բազմամարդ կեդրոններն են. ընդհակառակը Արեւմտեան և Կեդրոնական Ասիոյ խիստ բարձր ու անջրդի լեռնապարերը, ինչպէս նաեւ դէպի Արջային Սառուցեալ ովկիանոսը հակող ցուրտ պաշտպետները ամայի են և չատ քիչ բնակիչ ունին։

Ասիական ժողովուրդները կը պատկանին երկու գլխաւոր ցեղերու՝ Սպիտակ ցեղ և Դեղին ցեղ։

Եթէ Կովկասէն մինչեւ Բամիր և անկէ ալ մինչեւ Պէնկալայի ծոցին հիւսիսակողմը գիծ մը քաշենք, գծին հարաւակողմը կը մնան Սպիտակ ցեղին ժողովուրդները. իսկ գծին հիւսիսակողմը ինչպէս նաեւ Արեւելեան Ասիոյ մէջ ապրողները կը վերաբերին Դեղին ցեղին։

Սպիտակ ցեղին ժողովուրդներուն մէջ երկու խումբեր կը գանազանուին. մէկ խումբը կը բովանդակէ Հնդիկները, Աֆղանները, Պարսիկները, Հայերը, Կովկասի բնակիչները. միւս խումբը կը պարունակէ Հրեաները ու Արաբները։

Դեղին ցեղին կը պատկանին Մոնղոլները ու Մալայեանները։ Մոնղոլական բնութիւնն են Սիպերիոյ բնիկները, Թուրքերը, Ճապոնցիները, Չինացիները, Թիպէտցիները, Անամցիները, Սիամցիները ու Պիրմանիները։

Մալայեանները կ'ապրին Հնդիկ կղզեխումբին մէջ, որ այս պատճառաւ կը կոչուի նաեւ Մալայեան Արշիպելագոս։

Ասիոյ մէջ ծնունդ առած են աշխարհի մեծագոյն կրօնքները. Պրահմանութիւնը կը տիրապետէ Հնդկաստանի մէջ, պուտտայականութիւնը Չինական կայսրութեան, Ճապոնի և Հնդկաչինու մէջ. Մահմետականութիւնը Թուրքիոյ, Պարսիկներուն, Արաբներուն և Մալայեաններուն մէջ։ Քրիստոնէութեան հետեւողները են Հայերը և Ասիոյ մէջ հաստատուած Եւրոպացիները։

Պատկ. 78. — **ՄՕՆԿՈԼԱՑԻ ԹԻՓԸ**

Մոնկոլական ցեղը Ասիոյ ամբողջ արեւելեան կէսը կը գրաւէ։ Մոնկոլները կը տարբերին Հնդիկներէն իրենց դեղին եւ ոչ ձերմակ գոյնով, մորուքի քացակայութեամբ եւ իրենց այիերուն ձեւով ուռնիլ փոր փոք կ'ըլլան միջս։ Չինացիներն ու Ճապոնցիները Մոնկոլական ցեղին կը վերաբերին։

Հրէութիւնը գլխաւորապէս Ասիական Թուրքիոյ մէջ իրեն հետեւողներ ունի։ Սիպերիայի բնիկներուն մէկ մեծ մասն ալ հեթանոս մնացած է։

Ասիոյ կէսէն ասելին Եւրոպացիներուն տիրապետութեան տակ կը գտնուի։ Ամէնէն բնդարձակ կալուածները կը վերաբերին Ռուսերուն, Անգլիացիներուն, Թուրքերուն, Հոլանտացիներուն և Ֆռանսացիներուն։ Անկախ երկիրներն են Չինական կայսրութիւն, Ճապոն, Սիամ, Աֆղանիստան, Պարսկաստան, Օման և Արաբիոյ ներքնագաւառները։

Հարցարան. — Գծեցէք Ասիոյ քարտէսը և ամէնէն քազմամարդ մարզերը առանձին գոյնով նշանակեցէք. — Ո՞ր ցեղերուն կը պատկանին Ասիոյ բնակիչները. — Գծեցէք Ասիոյ քարտէսը և առանձին գոյներով նշանակեցէք Մահմետական, Պուտտայական և Պրահմանական կրօններուն հետեւող երկիրները. — Նշանակեցէք՝ Ասիոյ քարտէսին վրայ՝ բոլորովին անկախ երկիրները. — Եւրոպական ո՞ր ազգերը գաղթականութիւններ ունին Ասիոյ մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՆԿԱԽ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ

Ռուսական կայսրութիւնը կը բռնադրակէ Ասիոյ մէջ երեք երկիրներ՝ Կովկասիա, Թուրքեստան և Սիպերիա։

1. Կովկասիա որ կը տարածուի Սեւ և Կասպից ծովերուն մէջտեղ, իր անունը առած է Կովկասի լեռնաշղթայէն։ Կը կազմուի վերոյիշեալ երկու ծովերուն միջեւ։

Լեռնային երկիր մըն է. ձմեռը չատ ցուրտ կ'ընէ և ամառը տաք. երկրին հարաւային կէսը չատ հարուստ բուսարկութիւն ունի։ Գլխաւոր բերքերն են արմաւիր, սրճեւառնկ, պտղատու ծառեր և թթենի որ չերամաբուծութեան կը նպաստէ։ Ունի նաեւ բաւական մեծ վաճառականութիւն։ Երկրին գլխաւոր հարստութիւնը կը կազմեն Կասպից ծովուն եղերքը (Պաքու) գտնուած նաւթահորերը։

Կովկասիա ունի իրը $9\frac{1}{2}$ միլիոն բնակիչ, որոնք կը բազկանան այլազգի և այլադաւան ժողովուրդներէ։

Մայրաքաղաքը՝ Թիֆլիս կամ Տփղիս (165000) Ռուսական Ասիոյ ամէնէն բազմամարդ քաղաքն է։

Երեւան՝ Պարսկաստանի սահմանին մօտ հին քաղաք է։ Երեւանէն 3 ժամ հեռու է վաղարշապատ գիւղաքաղաքը. հոս կը գտնուի Ս. Էջմիածնի հռչակաւոր վանքը ուր հաստատուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան աթոռը։

Ներքին կարեւոր քաղաքներ են Գանձակ, Ֆիւթայիս, Նախիջեւան, Ախալցխա, Կարս, Վլատիկաւկաս, Լայն։

Գլխաւոր նաւահանգիստներն են Կասպից ծովուն վրայ՝ Պաքու և Սեւ ծովուն վրայ՝ Պաթում, որոնք երկաթուղիով մը իրարու կապուած են։

2. Թուրքեստան կը տարածուի Կասպից ծովուն և Թինչան լեռներուն մէջեւ։ Արեւմտեան մասին մէջ կան ընդարձակ աւազուտ անապատներ և ճախճախուտ տափաստաններ. կեդրոնական մասը միայն զար կը իրջնէն Ատալ լիճին երկու հարիւրաւորը՝ Ամու Տարիա և Սիր Տարիա բաներով է, մանաւանդ Ֆէրղանա նահանգը։ Մեւտաքն ու բամպակը երկրին կարեւոր արտադրութիւններն են. Թուրքեստան հարուստ է նաեւ պղտատու ծառերու մասին։



Պատկ. 79.

ՊԱՒՈՒԱԻ ՄԻՋԱԶ ՆԱՒԹԱՀՈՐ ՄԸ

Քարիւղը ստորերկրեայ մեծ խառներ կը կազմէ, ուրկէ դուրս կը ցայտեցնեն զայն արհեստական ջրհորներու հանութով։ Կովկասի ստորոտը, Կասպից ծովուն վրայ, Պաքու եւ իր շրջակաները, ամբողջ Ռուսիոյ ամենեն նաւթաբեր տեղերն են։

Մայրաքաղաքը Թաշքենտ է, հոն է Ռուսական Սիր Տարիայի և Սեմիրեչիայի զօրքերուն Ամրողջ վարչական գլխաւոր պետը։ Թաշքենտ հարուստ է, հոն է Լէնկ-Թիմուրի գերեզմանը։

Խոխանտ և Մոկենտ վաճառաշատ քաղաքներ են Ֆէրղանա նահանգին մէջ։

Պուխարա կեդրոնական Ասիոյ մահմետական քաղաքներէն մէկն է. հին, Մեւզ կարեւոր են գորգերէնի վաճառականութեամբ։

Կազգնովոտսք բանակ նահանգապետ է Կասպից ծովուն վրայ։

Թուրքեստան որ հին տանն Սկիւթիա տեղեակ ծանօթ երկրամասին կը համապատասխանէ, բարբարոսութեան և վայրենութեան երկիրն եղած է միշտ, և չունի որ Սկիւթական, Հնական և Մանկական արշաւանքներու։

Այսօր Ռուսերը կը տիրեն Կեդրոնական Ասիոյ այս մասին և իրենց տասդատանքները կը չարունակեն տարածել դէպի հարաւ, հետզհետէ մօտենալով Հնդկաստանի անգլիական տասդատանքներուն։ Արդէն իրենց թեւարկութեան


ԱՄՍԿ
Ասիոյ մաս
0 500 1000 1500
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՍԻԱ
ՄԱՆՉՈՒՐԻԱ
ՉԻՆԱՍՏԱՆ
ՊՐԻՏԱՆԻԱ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՕՄԱՆ
ԱՐԱԲԻԱ
ԱՖՂԱՆԻՍՏԱՆ
ՄԵԾ ՊԱՐՍԻԿ
ՓՈՔՐ ԱՍԻԱ
ՄԵԾ ՀԱՅՔ
ՍԻՐԻԱ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ՍԻՊԵՐ

տակ առած են Պուխարայի և Խիվայի խանութիւնները։

Երկաթուղի մը կապից ծովու եզերքէն (Կրաշնովոտսք) մինչեւ Ասխիժան կ'երթայ և առանձին ճիւղաւորումով կապուած է Անդրսիպերիական գծին։

3. Սիպերիա կը գրաւէ Ասիական ցամաքին ամբողջ հիւսիսային մասը։ Հիւսիսակողմը ծածկուած է սառնապատ ճահիճներով (Թունտրա). կեդրոնական մասը կը ծածկեն մեծատարած անտառներ։

Հարաւային մասը կ'արտադրէ արմաւիքներ և մշակելի հողերը բաւական մեծ տարածութիւն մը կը ծածկեն այս մասին մէջ հակառակ խիստ կլիմային։

Երկրին գլխաւոր հարստութիւնը կը կազմեն իր անտառները, մանաւանդ կենդանիներն ու ոսկիի, արծաթի, բրոնզի, երկաթի, պղինձի հանքերը։

Իր մեծ գետերը՝ Օպի, Եէնիսէյ, Լէնա, Ամուր նաւարկելի են. բայց երկար ամիսներ սառած կը մնան։ Անդրսիպերիական երկաթուղին Ռուսիան հաղորդակցութեան մէջ կը դնէ Վլատիվոսթոք նաւահանգիստին հետ, ձմրան ծովուն վրայ։

Սիպերիա հակառակ ամբողջ Եւրոպային ունի ընդարձակ ըլլալուն, հազիւ 6 միլիոն բնակիչ ունի։ Կը բաժնուի երկու կառավարչութիւններու. Արեւմտեան Սիպերիա՝ մայրաքաղաք Օմսք. արեւելեան Սիպերիա՝ մայրաքաղաք Իրկուբսք։ Ասոնցմէ անջատ է Ծայրագոյն Արեւելքի կառավարչութիւնը որ կը պարունակէ Ամուր նահանգը։

Հարցաբանութիւն.—Ի՞նչ երկիրներէ կը բազկանայ Ռուսական Ասիան և ո՞րն է կարեւորագոյնը տնտեսական տեսակէտով.—Ինչո՞ւ սակաւաբնակ է Սիպերիա.—Ո՞րն է Թուրքեստանի ամէնէն բարեբեր մասը.—Որո՞նք են Ռուսական Ասիոյ կարեւորագոյն նաւահանգիստները Կասպից ծովուն և Սեւ ծովուն վրայ.—Ինչ են Կոլկասիոյ կարեւորագոյն հարստութիւնները։

Պարապմունք.—Նկարագրեցէք երկաթուղիով ճամբորդութիւն մը Ս. Փեթերսպուրգէն մինչեւ Վլատիվոսթոք։

ՉԻՆԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Չինական կայսրութիւնը որ Եւրոպայէն աւելի ընդարձակ է, կը պարունակէ հետեւեալ երկրամասերը. Թիպեդ, Չինական Թուրքեստան, Մոնկոլիա, Մանչուրիա և բուն Չինաստան։

Թիպեդի լեռնագաշտը՝ Հիմալայայի և Քուէնլունի մէջտեղ կը տարածուի, իր միջին բարձրութիւնն է 4–5000 մեթր։ Երկրագնդիս ամէնէն բարձր երկիրն է։ Կլիմային խստութեան պատճառաւ երկիրը մասամբ անապատ է և չատ ցածուկ բնակչութիւն ունի։ Մայրաքաղաքն է Լհասսա ուր կը բնակի Տալայի-Լաման, պուտտայական կրօնի գերագոյն պետը։



Պատկ. 80. — ԲՆԵԲԻՆ ՄԷՋ ՓՈՂՈՑ ՄԸ

Չինական բաղաքներու փողոցները գրեթէ միշտ նեղ, ծռաձոռ ու խիտ գիշ պահուած կ'ըլլան. ընդհանուրապէս երկու եզերքներուն վրայ կը բարձրանան ցած ցած տուներ ուր վիտացող բնակչութիւն մը կը դիզուի վրայէ վրայ։ Սակայն բացառութիւն կը կազմէ Բէյճինի այս փողոցը, որ շատ, ուղիղ է և որ եզերուած է բարձր ու բաւական նկարացեղ տուներով։ Բէյճինի մեծ փողոցներէն մին է այս. և սակայն այս ալ աղայատակուած չէ ու մայր չունի. փողոցին վրայ կը տեսնուին փոսեր, որոնք աննկատելի անձրեւի մը ցեխոտ ճահիճներու կը փոխուին։

Չինական Թուրքեստանն՝ Թիպեդէն պակաս բարձր է և մեծ մասամբ ամայութեան անապատ մըն է, որուն չուրջը կը գտնուին ոմանք ներն ու քաղաքները, որոնց մէջ կարեւորներն են Խոթան, Խարհանն և Քաշկար։

Մոնկոլիա կը պարունակէ արեւմտեան կողմը՝ լեռնագաշտեր որոնց կը տիրեն բարձր լեռները, ինչպէս Այրդայ լեռները. իսկ հարաւային արեւելեան կողմը՝ Կոպիի ընդարձակ անապատը։

Մանչուրիա ասկի ցած է և ասկի կը խտարին զէպ ի հիւսիս՝ Ամուր գետը։ Մայրաքաղաքն է Մուքտէն։ Այս երկիրը որ Ռուսական ազդեցութեան տակ էր, 1904 ի Ռուս-Ճարտական պատերազմէն յետոյ տարձն Չինաց վերադարձուեցաւ։

Չինական կայսրութեան հարաւ-արեւելեան կողմն է բուն Չինաստան որ կը պարունակէ գլխաւորապէս Հօանկհոյի և Եանկձէ-քեանկի աւազանները։ Այս երկու գետերուն ստորին ընթացքին մարզին մէջ կը տարածուի անհուն դաշտավայր մը. երկրին մնացած մասը կը պարունակէ լեռնագագաթներ, լեռներ և հովիտներ։

Հայեացք կզդին ալ Չինաց կը վերաբերի։

Չինաստան չատ մը բազմամարդ քաղաքներ ունի. ասոնց մայրաքաղաքն է Բեէյին. հին մայրաքաղաքն էր Նանքին՝ Եանկձէ-քեանկի վերտառոյն եկ կիրճն է Չինաստան. հողը լաւ մշակուած է և չատ տարիներ մանաւանդ հին սիստեմով կը բերէ։ Կը բերէ ոլոշտայն մշտ



Պատկ. 82. — ԲՐԻՆՁԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա. Բրինձի տունկերուն երկարդ անցած նոյնն մէջ տնկելը

Բ. Բրինձի արտեր Չինաց լեռներուն մէջ

Բրինձը չատ ջուր կը պահանջէ. հունցը բուսցնելու համար, կը տնկեն հնդուկ ցեխի մէջ, յետոյ, երբ այդ հունցերը ծլին, տունկերը կ'առնեն ու գանոնք խիտ ջրային Էողի մը մէջ դարձեալ կը տնկեն։ Հետեւաբար հանի որ բրինձի արտերը պիտի ե խիտ ջուրի, իրենց հողը պիտի ե հարթ ըլլայ. ահա այս պատճառաւ ե որ բրինձի արտեր գտնուող երկիրները մասնաւոր կերպարանք մը կը ստանան որ կը յատկանիշտի մնայ գարմարերու գրեթէ ցոյգութեամբ. Ոռոմիները, փոխանակ ասդիճանաբար բարձրանալու, հորիզոնական ուղղութեամբ կը բարձրանան, ձիշ սանդուղի մը ասդիճաններուն պէս։



Պատկ. 81. — ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊԸ

Մինչեւ մեր ժամանակները, Չինաստան յարաւորեալ ինքզինքը գոց պահած ե արեւմտեան ժողովուրդներու բաղախարհութեան առջեւ։ Եւ որպես զի արգիլ ցանաքի ճամբով ո ևե ե մուտ իր հողին վրայ, ժամանակին շինած ե այս հսկայ պարիսպը որ կատարելապես կը գոցէր ամեն կողմ վեհերու ճամբայ։ Այս պարիսպը, որու վրայի կառք մը դիւրաւ կրնար անցնիլ, հնուռն հնու միայն խիտ չատ պահպանուած դռուներով ծակուած եր։

Գլխաւոր նաւահանգիստներն են Թիենձին, հիւսիսակողմը, Բեքինի նաւահանգիստն է. Շանկհայ միջին մասին մէջ խիտ բանուկ նաւահանգիստ. Քանթոն հարաւակողմը։

Երկրագործութեան տեսակէտով երկրագործական կուլթիւներն են հիւսիսային կողմը ցորենը, հարաւային մասին մէջ՝ բրինձը։ Չինաստան հայրենիքն է մեռաքսին և թէյին որոնք իր սպառածութեան երկու գլխաւոր առարկաներն են։ Ունի մեծահարուստ հանքեր, խիտ բանուկ վաճառականութիւն մը և ճարտարարուեստ մը։ Անգրսիպերյական երկաթուղին պատն մէկ ճիւղը Մանչուրիայէն կ'անցնի, Բեքինը եւրոպայի հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ։

Բուն Չինաստան ունի 320 միլիոն բնակիչ։ Չինացիները չարքաշ, աչխատասէր և ուչիմ մարդիկ են բայց միանգամայն խարդախ ու նենգամիտ։

Եւրոպացիներէն չատ սակաւ կը ճանչնային կողմնացոյցը, ապակրութիւնը և վառօդը։ չատ բաներ հետած են բայց իրենց գիւտերը չեն կատարելագործած։

Իրենց ճարտարագործական արտադրութիւններուն մէջ նչանաւոր են մետաքսեղէնները, ճենքինեան կտաւները, չամճապակիները, նկարչութիւնը։

Չինացիները մեծագոյն մասամբ Պուտտայական կրօնին կը հետեւին. իրենց լեզուն որ չատ ազքատ է. միավանկ բառերէ կը բաղկացած։ Չինու կայսրը բացարձակ միապետ մըն է։

Անգլիա, Ֆռանսա, Գերմանիա, Բարձրագոյն և Ճարտ ատացուածքներ ունին Չինաստանի մէջ. գլխաւորն է Հանկհոնգ որ կը պատկանի Անգլիացիներուն։

Հարցաբան. — *Ինչ երկիրներ կը պարունակէ Չինաստան և ո՞րն է ամէնէն բազմամարդ մասը. — Ո՞ր ցեղին կը պատկանին Չինացիները. — Ինչ է իրենց գլխաւոր զբաղումը. — Ինչ տեսակ մարդիկ են Չինացիները. — Ինչ է իրենց կրօնքը. — Որո՞նք են Չինաստանի ամէնէն արգաւանդ մասերը և ի՞նչ են երկրին գլխաւոր հարստութիւնները. — Ո՞րն է Չինաստանի մայրաքաղաքը. — Որո՞նք են գլխաւոր նաւահանգիստները։*

Պարտականութիւն. — *Գծեցէք Չինաստանի քարտէսը, ցոյց տալէք իր բնական բաժանումները եւ եւրոպական տերութիւններէն տատցուածքները։*

Պատկ. 83. — ՀՕՆԿ-ԿՕՆԿԻ ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԸ

Հօնկ-Կօնկի նաւահանգիստը զոր Անգլիացիները առնուտական անունն մրեւանոցի մը վերածած են, հատատուած է հարաւային Չինաստանի մեկ փոր կղզիին վրայ, չինական բաղաքներու ամենեն բազմաբեղուն նղոյ Քանթոնի գետաբերանին մէջ։ Հօնկ-Կօնկի ճամբով է որ Անգլիացիք հարաւային Չինաստանը կ'ողողեն իրենց արտադրութիւններով։ Ամբողջ աշխարհի հետ ունի նաւահանգիստներեն մին է այս։

ՃԱՒՕՆ

Ճարտական կայսրութիւնը կը տարածուի Ռուսիական կղզիներէն մինչեւ Ցարմոզա և կը պարունակէ կղզիներու երկար չարք մը որոնց գլխաւորներն են Ֆիւսպու, Սիխոֆ, Հոնսոյ կամ Նիփոն և նման։

Այս կղզիները լեռնային են և հրաբխային և ենթակայ են անասուր գետնաչարժերու։

Հողը չատ լաւ մշակուած է և կ'արտադրէ գլխաւորապէս բրինձ, ցորեն, գարի, թէյ, չաքարեղէգ, բամպակ, քափուր և այլն։ Շերամաբուծութիւնը չատ զարգացած է և մետաքսը արտահանութեան կարեւոր նիւթերէն մէկն է։

Ճարտն ծովեզերք հանքահարուստ երկիր մըն է։

Ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, հանքածուխ, մարմարիոն, քաւչէն՝ առատօրէն կը գտնուին։

Ճարտն ունի 50 միլիոն բնակիչ, որոնք կը պատկանին Դեղին ցեղին։ Ճարտացիները կը կազմեն խելացի և աչխատասէր ժողովուրդ մը և վերջին ժամանակները չատ մեծ յառաջդիմութիւններ ըրած են։

Եւրոպացիներէն չատ բան իւրացուցած են, վարժարաններ բացած, հանքեր չահագործած, իրենց ճարտարարուեստը մեքենաներու գործածութեամբ բարեփոխած, հեռագրական թելեր և երկաթուղիներ չինած են։ Այսօր Ճարտն հզօր աէրութիւն մը եղած է։ Կայսրը՝ որ կը կոչուի Միխատօ՝ երկիրը կը կառավարէ նախարարներու խորհուրդի մը և Խորհրդարանի մը օժանդակութեամբ։

Ճարտն իրաւամբ կոչուած է Ասիոյ Անգլիան. իր գինուորական և նաւային զօրութիւնը յայտնի եղաւ 1895 ին Չինու դէմ և 1904 ին Ռուսիոյ դէմ մղած պատերազմներուն մէջ։

Ճարտնի մայրաքաղաքն է Թոռիո (1,800,000 բն.) Նիբան կղզիին արեւելեան կողմը գեղեցիկ խորշի մը վրայ. իր նաւահանգիստն է Եոհոնամա որ բանուկ վաճառականութիւն ունի Եւրոպայի եւ Ամերիկայի հետ:

ՀՆԴԻԿ ԿՂԶԵՒՈՒՄԲ ԿԱՄ ՄԱԼԱՅԵԱՆ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ

Ասիոյ հարաւ-արեւելեան կողմը գտնուող անհուն արշիպելագոսը կը կոչուի Հնդիկ կղզեխումբ կամ Մալայեան Արշիպելագոս, եւ կամ Մալեզիա: Կը պարունակէ Սոնտայի արշիպելագոսը, Մալայեան կղզիները, Ջելեպեան կղզիները, Պորնէօ կղզին եւ Ֆիլիպպինոյ արշիպելագոսը:

Ամենայն արշիպելագոս չորս նահանգութիւն է Մալաքգային թերակղզին: Իր գլխաւոր կղզիներն են Սումատրա, Ճաւա, Սումպավա, Ֆլորես եւ Թիմոր: Ամենք ամէնքն ալ լեռնային են եւ կը պարունակեն հրաբուխներ, որոնցմէ ոմանք ահաւոր ավերածներու պատճառ եղած են:

Փիլիպեան կղզիները նմանապէս ունին չատ հրաբուխներ, եւ յաճախ գետնաշարժներու եւ ասկէ փոթորիկներու ենթակայ են:

Մալայեան Արշիպելագոսը բաժնուած է Հոլանտացի, Անգլիոյ, Միացեալ Նահանգներու եւ Փորթուգալի միջեւ:

Հոլանտացիներուն կը վերաբերին Սումատրա, Ճաւա մեծ կղզիները եւ Մոլուքեան կղզիները, Պորնէօ մեծագոյն մասը, Ջելեպեան եւ Մոլուքեան կղզիները: Այս գաղթականութեանց մայրաքաղաքն է Պաթաւիա՝ Ճաւա կղզիին մէջ. իր նաւահանգիստ ունի կարեւոր է Սուրապայա միւնոյն կղզիին մէջ:

Անգլիացիներուն կը վերաբերին Պոռնէօ կղզիին հիւսիսային մասը:

Միացեալ Նահանգները կը տիրեն Փիլիպեան կղզիներուն գրաւեցին 1898 ին: Այս արշիպելագոսին մայրաքաղաքը՝ Մանիլա՝ Մալեզիոյ ամէնէն բազմամարդ քաղաքն է (250,000 բն:) Փորթուգալի կը պատկանի Թիմոր կղզիին արեւելեան կէսը:

Մալայեան Արշիպելագոսը հնագոյն կապուած ըլլալով չատ ազգ եւ չատ խոնաւ կլիմայ մը ունի: Իր գլխաւոր բերքերն են խա-

Պատկ. 83. — ՅՈՒՉԻ-ԵՄԱ, Ճարոնի մէջ հրաբուխ մը

Ցուգի-եամա, կամ կրակի լեռը, Թօհոնի հիւ մը արեւմտեան կողմը հասատուած, սովորական հրաբուխներու ձեւը ունի. գրեթէ կատարեալ կոնի ձեւ մը ունի: Բարձրութիւնը բարձր է (3700 մեթր) որով յաւիտենական ձիւներ կան իր գագաթին վրայ:

Մեծ կարեւոր նաւահանգիստներն են Օսաքա, Հոնոսատէ եւ Նակազաքի որ Զինաստանի հետ բանուկ վաճառականութիւն ունի:

ԿՈՐԷԱ

Կորէա փոքր թերակղզի մըն է Զինաստանի արեւելեան հիւսիսային կողմը, Ճարոնի ծովուն եւ Դեղին ծովուն մէջտեղ, եւ Ռուսօ-Ճաբոնական պատերազմէն ետքը Ճարոնի հովանաւորութեան ենթարկուած միապետութիւն մը եղաւ:

Ունի 12 միլիոն բնակիչ. մայրաքաղաքն է Սէուլ:

տանի ծը ժասը Ճարոնի ձեռքը անցած է եւ ինչպէս, — Ը՞ր կը գտնուի Քորէա եւ որո՞ց ազդեցութեան տակ կը գտնուի. — Իր արտաքին ձեւով Եւրոպայի որ երկիրը կը յիշեցնէ. — Ի՞նչ կը կոչուի Ասիոյ Հարաւային արեւելեան կողմը գտնուող Արշիպելագոսը. — Ո՞ր Տէրութիւնները բաժնած են իրենց միջ Մալայեան արշիպելագոսը. — Ո՞րն է Հոլանտական ատացուածքներուն կարեւորագոյնը. — Որո՞ւ կը վերաբերին Փիլիպեան կղզիները եւ երբէ՞ն ի վեր. — Ո՞րն է Մալայեան Արշիպելագոսի ամէնէն բազմամարդ կղզին:

Պարապմունք. — Գծեցէք Ճաբոնի եւ Մալայեան Արշիպելագոսի քարտէսը. նշանակեցէք Ճաբոնի ամէնէն կարեւոր նաւահանգիստները. առանձին գոյներով ցոյց տուէք Մալեզիոյ Հոլանտական, Անգլիական, Ամերիկեան եւ Փորթուգալեան ատացուածքները:

ՀՆԴԿԱՉԻՆ

Ասիոյ հարաւային երկիր թերակղզիներէն ամէնէն արեւելեանն է Հնդկաչին որ կը տարածուի խեցգետնի արեւադարձէն մինչեւ հասարակած:

Հնդկաչինոյ ներքին մասերը սակաւ ծանօթ են. բնակիչները որ մոնկոլեան ցեղին կը պատկանին եւ Պուտտայական են, համախմբուած են ափերուն եւ չրջապատած գետերուն մէջ. այս ցած, տաք ու խոնաւ. բայց վտառուղջ մարդերը ծածկուած են արդուններով: Արեւելեան Հնդկաչին կը պատկանի Ֆռանսայի. արեւմտեան Հնդկաչին՝ Անգլիոյ: Այս երկու ազդեցութեանց ատացուածքներուն մէջտեղ կը գտնուի Սիամի թագաւորութիւնը:

Ֆրանսական Հնդկաչին կը պարունակէ **ԹՈՒՆՔԻՆ**, մայրաքաղաք՝ Հանոյի. **ԱՆՆԱՄ**, մայրաքաղաք՝ Հուե, **ԼԱՕՍ**, **ԿՈՉԻՆՉԻՆ**, մայրաքաղաք Սայկոն, ուր կը բնակի բնչնաւոր կառավարիչը, **ԿԱՄՊՈՋ**:

Սիամի թագաւորութեան մայրաքաղաքն է Պանկքոք (600,000 բն.) Հնդկաչինոյ մեծագոյն քաղաքը:

Անգլիական ատացուածքները կը բազկանան **ՊԻՐՄԱՆԻԱՅԷ**, որուն գլխաւոր քաղաքն է Ռանկուն նաւահանգիստը, եւ Մալաքքայի թերակղզին հարաւային մասէն: Սինկափուր

կղզիի մը մէջ՝ ատաղձակարգ նաւահանգիստ մը և չանմաքան մը եղած է իր զրաւած դիրքաղնոյ դիրքին շնորհիւ։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստան Եւրոպայի տարածութեան զրկեմ $^2/_3$-ին չափ տարածութիւն ունի. իր հիւսիսային սահմանին վրայ կը կանգնին Հիմալայայի և Քարաքորումի հսկայ չղմնակները ուր հարիւրներով կը համրուին Մեռ Պանկն ունկի բարձր գագաթներ. Կոռիզաֆար լեռը (8840 մեթր) Հիմալայայի մէջ՝ երկրագնդիս բարձրագոյն գագաթն է։ Հիմալայայի տարբոյը կը տարածուի տասրին Պրահմափութրայի, Գանգէսի և Ինդոսի դաշտագետինը և ունկի դէպ ի հարաւ՝ Տէքքանի լեռնադաշտը դոր կը շրջապատեն արեւելեան և արեւմտեան Կամ լեռները։

Հնդկաստանի մէջ անկախ երկիրներ են Նէբալ և Պուտան։ Ֆրանսա և Փորթուգալ մէկ քանի նաւահանգիստներ ունին Հնդկաստանի ծովեզերքին վրայ. ինչպէս Բոնտիշէրի, Չանդերնագոր և այլն որոնք Ֆրանսայի կը պատկանին. Կոա և Տիու որ Փորթուգալի սեպհականութիւններն են։

Անգլիա իր իշխանութիւնը կը տարածէ Հնդկաստանի ամբողջ մնացած մասին վրայ զոր կը կառավարէ փոխարքայով մը։

Անգլիական Հնդկաստանի գլխաւոր քաղաքներն են՝

Կալկաթա (970,000 բն.) Գանգէսի մէկ ճիւղին վրայ մայրաքաղաք և Ասիոյ մեծագոյն նաւահանգիստներէն մէկը։

Պենարես՝ Հնդիներուն սուրբ քաղաքը։

Տելհի, Լահոր, Քաշմիր, անուանի են իրենց չալերով։

Պոմպէյ, Հնդկաստանի ամէնէն վաճառաշահ նաւահանգիստը։

Մատրաս նայնպէս նաւահանգիստ Պէնգալայի ծոցին վրայ։

Գոլոմպօ Սէյլան կղզիին մէջ, ուր կը հանդիպին Աւստրալիա և Արեւելեան Ասիա երթեւեկող մեծ չոգենաւերը։

Հնդկաստան իր ապք ու խանաւ կլիմային կը պարտի շատ հարուստ բուսարերութիւն մը։ Հողին գլխաւոր բերքերն են բրինձ, ցորեն, գարի, այլազան պտուղներ, լեզակ, բամպակ, թէյ, խանուէ, աֆիոն և այն որոնք մեծ արտածութեան առարկայ են։ Հնդիները շատ հին դարերէ ի վեր երեւելի եղած են իրենց խմաութեամբ, արհեստներով և վաճառականութեամբ։ Աներանի են իրենց մետաքսեղէնները, Քաշմիրի շալերը (Թիպէտի այծերուն նուրբ ապուամազով հիւսուած), փղոսկրէ և ոսկիէ զարդեղէնները, և այլն։

Հնդկաստան ԺԹ. Դարուն մէջ շատ մեծ յառաջդիմութիւն ըրած է շնորհիւ Անգլիացիներուն որոնք երկաթուղիներով իրարու կապած են գլխաւոր քաղաքները։



Պատկ. 86.— ՀՆԴԿԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ՄԸ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄԸ

Այս տաճարը շինուած է Ապու լեռան վրայ, Արաւալլի լեռներուն մէջ։ Նշանաւոր ուխտի մըն է այս Հնդկական ճարտարապետութիւնն ու կը յատկանշուի հագուագիտ փափկութեամբ փորուած քանդակներու ճոխ առատութեամբ։

Հնդկաստան 300 միլիոնի չափ բնակիչ ունի, որոնք ամէնէն աւելի համախմբուած են Հիւսիսային պաշտպանին և ծովեզերեայ մարզերուն մէջ։ Հիւսիսային և արեւմտեան մասերուն բնակիչները կը վերաբերին սպիտակ ցեղին. իսկ Տէքքանի մեծագոյն մասին վրայ կը բնակին սեւբեր ցեղէ և թխագոյն բնիկներ։

Հնդիները մեծագոյն մասամբ Պրահմանութեան կը հետեւին. բուժուած են դասակարգերու որոնց բաժանարարութիւն է Քաստներուն դասակարգը։ Բնակիչներուն մէկ հինգերորդին կրօնքն է Մահմետականութիւնը։

ԻՐԱՆ

Իրան անունը կը տրուի այն բարձր լեռնաշխարհին որ կը պարունակէ Պարսկաստանը, Աֆղանստանը և Պղտճստանը իր կեդրոնական մասը կը գրաւեն աւազուտ կամ ապառ ընդարձակ անապատներ։ Այս լեռնապարին հիւսիս արեւելեան կողմը կը կանգնին Հիւսիս Քաստրուշ և Էլպուզ լեռնաշղթաները. հարաւ արեւմտեան կողմը կ՝ան նոյնպէս բարձր լեռներ։

Իրանի բնակիչները գեղակից են Եւրոպացիներուն. իրենց կրօնքն է Մահմետականութիւնը։ Նեբքին մասերու բնակիչները վաչկատուն են և հօտեր կը պահեն։ Շրջապատի ջրատուն մարզերուն մէջ կը դեռակին մնայուն բնակութիւն ունեցող երկրագործներ։

ՊՕԼՈՒՃԻՍՏԱՆ՝ Անգլիական ապագադաթերատուն մասը կը կազմէ։

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ կը գտնուի Անգլիական Հնդկաստանի և Ռուսական Թուրքեստանի մէջտեղ։ Կը կառավարուի էմիրով մը, որ կը բնակի Քապուլ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ հոգ ուշադրութիւն մըն էր հին ատեն, բայց այսօր շատ ինկած է։ Իր վիճակեալը կը կոչուի Շահ որուն իշխանութիւնը 1907ին ի վեր եղած է սահմանադրական։

Մայրաքաղաքն է Թեհրան (300,000 բնակիչ). կարեւոր են Թեպրիզ (Դարբէժ) լճամերձ քաղաքը. Սպահան՝ նախկին մայրաքաղաքը. Շիրազ, Մեշհետ, Քիրման են։

Պարսկաստանի գլխաւոր նաւահանգիստներն են Կասպից ծովուն վրայ Ռեշտ, իսկ Պարսից ծոցին վրայ՝ Պենտեր Աբբասի և Պուշիր։

Անուանի են Պարսկաստանի գորգերն ու չարշըը և հին ձեւով զէնքերը։

Երկրին գլխաւոր բերքերն են արմաւը, ձիթխոտ, բամպակ, պաղատաս ծառեր։

Մակայն Պարսկաստանի գլխաւոր հարստութիւնն է մետաքսը որուն արտադրութեան գլխաւոր կեդրոնն է Ռէշտ՝ Կասպից ծովուն վրայ։

Պարսկաստան հագիւ 9 միլիոն բնակիչ ունի։

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՍԻԱ

Օսմանեան Ասիա կը պարունակէ Փոքր Ասիան կամ Անատոլուն, Հայաստանը, Եփրատի և Տիգրիսի գաշտագետինը, Սուրիան և Արաբիոյ մէկ մասը։

Օսմանեան Ասիոյ վրայ տասնմէկն և երկարգէն խօսած ենք Օսմանեան Տէրութեան գլխին տակ։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՓՐԻԿԷ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ափրիկէ կը գրաւէ Հին Աշխարհի հարաւ արեւմտեան մասը և կը ձեւացնէ անոգին կղզի մը որ կը տարածուի հիւսիսէն Միջերկրական ծովուն, արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոսին և արեւելքէն՝ Հնդկային Ովկիանոսին ու Կարմիր ծովուն միջեւ։

ԾՈՎԱՓՈՒՆԳ.—Ափրիկէ ունի կանոնաւոր և միօրինակ ծովեզերք. հիւսիսային կողմը կը տեսնուի միայն Սիրթի և Կապեխի ծոցերը՝ Միջերկրականէն կազմուած։ Արեւմտեան կողմը Ատլանտեան ովկիանոսէն կազմուած է Կուինեայի ծոցը, որմէ կը ձեւանան Պենին և Պիաֆրա ծովածոցերը։ Արեւելեան կողմը կը տեսնուի միայն Աճենի ծոցը։

Միջերկրական ծովէ Ատլանտեանի հետ կը հաղորդակցի Ճիպրալթարի նեղուցով և Կարմիր ծովուն հետ՝ Սուեզի ջրանցքով։ Կարմիր ծովէ ու Հնդկային ովկիանոսին հետ կը հաղորդակցի Պապէլ Մանտեպի նեղուցով։

Ափրիկէի 4 գլխաւոր հրւանդաններն են հիւսիսակողմէ՝ Պօն գլուխ, հարաւակողմէ՝ Բարեյուսոյ գլուխ, արեւմտեան կողմէ՝ Դալարի

պլուխ (Քափէ Վէրաէ) և արեւելեան ծայրը՝ Կաւարտաճուխ հրաւանդանը:



Պատկ. 87. — ՄԱՏԱԿԱՓԱՐԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ա. Թանկաւարիվի մօտ բարձր լեռնադաշտերէն տեսարան մը. Բ. Քաւչուաբեր անասուն մը արեւելեան եզերքին վրայ:

Մատակափար երկու որոշ մասեր ունի. նախ ներքին մասի լեռնադաշտերը, ուր բուսականութիւնը նուազ հարուստ է քան ուր կ'իյնան առատ անձրեւներ և ուր կարելի է ճերմակի ու Միջերկրականի եզերքներուն յատուկ եղող մշակութիւններ ընել. ճերմակական եւ մասնաւորապէս ֆրանսական գաղթականութիւնը հոս պիտի կրնայ զարգանալ. Իսկ ծովեզերքը ցած, տաք եւ խոնաւ հողերու գօտի մըն է, ծածկուած հարուստ անտառներով քանց վատասղջ եւ ուր անկարելի է ճերմակաց յղութիւն: Այդ մասը կոչած են ճերմակաց գերեզմանը, այնման դիւրաւ կը մեռնին հոն անոնք: Դիտաւոր արտադրութիւն է նաեւ, որ Մատակափարի արտածած են կարեւոր նիւթ է:

ԱՊՋԻՆԵԼԸ. — *Ափրիկեան ծովեզրին մեծագոյն կղզին է Մատակասար լեռնային ու անտառախիտ կղզին, որ ցամաքէն բաժնուած է Մոզամպիքի ջրանցքով:*

Մատակասարը կը գտնուի Փռանսական ափրագեաւթեան տակ. մայրաքաղաքն է Թանանարիվ: Գլխաւոր նաւահանգիստն է Թամաթաւ, արեւելեան ծովեզրին վրայ:

Ցրտնապի կը պատկանին նաեւ Մատակասարի հիւսիսային – արեւմտեան կողմը՝ Նօսպէ կղզին և Քօմօրեան կղզինեւրուն մեծագոյն մասը. Նայնպէս՝ Մատակասարի արեւելեան ծովեզրին վրայ՝ Սեւնբ Մարի փոքր կղզին, և աւելի հեռուն՝ Ռեւնիսիօն թարերեր կղզին, որ կ'արտասպրէ խոհուէ և չամրակեղէ:

Մօռիս կղզին, Սեշելեան և Ամիրանթ կղզիները՝ հասարակածին տակ, ինչպէս նաեւ Սօֆօրա կղզին՝ Կաւարտաճուխ հրաւանդանին մօտ՝ կը պատկանին Անգլիոյ: Զանզիպար կղզին՝ Ափրիկէի արեւելեան ծովեզրին վրայ՝ Անգլիոյ հովանաւորութեան տակ է:

Ափրիկէի հիւսիս-արեւմտեան կողմը՝ Սահարայի մէջ կը գտնուին Ատրեան, Մասեբեան և Դալարի Դլիսոյ (Քափէ – Վէրաէ) կղզինները, որոնք կը պատկանին Փորթուգալի, և Քանարեան կղզիները, որոնք Սպանիոյ կը վերաբերին:

Այս չորս խումբ կղզիները կարեւոր են իրենց աշխարհագրական դիրքով, և հարուածին Ամերիկա գացող նաւերուն համար պատար ատենու յարմար տեղեր են:

Կանարեայի ծովին մէջ կը գտնուին խումբ մը փոքր կղզիներ, Ֆերնանսօ-Բօ, Անճոպոն՝ որոնք Սպանիոյ կը պատկանին և Իջհանի կղզի ու Սուրբ Փորթուգալեան ասպրուածքները:

Հարաւ – արեւմտեան կողմը՝ Ովկիանոսին բացերը կը գտնուին երկու անպիտան կղզիակներ, Համբարձման կղզին և Ս. Հեղինէ կղզին, ուր մեռաւ Նաբոլէոն Ա.: Այս երկու կղզիները կարեւոր կայաններ են Հարաւ-Ափրիկէ գացող նաւերուն համար:

ԱՆԳԼԻԱ. — *երկրիս հինգ մասերուն մէջ Ափրիկէ ամէնէն աւելի անտապատներ պարունակող ցամաքն է: Ընդհանրապէս ծովեզրերներուն մօտ կը գտնուին երկար ու բարձրաբերձ լեռնագօտիներ. հիւսիսային արեւմտեան կողմը՝ Միջերկրականի եզերքը կ'երկարին Ատլաս լեռները. աստղ հարաւակողմը՝ Նեղոսի հովտէն մինչեւ Ատլանդեան ովկիանոս՝ կը տարածուի Սահարա մեծ անապատը, որ երբեմն երկու կրթող մասին հաւասար տարածութիւն մը կը գրաւէ:*

Սահարայի արեւելեան մասը կը կոչուի Լիբիոյ անապատ. իսկ կեդրոնական մասին մէջ կը գտնուին Հոգարի և Թիպեսթիի լեռնադաշտերը:

Սահարայի քարուտ կամ աւազուտ մասերուն մէջ տեղ տեղ կը գտնուին բարերեր Ովասիսներ:

Այս անհուն անապատին հարաւային կողմը կը տարածուի Սուտանի բարերեր դաշտավայրերը, որ Ափրիկեան ցամաքին կեդրոնական մասը կը գրաւէ (Զատ լիճին և Նիլկէր գետին աւազաններուն):

Սուտանի արեւմտեան և հարաւային կողմերը՝ Ատլանդեանի ծովեզրին գտնուող հեռաւորապէս՝ կը կանգնի անմատչելի կրճեղերով կատարած անտառախիտ լեռներու հատուածը մը, այն է Քօնկ լեռներու շղթան:

Ափրիկէի հիւսիս-արեւելեան կողմը կը պարզուի նեղ երկար հողի մը, այն է Նեղոսի հովիտը, որուն արեւմտեան կողմը կ'երկարին Լիբիական լեռները և արեւելեան կողմը Արաբական լեռները:

Արաբական չղթան՝ որ կազմիր ծովու եզերքին քարուտ լեռնադաշտերը կը չրջապատէ, դէպի հարաւ յանկարծ կը բարձրանայ՝ ձեւացնելով



Պատկ. 88. — ԱՓՐԻԿԱՅԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ա. Աւազ մը Սահարայի մէջ. Բ. Քօմօ գետակը Քանեմական Քօնկոյի մէջ:

Տհասիմ որ Ափրիկէի բուսականութիւնը ներկայացուած է անձրեւներու բանակութեան: Անձրեւ չեկած տեղերը Ափրիկէի անապատ մը, Սահարա մը, աւազի եւ քարի երկիր մըն է որու մէջտեղ կ'անցնուի շնորհիւ ուղեւորուն որոնք աշխարհիս են ժուժկալ կենդանիներն են: Իսկ անձրեւ շատ եկած տեղերը հրաշալի ու խիտ բուսականութիւն մը կազմիր կ'ատնէ եւ կոչ անտառներ կը ծածկեն երկիրը, անտառներ որոնք այնման նշանաւոր են իրենց պարունակած տեսակներուն մեծութեամբը որոնք անոնց խտութեամբը. բոլոր այդ ծառերը միացած եւ իրարու խառնուած են դիանիներու եւ ուրիշ մակաբոյծներու կոչերով: Անհուն անտառ մը կը ծածկէ այսպէս գրեթէ ամբողջ հասարակածային Ափրիկեն Հնդկաց ովկիանոսեն մինչեւ Ատլանտեան ովկիանոս Քօնկօ գետին աւազանը ծածկելով ամբողջովին:

ընդարձակ հասատամեան մը կրանիտեայ և հրաբխային լեռներու, որոնց կը տիրեն մինչ-

չեւ 4600 մէտր բարձրութեամբ ձիւնապատ գագաթներ, և որոնք կը կոչուին Եթովպական լեռներ:

Ափրիկէի հարաւային մասը կը ձեւացնէ եռանկիւնաձեւ լեռնագաշտ մը խիստ բարձր, զոր կը չրջապատեն բարձր լեռնաշղթաներ: Արեւելեան կողմը Քենիա և Քիլիմա Ն'ձարօ լեռները կ'ընծայեն ձիւնապատ գագաթներ որ մինչեւ 6000 մէտր բարձրութեան կը հասնին:

Արեւմտեան կողմը՝ Կաւիրնդայի ծոյլին վրայ կը բարձրանան Գամերուն լեռները (4000 մէտր):

Հարաւային Ափրիկէի այս լեռնադաշտին ներքին մասը խիստ ծանօթ է: Դիամանդ առատ չափ կը պարունակէ անոնց ափերը, ոսկի, մեծ աւազաններ, հարուստ հովիտներ, ու աւազուտ մեծ անապատներ, որոնց ընդարձակագոյնն է Քալահարի Անապատը:

ԳԵՏԵՐ. — Ափրիկէ կը բաժնուի 3 աւազաններու. հիւսիսային, արեւմտեան և արեւելեան:

Հիւսիսային աւազանին կամ Միջերկրականի նշանաւոր գետն է Նեղոս, աշխարհիս ամենէն երկայն գետը, որ կ'ելլէ Վիքթորիա լիճէն՝ Սպիտակ Նեղոս անուամբ, իր մէջ կ'ընդունի Կապոյծ Նեղոսը, և Աբպարա գետը, որոնք կ'իջնեն Եթովպական լեռներէն, կը ձեւացնէ բազմաթիւ ջրվէժներ և կը մանէ Եգիպտոս, և ընդարձակ դաշտագետիններ առաջին կ'ոռոգէ կը թափի Միջերկրական, արտասանող ակղտա մը ձեւացնելով: Նեղոսի պարբերական պատահմներուն չնորհիւ Եգիպտոս աշխարհիս ցամենաչատ երկիրներէն մին եղած է:

Աւազանին Ովկիանոսին հարկատու գետերն են Սենեկալ և Կամպիա որ կ'իջնեն Գուինա-ծոցը լեռներէն: Նիկեր՝ որ միեւնոյն լեռնային հատատամնաւէն իջնելով կը մանէ Սուտան և Կուինէայի ծոցը կը թափի ընդարձակ ակղտա մը ձեւացնելով: Քոնկո կամ Զայիրէ կ'ելլէ Պանկուէլո լիճէն, ընդհատ ջրանցքով մը իր մէջ կ'ընդունի Թանկանիքա լճին ջուրերը և կիսա-



Պատկ. 85. — ՆԵՂՈՍԻ ՋՐԱՓՈՂԻ ՊՈՂԱՀԱՆ

Եգիպտոսը արտաղովին անապատ մը պիտի ըլլար Սահարայի պէս, որովհետև անձրեւ ինչ կուգայ ճոն, երբ Նեղոսը ոտ կը ծագի հատարակածային մարզերեն ուր տարուան անձրեւները առատ են՝ Եգիպտոսի չի տար իր ափէմ ունեցած ջուրը: Անոնք տարաւ, Մայիսէն Նոյեմբեր, անիկա կը յարդէ կը ծածկէ իր ափրը, խոտապես կը բրջի հողը և բաշուած տեղը տեսնը պարարտացուցիչ նիւթերով լեցուն ցեխ մը: Եգիպտոսը «Նեղոսի մէկ նուէրն է» կ'ըսեր հին աշխարհագէտ Հերոդոտոս: Այս պատճառը Նեղոսի տարիներն տեղի ունեցող տարաձիներուն միմի կը վերագրուին, ինչպէս տաճարը, առաջին ջրվէժին մօտ:

Լիմբոբո և Զամպեզ, որոնք ներքին լեռնադաշտերէն կ'իջնեն: Այս վերջինը կը ձեւացնէ համբաւաւոր Վիքթորիա ջրվէժը և Շիրէ գետակին միջոցաւ իր մէջ կ'ընդունի Նիասա լճին ջուրերը:

ԼԻՃԵՐ. — Ափրիկէի կեդրոնական մասին մէջ կը գտնուի Զաս լիճը, ուր կը թափի Շաուի գետը: Արեւելեան կողմը՝ եթովպիոյ մէջ՝ նշանաւոր է Տամպեա կամ Թանա լիճը, ուրկէ կ'ելլէ Կապոյտ Նեղոս:

Հասարակածին տակ կը գտնուին բազմաթիւ լիճեր, որոնց մէջ նշանաւորներն են Պառիկո, Վիքթորիա-Նիանզա, Ալպերթ-Նիանզա,

որոնք կը տանին Սպիտակ Նեղոսի մէջ: Աւելի դէպի հարաւ կը գտնուին Թանկանիքա և Պանկուէլո, որոնք կը հատպտակցին Քոնկո գետին հետ, և Նիասա լիճը:

Հարցարան. — Ափրիկէ ինչո՞վ կը զանազանուի աշխարհիս միւս մասերէն.—Ինչ ձեւ ունի Ափրիկէ, ո՞ր ծովերէն շրջապատուած է. — Որո՞նք են գլխաւոր լեռնաշղթաները — Ափրիկէի գետերը ինչո՞ւ համար նաւարկելի չեն.—Որո՞նք են կարեւորագոյն գետերը.—Ինչ կարեւորութիւն ունի Նեղոս.—Նեղոսէն ելեալ ո՞րն է կարեւոր գետը.—Որո՞նք են Ափրիկէի գլխաւոր լիճերը և ո՞ր կը գտնուին. — Ափրիկէն Եւրոպային և Ասիային բաժնող նեղուցները որո՞նք են. — Որո՞նք են Ափրիկէի մաս կազմող կղզիները և գլխաւորաբար ո՞ր տերութեան կը պատկանին. — Ինչո՞ւ համար Ափրիկէի մէջ շատ են անապատները:

ԿԼԻՄԱՑ, ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԹՈՒՉԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ, ՑԵՂԵՐ

Ափրիկէ ունի երեք տարբեր կլիմաներ: Ամբողջ հասարակածային մասը կ'ընդունի ամառ անձրեւ. չատ տեղ, գլխաւորաբար լեռներուն վրայ, անձրեւը գրեթէ ամենօրեայ է. բարեխառնութիւնը՝ դաչտագետիններուն մէջ խոնաւ և տաք՝ երթալով կը զովանայ քանի բարձրանայ մարդ լեռներուն և լեռնագաշտերուն վրայ: Հասարակածին երկու կողմը դէպի հիւսիս և դէպի հարաւ քանի չատ մօտանանք, այնքան երկարաձեւ կ'ըլլայ չոր եղանակը և այնքան կարճ՝ անձրեւային եղանակը: Երկու արեւադարձներուն մօտ անձրեւները բոլորովին կը դադրին: Ամբողջ երկինքին կը չորսրդ անամպ երկինք մը: Հողը՝ անձրեւէ զրկուելով, բոլոր չ'արտադրեր ոչ: Հիւսիսակողմը կը տարածուի աշխարհիս մեծագոյն անապատը՝ Սահարա որ գրեթէ Եւրոպայի չափ ընդարձակ է. հարաւակողմը կը տարածուի Քալահարի անապատը:

Նաւազ տաք է կլիման հիւսիսային և հարաւային Ափրիկէի մէջ (Եգիպտոս, Աբեսինիա, Քափ), որոնց կլիման բարեխառն գօտիի կլիմային կը մօտենայ: Այս մարզերն են որ ամենէն աւելի կը չահագործեն Եւրոպացիները բնակութեան. ուրիչ ամէն տեղ դժուար է իրենց դիմադրել կլիմային, մանաւանդ տաք ու խոնաւ մարզերուն մէջ ուր կը տիրեն չերմ և անառիւնութիւն:

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Հասարակածային Ափրիկէ կը պարունակէ անհուն անտառներ, հակառ և ատաղիտ ծառերով, ինչպէս է պատպուղ: Այս անտառները կը հայթայթեն քաուչուկ և զանազան թանկագին խէժեր ու թանկագին փայտեր: Հասարակածային Ափրիկէ տակաւին գրեթէ նախնական վիճակի մէջ է. Եւրոպացիները տակաւ սկսած են մշակել այս մարզը:

Ափրիկէի չոր մասերուն և անապատներուն մէջ բուսականութիւնը կախում ունի ուղղման ջուրի առատութենէն: Եթէ ջուր չ'ըլլայ, կատարեալ անապատ մը կը գտնայ. բայց քիչ մը ջուր կը բաւէ հոդը պտղաբերելու: Ամէն ջուրի ընթացքի քով կամ ամէն ակի չուրջը կը գոյանան դալարագեղ ոլաստիներ: Ֆեռանեական Սահարայի այլեայլ մասերուն մէջ տարերկրեայ ջուրեր կը գոյանային արթէզեան հորերու միջոցաւ և այսպէս անջրդի հողեր կը պտղաբերին: Սահարայի ամենէն թանկագին ծառն է արմաւենին: Ափրիկեան ցամաքին երկու ծայրերը՝ Բարբարեայ Գուխ և Միջերկրականի ծովեզերքը՝ կը հասցնեն ձիթենի, որթատունկ և Հարաւային Եւրոպայի կամ Արեւմտեան Ասիոյ արմտիքները:

Ափրիկէի մէջ է որ կը հանդիպինք ամենէն բազմատեսակ կենդանիներուն. Շիմբանզէն, կօրիլը և բազմաթիւ կապիկներ կը բնակին արեւադարձային անտառներուն մէջ, անհամար ու գոյնզգոյն թռչուններու քով: Փիղը, ռնգեղջիւրն ու գետաձին գետերուն և լիճերուն եզերքները կը սիրեն. ընձուղտը, առիւծը, յովազը, չայեամբ Սահարայի սահմաններուն մօտ չատ կը գտնուին:

Ցամաքը, վիթխարի օձապտաձին կը տեսնուին ներքին դաչտագետիններուն մէջ:

Բարենին ու չնագայլը բնակութիւններու չուրջը կը թափառին. «Պիւմա»ը և ուրիշ տագին օձեր կը վխտան անտառներուն ու ճահիճներուն մէջ. Կոկորդիլոսները՝ մեծ գետերուն մէջ:

Ձին, ուղտը, ոչխարն ու այծը միակ հարստութիւնը կը ձեւացնեն վրանարնակ ցեղերուն:

Ափրիկէի հանքային հարստութիւնները դրեթէ աննման առատութիւն մը ունին: Ոսկ-

լաս լեռներն ունին երկաթի հանքեր, Սահարա ունի ադի հանքեր, Կաբինէայի եղերքը՝ ոսկեխոչի, իսկ հարաւային Ափրիկէի մեծագոյն մասը կը թուի ոսկիի ընդարձակ գաշտ մը, որուն հարստութեան քով կը նսեմանայ նոյն իսկ չրջակայ ազամանդի հանքերուն ճոխութիւնը։ Մասնակցաբար ունի հանքածուխ, երկաթ, արծաթ և պղինձ, որոնք դեռ չեն չափագործուիր։

ԽՈՒՉԱՓԿՈՒԹԻՒՆԸ. — Ափրիկէի հիւսիսային մասը՝ այն է Միջերկրականի ծովեզերքը, Նեղոսի հովիտն ու Եթովպիան՝ կանուխէն ճանչցուած և քաղաքակրթութեան առջեւ բացուած էր։ Սակայն Ափրիկէի միւս մասերը գարեր ամբողջ գոյ ունացած են որ եւ է հետազօտութեան առջեւ։ Պատճառն այն է որ այս ցամաքը կը ձեւացնէ անհուն լեռնագաշտ մը ուր հողմապակցութեանց դժուարութիւնը մէկ կողմէ՝ անոտնք արեւի մը չերմութիւնը և բնակիչներու բարբարոսութիւնը միւս կողմէ՝ երկար ատեն կասեցուցած են խուզարկուները։ Ժթ. դարուն է որ Եւրոպական ազգերը իրենց ուշադրութիւնը լրջօրէն դարձուցած են դէպի Ափրիկէ։ Մունկո-Բարք, Դայլիէ, Պարթն, Նախթիկալ և այլն մեզի ճանչցուցած են Սահարան և Սուտանը. Սրիբ, Կրանֆ, Պէյքըռ, Լիւժան՝ Նեղոսի ակունքը գտնելու համար եղած են. Լիվինկսթըն, Սթանլի, Էմին-բաշա, Գամէրուն խուզարկած են Քոնկոյի և Զամպէզի աւազանները և մեծ լիճերու մարզը։ Այսօր Ափրիկէ ծանօթ է ալ իր բոլոր մեծ գիծերուն մէջ և այս ցամաքին վրայով մեր ունեցած ծանօթութիւնները կ'աւելնան ամէն օր նոր խուզարկութիւններով որոնց մէջ իրարու հետ կը մրցին բոլոր Եւրոպական ազգերը։ Մեր օրով՝ Եւրոպական Տէրութիւնները իրենց մէջ բաժնած են մութ աշխարհին անհունութիւնները. Անգլիա, Գուանսա, Գերմանիա, Իտալիա և ուրիշներ իրենց ազդեցութեան վերապահած են ընդարձակ ու թերաժանօթ երկիրներ։ Կրնանայ ըսուիլ թէ այսօր Ափրիկէի մէջ չի կայ ալ մաս մը, որ Եւրոպական Տէրութենէ մը կախում չունենայ։

ՑԵՂԵՒ.—Ափրիկէ ունի իբր 145 միլիոն բնակիչ, որոնք՝ թէպէտ բազմաթիւ ու խառն ցեղերէ կը բազկանան, կրնան 3 գլխաւոր տիպարներու բաժնուիլ։ Հիւսիսային և արեւելեան կողմը կը տիրէ Սպիտակ ցեղը (Արար, Մաւրիտանացի և Պէրպէր)։ արեւմտեան ու կեդրոնական մասին մէջ Խառիչիկ ցեղը (Աչանթի, Նեապիացի, Հաուսէ, Սոմալի), գերազանցօրէն պատերազմիկ ցեղ։ Հարաւակողմը կը տիրէ Քաֆիրներուն ցեղը, որ Խառիչիկ ցեղէն կը զանազանուի իր ծիծխուն մազերով և աւելի թուխ քան թէ սեւ գոյնով։

Մահմետականութիւնը կը տիրէ Ափրիկէի հիւսիսային ու կեդրոնական մասերուն մէջ (Եգիպտոս, Պէրպերիա, Սահարա և Սուտան)։ Ցամաքին բոլոր մնացած մասին մէջ՝ Ֆէթիշութիւնը կը տիրէ իր այլանդակ աւերոտ դաժանութիւններով։

Միակ Քրիստոնեայ ժողովուրդներն են՝ Եւրոպական գաղթականութիւններէն զատ՝ Հապէշները, Ղիպտիները (Եգիպտոսի մէջ), և Նուբացւոց խառիչիկները։

Հարցարան. — Ափրիկէի ու մասերը ամէնէն կանուխ ճանչցուած են. — Ինչո՞ւ համար անծանօթ մնացած են իր ներքին մասերը երկար ատեն. — Ի՞նչ բուսական արտադրութիւններ ունի Ափրիկէ և որո՞նք են Ափրիկէի ամէնէն արգասաբեր երկիրները. — Կենդանիներուս մասին ինչ զանազան տեսակներ կ'ընծայէ Ափրիկէ. — Ո՞ւր ատղուանք կը գտնուին ամէնէն աւելի ճոխաչափ կենդանիները. — Ափրիկէի հանքային հարստութիւններուս մէջ ո՞րն է կարեւորագոյնը և ո՞ւր կը գտնուի. — Թանկագին քարերուս մասին ամէնէն հռչակաւոր երկիրը ո՞րն է. — Որո՞նք են Ափրիկէի այն երկիրներն որ ամէնէն աւելի կը յաճախուին եւրոպական գաղթականութիւններուս. — Որո՞նք են Ափրիկէի ամէնէն բարգաւաճ երկիրները և ինչ է իրենց զարգացումին պատճառը. — Ափրիկէի մեծագոյն մասը եւրոպական ո՞ր տէրութիւններուս ձեռք անցած է. — Ինչ ցեղերու կը պատկանին Ափրիկէի ժողովուրդները։

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ափրիկէի երկիրները չունին լաւ ճշդուած սահմանագրութիւններ։ Ծովեզերեայ երկիրները միայն ունին քիչ չատ որոշ սահմաններ։

Ներքնաչխարհին մէջ կը տիրեն ոգեայ, աւելորդապաշտ ցեղեր, որոնց մեծագոյն մասը բարբարոս պետերու կը հպատակին։

---

1. ՆԵՂՈՍԻ ՀՈՎԻՏ

Նեղոս գետը կը թրջէ Հապէշստանը, Եգիպտական Սուտանն ու Եգիպտոսը։

ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոս Օսմանեան Կայսրութեան գերիշխանութեան տակ կը գտնուի և կը կառավարուի ժառանգական փոխարքայով մը, որ Խեդիվ կը կոչուի։

Այս երկիրն իր հիանալի արգասաւորութիւնը կը պարտի Նեղոս գետին որ ամէն տարի կ'ողողէ գայն կանոնաւորապէս, և իր թաղած կաւով կը պարարտացնէ հողը։ Քանի չափերը քաչուին, հողը կը սկսի մչակուիլ։

Եգիպտոսի կլիման չատ տաք է, օդը չափազանց չոր. գրեթէ երբեք ալ բնաւ չի անձրեւր։ Առտուան հովը մեծ աւերումներ կը գործէ հոն։ Աչքի ցաւեր յաճախագէպ են այս երկրին մէջ։

Եգիպտոսի գլխաւոր բերքերն են արմաւիք, բրինձ, բամպակ, ծուխ, չաքարեղէգ, լեզակ, արմաւ և ուրիշ պտղատու ծառեր։ Բուն իսկ Եգիպտոսի յատուկ բոյսերուն մէջ կարեւոր են Լուտասը, Զգայնիկը և Պապուն կամ Պապիրոսը, որուն ներքին մսկը հին ատեն թուղթի տեղ կը գործածուէր։

Եգիպտոս ունի ամէն տեսակ ընտանի անասուն՝ ձի, էշ, ուղտ, արջառ, ոչխար, հաւ, մեղու, ևայլն։ Թիթեռնիկի մչակութիւնն ու չերամաբուծութիւնը նոյնպէս զարգացած են Եգիպտոսի մէջ։

Գալով իր հանքային հարստութեանց, պորփիւրի, մարմարիոնի, ադբորակի, կապարի և ադի հանքերն են միայն որ կը չահագործուին։

Եգիպտոս ունի մօտաւորապէս 11 միլիոն բնակիչ։ Մայրաքաղաքն է Գահիրէ *(580,000)* Նեղոսի աջ եղերքին վրայ։ Գահիրէէն քիչ մը վեր, Նեղոսի ձախ եղերքին վրայ կը գտնուի Կիզէ, որուն մօտ կը կանգնին Եգիպտոսի նշանաւոր երեք մեծ Բուրգերն ու Սփինքսը։

Ուրիշ կարեւոր քաղաքներն են.

Աղեքսանդրիա կամ Իսկէնտէրէ *(320.000)*, Եգիպտոսի մեծագոյն ու փառաւոր նաւահանգիստը, Միջերկրականի վրայ, որ Գահիրէի հետ կապուած է ջրանցքով մը և Եգիպտոսի Եւրոպայի հետ ունեցած վաճառականութեան գլխաւոր մթերանոցն է։

Տամիէթ և Ռոզէթ կամ Ռաշիտ, Միջերկրականի վրայ երկրորդական նաւահանգիստներ, կոչուած են իրենց վազեմի կարեւորութիւնը։

Կարեւոր են նաեւ Բօռ-Սայիտ և Սուէզ նաւահանգիստներն, Սուէզի ջրանցքին երկու ծայրերը։

Եգիպտոս երբեմն իր տիրապետութիւնները



Պատ. 90. — ԱՍԻԱԿԱՆ ՄԻՋ ՆԵՂՈՍԻ ՄԵԾ ԹՈՒՄԲԸ

Նեղոսի հոսանքը կանոնաւորելու համար, որ երթալի առաս ջուր ունի և երթալի ալ անբաւական, Անգլիացիք Առուանի մէջ սպասի անցքի թումբ մը շինած են որ Նեղոսի ընթացքը ամբողջովին կը կասեցնէ։ Այդ թումբը մեծ բանակութեամբ ջուր կ'ամբարէ որով կարելի կ'ըլլայ ջուրերուն հաշուած պահումն փետրուարին Մայիս ամիսն օր կարիքոտ բանակութեամբ ջուր հայթայթել։ Հիմա խնդրոյ նիւթ է այդ թումբը 6 մեթր եւս բարձրացնելով՝ իր պատուհաններուն թիւը աւելցնել. այդ աշխատութիւնը հաշուած է որ 65 միլիոն ֆրանկի ծախքի կը կարօտի, բայց Նեղոսի հովտին մչակելի հողերուն գինը այդ կերպով 1 միլիառ ֆրանկի չափ մը պիտի բնենայ։ Այդ տեսակ ուրիշ թումբեր ալ կառուցուած են Ասիութի մէջ և Տիրդայիի գետին վրայ, Գահիրեի մօտ։

տարածէր մինչեւ Կուարատաֆուի հրաւանդանը, բայց Սուէզի ջրանցքին բացուելէն ի վեր Անգլիացիք հաստատուած են Պէրպէրայի և Զէյլայի, ինչպէս նաեւ Ժանզիպարի մէկ մասին մէջ։ Գրաւած են Բերիմ կղզին՝ Կարմիր Ծովուն բերանը։

Եգիպտոս չատ հին գարերէ ի վեր նշանաւոր եղած է իր անուանի արգասաւորու-

թեամբ։ Իր քաղաքակրթութիւնը՝ աչխարհիս ամէնէն հինէրէն մին՝ Նեղոսի հովտին մէջ թուղած է հոյակապ յիչատակարաններ, որոնք ապեւզերական հիացման առարկայ են մինչեւ այսօր։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍՈՒՏԱՆ

Եգիպտական Սուտան (Նուպիա, Տարֆուր, Քորօֆան, Պահր-էլ-Կազալ, եւլն.) *1885ին Մահտիի մը իչխանութեան տակ իյնալէ յետոյ, նուաճուեցաւ Անգլիացիներէն 1898ին։*

Մայրաքաղաքն է Խարթում, Սպիտակ Նեղոսի և Կազալա Նեղոսի իրար խառնուած տեղը։

Երեւելի են նաեւ Պերպեր, Քասալա, Տօնկօլա, Օմտուրման, Ֆաշօտա։

Իսկ Կարմիր Ծովուն վրայ նուաճուած է Սուաքին։

ՀԱՊԷՇԱՍՏԱՆ

Եթովպիա *կամ Հապեշաստան՝ լեռնային երկիր մըն է Նուպիոյ հարաւակողմը, և իր բարձր ու ապահով գագաթներուն, գովելի կիրճերուն, խիտ անտառներուն ու բնական սիրուն տեսարաններուն համար կոչուած է Ափրիկեան Չուիցերիա։*

Ունի իբր 8 միլիոն բնակիչ, մեծ մասը Քրիստոնեայ։ Իրենց վերապետը՝ Եթովպիոյ Թագաւոր տիտղոսն առած է 1889ին։

Մայրաքաղաքն է Աsshա-Ապապա, երկրին հարաւակողմը։

Կարեւոր են նաեւ Կոնտար՝ նախկին մայրաքաղաք. և Մակալա, ուր մնաց Թէոդորոս Թագաւորը 1868ին Անգլիոյ դէմ պատերազմի մը մէջ։

Այս երկրին գլխաւոր բերքերն են բամպակ, չաքարեղէգ, խանձէ, խէժ և ամենէ վեր։

Բնակիչները ծոյլ են և պատերազմասէր։

Իտալացիները կը գրաւեն Մասուա և Ասապ նաւահանգիստները Կարմիր Ծովուն վրայ, ինչպէս նաեւ Ծովերուն մէկ մասը, զոր կը կոչեն Երիթրեան Գաղթականութիւն. (Կարմիր Ծովուն տին անունն էր Երիթրեան Ծով)։

Նահանգիկ ամրացած են Օպօֆ և Քիպուքի գաղթականներուն Աստղի ծոցին մէջ։ Պատերէզ Մանտէպի նեղուցին բերանը։

Հարցապատ. — Ո՞ր երկիրները կը թրջէ Նեղոս. — Եգիպտոս ինչ տեսակ երկիր է. և ինչ է իր արգաւանդութեան պատճառը. — Ինչպէս է Եգիպտոսի կլիման, որոնք են երկրին երկրագործական գլխաւոր հարստութիւնները. — Ո՞րչափ բնակիչ ունի Եգիպտոս. — Ո՞րն է Եգիպտոսի մայրաքաղաքը. — Ո՞ր կը գտնուին Եգիպտոսի գլխաւոր քաղաքները և ինչո՞ւ համար. — Ո՞րն է Եգիպտոսի մեծագոյն նաւահանգիստը. — Եգիպտոսի մէջ ինչ նշանաւոր շէնքեր կան. — Ո՞ր տերութեան հարկատու է Եգիպտոս. — Ինչ կը կոչուի Եգիպտոսի փոխարքան։

Ինչ երկիրներ կը պարունակէ Եգիպտական Սուտան. — Ո՞րն է իր մայրաքաղաքը, ինչ տեսակ կլիմայ ունի այս երկիրը։

Ինչպէս երկիր է Հապեշիստան և իր բնական կազմութեամբ եւրոպական ո՞ր երկրին կը նմանի. — Ո՞րչափ է իր տարածութիւնը և որչա՞փ բնակիչ ունի.

Ինչ կրօնքի կը հետեւին Հապեշները. — Ինչ է երկրին կառավարութեան ձեւը. — Ինչ կը կոչուի երկրին վերապետը. — Ո՞րն է մայրաքաղաքը. — Ո՞ր հաստատուած են Իտալացիք և ինչ կը կոչուին իրենց գաղթականութիւնները. — Ինչ տեսակ ժողովուրդ են Հապեշները։

ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ

Պերպերիստան *կը կոչուի հիւսիսային Ափրիկէի այն մասը, որ կը տարածուի Միջերկրականի ծովեզերքը, Եգիպտոսէն մինչեւ Ատլանդեան Ովկիանոս և կը պարունակէ չորս երկիրներ. Թարապլուս, Թունուզ, Ալճէրի և Մարոք։*

ԹԱՐԱՊԼՈՒՍ

Թարապլուս *Օսմանեան կայսրութեան մէկ սանջագքն է. ունի իբր 1 միլիոն քառակուսի քիլոմէթր տարածութիւն և 1 միլիոնի չափ ալ բնակիչ։*

Երկրին մեծագոյն մասը աւազուտ է և տափարակ. կը մշակուին սակայն արմաւենի, արմաւենի և ձիթենի։ Պահարարուեստութիւնն ալ բնակիչներուն գլխաւոր պարապմունքն է։ Երկրին գլխաւոր հարստութիւնն են ապահանքերը, որոնց արտադրութիւնը վաճառականութեան կարեւոր առարկայ է։

Գլխաւոր քաղաքներն են

Թրիփոլի *կամ Թարապլուսը Ղարպ, կաւակատանիա քաղաք և նաւահանգիստ Միջերկրականի վրայ։*

Պենկազի, *նոյնպէս վաճառաշատ քաղաք Միջերկրականի վրայ։*

Ներքին քաղաքներուն մէջ կարեւոր են Կատամես *և Մուրզուբ, Սահարայի կարաւանները ժամադրավայրը։*

ԹՈՒՆՈՒԶ

Թունուզ *Ափրիկէի ամէնէն հիւսիսային երկիրն է, զոր հիւսիսէն և արեւելքէն կը թրջէ Միջերկրական ծովը։*

Ապլաս լեռնէրուն ճիւղերը կը ծածկեն այս երկրին հիւսիսային մասը որ խիտ բարեւեր է, իսկ հարաւային մասը անջրդի է և աւազուտ։

Թունուզ՝ որ իր կլիմային և հողին բնութեամբ չատ կը նմանի Սպէրիոյ՝ կ'արտադրէ մանաւանդ ալմաիք, բուրդ, արմաւ, ձիթենի և ալֆա կոչուած հիւսեղէն աւունկը, որմէ կը շինուի թուղթ, չուան, գորգ եւայլն։

Թունուզ ունի մօտաւորապէս 2 միլիոն բնակիչ։

Մայրաքաղաքն է Թունուզ (170,000) Կարքեդոնի աւերակներուն մօտ. իր նաւահանգիստն է Կալէթ։ Թունուզ՝ վաճառաշատ և ճարտարարուեստ քաղաք է։

Միւս կարեւոր նաւահանգիստներն են՝

Պիզերթա՝ *հիւսիսակողմը, և Սֆաքս՝ արեւելեան կողմը։ Իբր ներքին քաղաք կարեւոր է Քերուան, Մահմետականներուն սուրբ քաղաքը, որ երկաթուղիով կապուած է Թունուզի հետ։*

Թունուզ իր աչխարհագրական նպաստաւոր դիրքով, իր կլիմային քաղցրութեամբ, իր հանքային հարստութիւններով, և հողին արգասաւորութեամբ՝ ամէն առնն առեւտրական մեծ կարեւորութիւն ունեցած է։

ԱԼՃԷՐԻ

Ափրիկէի *ամէնէն հարուստ և քաղաքակրթուած երկիրներէն մէկն է Ալճէրի կամ Ալճեզայիր, որ կը տարածուի Թունուզի և Մարոքի միջեւ։*

Ալճէրի կը բաժնուի 3 բնական մասերու։

1. Միջերկրականի ծովեզերքէն մինչեւ հիւսիսային Ապլասի գօտին՝ կը տարածուի մեծ դաչտաշխարհ մը որ թէլ կը կոչուի և որ երկրին ամէնէն արգասաւոր մասն է։ Ունի խիտ գեղեցիկ և ուռղ կլիմայ. կը հասցնէ առատ արմտիք, ալմէնիի, ձիթենի, ծխախոտ, մանիոկ, եւայլն։ Հողը կը պարունակէ հարուստ հանքեր երկաթի և պղինձի։

2. Հիւսիսային Ապլասէն մինչեւ հարաւային Ապլաս կը տարածուի լեռնազուարու կամ տափաստաններու աչխարհը, որ ծածկուած է ապառ լքճերով, մնուտներով, արօտատեղիներով և ալֆայի արտերով։ Այս մասին ձմեռները չատ ասառիկ և ամռանները խիտ տաք կ'ըլլան։

3. Ապլասի հարաւակողմը կը տարածուի Սահարեական Սահարա, աւազուտ անապատ, ուր տեղ տեղ կը գտնուին ովասիսներ։ Այս մասը կիպիչ ջերմութիւն մը ունի։

Ալճէրի ունի գրեթէ $4\frac{1}{2}$ միլիոն բնակիչ, որոնց $3\frac{1}{2}$ միլիոնէն աւելին բնիկ ցեղերէ են (Արապ կամ Պէրպեր), մահմետական կրօնքով։

Մայրաքաղաքն է Ալժէ (100,000) մեծ և վաճառաշատ նաւահանգիստ։

Երեւելի են նաեւ Օրան, պետութեան և վաճառաշատ նաւահանգիստ. Մօսթաղանեմ, Օրլեանվիլ, բարեկէս տասի մը մէջ. Պոն՝ բանուկ նաւահանգիստ. Ֆիլիփվիլ, Պուժի՝ Ալճէրիի ամէնէն ապահով նաւահանգիստը. Քօնսթանթին՝ չատ ամուր քաղաք է ժայռի մը վրայ։

ՄԱՐՕՔ

Մարոք *Ափրիկէի հիւսիսային արեւմտեան անկիւնը՝ Սպանիոյ ճիշդ դիմացը՝ ինքնիչխան պետութիւն մըն է, որուն վերապետը Սուլթան տիտղոսը կը կրէ։*

Մարոք ընչհանրապէս լեռնային է. կ'ընծայէ սակայն ընդարձակ դաչտագետիններ, գովելի հովիտներ ու հարուստ արօտատեղիներ։ Հողը չափազանց բարեբեր է, թէպէտ լաւ մչակուած չէ, և կ'արտադրէ առատօրէն ամէն տեսակ արմտիք և պատուական պտուղներ։

Հաս կը պատրաստեն Մարօքէն անուշով հռչակաւոր կաղինները։

Մարօք ունի 8 միլիոն բնակիչ.

Գլխաւոր քաղաքներն են Ֆես, հիւսիսի մայրաքաղաքը։ Մարօք հարաւային մայրաքաղաքը։

Թերուան և Թաֆիլեր Մէջերկրականի վրայ բանուկ նաւահանգիստներ են։

Ատլանդեանի վրայ երեւելի է Մօկատոր՝ Մարօքի ամէնէն վաճառական նաւահանգիստը։

Ցեղայ կուգան Մազական և Ռապաթ։

Սեօթա նաւահանգիստը՝ Միջերկրականի վրայ՝ Սպանիոյ կը վերաբերի։

Մարօք իր աշխարհագրական սքանչելի դիրքով, հանքային հարստութիւններով և ամէն տեսակ մշակութեանց յարմար հողով կրնար Ափրիկէի եղական երկիրն ըլլալ, եթէ բնակիչները անարժէք չդարձնէին երկրին հարստութիւնները։



Պատկ. 91. — ԹԱՒՄՊՈՒԿԹՈՒ ԿԱՄ ԹՕՄՊՈՒԿԹՈՒ

Այս բաղաքը որ հաստատուած է Նիկէր գետին մօտ, Սահարայի եւ Ֆրանսական Սուտանի եզերքը, առաջին անգամ այցելած է 1820ին փրանսացի Ռընէ Քայիէ երկրախոյզը։ Այն ատեն առեւտրական մեծ կեդրոն մըն էր, անկէ ի վեր շատ բան կորսնցուցած է իր կարեւորութենէն։ Բաղաքը կը կանգնի ամուր ապառներու միջեղը, Սահարայի ծայրը։ Պատ մը զայն կը շրջապատէ։ Այդ պատը կիսովին կործանած է իր բարձր աշտարակին ստորոտը։ Սահարայի եւ Սուտանի պես իրարմէ այնքան տարբեր եղող երկու երկիրներու միջեղ այդ բաղաքին դիրքը բերեր պիտի կրնայ իրեն դարձեալ տալ իր նախկին առեւտրական գործունէութիւնը երբ Անդրսահարեան երկաթուղի մը Նիկէրը միացնէ Ալճէրիոյ։

ՄԱՀԱՐԱ

Սահարա իբր 7 միլիոն քառակուսի քիլոմէթր տարածութեամբ անապատն մըն է, ուր տեղ տեղ կ'երեւին ովասիսներ։ Կարեւորներն են Ֆիկիկի և Թուաթի ովասիսները (գլխաւոր քաղաք՝ Իճ-Սալահ), որոնք կ'արտադրեն արմաւ և գարի։

Բնակիչները՝ ամէնքն ալ մահմետական՝ կը պատկանին Պէրպէր ցեղին, որ Հափիկ արիւ-

— Ո՞վ կը կառավարէ երկիրը.—Ո՞րչափ տարածութիւն ունի Ալճէրի, ինչպէս է երկրին կլիման. — Ո՞րչափ է բնակչութիւնը, որոնք են գլխաւոր քաղաքները. — Ո՞ր մշակութիւնը աւելի կը յարմարի Ալճէրիոյ, և ո՞ր մշակութիւնը թուենուզի. — Որո՞նք են Ալճէրիոյ գլխաւոր նաւահանգիստները։

ՄԱՀԱՐԱ

Սահարա իբր 7 միլիոն քառակուսի քիլոմէթր տարածութեամբ անապատն մըն է,


ԱՖՐԻԿԷ
Ասիճաճ.
0 250 500 750 1000 Ք.
ՄԱՐՄԻՔ
ԱԼՃԵՐԻԱ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԵԳԻՊՏՈՍ
ՍԱՀԱՐԱ
ՄԱՒՐԻՏԱՆԻԱ
ՍԵՆԵԿԱՄԲԻԱ
ՍՈՒԴԱՆ
ՆԻԿԷՐԻԱ
ՉԱՃԻ
ՆԻԳԵՐԻԱ
ԱՆԳԼ. ԱՐԼԵԱՆ ԽՏՃԱԿԱՆ ՍՈՄԱԼԻ
ԱՆԳԼ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈԴԵԶԻԱ
ՀՆԴԿԱՅ
ԱՆԿՈՒԼԱ
ԱՏԼԱՆՏԵԱՆ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈԴԵԶԻԱ
ՄՕԶԱՄԻԿ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՐԶ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ
ՀԱՐԱՒԱՅԻՆ

նավ խառնուած է, և արեւմտեան կողմը կը կոչուին Մարիսատացի, կեդրոնական մասին մէջ՝ Թուարկէ, և արեւելեան կողմը՝ Թիզպու։

Բազմաթիւ կարաւաններ կը կարեն այս ընդարձակ երկիրն, Ափրիկէի ներսերուն արտադրութիւնները (ջայլամի փետուր, փղոսկր, ոսկեփոշի, խէժ, եւայլն) փոխանակելու համար եւրոպական ապրանքներու հետ։

Ցրտնապիք 1895 էն ի վեր կը սիրեն Թօմպսընբուրի, որ Նիկէր գետին մօտ վաճառատեղ քաղաք մըն է։

ՍՈՒԱՆ

Սուտան կամ Նիկրիտիա կը տարածուի Սահարայի հարաւակողմը։ Ունի իրր $3^1/_2$ միլիոն քիլոմէտր քառակուսի տարածութիւն. հարուստ և բազմամարդ երկիր մըն է, բայց տակաւին ինկատուելի։

Արեւելեան մասը կը կոչուի Եգիպտական Սուտան որուն վրայ խօսուած է արդէն (Տես էջ 125)։

Կեդրոնական մասը բաժնուած է այլ և այլ բնիկ թագաւորութիւններու միջեւ, ինչպէս են Ուատայ, Պակիրմի, Ատամաուա, Սոֆօրօ և Պօրնու։

Դլխաւոր քաղաքներն են.

Բուէա, մայրաքաղաք Պօրնուի։

Սոֆօրօ, Բանիօ, Եամօպա, որոնք Սուտանի մեծագոյն հրապարակներն են փղոսկրի, ջայլամի փետուրի և մորթի առեւտուրի մասին։

Կեդրոնական Սուտանի մէջ սիրուած ժողովուրդներն են Ֆելլադանները, որոնք իրենց պիմագիներով թէպէտ ապրանք ցեղին կը մօտենան, սակայն Խափչիկ ցեղին հետ խառնուած են ամէն տեղ։

Սուտանի արեւմտեան մասը՝ այն է Ֆրանսական Սուտան, Ափրիկէի ամէնէն հարուստ երկիրներէն մէկը ըլլալ կը կարծուի։ Կ'արտադրէ ոսկեփոշի, բամպակ, խէժ եւայլն։

Դլխաւոր քաղաքներն են Գամարու և Սեկու, Նիկէրի հովտին մէջ։

Այս երկրին դլխաւոր բնակիչներն են Ֆելլադաններն ու Գամպարաներու խառիչիկ ցեղը։

Մահմետականութիւնը սիրուած կրօնքն է Սուտանի բնակիչներուն, որոնց մեծ մասը՝ թէպէտ չդիտցուիր՝ 40 միլիոնէն աւելի ըլլալ կը կարծուի։

Ոսկին, աղը, երկաթը, արջառը, մորթը, բուրդը, մեռաքսը, փղոսկրը, ջայլամի փետուրը, բամպակը, արմաւիքն ու իւղալից հատիկները, խէժն ու գումմաստու նիւթերը կարեւոր ապրանքներն են Սուտանի. բայց բանուկ վաճառականութիւնն մը առարկայ եղող գլխաւոր բերքերն են ոսկեփոշին, ջայլամի փետուրը, փղոսկրը և խէժը, որ կը փոխանակուին եւրոպական ապրանքներու հետ (հիւսուածեղէններ, երկաթեղէններ, ղէնքեր եւայլն), զորս կը բերեն Մարսէյլ, Եգիպտոս, Թարաբլուսի և Թունուզի կարաւանները։

Հարցաբան. — Ո՞ւր կը գտնուի Սահարա, և ո՞րչափ տարածութիւն ունի. — Որո՞նք են Սահարայի բնակիչները. — Ինչի՞ համար կը բաժնուի Սուտան, և որո՞նք են իւրաքանչիւրին գլխաւոր քաղաքները. — Ո՞րչափ տարածութիւն ունի Սուտան. — Ո՞ր գօտիին տակ կը գտնուի. — Ինչպէս է կլիման. — Ո՞րոնք են գլխաւոր լեռները — Ո՞ր գետերը կը թրջեն այս երկիրը. — Սուտանի մէջ ո՞ր լիճը կարեւոր է — Ո՞ր գետը կը թափի այդ լիճին մէջ. — Ինչ կը կոչուի Սուտանի արեւելեան մասը և որո՞ւ կը պատկանի. — Ո՞րոնք են Սուտանի գլխաւոր ցեղերը. — Եւրոպական ո՞ր տէրութիւնը գերակշիռ է այսօր Սուտանի մէջ. — Ինչ են Սուտանի արտադրութիւնները, և ինչ նիւթեր իր վաճառականութեան առարկայ են։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓՐԻԿԷ

Արեւմտեան Ափրիկէ կը տարածուի Սահարայի ծովեզրին վրայ, Սենեկալ գետին բերնէն մինչեւ Քունէնէ գետակին բերանը և կը պարունակէ երեք գլխաւոր բաժանումներ. Սենեկամպիա, Հիւսիսային Կուինեա, և Հարաւային Կուինեա կամ Գոլֆօ։

Այս երեք ընդարձակ երկիրները գրեթէ միեւնոյն հանգամանքները կ'ընծայեն։ Ունին առատիկ տաք կլիմայ և երկու եղանակ, չոր և անձրեւային։ Ծովեզերքները ցած, ճահճախառն, և վտանգաւոր են. ներսերը կը տարածուին աւազուտ ու կաւային դաշտաւայրեր, զորս կ'արդաւորուին արեւադարձային կանոնաւոր անձրեւները։

Հողին արտադրութիւնները գրեթէ նոյն են բոլոր երեք ծովեզերքին վրայ։ Արեւադարձային

պատրոններ, խէժ, չաքարեղէգ, խունկ, գեռնազիտակներ, արմաւ, բամպակ, չինուխեան փայտ, մեղրամոմ, եւայլն։ Ներսէսը կը գրեռնուի անոնց անտառներ եւ երկաթի ու պղինձի հանքեր։

ՍԵՆԵԿԱՄՊԻԱ

Սենեկամպիա, որ իր անունը կը պարտի Սենեկայ եւ Կամպիա գետերուն, Ափրիկէի ամէնէն արեւմտեան երկիրն է։ Բնակիչները՝ ընդդէմ 10 միլիոն կը հաշուուի, խառնիկ եւ արաբ ցեղերուն կը պատկանին,

Երկրին գլխաւոր արտադրութիւններն են իւղալից բոյսեր, խէժ, քաուչու, բամպակ, լեզակ, ոսկեփոշի, փղոսկր։ Առանցքի գետ Գամպիա անտառներուն մէջ, ուր կ'ապրին փիղեր։ Ճիւաղագէմ ձիագետնին կ'ապրի Սենեկամպիոյ արագավազ գետերուն մէջ։

Այս երկրին մեծագոյն մասին կը տիրեն Ֆռանսացիք, որոնք հոն հաստատած են Սենեկալի գաղթականութիւնը, որ իր առեւտրական եւ քաղաքական կարեւորութեամբ Ափրիկոյ կը հաւասարի գրեթէ։

Սենեկալի մայրաքաղաքն է Սեն-Լուի, Սենեկալ գետին բերանը։ Երկաթուղի մը կը միացնէ զայն Տաքար նաւահանգստին, ուր գաղար կ'առնեն Գօրսայէն հարաւային Ամերիկա գացող նաւերը։

Անգլիա եւ Փորթուգալ այս ծովեզրին վրայ ունին փոքր սեպհականութիւններ։ Անգլիացիներուն ձեռքն է Կամպիա, որուն գլխաւոր քաղաքն է Գաթբրսթ։

Իսկ Փորթուգալի կը պատկանի Պիսակոսի արշիպելագոսն ու դիմացի ծովեզերքը, որ կը կոչուի Փորթուգալեան Կուինէա, և որուն գլխաւոր քաղաքն է Քաճեօ։

ՀԻՒԱՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ

Հիւսիսային Կուինէա կը կոչուի արեւմտեան Ափրիկէի այն մասն, որ Քոնկ լեռներուն ու Ատլանդեանի միջեւ կը տարածուի, Սենեկամպիոյ սահմաններէն սկսեալ մինչեւ Լօփէզ հրուանդանը։

Երկիրը՝ սեպհական մէկ քանի իշխանութիւններէ զատ՝ բաժնուած է նաեւ այլեւայլ եւրոպական սէրութիւններու միջեւ։

Անգլիացիները կը տիրեն հետեւեալ երկիրներուն.

1. Սիեռա-Լէոնէ, որ Անգլիական գաղթականութեան գլխաւոր կեդրոնն է։ Գլխաւոր քաղաք՝ Ֆրիթաուն, Ատլանդեանի վրայ։

2. Աճանթիի երկիր, որուն գլխաւոր քաղաքներն են Քումասի՝ մայրաքաղաք և Քեյփ-Քօսթ՝ նաւահանգիստ Ոսկիի ծովեզրին վրայ։

3. Նիկեռի նովիս, կամ Նիկեռիա որ կը պարունակէ Լակոսի և Պենենի երկիրները, հաճանուն քաղաքներով։

Ֆռանսացիներուն կը վերաբերին հետեւեալ երկիրները.

1. Փղոսկրի ծովեզրը, որուն գլխաւոր քաղաքներն են Կրանտ-Պասամ և Ասինի։

2. Տահոմէյի թագաւորութիւնը, Գեռնիներու ծովեզրին վրայ, որուն գլխաւոր քաղաքներն են Ապօմէյ՝ մայրաքաղաք, Ուիտան և Բօրբօնօմօ։

Գերմանացիներուն կը պատկանին

1. Թօկօ, Գեռնիներու ծովեզրին վրայ, հաճանուն քաղաքով։

2. Քամերուն, հաճանուն քաղաքով, Պիաֆրայի ծոցին վրայ.

Լիպերիա՝ հանրապետութիւն մըն է ուր կը բնակին կիրթ ազատուած բրիտանացի ազգեր։ Մայրաքաղաքն է Մոնրովիա, բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ, Պղպեղի ծովեզրին վրայ։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ

Հարաւային Կուինէա անունով կը ճանչցուի այն երկիրն որ կը տարածուի հասարակածէն սկսեալ մինչեւ Ցրիօ հրուանդան. և կը պարունակէ Քոնկոյի Ֆռանսական գաղթականութիւնն ու Անկոլայի Փորթուգալեան տարածքները։

Երկրին գլխաւոր արտադրութիւններն են բրինձ, բամպակ, արմաւ, ծխախոտ, լեզակ, խէժ, խունկ, չաքարեղէգ և չինուխեան փայտ։ Ունի ոսկիի, երկաթի, պղինձի, ծծումբի, քարիւղի և ապրտակի հանքեր։ Ինչպէս Սենեկամպ, նոյնպէս և հարաւային Կուինէա ունի

փղեր, ձիագետիներ և անհամար տեսակ կապիկներ։

Ֆրանսական Քոնկոյի գլխաւոր քաղաքներն են.

Լիպրըվիլ՝ Կապոնի վրայ, Ֆռանսվիլ՝ Օկոուէ գետին վրայ, Պռազավիլ՝ Քոնկո գետին վրայ, և Լօանկօ՝ Ատլանդեանի վրայ։

Փղոսկրը և խէժը բնիկներուն հետ փոխանակութեան գլխաւոր առարկաներն են։

Փորթուգալական առացուածքներուն կամ Անկոլայի երկրին գլխաւոր քաղաքներն են Սեն-Փօլ-Տը Լօանտա, Պենկուելա և Մօսամետես նաւահանգիստները։

Անկոլայի երկրին հարաւակողմը՝ Քունենէ և Օրանժ գետերուն մէջտեղ կը տարածուին Տամարայի և Նամաքուայի երկիրները որոնք կը պատկանին Գերմանիոյ։ Գլխաւոր քաղաք՝ Անկրա-Բէհուանա։

Հարցաբան. — *Արեւմտեան Ափրիկէ ուրկէ՞ ուր կը տարածուի և քանի՞ գլխաւոր բաժանումներ ունի*

— *Ինչպէս է Ատլանդեանի ծովեզերեայ մասը.* — *Որո՞նք են այս ծովեզրին գլխաւոր արտադրութիւնները* — *Եւրոպական ո՞ր սէրութենէ մէջէն բաժնուած է այս ծովեզրը* — *Ինչ՞ թագաւորութիւններուն մէջ կարեւորը ո՞րն է.* — *Որո՞նք են այս ծովեզրին վրայ Ֆրանսայի ստացուածքները և ի՞նչ է իրենց կարեւորութիւնը.* — *Որո՞նք են Սենեկամպիոյ գլխաւոր քաղաքները.* — *Ի՞նչ են Սենեկամպիոյ գլխաւոր բերքերը.* — *Հիւսիսային Կուինէա անունով ո՞ր երկիրը կը ճանչցուի.* — *Որո՞նք են Եւրոպական գաղթականութիւնները իրենց գլխաւոր քաղաքներով.* — *Ո՞ր հանրապետութիւնը կայ այս ծովեզրին վրայ և ո՞րն է գլխաւոր քաղաքը.* — *Որո՞ւ կը պատկանի Աշանթիները երկիրը, և ո՞րն է մայրաքաղաքը.* — *Տահոմէի մայրաքաղաքը ո՞րն է և որո՞ւ կը վերաբերի այս երկիրը.* — *Որո՞նք են Կուինէայի ծովեզրին վրայ վաճառականութեան գլխաւոր առարկաները.* — *Ափրիկէի արեւմտեան ծովեզրին ո՞ր մասը կը կոչուի Հարաւային Կուինէա.* — *Այս ծովեզրին մեծ մասը Եւրոպական ո՞ր տէրութիւն կը պատկանի.* — *Ի՞նչ են երկրին արտադրութիւնները.* — *Որո՞նք են Փորթուգալեզներուն ստացուածքներու գլխաւոր քաղաքները.* — *Ֆրանսա ի՞նչ ստացուածք ունի Հարաւային Կուինէայի մէջ, և որո՞նք են գլխաւոր քաղաքները*

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Հարաւ-Ափրիկէ կը պարունակէ Քափի Անգլիական գաղթականութիւնը, և Օրանժի ու Թրանսվալի երկիրները։

ՓԱՓ

Քափ Ափրիկէի ամէնէն հարաւային երկիրն ու Անգլիոյ ամէնէն հարուստ երկրագործական գաղթականութիւններէն մէկն է։ Ունի բարեխառն բայց չատ չոր կլիմայ, գեղեցիկ արօտատեղիներ, որոնք կը մնուցանեն կովի, ոչխարի և այծի բազմաթիւ հօտեր, բարեկեր և պարարտ հող՝ որ կ'արտադրէ արմաւ, ելիպատպրէն, բամպակ, ծխախոտ, խունկ, չաքարեղէգ, պտղատու ծառեր և արեւմտեանկ։

Ունի հարուստ հանքեր, երկաթի, պղինձի և հանքածուխի։

Գաղթականութեան մայրաքաղաքն է Քափ, վաճառաշահ և գեղեցիկ նաւահանգիստ։ Կարեւոր է նաեւ Բօրթ-Էլիզաբէթ, որ բուռդի և արջառի մեծ վաճառականութիւն ունի։

Գաղթականութիւնը բուն Քափի երկրէն զատ կը պարունակէ նաեւ Պէչուանալանտ, Կրիֆուալանտ, որ ունի ադամանդի հարուստ հանքեր, Պասուտոլանտ, Քաֆրասան, Զուլուսան և Անգլիական Նաթալ, որուն գլխաւոր քաղաքներն են Բօռ-Նաթալ և Բիեթեր-Մարիծպուրկ։

ՕՐԱՆԺ ԵՒ ԹՐԱՆՍՎԱԼ

Քափի հիւսիս-արեւելեան կողմը կը գրաւէ Օրանժի երկիրն ու Թրանսվալ, զորս հիմնած են Հօլանտական ու Ֆրանսական ծագում ունեցող գաղթականներ, որ Պոեր անունով կը ճանչցուին։

Օրանժի մայրաքաղաքն է Պլեօմֆոնթէյն, Թրանսվալինը՝ Բրէտորիա։

Բիչ առեն ի վեր գտնուած ոսկեհանքերը Թրանսվալ քաշած են բազմաթիւ բազմութիւններ ու գաղթականներ, որոնք հոն հիմնած են Յոհաննիսպուրկ քաղաքը։ Օրանժի երկիրն ունի ադամանդի հարուստ հանքեր։ Գոճարարութիւնը գլխաւոր զբաղումն է բնիկներուն։

Թրանսվալ աւելի լեռնային է։ Իր անհամար ոսկեհանքերէն զատ ունի նաեւ պղինձ, արծաթ, կապար և հանքածուխ։ Բուսական արտադրութիւններն են արմաւիք, խունկ և չաքարեղէգ։

Հարաւային Ափրիկէի խափչիկ թագաւո-

բանիւնները՝ Թանկանիքա լիճէն մինչեւ Քափի ափերանիան սահմանները՝ կը գանուին Անգլիական սիրապետութեան տակ և կը ձեւացնեն Ռոսեգիան։

Ա Զ Ա Տ Ք Օ Ն Կ Օ

Քօնկօ ընդարձակ չէզոք երկիր մըն է, որ 1885ին Պերլինի մէջ կնքուած դաշնագրութեամբ հիմնուած և Պելճիքայի թագաւորին գերիշխանութեան տակ դրուած է։

Գլխաւոր քաղաքներն են Պօմա, և Լէոբօլտվիլ Քօնկօյի վրայ. Տանան՝ նաւահանգիստ Քօնկօյի բերանը։

Ապատ Քօնկոյի բնիկներուն թիւը կը հաշուուի 14 միլիոն։ Անոնք Քաֆիրներուն նման ռեւեր են, որ կը բնակին քաոտիական հիւղերու մէջ, կը մշակեն եգիպտացորեն, և յաճախ մարդակեր են։

Գլխաւոր առեւտրական արտադրութիւնները են փղոսկր ու քաուչու։

Ա Ր Ե Ւ Ե Լ Ց Ա Ն Ա Ֆ Ր Ի Կ Է

Հնդկային ովկիանոսին Աֆրիկեան ծովեզերքին վրայ կը գանուին Մոզանպիքի Փորթուկալական գաղթականութիւնը, Անգլիացիներէ և Գերմանացիներէ վերջերս հիմնուած գաղթականութիւններ, և Սոմալիներու երկիրը։

1. Մոզանպիքի ծովեզերքին գլխաւոր նաւահանգիստներն են Լուրենսօ-Մարուես, Սոֆալա, Պեյրա, Քիլիմանէ և Մոզանպիք։

Այս մասին գլխաւոր բերքերն են բամպակ, իւղալից հնձանք, խառնէ, չաքար։

2. Մոզանպիքի և հասարակածային մեծ լճերուն միջեւ ապրած մասին մէջ Գերմանացիք հաստատուեցան 1887ին։

Միեւնոյն ատեն Անգլիացիք ընարկցին Հնդկային ովկիանոսի և Վկտորիա-Նեազայի միջեւ գտնուած երկիրն և իրենց թէւարկութիւնը ընդունել տուին Զանզիբարի Սուլթանին։

Այս վերջին գաղթականութեան մէջ է նաեւ Ուկանտայի հարաւային երկիրը, ուր հաստատած են կաթոլիկ և բողոքական քարոզիչներ։

3. Սոմալիներու անկախ ցեղերը կը բռնակին Ափրիկէի արեւելեան ծայրը։ Իրենց երկրին հարաւային ծովեզերքը 1890էն ի վեր կը գանուի իտալական պաշտպանութեան տակ։

Անգլիացիք հաստատուած են Սոմալի հիւսիսային ծովեզերքին վրայ, ուր կը պրաւեն գլխաւորապէս Պերպերա նաւահանգիստը։

Ֆրանսացիք ունին Օպօճի և Ձիպուտիի գաղթականութիւնները։

Ա Ֆ Ր Ի Կ Ե Ի Մ Ա Ս Ի Ն

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ (21 միլիոն բնակիչ). — Ալճերիա. — Թունուզ. — Սենեկալ եւ Ֆրանսական Սուտան. — Ֆրանսական Կունկօ եւ Տահոմէյ. — Ֆրանսական Քօնկօ. — Ֆոսֆորեան կղզիները. — Մատակասքար. — Նօսի-Պէ եւ Սէնթ-Մարի կղզիները. — Ռէյունիօն կղզին. — Օպօճ՝ Կաւմիր ծովին վրայ եւայլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ (2 միլիոն 745 հազար բն.). — Կամպիա. — Սիերա-Լէօն. — Ոսկեայի. — Լակօս եւ Նիկէրի բերանը. — Հարաւային եւ Սուրբ-Հելինէ կղզիները. — Քափ եւ Հարաւային Ափրիկէ. Մօրիս կղզին. Սեշելեան եւ Ամիրանթ կղզիները. — Զանզիպար. — Սօֆօրա առէպիզատօր. — Անգլիական արեւելեան Ափրիկէ. — Զէյլա եւ Պերպերա՝ Ատէնի ծոցին վրայ։

ՓՈՐԹՈՒԿԱԼԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ (3 միլիոն բն.). — Ասորեաց կղզիները. — Մատեռա. — Գալարի գլուխի կղզիները. — Փորտուկեզեան Կունկօ. — Անկօլա. — Մոզանպիքի ծովեզերք։

ՍՊԱՆԻԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ (330 հազար բն.). — Քանարեան եւ Ռիօ տը Օրօ ծովեզերքի կղզիները. — Կունկեան ծոցին կղզիները։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ (500 հազար բն.). — Թօկօ. — Քամերուն. — Ափրիկեան հարաւ-արեւմուտք. — Գերմանական Արեւելեան Ափրիկէ։

ԻՏԱԼԱԿԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ. — Երիթրեան գաղթականութիւնները։

Հարցապատ. — Ի՞նչ երկիրներ կը պարունակէ Հարաւ. Ափրիկէ. — Ո՞րն է Եւրոպական գերակշիռ ազդեցութիւնը Ափրիկէի այս մասին մէջ. — Ի՞նչ տեսակ կլիմայ ունի Հարաւ Ափրիկէ. — Որո՞նք են Հարաւ Ափրիկէի անգլիական գաղթականութիւնները. — Ո՞ր երկիրները կան անկախ. — Ո՞րն է Անգլիական գաղթականութեանց կարեւորագոյնը. Ի՞նչ տեսակ երկիր է Քափ. — Ի՞նչ են իր գլխաւոր հարստութիւնները. — Ո՞րն է ոգեմանդի մասին ամէնէն հարուստ երկիրը. — Ի՞նչով նշանաւոր է Թրանսվալ — Օրանժի երկիրն և Թրանսվալ ի՞նչ ունեցած կացութիւն ունին. — Ո՞րն է Քափի մայրաքաղաքը, և գլխաւոր նաւահանգիստ. — Որո՞նք են Քափի և Նաթալի գլխաւոր քաղաքները. — Ո՞րն է Օրանժի մայրաքաղաքը. — Ո՞րն է Թրանսվալի մայրաքաղաքը. — Թրանսվալի ամէնէն հարուստ քաղաքն ո՞րն է։

Արեւելեան Ափրիկէ ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ. — Ո՞րն է արեւելեան Ափրիկէի գլխաւոր գետը, և ուրկէ կը բխի. — Այս ծովեզերքը Եւրոպական ո՛ր Տէրութենէն միջեւ բաժնուած է, և որն է ամէնէն կարեւորը. — Մոզանպիքի ծովեզերքին գլխաւոր նաւահանգիստները որո՞նք են։ — Ո՞ր կը գանուի Լուբրենսօ Մարքուէս և ի՞նչ կարեւորութիւն ունի — Անգլիացիք ինչ գաղթականութիւններ ունին Արեւելեան Ափրիկէի մէջ — Արեւելեան Ափրիկէի մէջ որ լեռները նշանաւոր են. — Ուր կը գանուի լիճերու աշխարհը. — Արեւելեան Ափրիկէի ո՞ր մասը Գերմանացիներուն, Գերմանական առաջնորդներուն մայրաքաղաքը ո՞րն է։

Ե. Գ Լ Ո Ւ Խ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Բ Ն Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

Դիրք.— Ամերիկա, որ կը կոչուի նաեւ Նոր-Աշխարհ, կ'երկարի արեւելքէն Ատլանտեան ովկիանոսի և արեւմտահայէն Խաղաղական ովկիանոսի միջեւ։

Մասնակցեալ ովկիանոսը կը թրջէ իր հիւսիսային ծովեզերքը։

Տարածութիւն.— *Ամերիկեան ցամաքը չորս անգամ երկայն է քան լայն. հիւսիսէն հարաւ 14000 քիլոմէթրէն աւելի երկայնութիւն ունի. և կը տարածուի Բերինգ տը Կալ հիւսիսային մինչեւ Հորն հրուանդանը։ Տարածութիւնն է 41 միլիոն քառ. քիլոմէթր, իսկ է Ասիային քիչ մը փոքր է։*

Հասարակածը կը կտրէ Ամերիկան իր հարաւային մասին մէջ։

Այս ցամաքը կը բաղկանայ երկու մեծ մասերէ. Հիւսիսային Ամերիկա, և Հարաւային Ամերիկա, որոնք իրարու միացած են նեղ պարանոցներով, թերակղզիներով ու արշիպելագոսներով որոնք կը ձեւացնեն երրորդ Ամերիկա մը, այն է Կեդրոնական Ամերիկա։

Երկու Ամերիկաներուն մէջտեղ Ատլանտեան Ովկիանոսը կը ձեւացնէ երկու խորունկ ծոցեր. Մեխիկոյի ծոցը, և Անթիլեան ծովը, զոր կը շրջապատէ արեւելքէն Անթիլեան կղզիներու երկար չարքը։

Ամերիկայի արեւմտեան կողմը, հիւսիսէն հարաւ կ'երկարի բարձր լեռներու չղթայ մը, որուն առարաջ կը տարածուին անհուն գաշտաւայրներ, զոր կ'ոռոգեն ահռելի մեծ գետերը։

Ա. Հ Ի Ւ Ս Ի Ս Ա Յ Ի Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Ծովեզերք.— *Հիւսիսային Ամերիկա չատ անկանոն ծովափնեայ ունի.*

Հարաւ-արեւելեան կողմը, նաւթաբեր և ֆլորիտայի թերակղզիները կը շրջապատեն Մեքսիկայի ծոցը։

Հիւսիս-արեւելեան կողմը՝ Նոր Սկովտիոյ թերակղզին անջատուած է ցամաքէն։ Լապրատոր թերակղզին կը յատկանշէ Սեն-Լորանի ծոցին ու Հուդսընի ծովախորշին միջեւ։

Հիւսիս-արեւմտեան կողմը՝ Ալասկայի թերակղզին կ'երկարի Ասիոյ դիմացը։

Խաղաղականի ծովեզերքին վրայ կ'երկարի Քալիֆոռնիոյ թերակղզին որ ցամաքէն զատուած է համանուն ծոցով։

Կղզիներ.— *Հիւսիսային Ամերիկայի արեւելեան ծովեզերքին վրայ Լուբայեան կղզիները կամ Պահամայի Աւազիպեղագոյր, Պերմուտեան կղզիները՝ Անթիլեաններուն հիւսիսային կողմը, Նոր-Երկիր կղզին՝ Ատլ Լօբաթի ծոցին բերանը, կը պատկանին Անգլիոյ։*

*Մասնակցեալ ովկիանոսին մէջ ցրուած են մասնակցեալ և հիւսիսային կղզիներ։ Մեծագոյնն

է Կոճնդանտա, ուր կը բնակին Էսքիմոյի ցեղը, և ուր կը պատկանի Տանըմարքցի։

Արեւմտեան- հիւսիսային ծայրը՝ Ալեուբեան կղզիներըՙ որ Միացեալ-Նահանգներուն կը



Պատկ. 92· — ՆԻԱԳԱՐԱՅԻ ՋՐվԷԺ

Նիագարայի ջրվէժը որու մեկ ճկերը Միացեալ Նահանգաց կը պատկանի եւ միւսը Քանատայի, աշխարհիս ամենեն նշանաւոր ջրվէժներեն մեկն է. կը գտնուի Սեն Լորան գետին ընթացքին մէջ, Էրիէ եւ Օնթարիօ լիճերուն միջտղը, պայտի մը ձեւ ունի. գետը հոս 47 մեթր բարձրութենէ մը վար կը գահավիժի։

պատկանին, Ագաքայի թերակղզիին չորեքհարիւրմիլոնը կը ձեւացնեն։

Վաշինկտըր արեւմտեան ծովեզրին մեծագոյն կղզին է և կը պատկանի Անգլիոյ։

ՆՈՎԱՍՔՈՏԱ· — Հիւսիսէն Ամերիկան պատնեշով Ատլանտեան ովկիանոսէն Խաղաղական ովկիանոս կ'անցնի Տեվիսի նեղուցէն, Պաֆֆինի ծովէն, Սառուցեալ ովկիանոսէն ու Պեհրինկի նեղուցէն և Պեհրինկի ծովէն անցնելով։

Ահա այս համբաւաւոր հիւսիս-արեւմտեան անցքն է, զոր երկար ատեն փնտռած են անվեհեր նաւարկուները։

Հուսալի նեղուցը՝ Պաֆֆինի երկրին հարաւային կողմը՝ նմանապէս հարաւային Գրենլանտիոյ մէջ կը գտնէ Ատլանտեան ովկիանոսը՝ Սառուցեալ ովկիանոսին և Հաւասարի ծովուն հետ։

ԼՃԵՒՆԵՐ· — Խաղաղականի ծովեզերքը չորսպատուող լեռնային հատուածները կը սկսի Ագաթայի երկրին մէջ, ուր կը գտնուի Ս. Ելիա հրաբխային լեռը (5944 մէթր)։ Այս հատուածները ձեւացած է երկու մեծ լեռնաշղթաներէ, Ապատաս լեռներ և Սիերա-Նեվատա, որոնք ընդարձակ լեռնագաւառներով բաժնուած են իրարմէ։ Այս լեռները 5000 մէթրէն աւելի բարձր գագաթներ կ'ընծայեն և կը պարունակեն հրաբուխներ։

Ուրիշ լեռնագաւառ կը պարունակէ Մեծ Ալտս լիճը։ Մեքսիկայի լեռնագաւառին վրայ կը կանգնի Քօքօտաքեփեթլ (5440) հրաբուխը որ միշտ կը ժխայ։

Արեւելեան ծովեզրին մօտ կը կանգնի Ալլեկանի լեռնաշղթան չորեքհարիւրմիլոնի

ԳԱՂԱՏՆԵՐ, ԳԱՒԹԵՐ ԵՒ ԼԻՃԱՁՈՐ· — Երկու մեծ պաշտպանիչներ կը սահմանագծեն Ագաթայի լեռնաշղթան արեւելեան կողմը։ Մէն կը հակի դէպի հիւսիս, և ցատոմ, ճահճախառն, լիճերով ու անտառներով ծածկուած է. կ'ուզուի Մաքենզի գետով ուր կը հոսին Մեծ-Արջ լիճին ու Գերիներու լիճին ջրերը. և Նելսըն գետով, որ կը լծի Ուինիպեկ լիճին։

Մէկ պաշտպանիչը կը հակի դէպ հարաւ, հարաւ և բարերեր է, և կ'ուզուի Միսիսիբի գետով, որ կը թափի Մեքսիկայի ծոցը։

Այս մեծ գետը երբեմն կը քշէ կը տանի ճչմարիտ ջրածուփ կղզիներ, որոնք լեռնեղէն կողերէն խլուած ծառերէ և հողերէ ձեւացած են։

Միսիսիբի առեւտրական մեծագոյն ուղին է իր թրջած երկիրներուն։ Իր գլխաւոր գետակիցներն են այ կողմէն՝ Միսուրի և Արքանսաս, որ Ֆար-Ուեսթի (ծայրագոյն արեւմտեան) մեծ մարզպետներէն կ'անցնին, ձախ կողմէն՝ Օհիո, ուր կը թափի Թենեսի։

Մեքսիկայի ծոցին մէջ կը թափի նաեւ Ռիօ-Կրանտ Տէլ-Նորթ գետը։

Ռիօ-Քոլորատօ կ'առաջէ Ուտահի լեռնագաւառը և կը թափի Քալիֆոռնիայ ծոցը։

Աւելի դէպի հիւսիս, Օրեկոն և Ֆրազեր գետերը կը թափին Խաղաղական Ովկիանոս։ Եաւհոն կը թափի Պէհրինկի ծովը։

Ուրիշ գետ մը, Սեն Լորան, կը հոսի Ատլանտեան ովկիանոս և կ'առաջէ Քանատայի Երկիրը։

Այս գետերուն գրեթէ բոլորը կ'ընդունին հինգ լիճերու ջուրերը, որոնք անոնց ջուրի ծաւալը կը ձեւացնեն։ Այս լիճերն են Վերին լիճ, Միշիկան, Հուրոն, Էրիէ և Օնթարիօ։

Էրիէ լճին ջուրերը Օնթարիօ լճին մէջ կը թափին Նիակարայի անուանի ջրվէժով, որուն չառաչիւնը մղեռներով հեռուէն կը լսուի։

Աչն նեղ ու երկայն գաչտաւազանը որ Ալլեկանի լեռներէն մինչեւ Ատլանտեան ծովեզերքը կը տարածուի՝ կրնայ Միացեալ Նահանգներուն պարզանը համարուիլ։ Այս բարեբեր գաչտաւազանը, զոր կ'ուզուին Հուսըն գետն ու Բոթոմաք գետակը, հիւրընկալեց առաջին անգլիական գաղթականութիւնները, որ Ամերիկա հաստատուեցան։

Ա. Աւէթիքա եւ Միսթի հրուանդանը

Բ Թիթիխաա լիճը

Գ· Ասիէնտա մը, Բէռուի արեւելեան Անտեսից մէջ տեսարան մը

Պատկ· 93. — ԱՆՏԵՍԱՆ ԼԵՌՆԵՐՈՒ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Անտեսան լեռներ որոնց մեծագոյն մասը հրաբխային են, անոնցմէ լեռնադաշտեր կը կազմեն որոնք այդ հատուածին մարզին մէջ բարեխառն գօտիի եղանակ մը ունին և հոս կը գտնուի բազմաթիւներու և բնակիչներու մեծագոյն մասը։ Մեծ թուով բազմաթիւներ կը գտնուին հրաբխներու ստորոտը, ինչպես Առհիբան։ Թիթիխաա լիճը, որ Բէռուի եւ Գոյիմոյ սահմանագիծին վրայ կը գտնուի, 3854 մեթր ծովուն մակերեսին բաձր է. իր եզերքին մօտ գտնուող տաճարներու առեւտրական կեդրոններ կը յիշեցնեն Էնճաներու հին բազմաթիւրութիւնը, (Էնճաները Սպանիացւոց գրառումին առաջ այդ երկրին բնիկներն էին)։ Անտեսից առեւտուրը սահմանը չաւ տարածած է. ուստի եւ ծածկուած է անհուն անտառներով որոնք յետոյ կ'երկարին Ատլանտեան կողքով կիզուռնի մեծ դաշտերուն մէջ։

Բ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հարաւային Ամերիկա *եռանկիւնաձեւ է. ունի կանոնաւոր ծովափունք և սուր ծայրով մը կը վերջանայ Ափրիկէի պէս։ Ջունի ան կարեւոր ծոցեր և աչ ալ թերակղզիներ։*

Կալիճաս հրուանդանը՝ հիւսիսակողմը, Սեն Ռոմ հրուանդանը՝ արեւելեան կողմը և Հօրն Գլուխը՝ հարաւակողմը, եռանկիւնի կեդրոնի մեծ դաշտերուն մէջ։

ԼԵՌՆԵՐ.— *Հապաղական ավկիանոսի երկայնութեամբ տարածուած լեռնաշղթան կը կոչուի Անտեան կամ Անտէզ լեռներ, և կը պատրաստէ մէկ քանի հրաբուխներ ալ գէս կը վառին, ինչպէս Քօրօվատոպ և Զիմպորացօ (6250 մ.) հսկայական ծայր և Ախօնկակուա (7320 մէտր) որ երկու Ամերիկաներուն բարձրագոյն գագաթն է: Այս լեռնաշղթան Հիմալայայէն ետքը երկրագնդիս բարձրագոյն չղթան է:*

Պազիլիայի լեռնագաշտը՝ արեւելեան կողմը, և Կույանայները՝ հիւսիսային կողմը՝ կը չրջապատեն Ամազոնեան ծովեզերը:

Դաշտագետինները այնքան անուններով կը տարածուին Անտեան լեռնաշղթային արեւելեան ստորոտը, և մեզմ զառիվարներով կը հակին դէպի Ամազոնեան ովկիանոս: Անտեաններուն և Կույանայի մէջտեղ կը կոչուին Լանօս և անձրեւային եղանակին մէջ խոտերով ու ճահիճներով կը ծածկուին. հասարակածին տակ կը կոչուին Սելվա, որոնք անթափանց կոյս անտառներով ծածկուած են: Աւելի դէպ հարաւ կը կոչուին Բամբա որոնք խոտաւէտ մարգագետիններով կը ծածկուին:

ԳԱՏԵՐ.— *Բազմաթիւ գետեր կ'իջնեն այս լեռներէն և կ'ոռոգեն բարձր խոտերով ու անտառներով ծածկուած անհուն դաշտագետիններ:*

Ռիօ-Մակտալենա կը հոսի հիւսիսակողմէ:

Օրենօք կը թրջէ Իլանոս կոչուած աւազուտ մեծ տարածութիւններ:

Ամազօն՝ աշխարհիս ամէնէն յայն գետը, կ'իջնէ Անտեան լեռներէն, կը հոսի դէպ արեւելք, կ'անցնի խոտ անտառներէ և կ'ընդունի բազմաթիւ գետակիցներ՝ Մատէյրա, Ռիօ Նեգրօ, Հայն, և վերջապէս Ամազոնեան ովկիանոսը կը թափի 300 քիլոմէտր լայնութեամբ աքանչելի գետաբերանով մը:

Բարա կամ Ռիօ-Թոքանթինն կը թափի այս գետաբերանին մէջ:

Բազիլիոպառ՝ Օրէնօքի գետակիցը՝ իր չատ բերան մէկ մասը կը գրկէ Ամազոնի գետակցին՝ Ռիօ-Նեգրօի: Այս կերպով երկու մեծ գետերը հազարգակցութեան մէջ կ'բլլան նաւարկելի ջրանցքով մը:

Սան Ֆրանչիսքօ կ'իջնէ Պրազիլեան լեռնաշխարհէն և լաւ մշակուած լեռնի մը կ'անցնի:

Բարանա գետը կ'ոռոգէ միապաղաղ ընդարձակ դաշտագետիններ, «պարարտեղ անհուն անապատներ» որոնք Բամբա կը կոչուին և Ամազոնեան ովկիանոսը կը թափի Ռիօ-տը լա Բլատա ունենալով:

Հարաւային Ամերիկա մեծ լիճեր չունի: Կաթնտր են միայն Թիթիքաքա և Մարաքայիպօ:

ԿԼԻՄԱՅ ԵՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամերիկա ամբողջովին արեւմեան կիսագունտին մէջ կը գտնուի և մէկ բևեռէն միւս բևեռը կը տարածուի. այս պատճառաւ ունի ամէն տեսակ կլիմաներ:

Հիւսիսային Ամերիկայի կլիման իր ամբողջութեան մէջ՝ աւելի ցուրտ և աւելի խիտ է քան Եւրոպայինը:

Ծովեզերեայ մասերուն մէջ կլիմայի այս տարբերութեան պատճառն այն է որ հովերը աւելի ցամաքէն դէպի Ատլանտեան ովկիանոսը կը փչեն քան թէ ովկիանոսէն դէպի ցամաք: Ասկէ զատ Ատլանտեանի ծովեզերքը զրկուած իր ամբողջ տարածութեան վրայ բևեռականներէն եկող ցուրտ հոսանքները կ'ընդունի: Ասոր համար է որ, օրինակի համար Նիւ-Եորք չատ աւելի խիտ ձմեռներ ունի քան Պրէսթ կամ Լիվըրփուլ որոնք աւելի դէպի հիւսիս կը գտնուին: Միեւնոյն բանն է նաեւ կեդրոնական մեծ դաշտագետնին համար. բևեռային ցուրտ հովերը ատոնց որ և է արգելքի հանդիպելու կը փչեն դէպի Մեքսիկայի ծոցն ու Անթիլեան ծովը:

Արեւմտեան ծովեզերքներուն վրայ՝ որոնք Հապաղականի մարզերէն եկող գաղջ հոսանքներով կը թրջուին՝ հիւսիսային Ամերիկա կը վայելէ իրապէս բարեխառն կլիմայ մը, որ լայնութեան միեւնոյն աստիճաններին առկ գտնուած Եւրոպական երկիրներուն կլիմային կը նմանի:

Հարաւային Ամերիկա գոր կը կազմէ հասարակածը, տաք ու խոնաւ կլիմայ մը ունի, բայց հարաւային մասին ալ բևեռին մերձաւորութիւնը ցուրտ հովեր ու հոսանքներ կը բերէ: Երկրին այս մասը ամէնէն ոռոգուածն է և ամէնէն հարուստ բուսական արտադրութեանց մասին:

Հարաւային Ամերիկայի կէսէն աւելին կը գտնուի արեւադարձային գօտիին տակ: Հասարակածին տակ գրեթէ ամբողջ տարին կը տեւէն տաք անձրեւները. դէպի հիւսիս կամ դէպի հարաւ, արեւադարձներուն մօտ, հաչտութիւնն չորեքներ անձրեւային եղանակներուն հետ փոխ ի փոխ իրարու կը յաջորդեն:

Արեւադարձային գօտիին հարուստութիւնը կը գտնուի յաջորդաբար տար ու չոր մարզեր, ինչպէս արեւմտեան Եւրոպայի կլիմային նման միջի կլիմայ մը: Բոլորովին հարուստութիւնը բնութեան ցուրտ հոսանքներու պատճառաւ կլիման չատ աւելի ցուրտ է որքան պէտք չէր ըլլալ բազմատեսակ իր յատկութեան աստիճաններին:

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— *Հիւսիսային Ամերիկայի ամբողջ հիւսիսային մասը այնչափ ցուրտ է որ մշակութիւնն չի յաջողիր:*

Այս տարածութեան մարդին մէջ չհանդուրժութեան միակ տարիներն են մուշտակաւոր կենդանիները, որ բազմաթիւ են Գանատայի մէջ: Այս մարդին կը յաջորդեն մեծատարած անտառներ և ընդարձակ մարգագետիններ ուրկէ կը մատակարարեն եղերաբոյսերն ու հատիկները: Մէն Լօրանի եղերքները և կեդրոնական բարեխառն գօտիները հանդիսանան եղերաբոյսերու, հատիկներու և ընդարձակ մարգագետիններու:

Հիւսիսային Ամերիկա ունի եւրոպացի գրեթէ բոլոր կենդանիները. ծովերը հարուստ են ամէն տեսակ ձուկերով. մօրուն կ'ապրի Նորվեգիի (Թէռ-Նէօվ) խոշոր կենդանիներ են մարգագետինները, ասրիկը, մարիրը և մրջնաբուծը. լաման և ուղտատեսակ լեռնականներու պիտանի հարստութիւնը կը կազմեն: Քայմանը (Ամերիկեան կոկոդիլոս) արեւադարձային երկիրներու գետերուն մէջ չատ կը գտնուի. վարազատեսակը կը սիրէ Անտեան լեռները. թռչնակներն ու ճանճատուները կը գտնուին մանաւանդ Պրազիլիա:

Գետով հանդիսային արտադրութեանց, Անտեան լեռներու, Կույանայի և Պրազիլիոյ լեռնային մարզերը չատ հարուստ են այս մասին: Ոսկին, արծաթն ու պղինձը առատօրէն կը գտնուին Անտեաններուն մէջ (Բէրու, Պոլիվիա, Չիլի). Կույանա հարուստ է ոսկեհանքերով և Պրազիլիա ադամանդի հանքերով:

Հարաւային Ամերիկա թէ երկրագործական և թէ հանքային առատ ու այլազան հարստութիւններ ունի:

Երկրագործական հարստութեան մասին աչքարէս մէջ մէկ մասը կրնայ գերազանցել Հարաւային Ամերիկան:

Ամբողջ Ամազոնի աւազանը կը ձեւացնէ միակ անհուն անտառ մը, 7 միլիոն քառակուսի քիլոմէթր տարածութեամբ, որուն հսկայ ծառերը իրարու կապուած են պատառաւէներու կապոցներով: Հազիւ թէ տեղ տեղ բացատանելով ընդհատուած է այս անհուն անտառը որ կը կոչուի Սելվա: Աւելի դէպի հիւսիս, ուր ամէն տարի երեք ամիս անձրեւ չի տեղար, ծառերը աւելի ցանցառ են և Սելվային կը յաջորդեն Լանօսները՝ խոտաւէտ դաշտեր որոնց աւելի խոնաւ մասերուն մէջ և գետերուն երկայնութեամբ կը գտնուին ծառերու ցանցառ փունջեր: Այս մարդին դիմաւոր արտադրութիւններն են մանիոկեղէն, ծիրանեփայտը, քինքինան և խէժատու ծառեր:

Պրազիլիոյ մէջ՝ բնութիւնը նաւազ յորդառատ՝ աւելի լաւ կը յարմարի մշակութեան: Հոն կ'աճին պանանեղէն, քաքաօ, խոտունէն, չաքարեղէգը, ծխախոտը և բամպակը:

Աւելի դէպի հարաւ կը տարածուին բամբուկները, անհուն մարգագետիններ, որոնք տակաւին կամաց կամաց սկսած են մշակութեան և կը հասցնեն արտիւթ և պազատու ծառեր:

Հարաւային Ամերիկայի չատուկ կենդանիներ են ժակառաները, խեցգերէն, սարիկը, թարիրը և մրջնաբուծը. լաման և ուղտատեսակին կենդանիներու պիտանի հարստութիւնը կը կազմեն: Քայմանը (Ամերիկեան կոկոդիլոս) արեւադարձային երկիրներու գետերուն մէջ չատ կը գտնուի. վարազատեսակը կը սիրէ Անտեան լեռները. թռչնակներն ու ճանճատուները կը գտնուին մանաւանդ Պրազիլիա:

Գետով հանդիսային արտադրութեանց, Անտեան լեռներու, Կույանայի և Պրազիլիոյ լեռնային մարզերը չատ հարուստ են այս մասին: Ոսկին, արծաթն ու պղինձը առատօրէն կը գտնուին Անտեաններուն մէջ (Բէրու, Պոլիվիա, Չիլի). Կույանա հարուստ է ոսկեհանքերով և Պրազիլիա ադամանդի հանքերով:

Հարցաբան. — Որո՞նք են Ամերիկան ըրջապատող ծովերը և ծոցերը — Ո՛վ և որ թուականին գտաւ Ամերիկան. — Քանի՞ մասերու կը բաժնուի Ամերիկա. — Որչափ տարածութիւն ունի. բազդատէ Եւրոպայի հետ. — Ինչ անուն կը կրեն երկու Ամերիկաներուն միջեղ ցրուած կղզիները. — Ո՛ր թերակղզին կը գտնուի Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան եզերքը և ո՞ր ափրութեան մաս կը կազմէ. — Ո՞րն է Տարտարայի Ամերիկայի ծայրը գտնուած հրուանդանը. — Երկու Ամերիկաները իրարու կապուած են իսթրմը. — Երբ Բանամայի պարանոցը կորուի, ինչ օգուտ պիտի յառաջ գայ նաւարկութեան համար։

Ո՞րոնք են Ամերիկայի գլխաւոր լեռնաշղթաները. — Հիւս. Ամերիկայի հինգ գլխաւոր լիճերը որո՞նք են և ո՞ր գետին հետ կը հաղորդակցին — Ո՞ր նշանաւոր ջրվէժը կայ Էրիէ և Օնթարիոյ լիճերուն միջեղ. — Որո՞նք են Ամերիկայի գլխաւոր դաշտագետինները. — Ամերիկա ինչ տեսակ կլիմաներ ունի — Ինչո՞ւ Հիւսիսային Ամերիկայի կլիման Եւրոպայինէն աւելի ցուրտ և խիտ է. — Հասարակածէ Ամերիկայի ո՞ր մասէն կ'անցնի. — Ո՛ր երկիրները կ'իյնան Հասարակածին տակ. ցոյց տուր քարտէսին վրայ. — Ինչ են Ամերիկայի բուսական ու կենդանական արտադրութիւնները. — Ամերիկայի արեւմտաբաժին մարզին յատուկ բոյսերն որո՞նք են. — Ինչ տեսակ հանքեր ունի Ամերիկա. — Որո՞նք են Ամերիկայի հանքահարուստ մարզերը։

ԿԱՊԱՐԱԿՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ամերիկա անձանօթ էր մինչեւ ԺԵ. դարու վերջը. մարդիկ կը բնակէին հոն արդէն. պզըտնձագոյն մարմ ունէին և կ'ապրէին ընտանեպէս որսորդութեամբ և ձկնորսութեամբ. տակաւ հանդերձ չուտ տեղ յայտնած էին ընթերակայ ու նչանաւոր քաղաքակրթութիւններ տակաւին։ Գալով Եւրոպական ազգերուն, մանաւանդ զանազան անգամներ մտեցած էին այս նոր ցամաքին, բայց մտքերնուն չէր անցած թէ Հին Աշխարհէն անջատ ցամաք մը կրնար եղած ըլլալ ան։ Այսպէս Ժ. և ԺԱ. դարուն Նորմանտացիք եկած էին Կրէնլանտա և հաւանականապար մինչեւ Միացեալ Նահանգներու եզերքները։

1492 ին էր որ Քրիստափոր Կոլոմպոս՝ ղէպ ի Հնդկաստան արեւմուտքէն ճամբայ մը փնտռած առեն մտեցաւ Անթիլեան կղզիներուն։ Եւ տակայն ոչ թէ Նոր աշխարհ մը, այլ Արեւելեան Ասիան գտած ըլլալ կարծեց Կոլոմպոս. և քանի մը տարի ետքը միայն ճշմարտութիւնը երեւան եկաւ։

Աչնաւհետեւ Եւրոպայի ազ և ազ կողմերէն գաղթականներ սկսան հաստատուելուն համ. առաջ մեծ մասը բռնատիրութիւնէ էին որ Ամերիկա կը վազէին չուտով հարստանալու յոյսով. կամ քաղաքական փախստականներ որոնք կրօնական հալածանքներով վատբուած էին։

Այսօր գրեթէ բոլոր Եւրոպական ազգերը ներկայացուցիչներ ունին Նոր Աշխարհի մէջ։ Այս նորեկները՝ Եւրոպայի մէջ իրենց գրաւած կարգով ցրուած են ընդհանրապէս։ Այսպէս՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան ափունքներ, Գանատացիք, Իսլանտացիք, Նորվեկիացիք հաստատուած են Կրէնլանտայի հեռաւոր կողմերը։ Գանատացիք և Անգլիացիք հաստատուած են բոլոր գետին մէջ (Սէն Լորանի և Միսիսիպիի աւազաններուն մէջ)։ Սպանիացիք գրաւած են աւելի գէպ հարաւ Մեքսիկան, ուր կրնային գտնել ամբ ու չոր կլիմայ մը իրենց մայրենի երկրին կլիմային նման։ Գերմանացիները որ ամէնէն վերջը եկած են Ամերիկա, հաստատուած են Հիւսիսային Ամերիկայի միջին մասին մէջ, Անգլիացիներուն և Գանատացիներուն պէս։

Բոլոր այս ժողովուրդներուն մէջ Անգլիացիները ու Սպանիոլները են որ ամէնէն մեծ ազդեցութիւնը ի գործ դրած են Հիւսիսային Ամերիկայի վրայ։ Հոն ապրողներ առած են իրենց լեզուները, իրենց կրօնքները և իրենց բարքերը։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԸՆԱԿԻՉՔՆԵՐԸ. — Հիւսիսային Ամերիկա որ Եւրոպայի կրկին ընդարձակութիւնը ունի, 105 միլիոն բնակիչ միայն կը պարունակէ։

Այս բնակիչները երկու գլխաւոր ցեղերու կը պատկանին։

Բնիկները՝ Եւրոպացիներէն առաջ Ամերիկա բնակող մարդոց սերունդն են։ Ունէին կարմրաթոյր երեսի գոյն մը որուն համար կոչուած են Շերկամորթ։ Առանք փայտէն քաղաքակրթութիւն մը ունեցած են Մեքսիկայի բարձր լեռնապաշարուն վրայ. բայց անկէ դուրս ընդհանրապէս նուազ քաղաքակրթուած ըլլալուն չեն կրցած դիմադրել ապիսակ ցեղի ժողովուրդներուն։ Այսօր 10 միլիոնի չափ կը հասչուի ասոնց թիւը։ Գանատացի և Միացեալ Նահանգներուն մէջ գրեթէ անհետացած են, ամէնէն աւելի դիմացած են Մեքսիկայի և Կեդրոնական Ամերիկայի մէջ ուր բնակիչներուն կարեւոր մէկ մասը կը կազմեն։

Սպիտակամորթները կը հաչուուին 80 միլիոն և գաղթականութեամբ հետզհետէ աւելնալու վրայ են։ Անգլիացիք առաջին կարգը կը պրաւեն հիւսիսակողմը. Գերմանացիները ու Գերմանացիները որ հոն եկած են՝ կամ Անգլիացի ժողովուրդին մէջ ձուլուած են և կամ բազմաթիւ միջոկ կարեւորութիւններ կեդրոններ կը կազմեն, բայց և Գերմանական Գանատացին։

Հիւսիսային Ամերիկայի երկու երրորդ մասը Անկլո-Սաքսոն Ամերիկա մըն է ուր կը խոսուի Անգլիերէն լեզուն և ուր կը տիրէ բազմաթիւութիւնը։ Սպանիացիք կը տիրեն հարաւային կողմը ուր հաստատուած են իրենց լեզուն և կաթոլիկ կրօնքը։ Այս տեղէն կ'սկսի Լատին Ամերիկան, որ կը պարունակէ նաեւ հարաւային Ամերիկան։

Այս բնիկներուն և սպիտակամորթներուն քով կ'ապրին նաեւ Ափրիկէէ տեւատորներ, որ գերեվաճառուելով հոս բերուած են տղը մըչակուս համար և յետոյ ժթ. Դարուն ազատագրուած են։ Առանք կը գտնուին Միացեալ Նահանգներու հարաւ արեւելեան կողմը և Անթիլեաններուն մէջ։

Միացեալ Նահանգներու արեւմտեան կողմը և նամպէս Անթիլեաններուն մէջ կան չուտ Ջինացիներ ալ։

ԳԱՂԱՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԸ. — Ամերիկա երկար առեն Եւրոպայի գերիչխանութեան տակ մնաց. բայց Եւրոպացիներուն հոն հիմնած գաղթականութեանց մեծագոյն մասը բաժնուեցան յետոյ իրենց մայր երկրէն։

Ամէնէն առաջ Միացեալ Նահանգները անկախ եղան ԺԸ. Դարուն վերջը. ԺԹ. Դարուն սկիզբը՝ կարգը եկաւ Մեքսիկային. այս երկու տէրութիւնները այսօր երկու հզոր հանրապետութիւններ կը կազմեն։ Մեքսիկայի հետ միեւնոյն առեն կեդրոնական Ամերիկա ալ ապստամբեցաւ Սպանիական կառավարութեան դէմ և ձեւացուց հինգ փոքր հանրապետութիւններ։ Գանիացիք կը պրաւեն դեռ կըՆորվեկիացիք՝ Գրենլանտա։ Անգլիացիք ալ՝ Գանատացի տէրութիւնը։ Անթիլեան կղզիք գրեթէ ամբողջովին Եւրոպական տէրութիւններու կը պատկանին։

Հարցաբան. — Ո՞րոնք էին Ամերիկայի բնակիչները երբ Քրիստափոր Կոլոմպոս գտաւ զայն — Կոլոմպոս ինչ հաշուով ճամբայ եւած էր Եւրոպայէն. ինչ բանի վրայ հիմնուելով գնդի Հնդկաստան արեւմուտքէն ճամբայ կը փնտռէր. — Ո՞վ էր իր հաշիւը — Ինչո՞ւ և որ Հնդիկ անունը կոչուան Ամերիկայի բնիկ ցեղերուն։

Եւրոպացիները ինչ կարգով հաստատուած են Ամերիկայի մէջ. — Եւրոպական ո՞ր ազգերը մեծագոյն մասնակցութիւնը ունեցած են հիւսիսային Ամերիկայի մէջ — Ուշադիր բնակիչ ունի հիւսիսային Ամերիկա և ո՞ր ցեղը մեծամասնութիւն կը կազմէ. — Հիւսիսային Ամերիկայի ո՞ր մասին մէջ կը տիրէ բազմազգականութիւնը. — Ե՛րբ անկախ եղան Միացեալ Նահանգները. — Հիւսիսային Ամերիկայի ո՞ր մասերը Եւրոպական տէրութիւնան ներքեւ կը մնան գեռ։

Ա. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հիւսիսային Ամերիկա կը պարունակէ երեք մեծ երկիրներ. Գանատացի Տէրութիւնը, Միացեալ Նահանգները և Մեքսիկան։

ԳԱՆԱՏԱՑԻ ՏԷՐՈՒԹԻՒՆ

Գանատացի Տէրութիւնը և բնեւեան երկիրները (Կրօէնլանտացին զատ) կը ձեւացնեն Անգլիական Ամերիկան, որուն մայրաքաղաքն է Օթաւա։

Գլխաւոր քաղաքներն են Քուէպեք և Մօնրէալ Սէն-Լորանի վրայ. Թորոնթօ՝ Օնթարիոյ լճին վրայ. Հալիֆաքս՝ կարեւոր նաւահանգիստ Նոր Սկովտիոյ մէջ։ Հազարական ովկիանոսի վրայ կարեւոր է Վիկթորիա նաւահանգիստը Վանքուվէր կղզիին մէջ։

Նոր Երկիր կղզին (Նիու Ֆաունտլենտ) որ ժամանակին Գանատական սահմանած մըն էր, այսօր կը պատկանի նամպէս Անգլիոյ։

Գանատա՝ հիւսիսային Ամերիկայի մէջ իր հին գաղթականութիւններէն կը պահէ միայն երկու փոքր կղզիներ՝ Սէն Բիէռ և Միքլօն։ Ունի նաեւ ձկնորսութեան իրաւունք մը՝ Նոր Երկրի խութերուն վրայ։

Գանատացի Տէրութիւնն ունի 5 միլիոն քա-

նակիչ, որոնց գրեթէ 3 միլիոնը Անգլիացի են. մնացած 2 միլիոնը Գանատացի են՝ ամէնքն ալ կաթոլիկ և Ֆրանսախօս:

Գանատա ունի անասնական ապրանքաբեմով անուանի, որոնք կը մասնակցացնեն չիմաբեման ապրեր փայտեր: Առանցքէ զատ Գանատացի պետական արտադրութիւններն են մանրատակ, բուրդ, արմաւեր, վուշ, կանեփ, գետնախնձոր, թարխուզ և անդուռ մետաղներ երկաթի, պղինձի ու ածիլի:

Մարզպետութիւնները կը մասնագիտեն արջառներու, ձիերու և ոչխարներու անթիւ հօտեր:

Մակայն Անգլիական Ամերիկայի մեծագոյն հարստութիւնը կը ձեւացնեն իր անասուններէն եաքը՝ Նիւ-Ֆաունտլէնտի ձկնորսական բոլորը, ուր ամէն տարի 50,000է աւելի նաւտորներ կը դիմեն «մօրուս» որսալու:

Գանատա ունի բանակ վաճառականութիւն՝ Միացեալ Նահանգներու, ինչպէս նաեւ հիւսիս արեւմտեան Եւրոպայի հետ:

5000 քիլոմէտր երկաթեղեմով մեծ երկաթուղի մը Գանատայի երկիրը կը կապէ մէկ ծայրէն միւսը, Վանքուվէրէն մինչեւ Քեպէկ, և երկու ովկիանոսներուն միջեւ այսպէս կապ մը կը գոյ:

Հարցաբան. — Ո՞ւր կը գտնուի Գանատայի Տէրբեմութիւնը. — Գանատա ո՞ր ազգութեան կը պատկանէր առաջ. — Ո՞րչափ բնակիչ ունի, և ո՛րչափ տարածութիւն. — Երկրին հիւսիսային կողմերը ինչպէս են... Գանատայի ամէնէն բարեբեր մասերն որո՞նք են. — Երկրին երկրագործական և հանքային գլխաւոր հարստութիւնները որո՞նք են. — Ինչ կարեւորութիւն ունին Գանատայի Ձկնորսարանները. — Ինչու համար Անգլիական Ամերիկայի արեւմտեան մասը շատ աւելի բարեբաստ կրնայ մը ունի քան լայնութեան միեւնոյն աստիճանին տակ գտնուող ուրիշ մասերը. — Ո՞րն է Գանատայի ամենակարեւոր երկաթուղին. — Ո՞րն է Գանատայի Տէրբեմութեան մայրաքաղաքը, և որո՞նք են Աւազանգետի վրայ կարեւոր նաւահանգիստները. — Խազազականի վրայ ինչ նաւահանգիստ ունի Գանատա:

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ

Միացեալ-Նահանգներու հանրապետութիւնը Եւրոպայի չափ բնդարձակ ցամաք մը կը ձեւացնէ: Ունի 78 միլիոն բնակիչ: Աչխարհս ամէնէն շատ ցորեն և բամպակ արտադրող երկիրներէն մէկն է:

Միացեալ Նահանգները կ'արտադրեն նաեւ շատ մեծ քանակութեամբ եգիպտացորեն, ծխախոտ, չաքար: Կը մշակուին անթիւ հօտեր խոզերու, ոչխարներու և եզնդերու կենդանիներու:

Քալիֆոռնիոյ և Ապատաչ լեռներու մէջ կը չահագործուին ոսկին և արծաթը: Հանքարանութիւն մտած Անգլիացին անմիջապէս կ'երթայ Միացեալ Նահանգները, որտեղ ունին նաեւ երկաթի, պղինձի հարստատ հանքեր և առատ քարիւղ:

Միացեալ Նահանգներուն մայրաքաղաքն է Ուաշինկթըն (250000):

Նիւ-Եորք (3,500,000) Ատլանդեանի վրայ բանուկ նաւահանգիստ, որ Եւրոպայի հետ կը նախատար յարաբերութիւն ունի: Նիւ-Եորք Ամերիկայի ամէնէն բարմանալով և ամէնէն վաճառաչահ քաղաքն է:

Պրուքլին (900,000) կղզիի մը մէջ, Նիւ Եորքի դիմացը՝ որուն հետ կապուած է 1800 մէտր երկաթուղիով կամուրջով մը:

Պոսթըն (500,000) Միացեալ Նահանգներու երկրորդ նաւահանգիստը և Ամերիկայի առաջին գրական կեդրոնը:

Ֆիլատելֆիա (1,230,000) վաճառաչահ նաւահանգիստ Տէլաուարի վրայ:

Պալթիմոր (500,000) Չէսապէքի ծոցուխորշին խորը, ճարտարարուեստ քաղաք, և վաճառաչահ նաւահանգիստ, որ կ'արտահանէ մեծ ծխախոտի արմաւեր, ալիւր և ծխախոտ:

Չիքակո (1,500,000) Միչիկանի վրայ, Ամերիկայի մեծագոյն հրապարակներէն մէկն է արմաւերի, ապուր միսի և առատքի համար:

Սեն-Լուի (460,000) Միսիսիպիի և Միսուրիի իրար խառնուած ափը, Նիւ-Եորքին Սան-Ֆրանչիսկո գացող երկաթուղիին վրայ, վաճառաչահ քաղաք է. կ'արտահանէ մանուածոյ արմատ, արմաւեր և քարիւղ:

Նոր-Օռլեան (250,000) Միսիսիպիի բերանը, Ֆռանսական Լուիզիանայի նախկին մայրաքաղաքը, Նիւ-Եորքին անմիջապէս յետոյ կարեւոր իր արտադրութեանց կարեւորութեամբ, որոնք են բամպակ, չաքար, ցորեն, ծխախոտ, մորթի:

Սան-Ֆրանչիսկո (300,000) Խազազականի գլխաւոր նաւահանգիստն է, որ Ատլանդեանի

ծովեզերքին կապուած է «Թրանսքոնթինենթալ» երկաթուղիով: Այս քաղաքին մեծ մասը կործանեցաւ 1906 ի ապտակոր երկրաշարժով:

Ազատեալ երկիրը Ամերիկայի հիւսիս-արեւմտեան կողմը՝ կը պատկանի Ամերիկան մեծ հանրապետութեան. վերջերս Ասլասքայի մէջ գտնուեցան հարստատ ոսկեհանքեր: Ռուսերը որ Ասլասքայի մէջ հաստատուած էին ԺԸ. Դարուն՝ 1867 ին ծախեցին զայն Միացեալ Նահանգներուն:

Միացեալ Նահանգները՝ երբեմն Անգլիական գաղթականութիւն՝ 1776 ին անկախ եղան Ֆռանսայի օգնութեամբ: Այսօր կը ձեւացնեն պաշտպական հանրապետութիւն մը՝ 46 նահանգներէ ձեւացած, որոնք Ամերիկան դրօշին մէջ կը ներկայացուին 46 աստղերով:

Բազաքակրթութիւն, երկրագործութիւն, ճարտարարուեստի և վաճառականութիւն առաջիկայ Միացեալ Նահանգները՝ երկրագնդիս առաջնակարգ Տէրութիւններ կարգը կը պատկերին: Հոգին պարտականած անոգան հարստութիւնները մեծ զարգացութեամբ կը չահագործուին ամէնէն կատարեալ գործուածով միջոցներով: Ճարտարարուեստը կը մրցի Եւրոպայի ամէնէն ծագկեալ ճարտարարուեստներուն հետ, և վաճառականութիւնը՝ Անգլիականէն անմիջապէս յետոյ կուգայ և գրեթէ կը հաւասարի Ֆռանսականին ու Գերմանականին:

Հարցաբան. — Ինչ է Միացեալ Նահանգներու կառավարութեան ձեւը. — Ո՛րչափ տարածութիւն ունի, և ո՞րչափ բնակիչ. — Բնակիչներուն մեծագոյն մասը ինչ ծագում ունի. — Ո՞ր թուականէն է վեր աւելցած է Եւրոպային գեպ ի Միացեալ Նահանգներ գաղթականութեան շարժումը. — Ինչու Միացեալ Նահանգները երկրագործական երկիր են. — Երկրագործութիւնը ո՞ր մասերուն մէջ աւելի զարգացած է. — Ո՞րն է գերազանցապէս Ամերիկան արմունկը, և որո՞նք են ատոր արտադրութեան գլխաւոր կեդրոնները. — Միացեալ Նահանգներու ո՞ր մասին մէջ կը տարածուին ցորենի արտերը. — Թուելով Միացեալ Նահանգներուն երկրագործական ուրիշ կարեւոր արտադրութիւնները իրենց կեդրոններով. — Պատճառաբանութիւնը ո՞ր ատոնց զարգացած է այս երկրին մէջ. — Ո՞ր մասին մէջ բազմաթիւ են խոզերը. — Միացեալ Նահանգներու ո՞ր մասին մէջ ամէնէն աւելի կը գտնուին ընդարձակ մարգագետիններ. — Որ թեւաւոր ու նարնջենին ո՞ր կը յաջողին ամէնէն աւելի. — Որո՞նք են Միացեալ Նահանգներուն հանքային հարստութիւնները. — Ո՞ր կը գտնուին ոսկին և արծաթը. — Հանքածուխի արտադրութեան մասին ինչպէս են Միացեալ Նահանգները. — Ո՞րն է Միացեալ Նահանգներուն մայրաքաղաքը. — Ո՞րն է առաջնութեան

ուսա հանճ.ը կուտայ մանաւանդ Նիւթարակուսյի մէջ. ծխախոտը, շաքարեղէգը, վանիլեան նոյնպէս առատ են. մանղենիի անտառներն, ևբնակիչներն ու զանազան ծառեր ընդարձակ տարածութիւն մը կը ծածկեն. բարձր լեռնապարաներուն վրայ նարնջենին ու լիմոնին կ'աճին բարեխառն երկիրներու յատուկ պտղատու ծառերուն քով:

Իւրաքանչիւր ազգութիւն ունի մանաւանդ իր տղին յատուկ մշակութիւն մը ունի. Կուատէմալա՝ արդան կարմիր. Սան Սալվատոր՝ լիզակ, Քոսթա-Ռիքա՝ խոհուէ և Նիւթարակուա՝ քաքաօ:

Կեդրոնական Ամերիկա ունի հանքային մեծ հարստութիւններ. ոսկին և արծաթը կը գտնուին ամէն տեղ, մանաւանդ Նիւթարակուայի և Քոսթա-Ռիքայի մէջ:

Ա. ԿՈՒԱԳԷՄԱԼԱ

Հինգ ազգութեանց մեծագոյնն ու ամէնէն բազմամարդն է Կուատէմալա: Ունի 1,500,000 բնակիչ:

Մայրաքաղաքն է Կուատեմալա գեղեցիկ դաշտի մը մէջ:

Բ. ՍԱՆ-ՍԱԼՎԱՏՕՐ

Կեդրոնական Ամերիկայի ամէնէն փոքրագոյնը, բայց իր տարածութեան բազմամարդն է Սան-Սալվատոր, համանուն մայրաքաղաքով: Բնակիչներուն թիւն է 900,000:

Գ. ՀՕՆՏՈՒՐԱՍ

Գրեթէ Կուատէմալայի չափ երկիր մըն է Հոնտուրաս (600,000 բնակիչ). ունի պատարա և ընդարձակ արօտատեղիներ:

Մայրաքաղաքն է Թեկուսիկալբա (արծաթի լեռը), որուն մօտ կը գտնուին անտառնի արծաթահանքերը:

Դ. ՆԻՔԱՐԱԿՈՒԱ

Հոնտուրասի հարաւակողմը կը տարածուի Նիւթարակուայի հանրապետութիւնը (500,000 բն.). պլիտար լեռքն է քաքաօ:

Մայրաքաղաքն է Մանակուա, համանուն լճին եզերքը:

Ե. ԿՕՍԹԱ-ՌԻԿԱ

Կեդրոնական Ամերիկայի ամէնէն հարուստ հանրապետութիւնն է Քոսթա-Ռիքա: Հողը ծածկուած է կոյս անտառներով: Պլիտար լեռքն է խոհուէ: Այս տունկին մշակութիւնն հետզհետէ ամէն կողմ ծաւալումէն՝ ևս միացած է չհագարծութիւնն իր ճոխ հանքերուն որմէ առած է երկիրն իր «հարուստ ծովեզերք» (Քոսթա-Ռիքա) անունը:

Մայրաքաղաքն է Սան-Ժոզէ:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀՕՆԴՈՒՐԱՍ

Եւրոպական արեւելեան ծովեզերքն վրայ կը գտնուի Բրիտանական Հնդուրաս, որ Անգլիական գաղութականութիւն մըն է 30,000 բնակիչներով: Պլիտար լեռքն է մանղենի (ազաժու): Մայրաքաղաքն է Պելիզ:

Հարցարան. — Ո՞ւր կը գտնուի Մեքսիկա, և ի՞նչ կազմութիւն ունի. — Ո՞րչափ է տարածութիւնը. — Բնակիչները ո՞րչափ են. — Երկրին կլիման ի՞նչպէս է. — Որո՞նք են երկրին գլխ. բերքերը. — Ի՞նչ է Մեքսիկայի կառավարութեան ձեւը. — Ո՞րն է երկրին մայրաքաղաքը, և որո՞նք են գլխ. նաւահանգիստները ու ներքին վաճառաշահ քաղաքները:

Ամերիկայի ո՞ր մասը Կեդրոնական Ամերիկա կը կոչուի. — Ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ Կեդրոնական Ամերիկա. — Որո՞նք են իւրաքանչիւրին մայրաքաղաքները. — Կեդրոնական Ամերիկայի կլիման ի՞նչպէս է. — Որո՞նք են գլխ. հարստութիւնները. — Կեդրոնական Ամերիկայի մէջ Անգլիացիք ի՞նչ գաղթականութիւն ունին:

ԱՆԹԻԼԵԱՆ ԿՂԶԻՆԵՐ

Անթիլեան կղզիները կը ճանչցուին նաեւ Արեւմտեան Հնդկաստան անունով, զոր առաւ անոնց Քրիստափոր Կոլոմպոս: կը բաժնուին

երկու խումբերու. Մեծ-Անթիլեաններ հիւսիսային կողմը, և Փոքր-Անթիլեաններ հարաւակողմը:

Մեծ Անթիլեաններ. — Մեծ Անթիլեաններու գլխաւոր կղզիներն են Քուպա, $1^1/_2$ միլիոն բնակիչներով՝ Անթիլեաններու թագուհին. մայրաքաղաքն է Հավանա:

Բարբո-Ռիքօ, Մեծ Անթիլեաններու փոքրագոյն կղզին, 1898 էն ի վեր կը պատկանի Միացեալ Նահանգներուն:

Ճամայիքա (650,000 բնակիչներով) կը պատկանի Անգլիոյ: Մայրաքաղաքն է Քինկսթօն:

Հայիթի կը ձեւացնէ երկու անկախ հանրապետութիւններ՝ Հայիթիի հանրապետութիւնը, 1,200,000 բնակիչներով, մայրաքաղաք Բորթ-Օ-Բրենս, և Տոմինիկեան հանրապետութիւնը՝ (400,000 բնակիչ) որուն մայրաքաղաքն է Սան Տոմինիկո՞:

Փոքր-Անթիլեաններ.—Փոքր Անթիլեաններու խումբին մէջ կարեւորագոյնները են Կուատալուբ և Մարդինիք որ կը պատկանին Ֆրանսայի. Տոմինիք, Կռանատա, Թրինիտատ, Անթիկուա և Պարպատոս՝ Անգլիական տապարանդներ են. Փիւերտօ՝ կը պատկանի Հոլանտայի:

Այս կղզին հակառակ իր տղին երաշտութեան՝ կ'արտադրէ առատ պտուղներ, մանաւանդ թութրինջ որուն կեղեւով կը պատրաստուի Հոլանտայի մէջ Քիւրատաօ անունով ծանօթ ըմպելին:

Բոլոր այս կղզիները ունին բարեբեր և բուսկաւած հող. կ'արտադրեն խոհուէ, շաքարեղէգ, ծխախոտ, բամպակ և ոսմ: Հովանաւոր սիկառները ու Ճամայիքայի ոսմը սիրելական համբաւ ունին:

Ընդհանուր հետազրութիւնը Անթիլեաններու մեծագոյն կղզիները կը միացնեն Միացեալ Նահանգներու ծովեզերքն և հետեւաբար Եւրոպայի: Տեղացի ժողովուրդը անհետացած է. այժմու բնակիչներն են Եւրոպացիներ, գաղթածիններ ու Ափրիկէէ ծովեզերքէն ժամանակաւ բերուած սեւամորթներ:

Մեծ Անթիլեաններու խումբին կրնան կցուիլ նաեւ Լուխայեան կղզիները կամ Պահամայի Արշիպելագոսը (Անգլիական տապարանդ): Այս կղզիներէն մէկուն՝ Կատանհանիի կամ Սան Սալվատորի մէջ է որ Քրիստափոր Կոլոմպոս առաջին անգամ ոտք կոխեց 1492ին՝ երբ Ամերիկան գտաւ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԿԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՒՔՆԵՐԸ ԵՒ ԿԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ. — Հարաւային Ամերիկա՝ որուն տարածութիւնը քիչ պակաս է Հիւսիսային Ամերիկայի տարածութենէն՝ բազմամարդութեան մասին չատ վար կը մնայ անկէ: Եւրոպացին ունի հետզ բլլալն և հաստատակամ կլիմայ ունենալուն նուազ տրտպայր ուներցած է նոր Աշխարհի մէջ բախտ փնտռելու գացող գաղթականներու համար:

Հարաւային Ամերիկա ունի գրեթէ 40 միլիոն բնակիչ. ասոնց մէջ կը գտնուին Հնդիկներ, Սպիտակամորթներ, Ինչպէս նաեւ Սեւամորթներ ու Զինացիներ որոնք հոն բերուած են չհագարծութեան պէտքերուն համար: Հարաւային Ամերիկա եկող սպիտակամորթներն են Սպանիացիք և Փորթուգէզները. վերջինները հաստատուած են Պրազիլիոյ մէջ. ցամաքին մնացած մասին մէջ հաստատուած են Սպանիացիք: Հոն սիրապահակ ուսած են իրենց լեզուներն ու կաթոլիկ կրօնքը: Ուրիշին Հարաւային Ամերիկա ամբողջովին Լատին Ամերիկա մըն է:

Եւրոպական տիրապետութիւնը որ ԺԶ.Դարէն սկսեալ հաստատուած էր, մնաց հոս մինչեւ ԺԹ. Դարու սկիզբները: Շատ ծանր ու կեղեքիչ էր այս տիրապետութիւնը: Եւրոպացիները իրենք իրենց համար միայն կը չահագործէին այս երկիրները, ասանց գաղթականներու չահերուն հոգ տանելու: Տարապայման չահագործութենէ

մը յոգնած՝ Սպանիական գաղթականութիւնները 1809ին ակսան թօթափել մայր երկրին լուծը և 15 տարի կռուելէ յետոյ յաղթեցին։ Անոնց օրինակին հետեւեցաւ նաեւ Պրազիլիա և միեւնոյն առիթները խզեց վինքը Փորթուգալի հետ միացնող կապը։

ՊՐԱԶԻԼԻԱ

Պրազիլիոյ հանրապետութիւնը նախկին Փորթուգիզ գաղթականութիւն մըն է։ Ունի

Ա. Պրազիլիական Սէրվան

8,364,000 քառ. քիլոմէդր տարածութիւն, սակայն քնակիչներուն թիւը հազիւ 16 միլիոնի կը հասնի։

Այս երկրէն կ'անցնի Ամազոն գետը՝ աշխարհիս ամէնէն լայն գետերէն մին որ իր բազմաթիւ գետակներով նաւարկութեան գեղեցիկ ճամբայ մը կը զծէ և որուն չնայհիւ Պրազիլիա կրնար մրցիլ նոյն իսկ Միացեալ Նահանգներու հետ,



Բ. Բամբասիներ Արժանթինի Հանրապետութեան մէջ

Պատկ. 94. — ՊՐԱԶԻԼԻԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Պրազիլիոյ ան Ամազոն անունն ալ անծայր անտառ մըն է ու ներ Եւրոպայի տարածութենան երիմ բառորդին չափ է և ուռ մէջ մտնելու միակ ճամբան գետերը կրնան ըլլալ անոր մէջէն կը հոսին։ Ծառերը միթիարի են հոս և բաղդատելով իրարու կապուած իրենց մութ կանաչին տակ։ Իսկ բամբասիները Հարաւային Ամերիկայի անունն պաշտպանիներն են ուրկէ աշխարհիս անհնին գեղեցիկ արօսատնիները կը կազմեն։

եղէ սակայն իր ամէնէն կլիման ապրիչ կողմ չի գարձներ եւրոպական գաղթականութեան հասանքը։

Պրազիլիա կը գտնուի Այրենական գօտիին տակ, ուսոր և կլիման չատ տաք է։ Հասարակածային սահմանին յորդահոս անձրեւներուն և Ամազոնի ու իր գետակիցներուն ոգտակար չնորհիւ անտառական բուսարերութիւնը հիանալի աճում ունի երկրին հիւսիսային մասին մէջ։ Պրազիլիոյ գրեթէ $^1/_3$ը ծածկուած է կոչ անտառներով (Սէլվա) որոնք կը հայթայթեն բազմաթիւ օգտակար արտադրութիւններ. ինչպէս թանկագին փայտեր, գունաւոր փայտեր, դեղօրէներ, ասփարտա, վանիլիա, և մանաւանդ քաուչու։

Պրազիլիոյ հողը խիստ բարերար է, և տեղ տեղ իսկ մշակուած։ Առատօրէն կ'արտադրէ նահուկ, չաքարեղէգ, ծխախոտ, քաքաո և չինուխինայի փայտ։ Ունի հարուստ հանքեր ադամանդի, ոսկիի, արծաթի, պղինձի, երկաթի, և այլն։

Մայրաքաղաքն է Ռիո տը Ճանէյրօ (500,000 բն.) Հարաւային Ամերիկայի առաջին նաւահանգիստը՝ Պուէնոս-Այրէսէն յետոյ։

Ուրիչ կարեւոր նաւահանգիստներն են Սանթօս, Պահիա, Բեռնամպուք. Բաւա։

Այս ընդարձակ և հարուստ երկիրը հետզհետէ յառաջդիմելու վրայ է։ Երկրագործութիւնը մեծ մղում առած է մանաւանդ վերջերս, և եւրոպայի հետ վաճառականութիւնը բաւական ընդարձակուած է։ Երկրին հարաւա-


ԱՄԵՐԻԿԱ
Ասիթեան.
0 500 1000 1500 2000 կ.
ԱՍԻԱ
ԳԱՆԱՏԱՅԻ ՏԻՐՈՒԹԻՒՆ
ՄԻՑԵՑԵԱԼ - ՆԱՀԱՆԳՔ
ՄԵՔՍԻԿՈ
ՊՐԱԶԻԼԻԱ
ԱՄԱԶՈՆ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՆՈՒՆԻՆ ԴԱՇՏԱԳԻՏԻՐՆԵՐԸ
ՈՒՐՈՒԳՎԱՅ
ՊԱՐԱԳՎԱՅ
ՊՈԼԻՎԻԱ
ՊԵՐՈՒ
ՉԻԼԻ
ԱՐԳԷՆԹԻՆ
ՊՈԼԻՎԻԱ
ՊԱՐԱԳՎԱՅ
ՈՒՐՈՒԳՎԱՅ
ՉԻԼԻ
ԱՐԳԷՆԹԻՆ
ՀՐ. Ս. ՇՈՒԿԱՆ
ՄԵՔՍԻԿԱՅԻ Ծ.
ՄԵՔՍԻԿՈ
ՔՈՒԱՏԱ
ՀԱՒԱՆԱ
ՄԱՆԱԿՈՒԱ
ՍԱՆԹՕՍ
ՊԱՀԻԱ
ՔԱՐԹԱԳՈՆ
ՄՈՆԹԵՎԻԴԵՕ
ՍԱՆԹԻԱԳՈ
ՎԱԼՊԱՐԱԻԶՈ
ՍԱՆԹԻԱԳՈ
ՎԱԼՊԱՐԱԻԶՈ
ՀՈՐՆ ԳՀ.
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՆԱՇԱՐ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՆԱՇԱՐ
ՀՐ. ԱԼՊԵՐ
ՀՐ. ԱԼՊԵՐ

չին մասը իր բարեխառն կլիմայով և եւրոպական մշակութիւններով ամէնէն առկի կը յարմարի եւրոպական գաղթականութեան (Բասպայիք, Բորթուկէզներ և Գերմանացիք) և հետզհետէ ծաղկելու և ընդարձակուելու վրայ է։

Հարցաբան. — Որչափ բնակիչ ունի Հարաւ. Ամերիկա. — Եւրոպական ո՞ր ազգերն են որ գերակշիռ եղած են Հարաւային Ամերիկայի մէջ. — Հարաւային Ամերիկայի ո՞ր երկիրն է որ երբեմն Փորթուգալական գաղթականութիւն մըն էր. — Որչափ տարածութիւն ունի Պրազիլիա. — Ինչու համար եւրոպական գաղթականութիւնը պէտք եղածին չափ ծաւալած չէ այս երկրին մէջ, որքան է Միացեալ Նահանգներուն մէջ — երկրին ո՞ր մասը ամէնէն բարեբեր է և ինչ են երկրին գլխաւոր երկրագործական բերքերը. — Ո՞ր մասին մէջ կը գտնուին անտառներ և ինչո՞ւ. — Ինչ են սելվանները, և ինչ է իրենց օգուտը. — Ինչ հանքային հարստութիւն ունի Պրազիլիա. — Որո՞նք են Պրազիլիոյ գլխաւոր նաւահանգիստները, և եւրոպական ո՞ր երկիրներուն հետ յարաբերութիւն ունին. — Ինչ է Պրազիլիոյ կառավարութեան ձեւը. — Ո՞րն է երկրին մայրաքաղաքը, և որո՞նք են վաճառաշահ քաղաքները. — Ինչու համար Հարաւային Ամերիկա Հիւսիսային Ամերիկայի չափ հրապոյր չէ ունեցած եւրոպայի գաղթականներուն համար։

ՔՈԼՈՄԲԻԱ

Քօլօմպիոյ հանրապետութիւնը կը տարածուի Միջագետքի և Անթիլեան ծովուն վրայ։ Երկրին արեւելեան մասը դաչտային է. իսկ արեւմտեան մասը ծածկուած է Անտեան լեռնաբուն ճիւղաւորութիւններով, որոնց մէջ տեղ կը հոսին Քօգա և Մակտալենա գետերը։ Կլիման բարեխառն է լեռնային գաւառներուն մէջ. իսկ ծովեզերքները տաք ու վատառողջ են։

Երկրին ամէնէն հարուստ մասերն են այս երկու գետերուն հովիտները։ Քօգայի հովիտը կ'արտադրէ քաքաօ, ծխախոտ, չաքարեղէգ։ Լեզակը, բամպակը, վանիլեան ինքնաբերաբար կ'աճին հոն։ Բայց Քօգայի հովտին հարստութիւն պիտի ըլլայ ապրիլը կը ձեւացնէ Պոճոտաթաւծութիւնը (եզ, ձի, չորի)։

Մակտալէնա գետը որ 1800 քիլոմէթր երկայնութիւն ունի, Քօգայի վրայ սա առաւելութիւնը ունի որ աւելի երկար միջոցի մը վրայ նաւարկելի է։ Կ'անցնի անհուն անտառներու մէջէն, որոնք կը պարունակեն այլազան ծառեր։

Ահագոյն-Հանգարիոյ կրկին ընդարձակութիւն ունեցող երկիր մըն է Քօլօմպիա, որ սակայն հազիւ $3\frac{1}{2}$ միլիոն բնակիչ ունի, որոնց մեծագոյն մասը հնդիկներէ, սեւամորթներէ և խառնածիններէ կը բաղկանայ։

Երկրին մայրաքաղաքն է Պոկօթա, բարձր լեռնադաշտի մը վրայ, բարեբեր երկրի մը մէջ որ արմաւիլի մշակութեան կը յարմարի։

Կարեւոր են նաեւ Քօքայան, որուն չրջակայքին անտառներուն մէջ հնդիկները կը ժողվեն Քինքինայի կեղեւը, որ վաճառականութեան կարեւոր նիւթ է։

Անթիօքիա՝ որուն չրջակաները կը գտնուին աշխարհիս ամէնէն առատ և ամէնէն գեղեցիկ զմրուխտները։

Բանտամա համանուն պարանոցին վրայ ծաղկեալ նաւահանգիստ է։ Առկէ մինչեւ Քօլօմբատաքը որ Անթիլեան ծովուն վրայ կը գտնուի՝ չմնաց է երկաթուղի մը որ կարճագոյն ճամբան է երկու ովկիանոսներուն միջեւ։

ՎԵՆԵՅՈՒԷԼԱ

Վենեցուէլլա կը տարածուի Քոլոմպիոյ արեւելեան կողմը։ Ընդհանրապէս լեռնային է. ծովեզերքները չատ տաք և վատառողջ են, իսկ ներքին մասերը բարեխառն։

Երկրին գրեթէ $\frac{3}{4}$ մասը ծածկուած է ընդարձակ ու անթեր գաչտերով որոնք Լանոս կը կը կոչուին, ինչպէս նաեւ անհուն կոյս անտառներով որոնց մէջ մահոգենին (ադաժու), սարդենին, թամարինին ու պամպան իրենց խիտ տերեւներն իրարու կը խառնեն։

Այս երկրէն կ'անցնի Օրէնոք գետը (2800 քմ. երկայն) որ իր գետաբերանին մօտ 5000 մէդրի չափ լայնութիւն ունենալով՝ նաւարկելի է։ Իր ջուրերը կը թրջեն անհամար կղզեակներ, եղէգներով ծածկուած, որոնց մէջ կը վխտան Քայման կոչուած կոկորդիլոսները, և ուր կրիաներ կը ձգեն իրենց հաւկիթները՝ որոնցմէ գետեզերքի բնակիչները տեսակ մը իւղ կը հանեն։

Վենեցուէլլայի գլխաւոր բերքերն են քաքաօ, չաքարեղէգ, խանձէ, բամպակ, ծխախոտ, եգիպտացորեն։

Ա. Օխաարհագրութիւն Միջին

Վենեցուէլլա գրեթէ Ցուռանայի կրկին տարածութիւնը ունի. բայց բնակիչներուն թիւը 2,000,000ը չանցներ. ծովեզերեայ մասը ամէնէն բազմամարդն է։

Մայրաքաղաքն է Քարաքաս որ հոյակերտ է իր քաքաոնկերով, որոնք վաճառականութեան մէջ աչքառնելու ամէնէն յարգելիներն են։

Կուպրա՝ Քարաքասի նաւահանգիստն է։

Հարցարան. — Որո՞նք են Հարաւային Ամերիկայի նախկին Սպանիական գաղթականութիւնները. — Ինչ տեսակ կազմութիւն ունին Բոլոմպիա և Վենեցուէլլա. — Ո՞ր գետը կը թրջէ Վենեցուէլլան. — Ինչ են Լանոսները, և ո՞ւր կը գտնուին. — Ո՞ր գօտիին տակ կը գտնուին այս երկիրները և ինչ կլիմայ ունին — Ինչ են այս երկիրներուն գլխաւոր մշակութիւնները. — Ո՞րն է Բոլոմպիոյ մայրաքաղաքը. — Ինչ նաւահանգիստներ ունի Բոլոմպիա. Անթիլեան ծովուն և խազաղականի վրայ, և ո՞րն է ամէնէն կարեւորը. — Վենեցուէլլա ո՞ր ծովուն վրայ է և ինչ նաւահանգիստներ ունի։

Է ՔՈՒԱԹՕՐ

Էքուաթօր կը տարածուի Քլիմպոյ հասարակածը, և հասարակածին (Էքուաթէօռ) տակ գտնուելուն համար այս անունն առած է։

Էքուաթօրի արեւմտեան մասին մէջ կը գտնուին չատ բարձր լեռնագագաթներ և տակաւին հրաբուխներ, որոնց գլխաւորներն են Զիմպորացցո (6310 մէտր բարձր), Քոթոփաքսի (5960 մ.), Գայամպէ (5850 մ.) և Փիչինչա (4800)։ Այս գագաթուած երկրաչարժներով գրեթէ անպակաս են այս երկրին մէջ։

Էքուաթօրի արեւելեան մասին մէջ կը տարածուին ընդարձակ և անթեր դաշտեր, որոնք ունին տաք և խոնաւ կլիմայ. իսկ լեռնային մասերուն կլիման բարեխառն է և առողջ։ Հողը չատ բարեբեր՝ կ'արտադրէ տաքսորչէն քաքաօ, քինքինա որ չատ հռչակաւոր է, ծխախոտ, չաքարեղէգ, լիցակ, եւայլն։ Էքուաթօր ունի նաեւ հարուստ հանքեր ասեղի և ապի, որոնք գրեթէ գործեր չեն չահագործուիր։

Էքուաթօր ունի 300,000 քիլոմէթր քառակուսի տարածութիւն, բայց հոգիս 1,200,000 բնակիչ՝ մեծ մասամբ Հնդիկ։

Մայրաքաղաքն է Քուիթօ, որ կը գտնուի հասարակածին տակ, բայց ծովեզերքէն 2850 մէտր բարձրութեամբ լեռնագագաթի մը վրայ չնչուած ըլլալով, կը վայելէ յաւիտենական գարուն։ Քաղիմօ քանի մը անգամ կործանուած է երկրաչարժներէ։ Այս քաղաքին մօտ կը գտնուի Փիչինչա հրաբուխը։

Երկրին առաջին նաւահանգիստն է Կուայաքիլ՝ մեծ ակիւնտասին ամէնէն ընդարձակ և ամէնէն ապահով նաւահանգիստներէն մէկը։

Էքուաթօրի կը պատկանի Կալլաբակոս արշիպելագոսը՝ մեծ ակիւնտասին մէջ՝ ուր անապին կրիաներ կ'որսան։

ԲԷՐՈՒ

Հարաւային Ամերիկայի հանքահարուստ երկիրներէն մէկն է Բէրու, որ կը տարածուի Էքուաթօրի հարաւակողմը։ Ծովեզերքներն ընդհանրապէս ուտպուտ և անթեր են. Անտեան լեռներու տարածները կը տարածուին ընդարձակ և արգաւանդ հովիտներ. իսկ երկրին արեւելեան մասը ծածկուած է անհուն անտառներով։

Արեւտարձային ուրիշ երկիրներու պէս Բէրու ալ երկու եղանակ միայն ունի, չոր և անձրեւային, սակայն հիւսիսային կողմը կան անկէ, ուր գրեթէ անձրեւներ։ Գետառատութիւնները յաճախակի են այս երկրին մէջ ալ, որ հիւսիսային է Էքուաթօրի պէս։

Բէրուի հողը բարեբեր է և լաւ մշակուած. կ'արտադրէ եգիպտացորեն, չաքարեղէգ, դեղձենի, քինքինա, քաքաօ, և տաք երկրի բոլոր բոյսեր։

Բէրուի մէջ կը գտնուի Լամա կոչուած այծանմանի կենդանին որ ունի բարակ մազ։

Բէրուի հանքային հարստութիւններէն մէջ կարեւորագոյնները են ոսկի, արծաթ, պղինձ, ապրարակ, կապար։

Այս երկրին մէջ գտնուած կաուչուկ անուշահոտ թաչուներն ազգը՝ որ հոգը պարարացնելու կը ծառայէ՝ մեծ յարգ ունի եւրոպա՝ ծագկի մշակութեան համար, և Բէրուի վաճառականութեան կարեւոր նեցուկներէն մէկն է։

Բէրու Վենեցուէլլայէն աւելի մեծ երկիր

մըն է, սակայն հազիւ 5 միլիոն բնակիչ ունի։ Մայրաքաղաքն է Լիմա, չէն ու ծագկեալ քաղաք՝ որ երկաթուղիով կապուած է իր նաւահանգստին՝ Գալլաօի հետ։

Կարեւոր է նաեւ Գուզքօ, Բէրուի հին բնիկ թագաւորութեան մայրաքաղաքը, որ ունի հին տաճարներէ մնացած երեւելի չէնքեր։

ՊՈԼԻՎԻԱ

Պոլիվիա Բէրուի արեւելեան կողմը՝ նչանաւոր է նոյնպէս իրը հանքահարուստ երկիր։

Այս երկրին մէջ կը գտնուին Անտեան լեռներու բարձրագոյն գագաթներէն մանք, ինչպէս Սորաթա լեռը (6550 մէտր)։

Կլիման բարեխառն է և առողջ. հողը բարեբեր է և կ'արտադրէ ցորեն, եգիպտացորեն, արծիաւունկ, ձիթենի, չաքարեղէգ, ծխախոտ, քաքաօ, քինքինա և չինուհիան ազնիւ փայտեր։

Պոլիվիոյ լեռներն ոսկի, արծաթի, պղինձի և անագի հարուստ հանքեր ունին։

Պոլիվիա՝ Բէրուէն աւելի մեծ է, բայց անկէ նուազ բազմամարդ (2 միլիոն բնակիչ)։

Մայրաքաղաքն է Լաբազ։ Կարեւոր են նաեւ Սիւքրը կամ Չուիխսաքա՝ հին մայրաքաղաքը, և Բոթոզի։

Հարցարան. Ո՞ւր կը գտնուի Էքուաթօր և ինչու այս անունը առած է. — Ո՞րչափ տարածութիւն ունի. — Ինչ կազմութիւն ունին. — Որո՞նք են իր գլխաւոր հրաբուխները. — Գոլոմպիոյ հետ ինչ նմանութիւն ունի. — Որո՞նք են երկրին գլխաւոր չահագործուած արտադրութիւնները. — Որո՞նք են Բէրուի առհասնները. — Ինչ տեսակ երկիր է Բէրու. — Որո՞նք են երկրին աւելնէն բարեբեր և գեղեցիկ մասերը. — Ինչ արտադրութիւններ ունին երկիրը. — Բէրուի հարաւութեան գլխաւոր աղբիւրները որո՞նք են.— Ինչու համար արուեստները և վաճառականութիւնը ետ մնացած են. — Ո՞րն է Բէրուի մայրաքաղաքը և որո՞նք են ներքին գլխաւոր քաղաքները, և կարեւոր նաւահանգիստները. — Որչափ բնակիչ ունի Բէրու, և ո՞րչափ է իր տարածութիւնը. — Պոլիվիա՞ ուժ է թէ Բէրու. — Պոլիվիոյ հանքային հարստութեանց մէջ ո՞րն է կարեւորագոյնը, և ո՞րն է ապագրութեան կեդրոնը. — Որո՞նք են Հարաւային Ամերիկայի այն երկիրները որ ծով չեն տեսներ բնաւ. — Ինչ քերք ունի Պոլիվիա. — Ո՞րն է մայրաքաղաքը, և որո՞նք են գլխաւոր քաղաքները։

ԲԱՐԱԿՈՒԷ

Բարակուէ փոքր հանրապետութիւն մըն է Պրազիլիոյ, Լա-Բլատայի և Պոլիվիոյ միջեւ։ Երկրին մեծ մասը դաշտային է և ջրարբի, օդը տաք բայց առողջ։ Հողը բարեբեր է։ Երկրին գլխաւոր հարստութիւնն է Բարակուէյի թէյը, որ կը կոչուի Մադէ։

Բարակուէյ՝ այն ազեատի պատերազմէն ի վեր՝ զոր մղեց Ուրուկուէյի, Պրազիլիոյ և Արժանթինի դէմ, չատ ծանր կերպով վերահաստնելու վրայ է։

Պատերազմէն առաջ բնակիչներուն թիւը մէկ միլիոնէն աւելի էր, մինչդեռ հիմա հազիւ 650,000ի կը հասնի։

Մայրաքաղաքն է Ասունբսիօն (50,000 բն.)։

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

Հարաւային Ամերիկայի ամէնէն փոքր երկիրն է Ուրուկուէյ, որ հազիւ Ցիրանայի $^1/_3$ին չափ ընդարձակութիւն ունի։ Կլիման ընդհանրապէս բարեխառն է և հոգը չատ արգաւանդ։ Ունի ընդարձակ և պարարտ արօտներ որ կը սնուցանեն բազմաթիւ արջառներ։

Ուրուկուէյի բնակիչներուն թիւը տարուէ տարի աճելու վրայ է Եւրոպական գաղթականութեամբ, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւեն Իտալացիք, յետոյ կու գան Սպանիացիք և Ցուանայիք։

Ուրուկուէյի բնակիչներուն թիւը կը հասնի այսօր 940,000։ Մայրաքաղաքն է Մօնթեվիդեօ, Լա-Բլատայի ծոցին հիւսիսային կողմը մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ։

ԱՐԺԱՆԹԻՆԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրազիլիայէն յետոյ հարաւային Ամերիկայի մնացագոյն երկիրն է Լա-Բլատա կամ Արժանթինեան Հանրապետութիւնը, որուն արեւմտեան սահմանը կը գծէ Անտեան լեռնագօտին. հիւսիսային-արեւելեան մասը դաշտային է և չատ բարեբեր. հարաւային կողմը կը տարածուի ընդարձակ ու խոտաւէտ դաշտեր (Բամբա կոչուած), որոնք կը սնուցանեն անթիւ հօտեր եզան, ոչխարի և ձիու։ Կլիման ընդհանրապէս

տաք է, բայց առողջ, իսկ լեռնային գաւառներուն մէջ՝ ցուրտ։ Հողին պէսպէս արտադրութիւններն են եգիպտացորեն, չաքարեղէգ, որթեատունկ, ձիթենի, բամպակ և ուրիշ տաք երկրի բերքեր։ Երկրին հանքային հարստութենց մէջ ոսկին ու արծաթը միայն կը չահագործուին քիչ մը։

Արժանթինեան Հանրապետութիւնն ունի գրեթէ 2,800,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն. ըսել է գրեթէ հինգ անգամ մեծ է Գուանայէն։ Ի նկատի առնելով իր կլիմային բազմազանութիւնը և հողին հարստութիւնները, կը զարմանայ մարդ որ այնքան ընդարձակ երկիր մը հազիւ $4\frac{1}{2}$ միլիոն բնակիչ պարունակէ։ Պատճառն այն է որ սպանիական տիրապետութենան ժամանակ՝ այս երկիրը որ թնդանօթին մեռած չէր արտադրեր, չատ երեսի վրայ թողուցած և անկէ հոն ալ ներքին խռովութիւններ կանցցային չտնօրէնութենէն զգալուն այս երկրին մէջ. բայց այսօր զարգացմանը չարժումը վերահաստատած է, և ոչ մէկ երկիր այնքան օտարականներ կ'ընդունի, որքան Արժանթին։ Այս պատճառաւ բնակիչներուն թիւը եռապատկուած է 30 տարիներէ ի վեր։ Եւրոպացի գաղթականներուն մէջ մեծամասնութիւնը կը կազմեն Իտալացիք, յետոյ կու գան Սպանիօլները, Գուանացիք, Գերմանները ու Զուիցերիացիք և Անգլիացիք։

Արժանթինեան Հանրապետութեան մայրաքաղաքն է Պուէնոս-Այրես (850,000 բն.) Հարաւային Ամերիկայի ամէնէն բազմամարդ քաղաքը, և գեղեցիկ ու վաճառաշատ նաւահանգիստ, որ կանոնաւոր յարաբերութիւն ունի Անգլիոյ, Գուանայի և Գերմանիոյ նաւահանգիստներուն հետ։

Գլխաւոր քաղաքներն են Ռոզարիօ (50 հազար բն.) Բարանա գետին վրայ բանուկ նաւահանգիստ և ճարտարարուեստ քաղաք։

Թուքուման՝ երկրին ամէնէն բարեբեր մասին մէջ, ուր կը մշակուի չաքարեղէգ, ինչպէս նաև ամէն տեսակ բանջարեղէններ, արմաւիք, ծխախոտ և բրինձ։

Թուքումանի գաւառը կը պարունակէ նաև մեծաւարած անտառներ։ Նարինջենիները այնքան բազմաթիւ են որ ճշմարիտ անտառներ կը ձեւացնեն։

Արժանթինի հարաւակողմը կը գտնուի Բարակոնիա՝ հեւրամարմ ու անապատային երկիրը, զոր Արժանթին և Չիլի իրենց մէջ բաժնած են։ Բնակիչները թափառական ու վայրենի Հնդիկներ են որ իրենց արտրտումներան ու ձիերարշաւներան արդիւնքները կ'ապրին։

Բահիականիայ հարաւակողմը կը գտնուի Մագէլլանի արշիպելագոսը. այս արշիպելագոսին մեծագոյն կղզին է Հրոյ Երկիրը՝ որ յատկապէս բաժնուած է Մակէլլանի նեղուցով։ Սչտ հնդկին մօտ սակայն փոքրագոյներ կը պատահին։

Մագէլլանի նեղուցին արեւմտեան կողմը կը գտնուին Ֆալքլանտ կղզիները, ուր Անգլիական պագիտարանութիւն մը հաստատած են։ Այս կղզիները կիսատրներուն և հարաւային ծովերը ճեղքող պատերազմական նաւերուն համար կայաններ են։

Հարցարան. — Ո՞րն է Հարաւային Ամերիկայի ամէնէն փոքր երկիրը — Ինչ տեսակ կլիմայ ունի Ուրուկուէյ. — Ո՞րն է երկրին մայրաքաղաքը. — Ինչ է երկրին միակ հարստութիւնը — Առեւտրական մեծագոյն նաւահանգիստը ո՞րն է, և Եւրոպական ո՞ր նաւահանգիստներուն հետ յարաբերութիւն ունի. — Բարակուէյ ո՞ր կը գտնուի — Ինչո՞ւ համար եռ մնացած է. — Ինչ կազմութիւն ունի երկիրը, և կլիման ինչպէս է. — Ո՞րն է Բարակուէյի մայրաքաղաքը. — Ո՞րչափ տարածութիւն ունի Արժանթինի Հանրապետութիւնը, և ո՞րչափ բնակիչ. — Ինչու համար իր տարածութենան համեմատ բազմամարդութիւն չէ ունեցած. — Ինչու համար Լա Բլատայի վերապահուած է գերակշիռ տպագրչ մը Հարաւային Ամերիկայի մէջ. — Քանի՞ մաքրու կրնանք բաժնել Լա Բլատան. — Ո՞րն է ամէնէն շատ արմտիք արտադրող մասը. — Ո՞ր կը տարածուին բամբակները, և ինչ է իրենց կարեւորութիւնը. — Ինչ հանքեր ունի Լա Բլատա. — Ո՞րն է երկրին մեծագոյն նաւահանգիստը և մայրաքաղաքը, և ո՞ր երկիրներու հետ յարաբերութիւն ունի. — Ինչ կ'արտադրէ։

Չ Ի Լ Ի

Չիլի նեղ ու երկար երկիր մըն է հարաւային Ամերիկայի լեռներուն ու Խաղաղական Ովկիանոսին միջեւ։ Ունի բարեխառն ու չատ առողջ կլիմայ։ Հարաւային Ամերիկայի ամէնէն բարգաւած երկիրն է և իր արդիւնաբերութենան համար «Նոր Աչխարհի դրախտը» կոչուած է։ Այս երկրին մէջ կը գտնուի բավանդակ Ամերիկեան ցամաքին բարձրագոյն գագաթը՝ Ակոնքագուա հրաբուխը (6970 մ.)։

Չիլի լաւ մշակուած է և կ'արտադրէ արմավ։ գեռնախնձոր, որթեատունկ, մրգեղէն, եւ այլն։

Չիլիի հանքային հարստութենան մէջ կարեւորագոյնները ածխահանքերուն պլեատր աստիճաններէն մէկն է և պղինձ, որ խիտ աստ է։ Ունի նաեւ արծաթ, ոսկի, պղպեղ և հանքածուխ։

Չիլի ունի 776,000 քիլ. քառ. տարածութիւն (Շուէյց-Նորվեկիոյ բազարձակութենէն), բայց հազիւ 3 միլիոն բնակիչ։

Մայրաքաղաքն է Սանթիակօ (300,000 բն.) ընդարձակ դաշտի մը մէջ ծաղկած քաղաք, որ սակայն մեծ վնասներ կրած է երկրաչարժներէն։ Իր նաւահանգիստն է Վալփարեզօ որ երկաթուղիով կապուած է մայրաքաղաքին հետ, և հարաւային Ամերիկայի վաճառական քաղաքներէն մէկն է։

Երկրին հարաւային մասին մէջ կը գտնուի Վալտիվիա, Հարաւային Ամերիկայի յատկապէս նաւահանգիստներէն մին։

Չիլիի հարաւային ծովեզերքին երկաթուղիներ գրուած են բազմաթիւ կղզիներ. ինչպէս Չիլօէ կղզիները, Աստուածամօր Արշիպելագոսը, Աեղէյտա կղզիներն եւայլն։

Աստղմէ զատ Չիլիի կը վերաբերին Խաղաղական ովկիանոսի մէջ՝ Ձուան-Ֆէրնանտէզ կղզիները, ուր ապրեցաւ իր մինակեաց Սէլքիրք Սկովտացի նաւապետը, որուն արկածները Տանիէլ որ Ֆօէի ներչնչեցին իր Րոպինսոն Քրուզօէի անուանի վէպը։

Կ Ո Ւ Ի Ց Ա Ն Ա

Վէնեզուէլլայի և Պրազիլիոյ միջեւ՝ Ատլանտեան ովկիանոսի վրայ՝ կը տարածուի Կուլանա, որ բաժնուած է Եւրոպական 3 տէրութենց, Անգլիոյ, Գուանայի և Հոլանտայի միջեւ։

Երկիրը գրեթէ ամրողջովին ծածկուած է անթափանցելի անտառներով, ծովեզերեայ մասը ցած է և ճահճախառն, արեւմտեան կողմերը լեռնոտ, իսկ ներքին մասերը քիչ ծանօթ են։

Կլիման չատ տաք է և վտանգաւոր. անձրեւներու եղանակը կը տեւէ 8 ամիս։ Հողը չափազանց արգասաւոր է և առատօրէն կ'արտադրէ խտնվէ, չաքար, խէժ, քաքաօ, բամպակ, լոլոկ և պղպեղ։

Կուլանայի լեռնադաշտերուն մէջ վերջերս գտնուած է ոսկիի հանք։

Երեք Կուլանաներուն մեծագոյնն ու ամէնէն բազմամարդն է Անգլիական Կուլանա, որ ունի 230,000 քիլ. քառ. տարածութիւն և 290,000 բնակիչ։ Մայրաքաղաքն է Ջորճթաուն՝ վաճառաշատ նաւահանգիստ։

Հոլանտական Կուլանա (129000 քիլ. քառ.) երբեմն չատ ծաղկած էր. այսօր 80000 բնակիչ ունի, որուն 25000ը կը գտնուին մայրաքաղաքին՝ Բառամարիպօ ի մէջ, որ միանգամայն առեւտրական նաւահանգիստ է։

Հոլանտական Կուլանա երբեմն Սուրինամ անուամբ ալ կը ճանչցուի։

Գուանական Կուլանա, որ փոքրագոյնն է (79,000 քիլ. քառ.), ունի հազիւ 30000 բնակիչ. մայրաքաղաքն է Գայէն, ուր կ'աշխատին Գուանայի քաղաքական յանցաւորները։

Չիլիէ զատ Հարաւային Ամերիկայի միւս բոլոր երկիրները ստանձնակից են Պրազիլիոյ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՋՈՑ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՍՏԱՑՈՒԱԾՔՆԵՐ

ԱՆԳԼԻԱ (6,530,000 բն.). — Բեւեռային երկիրներ. — Բանաստղի իշխանութիւն. — Թեր-Նեով. — Գերմուտեան եւ Պահամա կղզիներ. Ձամայիկա կղզի. — Պարպատոս. — Տօմինիք եւայլն. — Անգլիական Կուլանա. — Ֆալքլանտ կղզիներ։

ՖՐԱՆՍԱ (400,000 բն.). — Սեն-Բիէռ եւ Միքլոն. — Փոխր Անթիլեաններէն՝ Մարթինիք, Կուատալուբ, եւ այլն. — Գուանական Կուլանա։

ՏԱՆԷՄԱՐԿԱ. — Փոխր-Անթիլեաններէն՝ Ս. Թոմաս։

ՀՈԼԱՆՏԱ (414,000 բն.) — Հոլանտական Կուլանա, Քիւրասաօ։

Ջարգարան. — Ո՞րն է Հարաւային Ամերիկայի ամէնէն ծագկած երկիրը. — Որոնք են Զուլիի սահմանները. — Ո՞րչափ տարածութիւն ունի. — Ինչպէս է երկիրն կլիման. — Ո՛ր ինչ են բարիքը մասերը. — Ո՞րն է և կրնի գլխաւոր հարստութիւնը. — Ինչ կրզզինը ունի Զուլի Թագաւորական ոիկիանոսի մէջ և ինչ է առանց մեծագոյն կարեւորութիւնը. — Ինչ են երկրագործական գլխաւոր արտադրութիւնները. — Ո՞րչափ քնակիչ ունի Զուլի. — Ո՞րն է մայրաքաղաքը. — Որոնք են երկրին վաճառաշահ նաւահանգիստները. — Ո՞ր Տէրութիւնից հետ է Զուլիի վաճառականութիւնը. — Հարաւային Ամերիկայի ո՞ր երկրին է որ նբրպատկան Տէրութիւններու միջեւ բաժնուած է — Ուր կը գտնուի այս երկիրը. — Ինչ տեսակ կլիմայ ունի. — Ո՞րն է Կուբանայի գլխաւոր հարստութիւնը. — Քանի՞ մասերու կը բաժնուի, և ո՞րն է մեծագոյնը. — Անգլիական, Ֆռանսական և Հոլանտական Կուբանայի մայրաքաղաքները որո՞նք են. — Ինչ բնբքիր ունի Կուբանա. — Հարաւային Ամերիկայի տերութիւնները ինչ տեսակ կառավարութիւն ունին. — Ո՞ր լեզուները կը խօսուին այս երկիրներուն մէջ,

ՈՎԿԻԱՆԻԱ

Ովկիանիա *անունը կը տրուի Մեծ Ովկիանոսին մէջ ցրուած կղզիներուն ամբողջութեան։*

Պատկ. 95. — ՀԱՎԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ձավա հատարակածի մօտ կը գտնուի, իր դիրքին տակ է և խոնաւ, ուստի և բուսականութիւնը հրաշալի է նոն. կ'արտադրէ գրեթէ բոլոր տաք երկրի բոյսեր, սուրճ, թէյ, բրինձ, եղեգ և։

Այս կղզիները կրնան երեք խումբերու բաժնուիլ.

1. Մալեզիա՝ *Մեծ Արշիպելագոս Ասիոյ հարաւ արեւելեան կողմը։*

2. Մելանեզիա, *այսինքն Աւստրալիա՝ իր չրջակայ կղզիներով։*

3 Բոլիներիա, *որ Խաղաղականի արեւելեան մասին մէջ ցրուած բազմաթիւ Արշիպելագոսներէ կազմուած է։*

ՄԱԼԷԶԻԱ

Մալեզիա երբեմն կը կոչուի նաև Ասիական Արշիպելագոս։ Կլիման, արտադրութիւնները, կենդանիները, գրեթէ նոյնն են Հնդկա-Չինու հետ։

Մալեզիա լեռնային և հրաբխային երկիր մըն է. նոյնէ կը ցնցուի։

Մալեզիա կը պարունակէ կարեւոր կղզիախումբեր.

1. Սոնտայի Արշիպելագոսը *որ չորս կղզիէն է Մարգքայի թերակղզին, և որուն գլխաւոր կղզիներն են Սումադրա, Ձավա, Պաոնեա, Թիմոր։*

Սումադրա գրեթէ Ֆռանսայի չափ մեծ կղզի մըն է, 3½ միլիոն բնակիչներով։

Պանգա փոքր կղզի մըն է, իր անոգի հարուստ հանքերովը անուանի։

Ձավա թէպէտ Սումադրայէն 3 անգամ փոքր՝ բայց ոգի Արշիպելագոսին կարեւորագոյն կղզին է իր արգասաւորութեամբ և հարստութեամբ։ Ունի 23 միլիոն բնակիչ։ Կ'արտադրէ առատօրէն հաւկէ, չաքար եւայլն։ Մայրաքաղաքն է Գաքարիա առեւտրական մեծ նաւահանգիստ 100,000 բնակիչներով։

2. Մոլուքեան Կղզիները, *փոքր և պզտիկ, հարուստ են համեմներու մասին (պղպեղ, մեխակ, դարչինկով)։*

3. Ջելեպեան Կղզիները, *հատարակածին տակ։*

Պատկ. 96
ԱՒՍՏՐԱԼԱՑԻ ԲՆԻԿ

Աւստրալիոյ բնիկները, որոնք արդեն անհետացուցած համարուին վրայ են գրեթէ անասնական տիպար մը կը ներկայացնեն, եւ ապահովապար մարդկութեան հին ստորին ատիճանին վրայ են։

Տղը չամաչ երկրաչարժներէ կը ցնցուի։

Բոլոր այս կղզիները կը պատկանին Հոլանտայի, բայց ի Թիմոր, որուն կէսը Պորթուգալի կը պատկանի։

4. Փիլիպեան Կղզիներ (Լուսօն, Միւնտանաօ) *զորս Մագելան 1898ին Խաղաղ Ովկիանոսի, խիտ բարերար կղզիներ են, բայց գետնաշարժներու և ստկայի փոթորիկներու ենթակայ։ Կ'արտադրեն ծխախոտ, չաքար, և այլն։ Մայրաքաղաքն է Մանիլա՝ Լուսօն կղզիին մէջ, վաճառաշահ նաւահանգիստ։*

5. Պոռնեօ կղզին *որ Ֆռանսայէն աւելի մեծ է, հագիւ 1 միլիոն բնակիչ ունի. անտ ոսկի, հանքածուխ և ադամանդ։ Կղզիին մեծագոյն մասը կը պատկանի Հոլանտայի։ Անգլիացիք հաստատուած են հիւսիսային ծովեզրին վրայ։*

ՄԵԼԱՆԵԶԻԱ

Մելանեզիա *(Սեւերու երկիր)* կը պարունակէ Աւստրալիան, Նոր Կուինեան, Նոր Զելանտան, և մէկ քանի արշիպելագոսներ։

Այս կղզիներուն ամբողջութիւնը երբեմն Աւստրալասիա կամ հարաւային Ասիա անունը կ'առնէ։

Աւստրալիա *որուն տարածութիւնը Եւրոպայի երկու երրորդին հաւասար է, կը ձեւացնէ չատ մեծ կղզի մը։ 1628 ին գտնուած է Հոլանտացիներէն որ զայն կոչեցին Նոր Հոլանտա. բայց 1788էն ի վեր Անգլիական տարածուած եղած է։*

Աւստրալիա ունի կանոնաւոր ծովափունք։

Հիւսիսակողմը կը յատկանայ միայն Եօրքի թերակղզին՝ Բուտաի ծովուն և Գարրանթարի ծոցին միջեւ։

Արեւելեան ծովեզրին կը տիրեն Կապոյտ լեռները և ուրիշ լեռներ, որոնց գագաթները 2000 մէտրի կը հասնին։

Աւստրալիոյ ներքնաշխարհը ոգի ճանչցուած չէ։ Կը պարունակէ մեծ դաշտագետիններ, տափաստաններ, ճահիճներ և մէկ քանի լիճեր։ Մըրրէյ գետը (1700 քմ.) Աւստրալիոյ միակ կարեւոր գետն է։

Աւստրալեան ցամաքին յատուկ կենդանիները են ագեվազ, սև կարապ, հնդիկ ջայլամ, ցեկեզ կոչուած կենդանին, քնարահաւ, եւայլն։

Պահարտուծութիւնը Աւստրալիոյ ամէնէն բարգաւած ճարտարուեստն է։ Աւստրալիա Եւրոպա կը դրկէ Մէլբուռն ոչխարին նուրբ բուրդը, կաշիներ և մորթ, պահածոյ միս և ցորեն։

Անգլիացի գաղթականները կը մշակեն հոն արմաւ, ծխախոտ, բամպակ, որթեւազունկ։

Հարաւ-արեւելեան կողմը գտնուած լեռները կը պարունակեն հանքածուխի, ոսկիի և արծաթի կարեւոր հանքեր։

Բնիկները կը պատկանին սև ցեղին. սակաւաթիւ են և թշուառ կեանք մը կը վարեն։

Աւստրալիա բաժնուած է 6 նահանգներու կամ գաղթականութիւններու. որոնք կը ձեւացնեն Աւստրալեան Դաշնակցութիւնը։ Արեւելեան նահանգները ուր կը կանգնին Մելպուռն, Սիտնեյ և Ադելայիտ քաղաքները՝ ամէնէն բազմամարդներն ու ամէնէն ծագկածներն են. կը պարունակեն ընտիր արօտաւէտներ ուր կ'արածին միլիոնաւոր ոչխարներ։

Աւստրալիոյ բնակիչները 3½ միլիոնէն աւելի են այսօր։

Աւստրալիոյ մասը կը կազմեն ուրիշ երկու

Պատկ. 97. — ԲԱՌԱՒՆԵՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

անգլիական տագնաւածքներ. Թասմանիա՝ հարաւակողմը և աւելի պզտիկ՝ Նոր-Զելանտա, որ կը ձեւանայ երկու լեռնային և հրաբխային կղզիներէ, որոնք իրարմէ բաժնուած են Քուք նեղուցով։

Նոր Զելանտայի հարաւակողմը կը գտնուին մէկ քանի փոքր կղզիներ, Արեւմտեան Եւրո-

պալին հակոտնեայ, որոնք կը կոչուին Հակոտնեայք:

Նոր Կուինեա կամ Բաբուանիա՝ Աւստրալիոյ հիւսիսակողմը՝ երկրագնտիս մեծագոյն կղզին է. Անգլիացիք, Հոլանտա-

Ա. Վանկանի գետակը

Բ. Ոչխարներու խուզումը

Պատկ. 98. — ՆՈՐ ԶԵԼԱՆԴԱՑԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Նոր Զելանդա խիտ ներարտգող երիր մըն է իր լիճերով, փիորտներով եւ իոր գետակներով ծառերու շարով ծածկուած: Իր գլխաւոր հատորը Մերիմոս այծին բուրդն է որ սակայն Աւստրալիոյ ոչխարին բուրդեն նուազ նուրբ է:

ցիք և Գերմանացիք կը տիրեն անոր այլեւայլ մասերուն:

Նոր Կալետոնիայի ու Նոր Զելանդայի մէջեւ

Պատկ. 99. — ԲՈԼԻՆԷԶԻԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

չարուած են խել մը արշիպելագոսներ, որոնց գլխաւորներն են.

Պիզմարեան Արշիպելագոս և Սալոմոն կղզիները *որ կը պատկանին Գերմանիոյ:*

Ս. Խաչ Արշիպելագոսը, *ուր խորտակուեցան Լա Բիւսուզի երիւ նաւերը, և որ կը պատկանի Սպանիոյ:*

Նոր Հեբրիտեանները *որ Ֆռանսայի և Անգլիոյ ազդեցութեան ներքեւ գրուած են. և Նոր Գալէտոնիա, որ կը պատկանի Ֆռանսայի: Գործիքա կղզին 3 անգամ մեծ, սակ ու անտառախիտ կղզի մըն է այս, որուն գլխ. քաղաքն է Նումէա:*

ԲՈԼԻՆԷԶԻԱ.

Բոլինէզիա կը պարունակէ անհամար փիւռոյ կղզիներ, որոնց մեծ մասը հրաբխային, իսկ մէկ քանին ալ բուսոյն հասառամիասներ են: Առանք ընդհանրապէս ցած ու անջրդի կղզիներ են, և իրենց արտադրութիւնն է քօքօ, հացի, պտուղներ:

Հասարակածին հարաւակողմը՝ Ֆիճի կղզիները՝ կը պատկանին Անգլիոյ. Սամօա կղզիները՝ Գերմանիոյ: Ֆռանսայի կը պատկանին Մարիգեան և Թահիդի կղզիները, և այլն:

Հասարակածին հիւսիսակողմը՝ Գաւոլինեան և Մարիանեան կղզիները կը պատկանին Գերմանիոյ որ Սպանիայէն գնեց զանոնք 1898 ին:



Մաբեալ *արշիպելագոսը՝ Գերմանիոյ, Ֆիլիպեր արշիպելագոսը՝ Անգլիոյ կը վերաբերին։*

Հավայի կամ Սանտուիչ կղզիները՝ գլխաւոր քաղաք Հօնօլուլու, 1897 ին կցուեցան Միացեալ Նահանգներուն։ Հավայի կղզիին մէջ կը կանգնի աշխարհիս մեծագոյն հրաբուխներէն մին՝ Մօնա-Լօա (4000 մէտր բարձր)։

Բոլոր այս կղզիները հանգրուաններ են հիւսիսային Ամերիկայի, Աւստրալիոյ և Ճապոնի միջեւ։ Իրենց կարեւորութիւնը պիտի չտանայ Բանամայի պարանոցին բացումէն յետոյ։

Ովկիանիա կը վերաբերի այրկնոյ գօտիին, բայց ծովուն սիրտերը կը բաղխեցնեն իր կլիման։ Ունի տաք երկիրներու յատուկ բուսականութիւն, ինչպէս չաքարեղէգ, խոհուկ, բամպակ, համեմունք, արմաւ, քօքօ։

Ովկիանիոյ բնակիչները կը հաչուուին իբր 50 միլիոն։ Բնիկները կը պատկանին երկու տարբեր ցեղերու. Մալայեան ցեղը՝ ձիւթագոյն, խելացի է և ճարտար նաւարկութեան մէջ. խաիչիկ ցեղը՝ տգեղ է և վայրենի։

ՕՎԿԻԱՆՈՍԻ ՄԷՋ

ԵԻՐՈՊԱԿԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՆԳԼԻԱ (4,500,000 բն.) — Աւստրալիա. — Թասմանիա. — Նոր-Զելանտա. — Վիթի կամ Ֆիճի կղզիները. — Պորնէօ (հիւսիսային մասը). — Նոր-Կուինէա (հարաւարեւելեան մասը). — Ժիլպեր արշիպելագոսը։

ՀՈԼԱՆԴԱ (28 միլիոն բն.). — Սոնտի կղզիները (Սումատրա. Ճաւա). — Ջելեպեան կղզիները. — Մոլուքեան կղզիները. — Պորնէօ (հարաւային մասը). — Նոր-Կուինէա (արեւմտեան մասը). — Թիմորի մէկ մասը։

ՖԻԼԻՊՊԻՆ (90,000 բն.) — Նոր-Քալէտոնիա. — Ընկերութեան կղզիները եւ հանի մը ուրիշ մանր կղզիներ։

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳ (6000 բն.). — Մարիանեան կղզիները. Քարոլինեան կղզիները եւ Փիլիպեան կղզիները։

ԳԵՐՄԱՆԻԱ (500,000 բն.) — Նոր-Կուինէա (հիւսիս-արեւելեան մասը). — Պիզմարքի արշիպելագոսը. — Սողոմոնեան կղզիները. — Մաբեալ կղզիները. — Մարիանեան եւ Քարոլինեան կղզիները եւ Սամօա կղզիախումբը։

Հարց։ — Ինչով կը զանազանուի Ովկիանիա աշխարհիս մէւս մասերէն. — Որո՞նք են Ովկիանիոյ գլխաւոր բաժանումները. — Ո՞րչափ տարածութիւն ունի Ովկիանիա, բազդատ. Եւրոպայի հետ. — Ո՞ր աէրութեանց կը վերաբերի Ովկիանիոյ ապագան. — Մալէզիոյ արշիպելագոսը ո՞ր գլխաւոր կղզիները կը պարունակէ. — Որո՞նք են Հոլանտական առացուածքները. — Հոլանտական առացուածքներուն մեծագոյն կղզին ո՞րն է. — Որո՞ւ կը պատկանի Ճավա կղզին, և ո՞րն է մայրաքաղաքը. — Որո՞ւ կը վերաբերին առաջ Փիլիպեան կղզիները և հիմա որո՞ւ կը պատկանին. — Որո՞նք են այս արշիպելագոսին գլխաւոր կղզիները. — Ինչ կղզիներէ կը բաղկանայ Մելանեզիա. — Աւստրալիա ինչ տեսակ կազմութիւն ունի. — Բազդատէ՛ Աւստրալիան Եւրոպայի հետ, տարածութեան մասին. — Ո՞րչափ քնակիչ ունի Աւստրալիա. — Ինչ տեսակ կառավարութիւն է. — Որո՞ւ կը վերաբերի Աւստրալիա. — Ինչ է իր արագ յառաջդիմութեան պատճառը. — Աւստրալիոյ ներքին մասերը ինչպէս են. — Ո՞ր գօտիին տակ կը գտնուի Աւստրալիա. — Ինչու համար մեծ նաւահանգիստները երկրին հարաւ-արեւելեան կողմը կը գտնուին. — Այս գաղթականութեանց գլխաւոր հարստութիւնն ինչ է այսօր. — Ինչ կ'արտածէ Աւստրալիա. — Ինչ հանքայեն հարստութիւններ ունի. — Ովկիանիոյ յատուկ բոյսերն ու կենդանիները որո՞նք են. — Մալէզիոյ գլխաւոր հարստութիւնն ինչ է. — Ո՞ր գօտիին տակ կը գտնուի այս արշիպելագոսը. — Հոլանտական գաղթականութիւններն ինչ համեմատութիւն ունին մայր երկրին հետ. — Ովկիանիոյ ո՞ր մասը կը կոչուի Բոլինեզիա. — Ո՞րն է Ովկիանիոյ և բոլոր աշխարհի մեծագոյն կղզին։

Որո՞նք են Եւրոպայի կիմային առաւելութիւնները. — Ի՞նչ ազդեցութիւն ունին լեռները հովուոյ վրայ, ջուրի բնութեանն ու կիմաներուն վրայ. —

Ի՞նչ բնական նկարագիրներով կը զանազանուին արեւադարձային երկիրները՝ բարեխառն գօտիին տակ գտնուած երկիրներէն. —

Ծովեզերքները ի՞նչ բանի մէջ կրնան ազդել վաճառականութեան ու մարդոց յարաբերութեանց վրայ. —

Որո՞նք են աշխարհիս գլխաւոր ճեղուցները, ի՞նչ է իրենց կարեւորութիւնը. —

Նեղուցներու վրայ շինուած կարեւորագոյն բաղաքներն որո՞նք են. Նշանակել աշխարհիս գլխաւոր արշիպելագոսները. — Որո՞նք են կարեւորագոյնները եւ ի՞նչու. —

Որոնք են ամէն մասով կամ ամբողջովին կղզիներէ բաղկացած տէրութիւնները. — Ի՞նչ առաւելութիւն կը պարտին այս պարագային. —

Ի՞նչ է Միջերկրականի առեւտրական կարեւորութիւնը.— Բաղդատել Միջերկրականի եւրոպական եւ Ափրիկեան ծովեզերքը.

Որո՞նք են Միջերկրականի առեւտրական նաւահանգիստները եւ ռազմագիտական կայանները. —

Ի՞նչ կարեւորութիւն ունի Սուէզի ջրանցքը բնականոն վաճառականութեան մէջ. —

Որո՞նք են աշխարհիս մեծագոյն դաշտագետինները՝ տարածութեան եւ պտղաբերութեան կողմէ. — Ի՞նչ են իրենց արգասաւորութեան պատճառները. —

Ի՞նչու համար բաղմաթիւ ըլնելուն պէս գետերու վրայ կը շինուին. —

Բացատրել գետերու եւ ջրանցքներու առեւտրական կարեւորութիւնը եւրոպացւոյ ու Միացեալ Նահանգներուն առնուած օրինակներով. —

Որո՞նք են արեւադարձային գլխաւոր մշակութիւնները, ի՞նչ է իրենց կարեւորութիւնը. —

Նշանակել բամպակի, թէյի, մետաքսի, բրինձի. վարդի, բուրդի արտադրութեան գլխաւոր կեդրոնները. —

Եւրոպա ուրկէ կ'ընդունի բանկագին մետաղները. —

Որո՞նք են հանքածութիւն. երկաթի. պղինձի, անագի, անդիլի, բարիւղի արտադրութեան գլխաւոր կեդրոնները. —

Որո՞ք են աշխարհի ցուրեկի վերաբնակիչները. —

Ի՞նչու համար Մեծն Բրիտանիա ճարտարարուեստական երկիր է. —

Ի՞նչու համար Զուիւսական երկրագործական երկիր մ'է:

Որ երկիրներուն ներ ամենեկն ստեպ բնագաւառական յարաբերութիւններ ունին Լիվերպուլի, Լոնտրայի, Համպուրկի, Անվերսի, Ռոթերտամի, Հաւրի, Պոռտոյի, Մարսիլիոյ եւայլն հանգիստներ. —

Որ կը գտնուին եւրոպայի գլխաւոր գաղթականութիւնները:

Որն է Ամերիկեան գլխաւոր հանրապետութիւնը. —

Որո՞նք են հասարակածային եւ արեւադարձային երկիրներու մէջ եւրոպական գլխ. գաղթականութիւնները. —

Որո՞նք են բոլոր աշխարհի գլխաւոր նաւարկութեան գիծերը. —

Ի՞նչու համար Անգլիա տիզգիտական պետութիւն մը եղած է. —

Եւրոպայի մէջ միայն Անգլիա՞ն է տիզգիտական պետութիւն. —

Անգլիայեն եւ Ֆրանսայեն յետոյ ո՞րն է եւրոպայի գլխաւոր գաղթային տէրութիւնը. —

Անգլիայեն յետոյ եւրոպայի ո՞ր երկիրներն են որ հանիծածոխի հարստութիւնը ամենեկն ստեպ զարգացած է ճարտարարուեստը.

Ի՞նչ է Գիբրալթարի գետակղիա նկարագիրը. —

Որ տէրութիւններն են որ կը տարածուին միանգամայն եւրոպայի եւ Ասիոյ վրայ. —

Ասիոյ ո՞ր երկիրներն են որ եւրոպական աշխարհակալութիւնեն զերծ մնացած են. —

Որո՞նք են Ֆռանսայի ճարտարարուեստական գլխաւոր մասերը.

Ֆռանսա ճարտարարուեստակա՞ն երկիր է ամեն բանեն առաջ. —

Որո՞նք են Ֆռանսայի այն մասերը ուր ամենեկն ստեպ կը յաջողի որթատունկը. —

Որն է այն Ֆռանսական գաղթականութիւնը ուր կը պիտնի գլխաւորապէս Ֆռանսայի գաղթականները. —

Նաւեր կը մեկնին միանգամայն օրը Շանկհայեն, Կալկաթայեն, Ադիսաննդրիայեն, Օսեսայեն, Ռիօ-տը-Ռանեյրոեն, Նիւ-Եորքեն եւ Մելպուռնեն՝ Մարսիլիա երթալու համար. — Ի՞նչ կարգով պիտի հասնին Մարսիլիա եւ հասանականապէս ի՞նչ ապրանքներ բեռցած պիտի ըլլան:

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Ա. ՄԱՍ

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. **Երկիրը տիեզերքին մէջ, իր ձեւը.** — Տիեզերք. — Երկրի ձեւը. — Գլխաւոր կողմեր եւ միջանկեալ կողմեր — 1

2. **Տեղի մը դիրքը մակերեւոյթի մը վրայ.** — Աստիճաններ. — Զուգահեռականներ, լայնութեան աստիճան, Միջօրէականներ, երկայնութեան աստիճան — 6

3. **Երկրին շարժումները.** — Ժամու տարբերութիւն. — Եղանակներու յաջորդութիւնը — 8

4. **Երկրի գօտիները.** — 12

5. **Երկրագունա եւ աշխարհացոյց բառեխներ.** — Յատակագիծի մը ճիւնութիւնը. — Աստիճան. — Աշխարհագրական բառեխներ. — Մակաւաարութեան գիծեր — 13

6. **Երկրագունային մեծ բաժանումները.** — Ցամաքներու բաղդատութիւնը. — Հինգ Ովկէանոսներ — 18

7. **Երկրի կազմութիւնը.** — Երկրի կեղեւը — 20

8. **Ծովերը.** — Ծովուն յատակը, ծովուն ջուրը, ծովերու բոյսերն ու կենդանիները, ծովուն շարժումները — 23

9. **Մթնոլորտ. կլիմայ.** — Հովեր. — Անձրեւներ. — Ձիւն եւ իր ստորին սահմանը. — Կլիմայ, Ծովային կլիմայ, ցամաքային կլիմայ — 26

10. **Վազուն ջուրերը.** — Ակերու կազմութիւնը. — Գետերու կազմութիւնը — 32

11. **Բնական արտադրութիւնները.** — Հանքային հարստութիւններ. — Բուսական հարստութիւններ. — Կենդանիները — 33

12. **Մարդ.** — Երկրագնեայ բազմամարդութիւնը. — Մարդկային ցեղեր — 38

13. **Լեզու եւ գրութիւն.** — 40

14. **Ազգ. — Տէրութիւն. — Կառավարութիւն.** — 41

15. **Քաղաքակրթութիւն.** — 42

Բ. ՄԱՍ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ.

1. **Բնական աշխարհագրութիւն.—** 44
Ծովափունք. — Հողին բարձրութիւնը. — Ջրագրութիւն. — Լիճեր, Կիմայ, Տնտեսական նկարագիր, Հայրդակցութեան միջոցներ· — Վաճառականութիւն

2. **Քաղաքական նկարագիր.—** 48
Եւրոպական Թուրքիոյ կուսակալութիւնները

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ.

1. **Բնական աշխարհագրութիւն.—** 52
Ծովափունք. — Հողին բարձրութիւնը. — Ջրագրութիւն. — Լիճեր. — Կիմայ. — Տնտեսական նկարագիր. — Հայրդակցութեան միջոցներ. — Վաճառականութիւն. — Ձեռարուեստ

2. **Քաղաքական նկարագիր.—** 61
Ասիական Թուրքիոյ կուսակալութիւնները եւ ուրոյն սանճակներ

Գ. ՄԱՍ

ԱՇԽԱՐՀԻՍ ՀԻՆԳ ՄԱՍԵՐԸ

ԵՒՐՕՊԱ.

1. **Բնական նկարագրութիւն.—** 85
Դիրք, Տարածութիւն եւ Սահման. — Հողին մակերեւոյթը. — Գետեր եւ Լիճեր. — Կիմայ եւ արտադրութիւններ. — Բնակիչ, Քաղաքակրթութիւն, Կրօնք, Ազգ եւ Տէրութիւններ

2. **Քաղաքական նկարագրութիւն.—** 93
Հիւսիսային Եւրոպա. — Կեդրոնական Եւրոպա. — Հարաւային Եւրոպա. — Պալքանեան Պետութիւններ

ՍԻԱ.

1. **Բնական նկարագրութիւն.—** 101
Դիրք. — Սահման. — Ծովափունք. — Լեռներ. — Գետեր. — Լիճեր. — Կիմայ. — Բուսաբերութիւն. — Կենդանիներ. — Հանքեր

2. **Քաղաքական նկարագրութիւն.—** 112
Թուրական ստացուածք. — Ձիւսատան. — Հնդիկ կղզեխումբ. — Հնդկաչին. — Հնդկաստան. — Իրան. — Օսմանեան Ասիա

ՍԱՓՐԻԿԷ.

1. **Բնական նկարագրութիւն.—** 119
Ծովափունք. — Կղզիներ. — Լեռներ. — Գետեր. — Կիմայ եւ Արտադրութիւններ. — Խուզարկութիւններ. — Ցեղեր

2. **Քաղաքական նկարագրութիւն.—** 124
Եգիպտոս. — Եգիպտական Սուդան. — Հապէշիստան. — Պէրպէրիստան. — Թարապլուս. — Թունուզ. — Ալճէրի. — Մարոք. — Սահարա. — Սուդան. — Արեւմտեան Ափրիկէ. — Սենեկամպիա. Կուինէա. — Հարաւային Ափրիկէ. — Օրանճ եւ Թրանսվալ. — Ազաս Քօնկօ. — Արեւելեան Ափրիկէ

ԱՄԵՐԻԿԱ.

1. **Բնական նկարագրութիւն.—** 133
Դիրք. — Տարածութիւն

Ա. Հիւսիսային Ամերիկա.— 133
Ծովափունք. — Կղզիներ. — Նեղուցներ. — Լեռներ

Բ. Հարաւային Ամերիկա.— 135
Ծովափունք. — Կղզիները. — Լեռներ. — Գետեր. — Կիմայ եւ արտադրութիւններ

2. **Քաղաքական նկարագրութիւն.—** 138
Խուզարկութիւններ. — Հիւսիսային Ամերիկայի բնակիչները

Ա. Հիւսիսային Ամերիկա.— 139
Գանատա. — Միացեալ Նահանգներ. — Մեխիկա. — Կեդրոնական Ամերիկա. — Բրիտանական Հոնտուրաս. — Անթիլեան կղզիներ

Բ. Հարաւային Ամերիկա.— 143
Գրազիլիա. — Բոլիվիա. — Վենեցուէլա. — Էքուադոր. — Բէրու. — Չիլի. — Պոլիվիա. — Բարակուէյ. — Ուրուկուէյ. — Արժանթինեան հանրապետութիւն. — Չիլի. — Կույանա

ՈՎԿԻՍԴԻԱ

Պալէգիա, Մէլանեզիա, Պոլինեզիա 150

454 3.0 հա

7543

Հ. Ս. ԽՈՒՆՃԵԱՆ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԻՒ ՔԱՐՏԻՒՃԻՈՒ

ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ (Դասական ծանօթութիւններ Աշխարհագրութեան) 1911
Ի°ածալ **78** էջ. **75** պատկեր: Գին **4** դրա.2

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ (Երկրի բնական նկարագրութիւնը. — Աշխարհիս հինգ մասերը. — Օսմանեան Աշխարհ). Բ. տպագրութիւն սրբոգրուիլի վոխուած: 1912 Ի°ածալ **162** էջ. **99** պատկեր Գին **11**

Մատուի տակ է **ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ** (Բնական, Քաղաքական եւ Տնտեսական աշխարհ. — Ուսումնասիրութիւն Օսմանեան Աշխարհին)

Անկնուն ծանօթ է թէ ինչ հրապուրիչ եւ օգտակար նորութիւն մը եղաւ Հ. Ս. Խունճեանի այս պատմական շարքին **Միջին Դասարբերցքը**, որու Ա. տպագրութիւնը այնքան հիւ ժամանակի մէջ սպառեցաւ: Որովհետեւ նեղիմակը ամէն ջանք ի գործ դրած է պատճառներու եւ արդիւնքներու դիւրահասկնալի ուսումնասիրութեամբ մը **բացատրելու** Աշխարհագրութիւնը, վոխանակ զայն անջիպ ու անհամ եւ չոր գիտութիւն մը նկատելու եւ զայն տալու մտաւորական զարգացման միջոց մը դրած է:

Վերջին ծայր ինամոտ աշխատութեամբ զրուած այս շարքին մէջ նեղիմակ եւ հրատարակիչ ամէն կերպ աշխատած են գրեթէ ճշտելի դարձնելու այս հրապուրիչ ուսումին կարեւորութիւնը՝ պատկերներու նոխութեամբ, գեղեցկութեամբ եւ **խորհրդածուած** ընտրութեամբ, բացատրութիւններու յստակութեամբ եւ մեթոտին նորութեամբ: Շատ հիւ տեսնենք յոյն տեսնող **ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ**, իր երկու յատկութեամբ հատորներով, **հայ** տղուն պիտի տայ վերջապէս ամբողջական շարք մը Աշխարհագրութեան գիտութիւնը իսկականապէս բացատրող եւ հասկցնող:

Այս շարքին հետ գործածելի՝
ԳԼՈՒԽՆԻ ԱՏԼԱՍ. — Առեւտրական, Գրագրական, Տնտեսական, Քիմնատրական վերջին վիճակագրութիւններով. Գին . . . . . 1½ դրա.

Հ. ԵՒ Զ. ԱՅՎԱԶՈՒՄԻ

ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ. — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

(Բ. տպագրութիւն բոլորովին վոխուած)
1910. էջ **394**. պատկեր **25**: Գին **10** դրա.

Աւելորդ է ալ գովեստը հիւսել այս գեղեցիկ աշխատութեան որ գրեթէ առանց բացառութեան մուտ գտած է բոլոր հայ վարժարաններու: Ծոցամիս ու մանրակրկիտ աշխատութիւն, բացատրութեանց կոկիկութիւն ու ճշդութիւն, ընթերցուածներու մեթոտաւոր ընտրութիւն եւ ուսումնական զարգացում, լեզուի մարդութիւն ու շնորհ, անհատական ինչ որ կը յատկանշեն այս հատորը բոլոր իր նմանակներէն:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ. — ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ
1905. էջ 220 պատկեր 13: Գին 5 դրա.

Ամէնէն ուելի Բառոյական Դաստիարակութեան հոգ տարուած է այս Ընթերցարանին մէջ, իր ընթերցուածներու պարունակութեամբ, եւ ընտրութեամբ, որպէս զի կարելի թլայ տղուն պատրաստել իբրեւ ապագայ **հպատակի**, գիտակից իր պատասխանութեանց եւ իրաւունքներուն:

Գ. Ա. ՄԱՆԿԱԹԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
ԲԵՐԱԿԱՆ – ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. տարի — **ՔԵՐԱԿԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ** (գրել կարդալ Ա. Գիրք): Ճառաջաբան Յ. Թ. ՀԻՆԳԼԵԱՆԻ. **1911** էջ **120**. պատկեր **82**: Գին **3** դրա. **50**

Բ. տարի. ԸՆԹԵՐՑԱՐԱՆ (Գրել-կարդալու Բ. Գիրք) Մամլոյ տակ

Տեսակ մը կենդանի ուրախութիւն կը զգայ մարդ, բղխաելով այս հատորը, զոր մեր լուսոյն մանկավարժներէն միւն մեզի կը բերէ՝ երկար տարիներու աշխատութենէ եւ խղճամիտ տքնութիւններէ յետոյ:

Հասկնալու համար թէ ար ատեիճան լուրջ պատրաստութիւն ու երկար փորձարկութիւն հարկաւոր եղած են պատրաստելու համար այս ընթացքը, պէտք է կարդալ **Ե. Թ. Հինգլեանի** եւ նոյն իմիսն նեղիմակին երկու երկար յառաջաբանները, որոնք բացատրութիւնն են գործին մէջ կիրառուած մեթոտին:

Դիր մը, բառ մը, տող մը չկան այս երկու հատորներուն մէջ, որոնք երկար խորհրդածութենէ եւ ուղղակի աշակերտներու վրայ կատարուած կենդանի փորձերէ յետոյ միայն ընտրուած չըլլան: